Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Յ. Մելիք-Գրիգորյան

Հուր և ջուր

թ. 1906

891.99
S-38

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

# ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ

(Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ)

**ԷՊԻԶՕԴՆԵՐ**

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ ՆԵՒ ԱՊՕԹԷՕԶՈՎ

**1905 ԹՒԻ**

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

12

**1906**

Էմին Տէր-Գրիգորեանցի տպարան

ԵՐԵՒԱՆ

891.99
Տ-38

13 APR 2011
891.99

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

# ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ

(Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ)

---

**ԷՊԻԶՕԴՆԵՐ**

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ ԵՒ ԱՊՕԹԷՕԶՈՎ

**1905 ԹՒԻ**

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

---

1906

Էմին Տէր-Գրիգորեանցի տպարան

ԵՐԵՒԱՆ

14.08.2013

532+2

Այս պիէսի բոլոր իրաւունքները վերապահուած են հեղինակին. ուստի, ամեն անգամ ներկայացնելիս, վաղօրօք նորա համաձայնութիւնը պէտք ունենալ:

# ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Ներկայ տարուայ հայ-թաթարական ընդհարումները, որանցից հետզհետէ առաջացած սարսափները, աններեւակայելի գազանութիւնները, որոնց նպատակն էր ջնջել և ջնջել հայերին՝ խիստ սոսկալի, խիստ հրէշաւոր չափերի հասան:

Ահա այդ տխուր, աշխարհաւէր հանգամանքը ծագեցրեց իմ մէջ մի միտք—դնել այս բոլորը բեմի վերայ՝ կարելոյն չափ սղմուած, ամփոփ և կենդանի պատկերներով, որոնք տային գէթ մի փոքրիկ գաղափար անհոգութեան մատնուած հայերիս դէմ լարուած դարանների և սրանց հետեւող քամնիի, սիրտ մորմոքող կատարածների և աւերումների մասին:

Այս նպատակին լրիւ հասնելու համար՝ ես պէտք է սկսէի սկզբից, այսինքն գործի արմատից, բայց . . . ավաղ հանգամանքների շնորհիւ՝ ստիպուած եղայ ձեռնպահ մնալ:

Բացատրեմ իմ միտքը:

Այս ամբողջ աղէտներով լի սև օրերը, սուրն ու հուրը, որ իբրև մի հողմ, մի փոթորիկ բռնկուեց մեր գլխին և դեռ շարունակում է իւր աշխարհաւէր, իբր տարերական բնաւորութիւն ունեցող մի արհաւիրք, մի պատուհաս՝ կլանել հազարաւոր կեանքեր, աւերել ու կրակի մատնել անհամար գիւղեր, անտանե-կանալու քայքայել մի ամբողջ ազգութիւն—հետեւանքներ են չորս գլխաւոր պատճառների. որոնք են.

Առաջին՝ ռուսաց քաղաքականութեան հայերիս վերաբերութեամբ սուր կերպիւ փոխուելը.

Երկրորդ՝ մահմեդականութեան գազանային հակումներից ու կրքերից վարչութեան այս թէ այն ներկայացուցիչների օգուտ քաղելը.

Երրորդ՝ Թաթարական դարաւոր ատելութիւնը դէպի ի մեզ և՝

Չորրորդ՝ համիսլամական գաղափարի ընդարձակ ծաւալ ընդունիլը, որն արդէն տաս—տասնուհինգ տարիներ են, ինչ քարոզւում է գաղտագողի կերպով մահմեդականների մէջ՝ կովկասի ամեն խաւերում, ամեն անկիւններում։

Ես իմ այս պիէսի մէջ յենուել եմ գլխաւորապէս այս վերջին երկու պատճառների վերայ, թողնելով մի կողմ, կրկնում եմ, իրականութեան գլխաւոր շարժառիթը, այսինքն առաջին երկու կէտերը, որոնք պիտի լինէին գրուածքիս աղն ու ծուծը և բաւականացել եմ միմիայն այդ բոլորի հետևանքների նկարագրութեամբ։

Մեր ներկայ դրութեան մասին խնկութիւն իմանալու հետախոյզ և հետաքրքիր անծանօթը՝ թող վերցնի մեր կովկասե ներկայ տարուայ հայ և ռուս պարբերական հրատարակութիւնները, որոնք լոյս են տեսած ցէնզուրայի թոյլտուութեամբ, և կգտնի նրանց մէջ (համարեա ամեն համարում, սկսած փետրվարի 8-ից) շատ ու շատ անհամար փաստեր, սոսկալի իրականութիւններ, քստմնելի և հրէշաւոր դէպքեր, որոնք՝ նաև իրենց ակնյայտ անարդար լուսաբանութեամբ և դիտաւորեալ կեղծութեամբ՝ կըքայքայեն նրա հոգեկան անդորրութիւնը, ամենասուր կերպով կրճնկեն նրա կրքերը, կվիրաւորեն նրա մարդկային անյատականութիւնը և կհասցնեն նրան նոյն իսկ նեարդային ամենաայլանդակ դրութեան։

Ահա այս էր պատճառը, որ ես իմ այս պիէսիս մէջ դուրս եմ բերել իրականութեան սարսափների հազիւ մի երկու տոկոսը, նախ՝ խնայելով կարելոյն չափ թատրոն այցելող հասարակութեան նեարդերը և ապա՝ խուսափելով դրամատիքական ցէնզուրայի անողոք կարմիր մելանից։

Գուցէ մեր ընթերցողը կամ հանդիսականը կուզէր տեսնել մեր այս գործի մէջ և կենտրոնների սարսեցուցիչ դէպքերը, ինչպէս օրինակ Շուշիի, Գանձակի, Բաքուի և այլն . . . բայց այդ մեզ շատ հեռու կտանէր, որովհետև իմ նպատակս էր խուսափել հենց այդ կենտրոններից, քանի որ իրենց խիստ բարդ պայմաններով հանդերձ՝ ստիպուած պիտի լինէի դէմ յանդիման կանգնել կառավարութեան այլ և այլ ներկայացուցիչների առաջ, նրանց նողկալի գործողութեանց առաջ . . . ուստի և ընտրեցի աւելի փոքրիկ, աւելի մի համեստ շրջան—մի շատ սահմանափակ ասպարէզ յիշածս ընդհարումների, որը, բարեբաղդաբար՝ թէ դժբաղդաբար, թողնուած էր իր ճակատագրական հոսանքին և որից, կարելի է ասել, հեռու էր նոյն իշխանութեան որոշ և միտումաւոր անհոգութիւնից առաջացած՝ անմիջական ուշադրութիւնը։



Ներկայ վաստակովս ուզեցայ պատկերացնել նաև այն հանգամանքը, թէ ո՜րքան Սարիբէկներ ու Լուսիկներ ունենք մենք մեր համեստ գիւղական շրջաններում, որոնք՝ իբր մարգարիտներ՝ երևում են աղբակոյտերի միջից այն ժամանակ միայն, երբ փոթորիկն ու հողմերը շարժելով ու օդի մէջ ցրելով նրանց վերին խաւերը, լոյս աշխարհ են հանում, ցոլացնում են և ակնյայտնի կացուցանում այդ մարգարիտները։

Ուստի թող չպահանջեն ինձնից՝ այդ գիւղական աղբակոյտերի միջից՝ դուրս բերել ադամանդներ—այդ կոյտերի մէջ կարող են լինել մարգարիտներ միայն . . . Անգին ակունքները խիստ հազուագիւտ են գիւղական կեանքում, իսկ հազուագիւտ դէպքերը հեռու են տիպական նշանակութիւն ունենալուց։

Սակայն մասնաւորելով խօսքս գրուածքիս ձևի մասին՝ կուզեմ ասել մի երկու խօսք միայն.

Այս պիէսը ոչ կօմեդիա է, ոչ էլ դրամա. այլ մի նոր ձևի բեմական գրուածք—էպիզօդներ (միջնադէպեր) առանձին առանձին գործողութիւններով, որոնք համարեա թէ՝ ամեն մէկը մասնաւորապէս՝ մի մի նոր պիէսներ են կազմում իրենց սկիզբներով, զարգացումներով և հանգոյցներով, իսկ բոլորը միասին տալիս են մէկը միւսին լրացնող, մէկը միւսի շարունակութիւն կազմող մի ամբողջութիւն, նոյնպէս՝ ընդհանուր առմամբ՝ իր սկիզբով, զարգացումով և վախճանով։

Գրութեանս այս ձևը ես ամենայարմարը գտեցի, որովհետև այսպիսով, ըստ իս, կարելի եղաւ ասել աւելին, քան թէ կասուէր, օրինակ, մի դրամայով կամ մի որ և է ուրիշ թատրոնական գրուածքով և որովհետև այսպիսով լայնանում է,

ընդարձակւում է սոյնանման էպիզոդների համար՝ սովորական թեմական գրուածքների շատ սահմանափակ շրջանակը։

Իսկ ինչ վերաբերւում է լեզուին, ես ընտրեցի Երևանի հասարակ դասակարգի բարբառը, որն աւելի հասկանալի, աւելի մատչելի կլինի հայ հասարակութեան համար, քան թէ այն Խոյեցոց, Սալմաստեցոց, Սավրիզեցոց և այլ լեզուների և ոճերի միանգամայն անհասկանալի խառնուրդը, որ տիրում է Շարուր—Դարալագեազի սահմաններում գտնուած գիւղերում։ Նոյն լեզուն գործադրեցի նաև Թուրք հասարակութեան համար։

Թէ որքան նպատակայարմար է գրութեան այս նոր ձևը՝ և ընտրածս բարբառը և թէ որքան եմ հասել իմ ծրագրած նպատակներին՝ այդ կը որոշէ անշուշտ ապագայի լուրջ, անաչառ և հասունացած կրիտիկան։

*Էմին Տէր-Գրիգորեանց*

1 Դեկտեմբերի 1905 Թ. Երևան։

# ԷՊԻԶՈԴՆԵՐ

---

*Արտատպուած Ա.*

## ԳԻՇԱՏԻՉ ԹՌՉՈՒՆՆԵՐ

*Արտատպուած Բ.*

## ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆ

*Արտատպուած Գ.*

## «ՃԷՅԹԱՆԻ» ԳՈՐԾԵՐԻՑ

*Արտատպուած Դ.*

## ՄԱՐՄՆԱՑԱԾ ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆ

*(ԿԱՆԳՆԵԼ Է ԽՍԼԱՄԸ)*

*Արտատպուած Ե.*

## ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ

*ԱՊՕԹԼՕՁ*

Къ представленію дозволено. С.-Петербургъ,
26 Іюля 1906 года.

# I

# ԳԻՇԱՏԻՉ ԹՌՉՈՒՆՆԵՐ

## ԱՆՁԻՆՔ

ԱԽՈՒՆԴ
ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ, յետոյ խմբագիր մի Թուրք լրագրի:
ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ, յետոյ քարտուղար խմբագրութեան:
ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ
ՍԷՅԻԴ ԱՂԱ
ՈՒՍՈՒԲ
ԻՐԶԱ
ԹԱՂԻ, յետոյ խմբագրութեան սորին ծառայող
ԱԲԱՍ ԱԼԻ, յետոյ լրատու:
ԱԼԱՇՐԱՖ
ՔԵԱԼԲԱԼԱՑ ՆԱԲԻ
ՄԻ ՄԵԾ ատրճանաւոր
ՄԱՄԱԴ
ԵՐԿՈՒ ԹՈՒՐՔ
Ա. ՀԱՄՇԱՐԻ
Բ. ՀԱՄՇԱՐԻ
ՋՐԱՎԱՃԱՌ

*Խաներ, բէկեր, աղալարներ, ատրճանակաւորներ, աղաներ, սէյիդներ, մոլլաներ, դարվիշներ, թէյավաճառներ, ջրավաճառներ եւ թուրքեր զանազան կարգի, հասակների, միջոցների եւ կարողութեան:*

**Ապրիլի 15 է, 1905 թ.**

Անցքը պատահում է նահանգական քաղաքներից մէկում:

---

## ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

Տեսարանը ներկայացնում է պարսկական մզկիթի առաջ մի մեծ եւ ընդարձակ բակ: Աջ եւ ձախ միատեսակ սրաձեւ կամարակապ խցեր, որոնց կտուրները միակերպ ծածկվում են խցերի յետեւից բարձրացող ստուերախիտ ծառերով: Խցերի առաջ՝ ամբողջ երկայնութեամբ՝ ձգուած են երկու—երեք աստիճաններ, որոնցով բարձրանում են խցերը մտնելու կամ այնտեղերից բակն իջնելու համար: Խորքի մէջ տեղում կանգնած է պարսկական ճաշակով եւ զարդարանքներով շինուած մզկիթը, իսկ նրա յետեւից աջ եւ ձախ բարձրանում են մի զոյգ աւելի գեղեցիկ մինարաներ: Բակի մէջ տեղում, երկայնութեամբ դէպի խորքը, սրբատաշ քարերով շինուած է մի աւազան իր շատրւանով, իսկ շուրջը՝ բարձր միաձեւ ծառեր եւ ծաղիկների փոքրիկ մարգեր:

*Վարագոյրը բարձրանալիս՝ այստեղ կան բաւականին Թուրքեր զանազան հասակի և տարիքների, որոնց զգեստները Թուրքական են, բայց բազմազան. մի քանիսներն ունեն հոգևորական զգեստներ, իսկ հետզհետէ որանց թիւը սկսում է շատանալ. երևում են պաշտոնական զգեստներով Թուրքեր: Մի քանիսները նստած են աւազանի շուրջը՝ ղալյան կամ նարգիլայ են ծխում. ոմանք այստեղ կամ այնտեղ նստած թէյ են խմում. շատերը ոտքերի վերայ կանգնած խմբակներով՝ խօսում են, շատերն էլ ման-*

գալով և խօսելով պտոյտ են անում աւազանի շուրջը։ Հետզհետէ գալիս են նոր նոր Թուրքեր թէ խմբակներով, թէ մի մի և թէ երկու-երեք հոգով։

Մուտքը ձախ կողմի անկիւնիցն է։

Մզկիթի մէջ երևում են մի քանի նամազ անողներ։

---

## ՏԵՍԻԼ Ա.

### ԵՐԿՈՒ ՀԱՄՇԱՐԻ

Ա ՀԱՄՇԱՐԻ

Էսօր էս ի՞նչ խաբար ա, որ էսքան հաւաքւում են մէչիդը։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Չեմ իմանում, վալլա. ամա ինչ որ ա, մեծ բան ա էրևում։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Այ, այ, տեսնո՞ւմ ես, էլի գալիս են. դաստա դաստա հաւաքւում են։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Ֆիքրս էնենց ա գալիս, որ պէտք ա մէջլիս լինի։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Ինչի՞ համար որ։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Էս մեր ու հայերի գալմագալների համար։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Հա, դրուստ. պէտք ա հաւաքւէին. էս օր ա, հա՞։

Բ ՀԱՄՇԱՐԻ

(Կանչելով) Թաղի, այ Թաղի։

ԹԱՂԻ

(Դառնալով սրանց) Հ՞ը։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Մի էստեղ արի, գլխիդ ղուրբան։ Բույուր։

ԹԱՂԻ

(Գալով) Հ՞ը։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Էս ինչի՞ են էսքան հաւաքւում. դու կիմանաս։



ԹԱՂԻ

Վա՜. չէք իմանո՞ւմ։ Եապոններն ախր մենձ մենձ գեամիներով, ու թոփերով Բագու են գալիս։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Եա։ Վրայ են տալու՞։

ԹԱՂԻ

Բաս էլ ինչի՞ են գալիս։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Էդ հօ սաղ Բագուն դարբադաղըն կանեն։

ԹԱՂԻ

Թոփն էլ չեն հանի՞։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Եավաշ. հմի ինչ են ուզում անեն։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Այ, էլի գալիս են։

ԹԱՂԻ

Հլա չատ կգան։ Ամեն քաղաքներումն էլ սաղ մուսուլմանները պիտի հաւաքւեն։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Եավաշ մենակ մենք ի՞նչ կարանք անենք։ Բա հայերը՞։

ԹԱՂԻ

(Բարկացած) Նրանց անունը մի՛ տա։ Մենք նրանց հետ բան չունենք։ Նրանք բաթմասսաբներ են։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Ասենք էդ դրուստ ա։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Բա ի՞նչ ենք անելու ախր։

ԹԱՂԻ

Էնա որ՝ հմի պէտք ա կարգադրենք, փող հաւաքենք, որ մի չարաթւայ մէջ էշերով հող կրել տանք, ածիլ տանք ծովը, սաղ ծովը ցամաքացնել տանք, որ եափոնների գեամիքը Բագու չկարենան գալ ու տեղն ու տեղը մնան։

Ա և Բ ՀԱՄՇԱՐԻ

(Միմիանց երեսի զարմացած նայելով) Փիխ՜...

ՁԱՅՆ

Այ եախչի լիմօնադ գյող։

ԹԱՂԻ

Այ, ախմախներ, բա էլ ինչ մուսուլմաններ էք, որ էկել էք մեչիդն ու՝ բանից բեխաբար էք։

(Երկու համշարիներն էլ իշայած նայում են իրար երեսի, ոչինչ չհասկանալով)։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Ես հէնց ընենց էկայ նամազ գլմիշ անելու. չունքի օրը ջումայ ա, բանելու չգնացի։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Ես էլ։

ՁԱՅՆ

Այ չիրին գանդյամբ։

ԹԱՂԻ

Դէ որ խաբար չէք հիմի կիմանաք։ (Թողնում է եւ գնում)։

---

## ՏԵՍԻԼ Բ.

Ա ՀԱՄՇԱՐԻ

Սա ինչ արեց որ։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Փիահ, փիահ. սա էլ մուսուլման ա է՛լի։

Ա ՀԱՄՇԱՐԻ

Տօ ջանըմ, սրանք ինչ մուսուլմաններ են որ. էրմանիներին էլ փիս են։

Բ ՀԱՄՇԱՐԻ

Էրմանուց որ մի բան հարցնես՝ կխանդնի ու մի սհաթ կը հասկացնի ու կերթայ. ամմա մեր մուսուլմանները...

Ա ՀԱՄՇԱՐԻ

Գնանք, տեսնենք ով կայ մեր խեյրի կարած մարդ, իմանանք։ (Գնում է)։

Բ ՀԱՄՇԱՐԻ

(Նրան յետեւելով) Այ հայ, հա գալիս են։

ՁԱՅՆ

Այ սարին խիխանջարի՛։

---



## ՏԵՍԻԼ Գ.

### ԹԱՂԻ ԵՒ ՋՐԱՎԱՃԱՌ

ԹԱՂԻ

(Գալով առաջ եւ կանչելով ամբոխի միջից ջրավաճառին) Լիմօնադգադ, այ լիմօնադգադ. (ձեռքով անելով) արի մի։

ՋՐԱՎԱՃԱՌ

(Իսկոյն մօտենում է։ Սրա մի ձեռքին բռնած է մի մեծ ապակեայ շիշ՝ մէջը կիսով չափ ջուր ածած եւ մի կիտրոն օղակներով կտրատած, իսկ միւս ձեռքին մի մեծ՝ կոթով բաժակ)։

ԹԱՂԻ

Մի սաքեան սուր խմեմ։

ՋՐԱՎԱՃԱՌ

Բաշ ուստայ։ (Մի առանձին աշխուժով եւ նշանակութիւն տալով իր ջրին՝ ածում է բաժակի մէջ եւ տալիս) Բույուր։

ԹԱՂԻ

(Խմում է) Պահ, էս ինչ սառն էր... Հալէն ցուրտ, էս քու գահրումարն էլ սառը։ (Վերադարձնում է բաժակը, բեխերը սրբելով ոլորում է եւ լեզւով խիստ տրաքացնում)։

ՋՐԱՎԱՃԱՌ

Դէ որ սաք բան իր ուզում, չայ խմէիր էլի։

ԹԱՂԻ

Ախմախ. ես իմ բանը չեմ իմանում։ Սիրտս էրվում ա ախր։ Խոլաքեարաբը շատ էր աղի. եանդու ցյեց սիրտս։

ՋՐԱՎԱՃԱՌ

Դէ իմ լիմոնադգադը լաւ ա էլի. ինչքան որ կերած ընես՝ կհստացնի, ջիգեարդ էլ կհովացնի։ Զաւօղներում ըսէնց լիմոնադգադ հէչ չեն շինի։

ԹԱՂԻ

(Տալով 2 կոպէկ) Առ, շատ մի գահլա տար։

ՋՐԱՎԱՃԱՌ

Մի կապէկ էլ՛՛ տուր. սաքեանը իրեք կապէկ ա։

ԹԱՂԻ

Գնա, առդ իլ, հէյվան։ Մի կապէկ էլ չաժէր։

ՋՐԱՎԱՃԱՌ

Փիի՜…

ԹԱՂԻ

Էլ ի՞նչ փիի… պղտոր ջուր ա, էլի… մի քիչ էլ չամչով քաղցրացրել ես։

ՋՐԱՎԱՃԱՌ

(Վրդոված) Թամրը չաքեմը եմ գցել, Թամրը չաքեմը… չա՜միչը որն ա։ Էդ էլ Թազա խարմը։ Այ, սաղ լիմոնն էլ մէջը։ Կո՛պէկս տուր։

ԹԱՂԻ

Իթիլ ջհաննամա, հէյվան։ Ես էդ համամի տակից դուրս էկած քու ջուրը հէչ չեմ խմում։

ՋՐԱՎԱՃԱՌ

(Աւելի վրդոված) Փի՜ի… Էդ էլ Թազա բա՜ն։ Համամի տակի ջուր… Կո՛պէկս տուր։

ԹԱՂԻ

Էլ չե՛մ խմում։

ՋՐԱՎԱՃԱՌ

Էլ հէչ մի խմի։ Խմածիդ փողը տուր։

ԹԱՂԻ

Էդ ջուրս ախմախ բանին աւելի չեն տայ։ Ռադ իլ Թէ չէ պօլիցին իմաց կտամ։ (Գնումէ)։

ՋՐԱՎԱՃԱՌ

(Նրա յետեւից գնալով) Կո՛պէկս տուր, սաղըս ում ուզում ես իմաց տուր։

ԹԱՂԻ

(Շպրտելով) Առ, ջհանդամիդ է։

ՋՐԱՎԱՃԱՌ

(Գետնից վերցնելով եւ նոյնպէս գնալով) Հըմ… համամի տակի ջուր… (Գնաց)։ Այ չիրին լիմոնադգա՜դ։



## ՏԵՍԻԼ Դ.

ՄԱՄԱԴ եւ ԻՐՋԱ։

ԻՐՋԱ

Եավաշ, Մամադ. էն ո՞վ ա էն պլխտաւը, որ ձեռքով տտով ա խոսում։

ՄԱՄԱԴ

Է՞ն։ Եվլախնի պլխտաւն ա։ Մահալներից ու չհարներից չատ գուլլուղչիներ էլ են էկել։

ԻՐՋԱ

Գիտեմ, ջանում. ամա էս մէկին չէի ճանաչում։

ՄԱՄԱԴ

Հա. տսում ես որդխան ճարենք։

ԻՐՋԱ

Գնա միրզա Ալասկեարի մօտ։ Նա համեշա սաանում է։

ՄԱՄԱԴ

Էն վարժապե՞տը, վա՜։

ԻՐՋԱ

Ամեն փուշտով։ Բերդանկէք էլ, ռէվօլվեր էլ։

ՄԱՄԱԴ

Բաս ի՞նչպէս է որ չի բռնւում։

ԻՐՋԱ

Նա հօ հայ չի, որ բռնւի։ Զունքի փասիկկի վրա գրել ա տալիս Թէ եանի միջինը ուչիլիշչի շակերտների համար խաղալիք ա, եա Թէ չէ՞ գրքեր են։

ՄԱՄԱԴ

Պա՜հ, մալադեց, Միրզա Ալասկեա՛ր։

ԻՐՋԱ

Երէկ էլ, պէտք էր „Քաչկիւլ“ փարախօդով մի 150 յնտալու գալ, ախր։

ՄԱՄԱԴ

Էկաւ էլ, ալբէալը աէրեց աէր առին էլ։ Ինչ առի չառի, ինձ մինն էլ ա չհասաւ։

ՁԱՅՆ

Այ խաղի չա՜յ։

ԻՐԶԱ

Չէ, ջանդարմները լաւ են. մեզ էնքան էլ սաթաշմիշ չեն ընում։

ՄԱՄԱԴ

(Գնալով) Ամմա հայերի էլ՝ ջաններն են հանում է՞։

ԻՐԶԱ

Տեղն ա, դրանց քոքը ջնջէի։

## ՏԵՍԻԼ Ե.

Ամբոխի մէջ զանազան տեղերից լսւում են „Շուքիւր ադամ էկաւ", „Շուքիւր ադամ էկաւ"։ Խորքում երեւում է՝ նա, աջ ու ձախ գլխով բարեւում է իրեն բոլոր բարեւողներին եւ մօտենալով այս կամ այն խմբերին՝ խօսակցութեան է բռնւում եւ ապա մօտենում է շատ ուրիշներին էլ։

## ՏԵՍԻԼ Զ.

*ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ եւ ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ*

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Հիմի հասկանում ես. Սուլթանի միտքն այն է, որ Բայեազէտի կողմերից կամաց-կամաց զօրքերն ուղարկի Իրեանը, Նախչըւանն առնի ու այսպէս գայ Շուշին, Գեանջան և Բագուն՝ սաղ իր ձեռքը գցի։ Մեր հին խանութիւնները, բէկութիւնները, սարդարութիւնները ուզում է նորոգի, ինչպէս առաջ էր, որ սաղ երկիրը Իսլամի ձեռքն ընկնի ու ինքն էլ մեզ համար պաշտպան կանգնի։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ինչ եմ ասե՜լ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ցեառայ էլ շատ ուրիշ բաներ կան... Դեռ Գիւրջիստանն էլ... Բայց էդ, ի հարկէ, ամենից վերջը... Խիւան, Սամարղանդը...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էդ հօ մեր Շահն էլ միւս կողմից կ'օգնի։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Չէ, Շահին ձեռնտու չի. նա Սուլթանի խալիֆայութիւնը



չի ընդունիլ. բայց այդ էլ ժամանակի հարց է։ Նրա մեռնելուց յետոյ մի այնպիսի Շահ կդնենք, որ ընդունի։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Եավաշ։ Ուրեմն Սուլթանն ուզում է, որ սաղ մուսուլմանութիւնն իր ձեռքը գցի՞։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ոչ թէ ուզում է իր ձեռքը գցի, չէ՜. նա ուզում է, որ ամեն տեղ՝ ինչպէս որ կայ՝ այնպէս էլ լինի. միայն թէ իր խալիֆայութիւնն ընդունեն, որ ժամանակին, եթէ իսլամութեան, դէմ քրիստոնէութիւնը օյիններ սարքի, իսկոյն, Սուլթանի մի մատ բարձրացնելով՝ ամբողջ մուսուլմանութիւնը կանգնի ինչպէս մի մարդ... Որ ամբողջ քրիստոնէութիւնը դողայ մեր Իսլամի առաջ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ինչ եմ ասե՜լ...

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Եւ հէնց այդ է պատճառը, որ Սուլթանն ուզում է ամենից առաջ՝ էս հայ փիս միլլէթը ջնջել սաղ աշխարհի երեսից։ Թուրքիայումն էլ կամաց կամաց կոտորում են և շատ չի քաշիլ՝ մի տաս տասնուհինգ տարի՝ այնտեղ էլ հայ չի լինի։

ՁԱՅՆ

Այ, չիբին գանդա՜ր։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Հըմ... (Գնալով) Միրզա Իւսուֆ աղա, մի եավաշ. ո՞վ են, այ, նրանք. ո՞րտեղից են եկել։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Նրա՞նք. Ջիվանշիրի, Զանգեզուրի, Ջիբրայիլի մահալներից են. այ, նրանք էլ (ցոյց տալով միւս խմբի վրայ) Բօրչալուից, Ղազախից... Այ, նրանք էլ Շաքիից, Շիրվանից... Էհ՜ն Իրեանցիներն էլ՝ որ գիտես... Մի խօսքով մի անկիւն չկայ, որից մարդ չլինի։ Ամենքն էլ հաւաքւել են։

ՁԱՅՆԵՐ

Այ, սարին խոկեանջարի՜։

Այ, խաժի չայ։

## ՏԵՍԻԼ Է.

### ԵՐԿՈՒ ԹՈՒՐՔ ՈՒՍՈՒՖ ԵՒ ԹԱՂԻ։

(Ուսուֆն եւ Թաղին գալով կանգնում են եւ խօսում կամաց, մինչեւ որ երկու Թուրքը իգական սեռի մասին խօսալով՝ խիստ վաւաշոտ եւ նեարդային գրգռումով, գալիս անցնում են)։

ՄԻ ԹՈՒՐՔ

Փա՜հ... Մի ընէնց գաշանկ, մի ընէնց նաշխուն, մի ընէնց սիրուն, մի ընէնց ջէյրան, մի ընէնց հէյրան, մի ընէնց մարալ... մի ընէնց... (Գնացին)։

ՈՒՍՈՒՖ

(Բարձրացնելով ձայնը) Վալլա՜։

ԹԱՂԻ

Էյ, բո՜ գլուխը վկայ... Մէկ մէկ համրարում ի. դուզ 18։

ՈՒՍՈՒՖ

Է՞հ։

ԹԱՂԻ

Դինիցս դօնմիշ էլած ըլնեմ, թէ մի հատ պակաս ըլնի։ Մասսար հախկը։ Էնենց էի թրխկթրխկոցը գցել, որ ի՞նչ ասեմ։ Աղրայել ի գաւել, աղրայել։ Մի վախտ ձեռքերս բեզարեցին։ Մօսինը պահեցի ու ւէվօլն առայ. եաւ էլ բանը հասաւ օվչարուն... (Ոգեւորւած) Փութ՜ցի, փութ՜ցի ու վեր ածեցի։

ՈՒՍՈՒՖ

Բաս ես պակաս ի փոթ՜ում. ամմա էդքան չէ, որքան դու։

ԹԱՂԻ

Ամմա ինչ վախկոտներն են էս բաթմասսար հայերն է... Հէնց օվչարին ձեռքիդ մօտենում ես թէ չէ՝ ալբէալը (ռէխը ծռելով եւ ձեռքով իբր պաշտպանւելով) էսէնց՝ վայ ամա՜ն, վայ ամա՜ն են գցում, ոտներդ ընկնում ու մութռուբի պէս աղաչում... (Իբր զզւանացած յարձակւելով մի հայի վերայ եւ խբելով) Չէնդ, բաթմաշսար մութռուբ... ու մէկ էլ տեսար (բաւականութեամբ) փու՜ց... Սա էլ գնաց։

ՈՒՍՈՒՖ

Ճատերն էլ՝ հէնց որ մի թուրք էին տեսնում թէ չէ՝ պօ՜ճի... Մենք էլ նրանց ետեից։ Մի անգամ էլ հէնց մօսինիս դիբը քաշեցի՝ իրեք էրմանիներն էլ մի անգամից պարկեցին, իմ ու քու գլուխը վկայ ա։ Ամմա էնէնց փուեցին երեսների վրայ, որ դնչըները գլխների հետ դզւեցին ու արնակոլոլ էլան։



ԹԱՂԻ

Ամմա ինչ թալան էր։

ՈՒՍՈՒՖ

Սաղ աշխարքը լիացաւ։ Թէ մէկ էլ կսկսուի՜... թէ մէկ էլ դովլաթը մեր ձեռքը կնկնի՜...

---

## ՏԵՍԻԼ Ը.

### ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ ԵՒ ԱԲԱՍ ԱԼԻ։

ԱԲԱՍ ԱԼԻ

Էս հայերը որ կան՝ մկների ջինս են. որտեղ ընկնում են՝ ալբէալը մուռտառում են... Մկները մի չնչին բաներ են՝ ամմա էսպէս հաստ տախտակներ են ծակում, պատերն են բչփորում ու գլուխները հանում. գետնի խորքերն են մտնում. սարերն ու դայէրն են էս եանից ծակում ու էն եանիցը դուրս գալիս և ամեն տեղ էլ մուռտառում.—հէնց էդպէս էլ՝ հայերն են։ Քանի էս հայերը կան էս մեր երկրում՝ մուսուլմանի բանը խարար ա. մուսուլմանը հոգին է հաւատարում. դրանց առաջը պէտք է շուտ առնենք. դրանց քօքը պէտք է ջնջենք...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Եաւաշ՝ Աբաս Ալի աղա. դրանց քօքն աւելն ասալը հեշտ է. բաս իշխանութին՞ը... գիտե՞ս ինչ կանի։

ԱԲԱՍ ԱԼԻ

(Բմծիծաղ) Ին՞չ արեց Բաքւի, Իրեանի կոտորածներից յետոյ ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ուրախացած եւ ոգեւորւած) Հէչ։ Ոչինչ չարեց։

ԱԲԱՍ ԱԼԻ

Տեսնո՞ւմ ես։ Իշխանութինը որ ուզենայ էլ՝ ոչինչ չի կարող անել. չունքի մենք հէա վրայ կաանք այս կամ այն գիւղերի և քաղաքների վրայ՝ լաւ սիրուն կկոտորենք, կթալանենք, կայրենք, ամեն ինչ հիմնայատակ կանենք, կվերջացնենք ու նո՜ր նո՜ր ասի սալդաթը պիտի գայ ու, եանի թէ, խաղաղեցնի... Այս-

սինքըն՝ այն ժամանակ կկարողանայ համնել, երբ արդէն ամէնբան արած պրծած կլինենք։

ԶԱՅՆ

Այ, սարին խոկեանջարի՛։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բաս յեաո՞յ... Ցեաոյ մեր կաշիները կքերթի, չէ՞։

ԱԲԱՍ ԱԼԻ

Ըհմ, ադրաթդ խէր։ Թող գանեն մեղաւորներին ու պատժեն։ Ամբոխի մէջ մեղաւոր չի լինի։ Զատ շատ՝ կարող է բոլոր մուսուլմաններիս շարաֆի տակ գցել. իսկ այդ շարաֆը մեզ համար խաղ ու պար կլինի. չունքի ինչ որ թալանած լինենք՝ նրա քանից մէկն էլ որ տանք, էլի շատ կլինի։ Մենք ինչ ենք կորցնում։ Իսկ եթէ բանն աւելի խոշորացի տանուի, պօլիտիկայով տանուի, այն ժամանակ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ընդմիջելով նրա խօսքը) Այ ջանում, էդ ինչ բան է փոլիթիքան է՞։ Փոլիթիքա հա փոլիթիքա շատ եմ լսել, ամմա...

ԱԲԱՍ ԱԼԻ

Այ, ասեմ... (Մի փոքր մտածելուց յետոյ) Կարճ ասեմ, որ լաւ հասկանաս։ Պօլիտիկան նշանակում է քաղաքականութիւն, իսկ աւելի պարզ՝ խաբեբայութիւն։ Այսինքն՝ քեզանից մեծին էնպէս պինդ շողոքորթես, որ նրան ձեռքիդ մէջ պահես. իսկ քեզանից փոքրին, կամ քեզ հաւասարին՝ էնպէս խաբես, որ նրան գլխի վրայ չուռ տաս։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Փա՜հ։ Էդ հօ մեր հին փեշակն է։

ԱԲԱՍ ԱԼԻ

Ողորմի քո հօրը՛։—Պօլիտիկան էդ է։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Դէ որ էդպէս է՝ կտեսնէք հիմի թէ մենք ինչ փոլիթիքա ենք բանեցնելու։ Կտեսնէք թէ ինչպէս ենք մենք էդ էրմանիների քոքը արևին տալիս։ Դուք մի սովաշէք, ես գնամ մեր երկիրը։—Սաղ Նախչւանն ու մհալները, սաղ Զարալն ու Դարալագեազը՝ կտեսնէք թէ՝ ոնց ենք տակն ու վրայ անելու։

---



## ՏԵՍԻԼ Թ.

### ՆՈՅՆՔ, ԱԽՈՒՆԴ, ԱԼԱՇՐԱՓ, ՅԵՏՈՅ ՍԷՅԻԴ, ԻՍԿ ՅԵՏՈՅ ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

ԱԼԱՇՐԱՓ

Ախունդ աղա, լաւ ես ասում... ամմա... էդ քեաֆուրներն էլ պակաս ջանաւարներ չեն... Վերջը, վախում եմ, տակին էլի մենք մնանք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ո՞վ... ո՞նց... էն մուսուլմանը թող գետինը մտնի, որ պէտք է հայի տակին մնայ։

ԱԽՈՒՆԴ

Ոչ մի ժամանակ էդ չի լինի։ Բա՛ս։ Մենք հիմայ ուրիշ պատրաստութիւն ենք տեսնում։ Փետրվարինը մի փորձ էր միայն... Իրևանն էլ նոյնպէս։ Թէ որ էս անգամն էլ Իրևանը բէգէյրաթ դուրս էկաւ՝ էն ժամանակ կփորձենք էնտեղ, երրորդ, չորրորդ, հլա տասներորդ անգամ էլ, մինչև որ մենք մեր անելիքը կանենք։

(Մտնում է Շուքիւր աղան)։

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Ես զարմանում եմ, վալլա. դու, Ախունդ աղա, փոխանակ հանգցնելու սկսած բոցը, դեռ ուզում ես աւելի բորբոքել։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ախունդին, զարմացած) Սա՞ ինչ է ասում։

ԱԽՈՒՆԴ

(Սէյիդին) Եավաշ, Սէյիդ աղա. դու մեզ զարմացնում ես, վալլա...

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Բալի աղա։ Պէտք է խեղդե՛լ այս բոցը. չունքի մեր երկու ազգութեան համար էլ կործանարար է և վտանգաւոր։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ներողութիւն։ Սէյիդ աղա, դու ինչ մուսուլման ես, որ էդպէս ես դատում։ Դու հայերի կողմը պահելու իրաւունք չունես։

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Ես հայերի մասին չեմ էլ մտածում։ Ես խղճում եմ

մեր Թուրքերին, որ զուր տեղն իրանց տունն են քանդում և ես իմ ասելիքս պիտի ասեմ այս մէջլիսի առաջ: Պէտք է նրանց աչքերը բաց անել...

ԱՄԵՆՔԸ

Փի՜ի՜...

ՈՒՍՈՒՖ

(Բորբոքւած) Բայսը. տեսնենք ինչ պէտք ա անես:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Տեսնենք:

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Հըմ. հայերի կողմն եմ պահում... Ինչի՞ էք ծռում սատածիս միտքը: Բաղւում, որ կոտորածն արեցիք՝ վրայ երրորդ օրն՞ ինչ հանեցին մեր գլուխը հայերը... Ի զուր տեղ 4—500 Թուրք չքկոտորւե՞ց: Եթէ չհասնէր զօրքը՝ հազարների կհասցնէի՞ն, թէ չէ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բաս էզ Թաւար միլլէթին չկոտորեն՞ք:

ԱԽՈՒՆԴ

Հայերը համարձակւեն մուսուլմանի վրայ զէնք բարձրացնե՞լ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էս ի՞նչ օրի ենք հասել:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Տօ ջանըմ, մենք մերը կասենք, թող սա էլ իրանն ասի...

ԱՄԵՆՔԸ

Վասսալամ:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Ախունդ աղա, ամենքն էլ հաւաքւել են:

ԱԽՈՒՆԴ

Ամենքն էլ, ամեն կողմերից էլ, ամեն ծայրերից էլ: Մի հատ պակաս չի մնացել:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Ձաքիր Ալլահին: Դէ, կարգադրեցէք հաւաքւեն: Իսկ Հաջի Ահմադ աղան չի՞ւտ կգայ:

ԱԽՈՒՆԴ

Չէ: Նա իմաց է տւել, որ չի գայ. մի քիչ նախոշ է:

ԱՄԵՆՔԸ

(Համարեա փախցած) Նախօշ է: Ի՞նչն է:



ԱԽՈՒՆԴ

Չգիտեմ ճշմարիտ: Ղազին էլ չի գալու:

ՁԱՅՆԵՐ

Այ, նախշի լիմօնայ գա՜գ...

Այ, խասի չա՜յ...

Այ, սարին գանդա՜ր...

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Դէ, ուրեմն շատալիր, Ախունդ աղա, մեր գործը վերջացնենք, գնամ տեսնեմ ինչիցն է: (Ամենքին) Գիտէք—նա մեր ծուծն է, մեր Իսլամութեան հոգին է, մեր այս մեծ գործի պարծանքն է:

ԱՄԵՆՔԸ

Հալբաթ, բալի, բալի... Աստւած նրան շատ կեանք տայ մեզ համար...

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Ախունդ աղա. դու քո բանը տես... (Քաշելով մի կողմ, առանձին եւ արագ) Ամբոխին, տես, հասկացնեն, որ Սէյիդին չլսեն... Գիտես էլի:

ԱԽՈՒՆԴ

Բալի, բալի... Ես իմ բանս գիտեմ: (Գնաց եւ կանչեց մի քանի սէյիդների ու մոլլաների եւ կարգադրութիւններ է անում: Վերջիններն հաւանութիւն տալով, խկոյն մտնում են ամբոխի մէջ: Հետզհետէ մեծերը առաջ են գալիս):

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Մուրթուզալի բէկ, էսօր ինձ մօտ ճաշի ես: Ես քեզ հետ շատ բան ունեմ խօսելու: Նախիջևանի խաներին յանձնարարութիւններ ունեմ: Նրանց անպատճառ պէտք է տեսնես:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Գլուխը խոնարհութեամբ իջեցնելով եւ աջ ձեռքի մատերի ծայրերը աչքի վերայ դնելով) Գեօզում ուստա:

ԱԽՈՒՆԴ

(Շուքուրին) Կարգադրեցի: (Մածուկ) Սէյիդից վախենալու կարիք չկայ:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Լա՛ւ: Հա, Ախունդ աղա, էսօր մէջիդում ինչքան զէնք կայ:

ԱԽՈՒՆԴ

Մօսին, բերդանքեա, այնպա՝ 2268 հատ, ռեվօլներ էլ—



1001
4065

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Մավզէր, Բրավնի, Փարխար, Սիմիթֆիսօն՝ ինչքան ասես:

ՇՈՒՔՐԻՐ ԱՂԱ

Էլի քիչ է: Ձուտով մի պարախօզ էլ պիտի գայ Բաթում:

ՄԻՒՍՆԵՐԸ

Ցօ, թող գայ է, թող գայ է՜:

ԱԽՈՒՆԴ

Դէ, մի ռանից գալիս է, միւս ռանից գնում: Մասխարայու-թի՜ւն է՝ 30000 մուսուլման գինեցինք: Նա՜ գեմաղ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Շուքիւրին) Մենք էլ կարո՞ղ ենք օգտուել մեր մհալների համար:

ՇՈՒՔՐԻՐ ԱՂԱ

Ոըքան ուզէք: Հէնց մահալների համար ենք հաւաքում, էլի: Ախունդ աղա, համեշա այդքան զապասում ունեցիր հա՜. այտ-մեղի խառնակութեանց ժամանակ, որ պակասութիւն չլինի:

ԱԽՈՒՆԴ

Հալբաթտա: Շուքիւր աղա, մեզ են սպասում: Ես սկսում եմ (Գնաց կանգնեց բեմի մէջ տեղ. հայեացքը մի քանի րոպէ գցում է բազմութեան վերայ ընդհանուր լռութիւն):

ՇՈՒՔՐԻՐ ԱՂԱ

Մուրթուզալի բէգ, չմոռանաս ճաշին ինձ մօտ գալ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ձեռքն աչքերին) Գեօզում ուստա. ո՞նց կմոռանամ:

ԱԽՈՒՆԴ

(Ամբոխին) Այ հազարա՜թ. խաներ, բեկեր, աղալարներ, աղաներ, մոլլաներ, սէյիդներ, դարվիշներ… Ես յայտնում եմ մեր առաջաւոր մուսուլմանների կողմից ամենքի շնորհակալու-թիւնը, որ դուք երկրիս ամեն կողմերից հաւաքուել էք մեր հրա-ւէրքին, մի այնպիսի գործի առթիւ, որ Իսլամութեան համար ներկայումս մահու և կեանքի խնդիր է: Երևում է, որ կովկասի մուսուլմանները շատ լաւ են հասկանում ժամանակիս դրութիւ-նը և ամենայն պատրաստակամութեամբ եկել էք մեր խօսքը լը-սելու: Կրկին շնորհակալութիւն:

ԱՄԵՆՔԸ

Մեր պարտքն է: Մեր պարտքն է:



ԱԽՈՒՆԴ

Ներկայ ժողովը պէտք է պարզի, թէ ինչ ուղղութիւն ենք բռնելու այսուհետև մենք՝ մուսուլմաններս՝ էրմանիների վերա-բերմամբ:

ԱՄԵՆՔԸ

Բա՜լի…

ԱԽՈՒՆԴ

Հայերը, ինչպէս յայտնի է ամենքիդ, չափազանց մեծամը-տել են. նրանք չեն ուզում ճանաչել ոչ պետութիւն, ոչ կառավա-րութիւն, ոչ իշխանութիւն, ոչ էլ իրանից կրած և նոյն իսկ դա-րերով միասին ապրած ազգերին: Թողնենք մենք ռսին և գիւր-ջիններին և խօսենք մենք միայն մուսուլմաններիս մասին: Դուք ամենքդ տեսնում էք, որ հայերն այլ ևս չեն նայում մեր վերայ առաջւայ ակնածութեամբ, այլ շարունակ կռվեցում են մեզ: Նը-րանից պատճառով զրկած ենք մենք մեր բարօրութիւնից, նոյն իսկ ծխականատրութիւններից: Մեր շախսէններն էլ մինչև անգամ չենք կարողանում հրապարակով անել:

ԱՄԵՆՔԸ

Բաս, բաս…

ԱԽՈՒՆԴ

Նոյն իսկ հիմայ՝ հայերն արդէն զէնքը ձեռներին սկսում են կտորել մեր անբա՜ղդ, խե՜ղճ և միամի՜տ հաւատակիցներին: Տեսէք ինչքան են երես թուել, որ երբ մի ուղղափառ, ջաննաթի արժանի մի մուսուլման՝ մեռնում է, նրանք չեն ասում „մեռաւ", այլ ասում են „սատկեց" այս ինչ թուրքը: Հասկանո՞ւմ էք— „սատկեց"… այսինքն այնպէս, ինչպէս սատկում է մի անասուն, մի շուն:

ԱՄԵՆՔԸ

Բա՜լի, բա՜լի… շատ դյուստ ա… շատ դյուստ ա… Բալի:

ԱԽՈՒՆԴ

Տեսնո՞ւմ էք, Բաքւում, Իրևանում, մի քանի տեղեր էլ, հա-յերը իրանք են պղտորում ջրերը, թուրքերին ոտքի կանգնեցը-նում ու իրանք էլ յետոյ մեզ կոտորում: Ժամանակն է արեմն, որ մենք էլ սթափւենք և մի լաւ դաս տանք այդ բէհայա, ար-սըզ միլլէթին:

ԱՄԵՆՔԸ

Ժամանա՜կն է, ժամանակն է…

ԱԽՈՒՆԴ

Ուրեմն մենք պէտք է շատ զգուշութեամբ վերաբերւենք այս հարցին և մի սրտով, մի խորհրդով միանանք իրար հետ... Մեր Զուքիւր աղան այս մասին շատ բան ունի ասելու մեր առաջաւոր, խելացի մուսուլմանների կողմից: Հիմա էլ լսենք մենք նրան:

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Առաջ գալով) Այ, ջամահա՛թ... Ես կսկսեմ ուղիղ գործից: Մի 70, 80 կամ 100 տարի սրանից առաջ, ո՞վ էր այս երկրի տէրը:

ԱՄԵՆՔԸ

Մենք... Մեր Զահերը... Մեր պապերը...

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Բաս ինչ՞պէս եղաւ, որ մենք կորցրինք այստեղ մեր իշխանութիւնը, մեր տէրութիւնը: (Լուռ են ամենքը): Դուք կարծում էք թէ՝ մենք այնքան անզօր էինք, որ մեզ յաղթեցին ու երկիրը մեր ձեռքից առան—ոչ. աստաաֆրուլլա: Մեր այս երկիրն այնքան անմատչելի երկիր էր, որ ոչ թէ ռուսը, այլ նոյն իսկ չէյթանը իր ոտքը կկոտրէր և չէր համարձակւի իր քիթը ցոյց տալ, եթէ չլինէին նրան ճանապարհներ ցոյց տուողներ: Բաս ովքեր էին դրանք.—մեր այն ժամանակւայ հպատակ, մեր այն ժամանակւայ ստրուկ հայերը:

ՇԱՏԵՐԸ

Բա՛լի, բա՛լի... Դո՛ւզ խօսք է:

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այդ քեա՛ֆուր միլլէթի ձեռքով այստեղ մեր տիրապետութիւնն ընկաւ. Իսլամի ույժը խորտակւեց...

ԱՄԵՆՔԸ

Վա՛խ, վա՛խ, վա՛խ, վա՛խ...

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ այսօր էլ մենք, մուսուլմաններս, Իսլամին սրբութեամբ հետևողներս, ընկել ենք մի ամենախայտառակ դրութեան մէջ: (Սրտով) Իսլամ ժողովուրդը չի կարող և չպէտքէ հպատակ լինի ոչ հաւատացեալ թագաւորի: Բայց այսօր—ենք: Դա խայտառակութիւն չէ՞, դա սրբապղծութիւն չէ՞ Իսլամի համար:

ԱՄԵՆՔԸ

Բաս, բաս, վա՛յ մեր գլխին... Վա՛յ մեր գլխին...



ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ այդ բոլորն եղել է ո՛ւմ շնորհիւ: Կրկնում եմ.—մեր բնամուս, դինսըզ ստրուկների, այն քեա՛ֆուր միլլէթի, որ մի քանի տասնեակ տարիներ առաջ՝ շների պէս լիզում էին մեր փեշերը, գլուխները ջարդւած օձերի պէս գալարում էին մեր ոտների տակ:

ԱՄԵՆՔԸ

Բա՛լի, աղամ, բա՛լի...

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ահա այդ միջատները դաւաճանեցին մեզ և... մեր երկնային Լուսինը ծախեցին իրենց անպէտք փայտի կտորին:

ԱՄԵՆՔԸ

Վախ, վախ, վախ...

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այդ էլ բաւական չէր... Ի՞նչպէս վարւեցին այնուհետև մեզ հետ.—մեզ՝ տարիների ընթացքում՝ կամաց կամաց հաւաքեցին իրենց բուռը, կալ ու կապ արեցին իրենց չէյթանական ցանցերի մէջ, ճնշեցին և անասունի աստիճանին հասցրին:

ԱՄԵՆՔԸ

Բա՛լի. շա՛տ դրուստ ա... Դրանց քո՛քը ջնջւի...

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Մեր հողերը մեր ձեռքից առան, մեզ գետնի հետ հաւասարեցին: Ի՞նչ ենք մենք մեր դումաներում, բօրսային գրասենեակներում, հասարակական ժողովներում: Ի՞նչ դրութեան մէջ է ապա մեր խեղճ ժողովուրդը գիւղերում: Ո՞ւր են մեր հողերը, մեր իրաւունքները... Ուր որ գնաս՝ թէ գիւղ, թէ քաղաք՝ ամեն տեղ էլ հարուստը հայն է, տէրը հա՛յն է, իշխողը հա՛յն է... և Իսլամը ամեն տեղ գլուխ է խոնարհեցնում հայի առաջ, շողոքորթում է միշտ նրան, քծնում է, որ ինչ է այդ իմանըր'գ, այդ քեա՛ֆուր բաթմասարների աչքը քաղցր լինի նրա վրայ:

ԱՄԵՆՔԸ

Բալի... էդ բաթմասարները մեր հոգին են հանել....

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Վերցրէք Բագուն, Շուշին, Գեանջան, Իրևանը, Նախչւանը, Զաքին, Շիրվանը—սաղ ինչքան որ կայ մահալները, գիւղերը և

կռւենք, որ ամեն տեղ էլ հայն է առաջին տեղը կանգնել ու մուսուլմաններին իրենց ստրուկները շինել։

ԱՄԵՆՔԸ

Սրանից յետոյ տեսնենք...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Նոյնպէս էլ վարւում են Գիւրջիների հետ։ Նրանք էլ են հայերից դաղ-բէղաղ կանչում. բայց սովորած են իրենց առայ-ժըմ չեզօք ձեւացնել։ Մուսուլմաններ. Թիֆլիզի, Քութայիսի նահանգները Գիւրջիներինն են, նրանք էլ պէտք է տիրեն. Բագւի, Գեանջու, Իրեւանի նահանգներն էլ մերն են, մենք էլ պէտք է տիրենք։

ԱՄԵՆՔԸ

Մե՛րն են... Կտիրե՛նք... Պէտք է տիրե՛նք...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ տիրելու ժամը հասել է։ Ուստի մենք՝ ամենից առաջ պիտի ոչնչացնենք այն տարրը, որ միշտ, մեր ամեն գործերին շէյթանի պէս խոչնդոտ է հանդիսանում։

ԱՄԵՆՔԸ

Պէտք է ոչնչացնենք... Ինշալլա՛հ... Ինշալլա՛հ...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Զունքի էդ միլլէթը հիմայ էլ մտածում է օր առաջ կոտորել կովկասի բոլոր մուսուլմաններին, որ իրանց տեղը լայնանայ ու իրենց համար Թագաւոր գնեն այստեղ։

ԱՄԵՆՔԸ

Պոյ, պոյ, պոյ...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Բաս, բաս։ Հենց այդ է պատճառը, որ հիմա իրենց կոմիտէտների շնորհիւ՝ եարաղ ասպարով լցնում են սաղ աշխարհը. էլ գիւղեր, էլ քաղաքներ... Եւ վաղը կամ միւս օրը դրանք պէտք է յարձակւեն մեր վրայ ու բնաջինջ անեն մեզ. որ իրանց շէյթանական նպատակներին հասնեն։

ԱՄԵՆՔԸ

Փի՜ ... Ինչ բեաֆիար օձեր են, տօ՜...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Բաս։ Հիմա պէտք է մենք զգոյշ լինենք, որ յանկարծակիի չգանք։ Մե՛նք պէտք է յարձակւենք ամեն տեղ—թէ քաղաք-



ներում և թէ գիւղերում։ Մեր ունեցած չունեցածները բաղմը պէտք է հանենք, ծախենք-ծախծախենք ու եարաղ ասպարի տանք։ Յարձակւենք, կոտորե՛նք, այրե՛նք... Քարուքանդ անենք նոյն իսկ նրանց սրբութիւնները։

ԱՄԵՆՔԸ

Սրի կքաշենք ամենքին... Քար ու քանդ կանենք սաղ...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ այնտեղը պիտի հասցնենք նրանց, որ ամեն բան թողնեն ու փախչեն իրենց երկրից, իրենց վաթանից՝ առանց յետ նայելու. որ մթուրների օրն ընկնեն ու տեղ չգտնեն իրենց գլուխները պահելու և այն ժամանակ մեր մուսուլմանները թող տէր դառնան նրանց հողերին, նրանց մալ ու մուլքին։

*Ամբոխի մէջ խիստ վայրենի ուրախութեան աղաղակներ եւ շարժումներ։*

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Իմացած կացէք հա՜... թէ հիմայ մի բան արեցինք, հօ, արեցինք. իսկ եթէ մի քիչ անց կենայ և հայերը զէնքի տէր դառան թէ չէ՝ մեզ ամենքիս բնաջինջ կանեն. մի՛ հատ մուսուլման չի մնայ. չունքի նրանք ռումբեր ունեն. որտեղ որ գցեն՝ սաղ քաղաքի կէսը մի՛ րոպէում դարբադաղին կանեն. էլ տուն էլ տեղ, էլ մարդ—ինչ ասես։

ԱՄԲՈԽ

Բաս ո՞ւր ա մեր Թասիրը... Ալլահը դրանց տունը քանդի...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հիմա ես ձեզ մի քանի խորհուրդ պիտի տամ, որոնցով պէտք է ղեկավարուէք։

ԱՄԲՈԽԸ

Բույուր... Բալի... Բույուր... Հրամայի...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Առաջին։ Շիան և Սիւննին չպիտի բաժանեն մեզ իրարից... Շիան թող Շիա մնայ, Սիւննին էլ՝ Սիւննի... Բայց չէ՞ որ ընդհանուր գործի առաջ մենք ամենքս էլ մուսուլմաններ ենք և միասին պիտի գործենք յանուն Իսլամի։

ԱՄԲՈԽԸ

Բա՜լի... Բա՜լի... Հա՜լբաթ... Մէկ ենք... Միասին պիտի գործենք յանուն Իսլամի...

ՉՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Երկրորդ։ Որտեղ որ յարձակւէք, որտեղ որ սպանութիւն անէք, որտեղ որ հայերի նախիրները քշէք կամ մասդիր լինէք մի որ և է բան անելու... մի՛ օր, երկո՛ւ օր առաջ գանգատը գանգատի ետևից տուեցէք պրիստաւներին էլ, նաչալնիկներին էլ, գուբերնատօրներին էլ, մինչև անգամ նամեստնիկին էլ... Օր առաջ հարայ—հուրայը գցեցէք, որ հայերը ձեզ դիմադրութիւն չեն տալիս, որ իշխանութիւնները՝ ամէնքն էլ ինչպէս իմանան թէ առաջ հայերն են պատճառ եղել և մենք՝ մուսուլմաններս՝ միայն նրանց աչքն ենք հանել։

ԱՄԲՈԽԸ

(Ուրախ) Բա՜շ ուստա... Բա՜շ ուստա...

ՉՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Երրորդ։ Նոյնպիսի գրաւոր և բերանացի գանգատներ արէք և հայ պաշտօնեաների վերաբերմամբ։ Հարիւրաւոր մարդկանցով՝ տասը, քանի անգամ գնացէք նոյն մեծամեծների դըռները, խնդրեցէք, աղաչեցէք, լաց եղէք, ոտներն ընկէք, թէկուզ նրանց զահլանը տարէք, միայն յաջողեցրէք, որ եղած հայ պաշտօնեաներին դուրս անեն և նրանց տեղ նշանակեն մեր թուրքերին կամ ռուսներին... Ինչպէս էլ վարւեցէք էն ռուս պաշտօնեաների հետ. որոնք հայերի կողմը կպահեն։

ԱՄԲՈԽԸ

(Նոյնպէս) Ո՜ւֆ, ո՜ւֆ... Բա՜շուստա... Գեօզի՜ մուստա... Էդ մեր փէշակն ա... Մենք լաւ ենք իմանում...

ՉՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Եւ չորրորդ։ Ինքներդ ստեղծեցէք առիթներ։ Կեղծեցէք. նոյն իսկ ստորացէք, եթէ հարկաւոր լինի. ոչ մի միջոցի առաջ մի կանգնէք... միայն թէ յաջողեցրէք նպատակին հասնել։ Եթէ մի տեղ՝ մի որ և է թուրք սպանուեց, թէկուզ հէնց թուրքի ձեռքով, կամ մի որ և է տեղ հայից խիստ դիմադրութեան հանդիպեցէք, իսկոյն ինչպէս ասեցի՝ աշխարհ թնդացրէք, բոլոր մուսուլմաններին ու պաշտօնեաներին ոտքի՛ կանգնեցրէք. աջ ու ձախ, աշխարհի բոլոր ծայրերը թելեր խփեցէք՝ թէ հայերը սպանում, կողոպտում են թուրքերին, կոտորում են... և այնուհետև դուք՝ առանց վախենալու վրայ տուէք, վրա՛յ տուէք հայերին ու անխնայ կոտորեցէք նրանց. ոչ կին հարցրէք, ոչ մարդ,



ոչ երեխայ և ոչ ծեր... Անխնայ ջնջեցէք ու այնպէս սրի և կրակի դէմ արէք նրանց, որ նրանցից մի՛ հատը չպրծնի։ (Աւելի ոգեւորուած եւ հպարտութեամբ) Թող հասկանա՜ն հայերը, որ հեշտ չէ՛ բազմամիլիոն՝ զէնքի սովոր՝ մահմեդականների հետ հանար անելը։

ԱՄԲՈԽԸ

(Վայրենի աղաղակներով) Ո՜ւֆ, ո՜ւֆ, բա՜շ ուստա... Բաշուստա... Գեօզում ուստա... Մի հատ հայ չենք թողնի...

ՉՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Ես էլ կազէթներում ամէն հնար գործ կդնեմ, որ սաղ աշխարհը թքի նրանց վրայ... Որ Իրանումն էլ, Թուրքիայումն էլ, ամէն, ամէն տեղ Իսլամը կանգնի ու ջնջի հայերին... որ ամէն տեղից էլ վերջանայ էդ բաթմասար միլլէթը... որ հայ անունը պատմութեան մէջ էլ չմնայ։

ԱՄԲՈԽԸ

(Վայրենի աղաղակներով) Թող չմնայ.... Թող չմնայ... Տեսէք ինչ ենք անելու մենք...

---

## ՏԵՍԻԼ Ժ

### ՔԵԱԼԲԱԼԱՑ ՆԱԲԻ

(Այս միջոցին Չուքուր աղայից յետոյ, վրդովուած առաջ է գալիս Սէյիդ աղան, բայց յետ է հրւում մի լաւ հագնուած Թուրքից, որը բազմութիւնը ճեղքով, եկել, կանգնել էր Չուքուր աղայի տեղը)։

ՔԵԱԼԲԱԼԱՑ ՆԱԲԻ

Այ ջամահա՜թ, այ հազարա՜թ, ա՜յ մէջլիս... Ես էլ եմ ուզում խօսք ասել... Լսեցէք ինձ... Ես էլ եմ խօսում... (Լռութիւն)։ Ես ուզում եմ ասել, մասալամ, որ ես շատ տեղեր եմ ման եկել... Ես ամիսներով ու տարիներով, մասալամ, ձիու վրից չեմ վեր եկել... Ես գնացել, հասել եմ Իրան, Ֆարսստան, Սէյխստան, Աֆղանիստան, Բէլուջիստան, մասալամ, շատ երկըրներ...

ՉՈՒՔՈՒՐ ԱՂԱ

(Կամաց) Ախունդ աղա, սա ո՞վ է։

ԱԽՈՒՆԴ

(Վրդովուած եւ նոյնպէս կամաց) Չեմ իմանում, վալլա...

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Հրա՜ էն երկրներից էկել գնացել եմ Մոսկով, Պետրպօլի. մասալամ, սաղ ռսի երկրները…

ԶՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ախունդ աղա, ի սէր Ալլահի, ռադ արէք դրան:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Սա մեր բանը կփչացնի. փեշը քաշիր:

ԱԽՈՒՆԴ

(Մօտենալով նրան՝ փեշը քաշում է եւ նա իսկոյն կտրելով խօսքը նայում է ցած՝ Ախունդին) Հեռացիր. էդ քու տեղը չի:

(Ամբոխի առաջին կարգերում ծիծաղ):

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

(Արագացնելով ասելիքը) Հմի ես ուզում եմ ասել, մասալամ, որ ամիսներով չօլերումն եմ քնել, սարերի դոշերին ու ծերերին եմ քնել… Քեալբալայ եմ մենակ գնացել ու եկել…

(Շուքիւր աղան գլուխը բռնում է անհամբերութիւնից. իսկ Ախունդը կրկին մօտենում է եւ խիստ կերպով ասում).

ԱԽՈՒՆԴ

Բաւական է. հեռացիր:

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

(Մի ձեռքով յետ պահելով Ախունդին) Մասալամ, ուզում եմ ասել, որ պէտք է կոտորենք հայերին…

ԱՄԲՈԽԸ

Պէտք է կոտորենք… Պէտքէ կոտորենք…

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Պէտք է ջնջենք ամենքին, որ մի հատ հայ չմնայ:

ԱՄԲՈԽԸ

Պէտք է ջնջենք… Սաղ կջնջենք…

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Այ հազարամթ. ես պրծայ: (Ախունդին) Ին՞չ էիր ուզում ինձանից:

ԱԽՈՒՆԴ

Ին՞չ էիր յիմար յիմար դուրս տալիս:

ՔԵԱԼԲԱԼԱՅ ՆԱԲԻ

Բա որ դու ու նա (ցոյց տալով Շուքիւր աղային) էրկու սահաթ դուս էիք տալիս, էն ոչին՞չ… Տեսա՛ր, մի էրկու խօսքով ինչպէս ոգեւորեցի ամենքին: (Իսկոյն մտնում է հպարտութեամբ ամբոխի մէջ):

---



## ՏԵՍԻԼ ԺԸ

### ՆՈՅՆՔ եւ ՍԷՅԻԴ ԱՂԱ

ՍԷՅԻԴ ԱՂԱ

(Խօսում է խիստ ոգեւորութեամբ, շեշտելով եւ բարկացած) Բանդէյի մուսուլմաններ… Էս ինչեր են կատարւում այստեղ… Էս ին՞չ կոտորածների մասին է խօսքը… Եր՞բ է հայը մտածել մեր վրայ յարձակուելու… Ինչո՞ւ ենք մենք նրանից բնաջինջ ուզում անել, կամ կկարողանա՞նք արդեօք… Կամ վերջապէս կա՞րող են արդեօք նրա՛նք մեզ նոյնն անել… Երբե՛ք. սո՛ւտ է: Ես չեմ հաւատում դրան:

ԱՄԲՈԽԻՑ ՄԻ ԵՐԿՈՒՍԸ

Հալբաթ… Ձատ դրուստ ա ասում Սէյիդ աղան:

ԱՄԲՈԽ

Ինչի՞ չէ… Ինչի՞ չէ… Մէկին սաղ չենք թողնիլ…

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Ես չեմ հաւատում: Մենք միայն մեր տունն ենք ուզում քանդել: Մեր խեղճ մուսուլմանները ստնատակ կերթան: Դա վնասակար է մեզ ամեն կողմից: Դա դէմ է նոյն իսկ մեր ղուրանին: Իսկ ին՞չ է յիշեցնում մեզ մեր պատմութիւնը: Մեր Չինգիս խաները, մեր Լանկթամուրները, նոյն իսկ Ձահարբաններն ու Աղա Մամադ խաները, դեռ շատ շատերն էլ, նոյնպէս ուզում էին հայերին ջնջել, բայց յաջողեցի՞ն արդեօք:

ԱՄԲՈԽԻՑ

Հէնց էդ է որ մեր տունը քանդեցին է՛:

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Այո. եթէ կարողանային՝ կանէին: (Արհամարհանքով) Հիմա դո՞ւք էք ուզում այդ անել:

ԱՄԲՈԽ

Հալբաթ… Ինչի՞ չենք անիլ…

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Սո՛ւտ է: Օրինակներն աչքներիս առաջն են: Տեսա՞ք հայերն ինչ հանեցին մեր գլուխը թէ Բագւում և թէ Իրեւանում. և եթէ զօրքը չհասնէր, ին՞չ օրը կգցէին մեզ:

ԱՄԲՈԽԸ

Հէչ: Ոչինչ չէին անիլ:

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Դուք խօսքով էք ասում, իսկ ես փաստերով: Բայց քանի որ դուք ինձ դիմադրում էք, տեսնենք թէ ինչ է ասում մեզ մեր սուրբ Ղուրանը: Այդ Սխունց և Ջուքիսի աղաները լաւ պիտի իմանան: (Աւելի բարձր ձայնով եւ ոգեւորուած Ղուրանի խօսքերով) Ղուրանն ասում է. „Ով մարդիկ, մի՛ թափէք միմեանց արիւնը. չէ՞ որ դուք չէք կարող ստեղծել ամենաչնչին մի էակ“... Յետոյ. „Մարդս ստեղծուած է իմ կերպարանքով, իսկ նրա վրայ ձեռք բարձրացնելը՝ նշանակում է ինձ վիրաւորել“... Յետոյ ասում է. „Ամեն մեղք կարող է ներել անկեղծ զղջմամբ, իսկ մարդասպանութիւնը—երբէք“: Յետոյ էլ ասում է. „Մարդասպանի բաժինը—յաւիտենական դժոխքն է“: (Աւելի բարձր ձայնով) „Արգելում եմ ձեզ, ասում է, մեր սուրբ Ղուրանի 85-րդ սուրայի 2-րդ գլխում, թշնամութիւն անել քրիստոնեաների դէմ, վիրաւորել և վնասել նրանց կեանքին“, իսկ ժողովուրդների մէջ թշնամութիւն սերմանելը, նոյն Ղուրանով, մարդասպանութիւնից աւելի վատ է:

ԱՄԲՈԽԻՑ ՄԻ ԵՐԿՈՒՍԸ

Բա՛լի... Բա՛լի:

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Ի՞նչ իրաւունքով ուրեմն դուք ուզում էք ներկել ձեր ձեռքերը հայերի արիւնով... Ո՞վ է տուել ձեզ այդ իրաւունքը: Ալլա՞հը—չէ. Մուհամմէ՞դը—չէ. մեր կրօ՞նը—չէ. մեր ղուրա՞նը—տեսաք որ չէ: Ի՞նչ իրաւունքով էք ուզում ձեռք բարձրացնել այն մարդկանց վրայ, որոնց յետ մենք կապուած ենք ամեն բանով. որոնք մասնակից են եղել միշտ մեր վշտերին ու ուրախութիւններին, մեր քաղցր ու դառն օրերին: Մենք ապրում ենք նրանցով, նրանք էլ մեզնով: Խղճացէ՜ք. ա՜յ ուղղափառ մուսուլմաններ, ձեզ, ձեր ընտանիքներին... Իսկ եթէ մենք նրանց կկոտորենք, նրանք էլ ջէր մնող մըլլէթ չեն. նրանք մեզնից տասն անգամ աւելին կկոլեն:

ԱՄԲՈԽԸ

Չե՛ն կարայ... Չե՛ն կարայ... Հէրի՛ք է... Հէրի՛ք է... Բա՛սսա...

ԱՄԲՈԽԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Սէյիդ աղան դրուստ ա ասում... Ճատ դրուստ ա ասում...

(Ամբոխի մէջ իրարանցում է նկատւում: Թեր եւ դէմ կարծիքներ ու շարժումներ):



ՍԷՅԻԴ ԱՂԱ

Ե՞րբ է հայը զոռով խլել մեր ձեռքից մեր հողերը, մեր իրաւունքները, մեր ծիսակատարութիւնները: Սո՛ւտ է: Կամ ինչո՞ւ են ասում թէ այս երկիրը միայն մերն է եղել... Նայեցէք նրանց աւերակներին, որ սփռուած են համարեա ամբողջ Անդրկովկասում, որ շինուած են տասնեակ դարերով մեզնից առաջ և կանգուն են մինչև օրս էլ, այն ժամանակ կհամոզուէք, որ այս երկիրը մեզնից առաջ, հէնց էն գլխից, հայերինն է եղել և հայերն էլ տէրե՛ր են... Իսկ եթէ նրանք փիս խօսք են ասում մեր նոր մեռածների համար, չէ՞ որ մենք էլ մուրտառ ենք համարում նրանց մեծերին ու փոքրերին և դէն ենք ածում մեր ամաններից այն ամենը, ինչին որ կպչում է նրանց մատն անգամ: Ինչո՞ւ են ուրեմն զանազան խօսքերով չփոթեցնում ձեր խաղաղ մտքերը:

ԱՄԲՈԽԸ

(Գոռալով) Թող հեռանայ Սէյիդը... Սէյիդը թող հեռանայ... Էլ չենք ուզում լսել Սէյիդին...

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Սպասեցէ՛ք վերջացնեմ... Մի երկու խօսք էլ...

ԱՄԲՈԽԸ

Չենք ուզում... Չենք ուզում... Հեռացի՛ր...

ՍԷՅԻԴ ԱՂԱ

Լաւ: Վերջին խօսք միայն... Միթէ իշխանութիւն չկայ այս երկրում, որ ձեր առաջն առնի... Միթէ...

(Այս միջոցին ամբոխի միջից մի քանիսը մօտենում են եւ ոյժով դադարեցնում ու յետ մղում Սէյիդին):

ԱՄԲՈԽԸ

Հերի՛ք է... Չենք ուզում լսել Սէյիդին... Հեռացրէ՛ք Սէյիդին: Չենք ուզում... (Սէյիդի հեռանալուց յետոյ) Էդպէ՛ս, ա՜յ, էդպէ՛ս... Գեանջուց մատահ ա եկել...

---

## ՏԵՍԻԼ ԺԲ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Է՜յ մուսուլմաններ, լսեցէք ինձ: (Լռութիւն) Սէյիդի խօսքերը հէչ: Ջուքիսի աղան շատ լաւ նկատեց ամեն բան:

Մենք պէտք է մեր անելիքն անենք։ Ես ուզում եմ աւելացնեմ միայն, որ իշխանութիւնից, որի մասին ուզում էր ասել Սէյիդը, մենք վախենալու ոչինչ չունենք։ Իշխանութիւնն էլ է դաղ—բէզար կանչում հայերից. նա էլ է ուզում, որ մենք դրանց հախիցը գանք. չունքի հայերն սկսել են ռուս մեծամեծներին ու չինովնիկներին սպանոտել ու վիրաւորել և հիմա ուզում են նոյն իսկ ռսին դուրս անել կովկասից, որ իրանք տիրանան... Ես ուզում եմ ասել, որ իշխանութիւնը մեր անելիքի դէմ ոչինչ չունի, որովհետև Բագւի կոտորածների ժամանակ՝ սկզբում չըխառնուեց և թողեց մի լաւ ջարդ տանք հայերին... Ինչպէս էլ արել է Իրևանումը...Եւ մենք հէնց զօրքի առաջ անխնայ կոտորում էինք, թալանում էինք նրանց տներն ու դուքանները... Ահագին տակառներով նաւթ էինք տանում ու տներնածելով՝ կրակ էինք տալիս... Բայց երբ որ, երրորդ օրը, հայերն սկսեցին մեր առաջն առնել, իսկոյն զօրքը հասաւ խաղաղեցնելու և դրանով մեզ օգնեց... Բալախանայից հայերին չթողեցին քաղաք մտնել և բոլորին խուզարկեցին ու զէնքերն առան, այն ինչ մեր մարդիքը գիւղերից եկան մեզ օգնութեան՝ առանց մի որ և է արգելքի։

ՄԻ ՄԵԾ ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐ

(Առաջին կարգից) Տօ դէ դուզն ասա, էլի՜։ Հէնց ինքը իշխանութիւնը մեզ օյինի հանեց, էլի՜։ Դուզ ասա, թող ամենքն էլ իմանան, էլի՜։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՓ

Այո։ Ուրեմն արեցէ.ք, ինչպէս ասաց Շուքիւր աղան։ Իսկ մենք էլ, բոլոր ծառայողներս, խաներս, բէկերս, աղալարներս ամեն կերպ կօգնենք ձեզ, մեր նպատակին հասնելու համար։

ԽԱՆԵՐ, ԲԷԿԵՐ, ԱՂԱԼԱՐՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ

Բալի, բալի, բաշուստա... Մենք մի՜շտ պատրաստ ենք։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՓ

Դէն գցէք ուրեմն ձեր մտքերից այսպիսի Սէյիդների խօսքերը։ Դո՛ւրս հանեցէ.ք էդ տեսակ մարդկանց ձեր միջից։ Դրանք միայն պղտորում են մեր ազատ միտքը, մեր ազատ կամքը, մեր այս սուրբ գործը։ Դրանք դաւաճանո՛ւմ են Իսլամին։

ԱՄԲՈԽ

(Կատաղի) Դո՛ւրս արէ.ք Սէյիդին... Նա դաւաճա՛ն է... Դաւաճա՛ն է... Դո՛ւրս արէ.ք...

(Մի քանի մարդիք առաջ են գալիս եւ Սէյիդին բռնելով դուրս են անում մզկիթի բակից)։

---

## ՏԵՍԻԼ ԺԴ

### ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ի՜յ մուսուլմաններ... Հիմայ տեսնում եմ, որ ձեր մէջ կեանք կայ, կամք կայ, ույժ կայ, սիրտ կայ... Այսպիսի վճռողականութեամբ սարեր կարող էք շուռ տալ, ծովեր շարժել իրենց տեղերից։ Ես տեսնում եմ, որ Իսլամի արշալոյսը ծագելու վերայ է. կարող կլինենք մենք՝ նոյն իսկ արեգակի ծագելուն հասնել .. Այն ժամանակ արեգակը կլուսաւորի, կջերմացնի, կվերանորոգի ամբողջ Իսլամութիւնը։ Ղոչչաղ կացէ.ք։ Ամեն մի մուսուլմանի արիւն ջաննաթի ոսկէտախտակի վրայ կգրուի։ Զոհեր պէտք են։ Ոչ մի մեծ գործ առանց զոհերի չի լինի։ Զոհերը միայն պէտք է իշխող դարձնեն Իսլամին, նոյն իսկ ամբողջ աշխարհի վերայ։ Հասել է ժամանակը և մեզանով պիտի սկսուի։ Ո՜րքան բախտաւորութիւն մեզ համար։ Մուսուլմանն արիւնից երբէ.ք չի վախեցել։ Իմացէ.ք՝ որ Իսլամից դուրս մեզ փրկութիւն չկայ։

ԱՄԲՈԽԸ

Մենք պատրաստ ենք... Իսլամից դուրս մեզ փրկութիւն չկայ... Ամենքս զուրբան կլինենք Իսլամի համար...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ապացուցէք ուրեմն, որ մուսուլմանի թասիբը Իսլամի պարծանքն է։

ԱՄԲՈԽԸ

(Համակրութեան վայրենի աղաղակներ, որոնց մէջ լսւում են նաեւ) Մեր թասիբը մեր պարծանքն է... Կրակն ու սուրը կըլինի մեր ճանապարհ բաց անողը...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Մա՛հ նրան, ով Իսլամի դէմ է։

ԱՄԵՆՔԸ

Մա՛հ նրան... Մա՛հ... Մա՛հ նրան, ով Իսլամի դէմ է... Մա՛հ նրան...

---

## ՏԵՍԻԼ ԺԴ

ԱԽՈՒՆԴ

(Բերում են տասնեակներով կանաչ դրօշակներ։ Շատերի ծայրերին Ալիի փանջերն են, իսկ շատերինն էլ՝ կիսալուսիններ)։

ԱԽՈՒՆԴ

(Բարձրանում է խլերի առաջի սնդուխքների վրայ)։ Բանդէյի՜ մուսուլմաններ... Երդուեցէք, որ այստեղ՝ ամեն մի խօսք, ինչ որ ասուեց, մուսուլմանից դուրս ոչ որ չի իմանայ։

ԱՄԵՆՔԸ

Երդւում ենք... Երդւում ենք...

ԱԽՈՒՆԴ

Ով որ մի ծպտուն հանի այս ժողովի մասին օտարների առաջ, նամանաւանդ բաժմատար էրմանիների, նա չէյթա՜ն է և ջահաննամի զաւակ։

ԱՄԵՆՔԸ

Նա չէյթան է և ջահաննամի զաւակ։

ԱԽՈՒՆԴ

Երդուեցէք. ով որ իմանայ թէ մի որ և է մուսուլման բերնից դուրս է հանել մի խօսք, նրա պարտքն է ջնջել այդ մուսուլմանին աշխարհի երեսից։

ԱՄԵՆՔԸ

Նա կջնջուի՜, նա կջնջուի՜... կջնջուի՜...

ԱԽՈՒՆԴ

Աստա՜ֆրուլլա, որ մի որ և է մուսուլման զաւաճանի մեր այս երդումներին։

ԱՄԵՆՔԸ

Աստա՜ֆրուլլա... Աստա՜ֆրուլլա...

ԱԽՈՒՆԴ

Էդ տեսակ մուսուլմանը հոր յաւիտենական պիտի խորտակէ ջահաննամի խորքերը և տապակուի կպրէ կարսի մէջ. ամին։

ԱՄԵՆՔԸ

Ամի՜ն... Ամի՜ն...

ԱԽՈՒՆԴ

Երդուեցէք կրկին այս մէչիդով. երդուեցէք մեր ս. ղուռանով։



ԱՄԵՆՔԸ

Երդւո՜ւմ ենք... Երդւո՜ւմ ենք...

ԱԽՈՒՆԴ

Հիմայ բաժանուեն շատերից դրօշակներ և հազարաւոր թղթեր, ամեն տեղ տարածելու համար։ Այդ թղթերում գրուած է, ինչ որ պէտք է անէք և շատ մանրամասն։ Դէ, ուրեմն, թող առաջ գան պատգամաւորները, կամաւորները, ռէիսները, դարվիշները. մի խօսքով նրանք, որոնք պիտի մտնեն մուսուլման ժողովրդի մէջ՝ քարոզեն և տարածեն ինչ որ այստեղ ասուեց, ինչ որ թղթերում գրուած է և առնեն մի մի հատ սրբազան դրօշակներ։

(Բաժանում են շատերին դրօշակներ եւ ամենքին էլ մեծ քանակութեամբ թղթեր)։

ՄԵԿԸ

Փի՜ի՜... Ինձ էլ տուէք։ Ինձ ինչպէս էք իմանում։ Մենակ ես բաւական եմ մի քանի մահալների համար։ Ին՞չ է, չոլերս հին են հա՛... Ինձ բանի տեղ չէք դնում, հա՛...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Տուեցէք դրան էլ. դա արժանաւորներից մէկն է երեւում։

(Տալիս են)։

ԱԽՈՒՆԴ

(Կրկին բարձրանալով) Վերջին խօսք էլ, էյ մուսուլմաններ։ Ահա, տեսնո՜ւմ էք ձեռքիս այս բայրա՜ղը։

ԱՄԵՆՔԸ

Բալի... Բալի...

ԱԽՈՒՆԴ

Ահա, այսպէս (հանում է) կհանէք այս բայրաղի փանջը, կամ կիսալուսինը. (դնելով ծոցը) այսպէս կդնէք ձեր ծոցերը, ձեր սրտերի վրայ, ձեր շորերի տակից։

ԱՄԵՆՔԸ

Բալի, Բալի...

ԱԽՈՒՆԴ

Յետոյ կհանէք այս կանաչ շորը... այսպէս... Իր փայտից և... ծալելով այսպէս, կկապէք ձեր մէջքին իբրև գօտիներ... Իսկ այս փայտը՝ կլինի ձեր գաւազանը։ Այսպէս կերթաք ամեն տեղ։ Հէնց որ մուսուլմանների հողերը կմտնէք, իսկոյն չինեցէք

*ձեր բայղաղները տաաչյան պէս և՝ ձեռքերիդ բարձր բռնած՝ մտէք մուսուլմանների մէջ ու բաժանելով ու տարածելով այդ թղթերը՝ քարոզեցէ՛ք, քարոզեցէ՛ք մինչև ձեր վերջին շունչը և կը խոնարհուեն ձեր առաջ բոլո՜ր մուսուլմանները։ Եա՜ Ա՛լի։*

ԱՄԵՆՔԸ

*Եա՜ Ալի… (Ձեռքներին դրօշակները բարձր բռնելով) Եա՜ Ալի… Եա՜ Հազրաթ Աբբաս… Եա՜ Մուրթուզա Ա՛լի…*

**Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր։**

# II

# ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԱՆՀՈԳՈՒԹԻՒՆ

# ԱՆՁԻՆՔ

ՍԱՐԻԲԷԿ
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ
ՄԱՆՈՒԿ
ՄԱՐԿՈՍ
ԳԱԼՈՒՍՏ
ՎԱՆԷՍ
ԱԶԻԶ
ՇԱՀԲԱԶ
ԿՈՍՏԱՆԴ, *սրա որդին*
ՄԷԿԸ
ՄԻՒՍԸ
ԵՐՐՈՐԴԸ
ՀՈՎԻՒ
ՀԵՐԻՔՆԱԶ, *Շահբազի կինը*
ԼՈՒՍԻԿ, *նրանց աղջիկը*
ՆԱԶԱՆԻ ՏԱՏ
ՍԱԼԲԻ
ԱԼՄԱՍՏ ՔԻՔԻՐ
ՄԻ ԿԻՆ
ՄԻՒՍ ԿԻՆ
ՄԻ ԱՂՋԻԿ
ՄԻՒՍ ԱՂՋԻԿ

*Գիւղականներ, կանայք, աղջիկներ եւ երեխաներ։*

## ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՕՐՆ Է

*Դէպքի տեղը. Շարուրի և Դարալագեազի սահմաններում գտնուած գիւղերից մէկում։*

---

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ

Տեսարանը ներկայացնում է Շարուրի եւ Դարալագեազի սահմաններում գտնուած գիւղերից մէկը: Նախաբեմը կազմում է մի փոքրիկ հրապարակ, որի մէջ տեղում բարձրանում է մի հսկայական եւ վերեւում խիտ բազմաճիւղ ու ստուերախիտ ծառ: Աջ եւ ձախ կողմերը տանում են դէպի գիւղական փողոցները: Անմիջապէս յետոյ՝ ձգուած է բեմի ամբողջ լայնութեամբ մի պատ, որը մէջ տեղից բաւական տարածութեամբ (համեմատած բեմին) փլատակուած է, իսկ կողերը կանգուն են՝ ամեն կողմից 2—6 արշին տարածութեամբ (նոյնպէս համեմատած բեմի լայնութեանը), որոնց շարունակութիւնները ծածկւում են ծառոց կուլիսների յետեւում: Յիշած փլուածքից երեւում է Շահբազի պարտիզի ներսը, որից յետոյ նոյն պարտիզի միւս պատն է իւր փողոցի դռնով: Աջ կողմում երեւում է նրա տան եւ այվանի մի մասը: Երկրորդ պատից յետոյ, որ ձգուած է զուգնթաց առաջինի հետ, փողոց է, ապա գիւղական անկանոն դասաւորութեամբ շինուած տներ եւ բակեր եւ յետոյ զանազան բարձր ու ցածր կտուրներ, որոնց միջից՝ աջ կողմում՝ երեւում է գիւղական եկեղեցու մի մասը: Իսկ այս բոլորից յետոյ՝ գիւղական դաշտային մի լանդշաֆտ: Հորիզոնում կապուտակ լեռների մի շղթայ, որի աջ կողմում երեւում է Մասիսը:

*Վարագոյրը բարձրանալուն պէս՝ հնչում են եկեղեցւոյ պատարագի վերջին զանգակները։*

---

# ՏԵՍԻԼ Ա

## ՍԱՐԻԲԵԿ ԵՒ ԼՈՒՍԻԿ։

ՍԱՐԻԲԵԿ

(Գալիս է աջ կողմից եւ տեսնում է Լուսիկին ձախ կողմի պատշգամբը ավլելիս՝ մէջքը իրեն դարձրած։ Զգուշութեամբ մօտենալով) Լուսիկ...

ԼՈՒՍԻԿ

(Յանկարծ յետ նայելով, ժպտում է եւ կարմրում)։ Եա՜... Վախե՜ցայ... (Շփոթուած շարունակում է իւր գործը)։

ՍԱՐԻԲԵԿ

(Կոտրուած) Խի՞. ինձնից վախում ես, հա՛։

ԼՈՒՍԻԿ

Խի՞ եմ վախում... Ամա դէ... (Շփոթուած կրկին աւելում է)։

ՍԱՐԻԲԵԿ

Ժամից ո՞նց դուս էկար, որ չտեսայ։

ԼՈՒՍԻԿ

Նանն ու հայրը որ ժամ էկան, ինձ տուն ղրկեցին, որ տուն ու մուտը սրբեմ։ Մեր տանն էսօր ջան գիւլում կայ։

ՍԱՐԻԲԵԿ

Բարով խէրով ըլնի... (Միջոց։ Լուսիկը շարունակում է աւելը)։ Լուսիկ ջան, ախր ես գնում եմ...

ԼՈՒՍԻԿ

(Յանկարծ դադարեցնելով իւր գործը) Ո՞ւր։

ՍԱՐԻԲԵԿ

Էգուց էն բաշտէն։

ԼՈՒՍԻԿ

Ու՞ր։

ՍԱՐԻԲԵԿ

Էրեւան։

ԼՈՒՍԻԿ

(Կոտրուած) Խի՞ ըտէնց թէզ։

ՍԱՐԻԲԵԿ

Դէ էս իրեք շաբաթ ա, ինչ Էրեւանից դուս եմ էկել. ինձ էրկու շաբթով արձակեցին Էրեւանու մհալի գեղերը. մի շաբաթ էլ ինձ օտպուսկ տւին, որ գամ մօրս տեսնեմ։ Էգուց չէ էլօր



ոնց որ ըլնի՝ պէտք ա Էրեւան ըլնեմ. թէ չէ կազմակերպութիւնն ինձ շտրաֆի տակ կգցի։

ԼՈՒՍԻԿ

Եավաշ. դու ղուլլուղում չե՞ս։

ՍԱՐԻԲԵԿ

Չէ. Թողի. կազմակերպութիւնի մէջ գինուոր եմ գրուել։

ԼՈՒՍԻԿ

Ղուլլուղդ լաւ չէ՞ր։

ՍԱՐԻԲԵԿ

Խի՞ չի. շատ լաւ էր։ Ամմա ամէն մարթ պարտական ա առաջ իր ազգին ղուլլուղ անի։ Առաջ տօնլուղս 18 մանէթ էր. հացն էլ, տունն էլ, ամէն բան. ամմա հմի՝ մենակ 20 մանէթ ա։

ԼՈՒՍԻԿ

Եա. խի՞ որ։

ՍԱՐԻԲԵԿ

Բաս։ Հմի հայ ու թուրք իրար են գլպչում.-Բաքու, Էրեւան... ամէն տեղ։ Պէտք ա համնենք ամէն տեղ ու մեր հայ քրիստոնաներին օգնութիւն տանք։

ԼՈՒՍԻԿ

Հալբաթ։ Բաս առա՜ջ ինչ ղուլլում էիր։

ՍԱՐԻԲԵԿ

Առաջ. պօվար էի։ Ետե գնացի սալդաթ։ Սալդաթութիւնից պրծայ ու էլի էկայ պօվար մտայ։

ԼՈՒՍԻԿ

Պօվարն ի՞նչ ա։

ՍԱՐԻԲԵԿ

Մենձամենձ աղէքանց մօտն էի. նրանց համար կերակուր էի էփում։

ԼՈՒՍԻԿ

Աշպազ էի՞ր։

ՍԱՐԻԲԵԿ

Աշ՞պազը որն ա. պօվար, պօվար։ Աշպազը անջաղ փլաւ, տօլմայ, քուֆթայ, բողբաշ ա էփում, ամա ես ռանգ ռանգ սուփեր, կաշլէտներ, սօուսներ, բօրշեր, բիշտէկներ, ժարկօներ, մարօժնա, բլումանժա։—Ինչ տես։

ԼՈՒՍԻԿ

Էդ ի՞նչ կերակրներ են։

ՍԱՐԻԲԵԳ

Հը՜մ... Ֆրանցուզի... Այ, որ ինձ տեսնես, էն վախտը կիմանաս։

ԼՈՒՍԻԿ

Հմի դու իմ նանից լաւ քուֆթայ, քեալագեօշ կեփես, հա՞։

ՍԱՐԻԲԵԿ

Ի՞նչ քուֆթայ-բոզբաշ, ի՞նչ տոլմայ-փլաւ, ի՞նչ քեալագեօշ... Էդ մուժիկների կերակուր ա, Լուսիկ ջան. Երեւանու էն մենձամենձները—ասենք, հենց հայերից շատերն էլ՝ ակի էդ չեն ուտում։ Իմ եփած կերակուրները պրակուրօրներն են ուտում, նաչալնիկները, պալիցմէյստրը, հէր գուբերնատն էլ... Դու չես իմանում, Լուսիկ ջան, թէ ինչ բան ա պովրութիւնը... Ըսէնց սիպտակ կալպակը դնում ես գլխիդ, սիպտակ գոգնոցն էլ, ըսէնց, կապում ես գոշտվդ ինչաք ծնկներդ ու արեգի եննուց ընկնում։ (Ոգեւորւած) Ո՞ւհ, Քրիստոսը վկայ ա, մի սաղ թագաւորութիւն ա կուխնէն... (Խիստ ոգեւորւած նկարագրելով) Պլիտան մի եանիցն ա վառւում չրխկչրխկալէն-տրխկտրխկալէն, մի դհիցն էլ կերակուրներն են եփւում փլթփլթալէն-քլթքլթալէն... Ամա եփ որ բիշտէկն ես ժարիտ անում—փա՜հ... (Աւելի մեծ աշխուժով) Պլիտի ցախն ըսենց աւելցնում ես ու գըգռգռ-վըվըվըվը...վառւում ա ու սաղ պլիտի մէջ ալովը բռնում—ոնց որ մի դժոխք... Եաւ դնում ես պլիտի վրէն չուգունէ սաղուղարն ու՝ բմբուլով էլ մէջը կարագ քսում... Հաղիր արած, թակած սուկու կտորն էլ գցում ես մէջը թէ չէ—փշշշ... թշշշ... ճլթճլթալէն ու խշխշալէն ժարիտ ա ըլում ու ուռշո՜ւմ, ըսենց, բանձրանում... Եաւ լէն դանակով եաւաշճա, տակից բանձրացնում ես ու ալբէալը շուռ տալի... Մէկէլ տեսար՝ էլի էն փշշոցը սկսեց, ճլթճլթաց ու խշշաց, կարմրեց ու բանձրացաւ, ոնց որ բուլկին։ Եաւ վեր ես առնում ու դնում մի էրկու նմուտ ժարովնէն ու եաւ էլ, ըսենց, դնում ես տարելկի մէջն ու ձեռաց վազգացնում, պադաւայտ անում... Աղէն որ չի տեսնում, բերնի թուքը կուլ ա տալիս ու քաշում առաջը... Հենց որ դանակը բիշտեկսի միջից քաշում ա թէ չէ—ոնց որ գինով լէքը մի տիկ ճղես—փը՜ը՜լլթ... սաղ տարելկը սոկով լցւում ա։ Մէկէլ տեսար աղէն ժըպտաց ու աչքերը պցեց էրեսիդ... Ըհմ, Լուսիկ ջան, որ մի քանհնգանից հանի ու էդ ըր-



հաթին փէշքաշ անի է—նրա էն ժպտի առաջ հէչ, Քրիստոսի առէք կերէքը վկայ ա... Հա, գիտես, սրանից մի էրկու ամիս առաջ գուբերնատը մենձ մէջլիս էր սարքել... դալխեկա գրեց աղիս թէ քու պօվար Սարիբէկին ղրկա ինձ մօտ արեդ գատօվիտ անի։ Իմանում ես սա ինչ ա... էն ա որ իր պովրիցն էլ ինձ լաւ իմացաւ։

ԼՈՒՍԻԿ

(Խիստ հետաքրքիր) Ե՞աւ, ե՞աւ։

ՍԱՐԻԲԵԿ

Եաւ էլ էն որ՝ գնացի ու ըսէնց կերակրներ էփեցի, որ ամենքն էլ, սաղ մէջլիսաւորը մաննեըը կերակրներիս հեաւէքին ուտում։ Մէկէլ տեսնեմ, ինքը գուբերնատն եկաւ, մէջքիս խփեց ու ասեց. մալադեց Սարիբէգ. հանեց մի տասանոց ու փէշքաշ արեց։ Ամմա ի՞նչ կերակրներ. էլ բլումանժա, էլ մարօժնա... պահ, պա՜հ, պահ... մարօ՛ժնան, մարօ՛ժնան... դու պտի ուտէիր։

ԼՈՒՍԻԿ

Է՞դ ինչ բան ա որ։

ՍԱՐԻԲԵԳ

Մարօժնա՜ն... Փա՜հ... Այ, տես. լաւ արաժան, շաքար, վանիլ, հէր շատ բաներ իրար եմ խառնում, էփում, ածում փորմի մէջ, եաւ սառցի ու աղի մէջ փորմը էնքան եմ արուրում, որ սաղ միջինը բրինձ բրինձ ա ըլնում։ Մի բան ա, մի բան որ... էլ դրանից լաւ բան չկայ սաղ աշխարքում։ Ամմա չէ. դրանից էլ քաղցրը, դրանից էլ սիրտ հովացնողը. դրանից շատ շատ լաւը, մենակ դու ես, Լուսիկ ջան...

ԼՈՒՍԻԿ

(Ցանկարծ կարմրելով եւ ամօթով) Եա՜։

ՍԱՐԻԲԵԳ

(Դրաւելով դէպի ինքը) Աստու մի անումը վկայ։ Ես քեզ չեմ փոխիլ սաղ աշխարքի կերակրների հետ։ Ի՞նչ մառօժնա, ի՞նչ բլումանժա, ի՞նչ բիշտէքս, ի՞նչ պաս... Դու մի ինձ առ՝ ու եաւ տես։ Տես ինչ դայփայ ու շաքալադ պտի խմացնեմ քեզ, ինչ կերակրներ պտի ուտացնեմ քեզ, ինչ դառ ու դառբար պտի հագցնեմ քեզ... Տես ոնց եմ, ըսէնց, մաննեըս մի մի ճրագ չինում ու քու առաջին պահում, որ քու էս նախշուն, դարաֆիլի նման աչքերից, քու էս վարդ վարդ թշերից, գիլաս գիլաս փասօնից, բոյ ու բուսաթից վրայ՝ սաղ աշխարքը պէլացած մնայ, քար կտրի։

ԼՈՒՍԻԿ

Բա որ ըտէնց ա, էլ ո՞ւր ես ինձ թողնում ու գնում։

ՍԱՐԻԲԷԳ

Ախր չի ըլնի, ջէյրանջս. տեսցի որ ամեն գինւոր պարտական ա առաջ իր ազգին զուլլուղ անի, հայ քրիստոնեաներին փորձանքից ազատի ու ետև... Բա ո՞ր օրւայ համար եմ չորս տարի սոլդաթութին արել։

ԼՈՒՍԻԿ

Էդ չա́տ կքաշի։

ՍԱՐԻԲԷԳ

Նանի ինչ տեսեմ՝ մի քանի ամիս կքաշի. ո՞վ գիտայ տարի էլ քաշի. ընչանք որ էս Թուրք ու հայի զուլմաղալը վերջանայ։

ԼՈՒՍԻԿ

(Լացի ձեւով) Բա ես էդքան ո՞նց մնամ. սիրտս կը ճաքի առանցի քեզ։

ՍԱՐԻԲԷԳ

Վայ ես քու հոգուն մեռնեմ, Լուսիկ ջան. եանի ինձ դըուստ սիրում ես։

ԼՈՒՍԻԿ

Չեմ իմանում վալլա. ամա առանցի քեզ ես չեմ կարայ...

ՍԱՐԻԲԷԳ

Բա ես առանցի քեզ կարո՞մ. ամմա ինչ արած. հայ քրիստոնեային պտի օգնութին հասնենք թէ չէ։ Այ Բագու՝ էն անօրէնները չորս հինգ հարիր հայ սրի քաշեցին ու էրեցին, Էրևան՝ հիթսուն վաթսուն հայ մորթոտեցին... Հմի էլ Նախչւանի համար են ասում... Բա դրանց արինը գո՞ւր պտի գնայ... Այ, հմի մենք էլ նրա համար ենք, որ Թուրքերի առաջն առնենք, մենք էլ նրանց հախիցը գանք, որ բանը շատ չմեծանայ. թէ չէ կոտորածն ամեն տեղ կնկնի ու հայ քրիստոնեան ձեռաց կեթայ։

ԼՈՒՍԻԿ

Դէ որ ըտէնց ա, Սարիբէգ ջան. տաս տարի էլ կմնամ ու քեզ կսպասեմ։ Գնա Աստօծ քեզ հետ։ Գնա մեր հայ քրիստոնեաներին օգնական իլ, որ Թուրքերին մուհտաջ չլնեն։ Ամա իմացիր, Սարիբէգ, որ ամեն տեղ էլ ես քեզ հետ եմ. թէ քնած ըլնես թէ զարթուն, թէ նեղ օրի ըլնես, թէ լէն, ամեն, ամեն վախտ. միտքս համեշայ քեզ հետ կլնի։



ՍԱՐԻԲԷԳ

(Ոգեւորուած) Ը՜հմ, Լուսիկ ջան. դու ինձ թազա մարդ շինեցիր. Աստօծը վկայ ա, դու ինձ տղան շինեցիր. Մասիսայ սարի նման՝ դու իմ թեւին կանգնեցիր. Էս սուրբ Համբարձման օրը վկայ՝ քու անունը պէտք ա ըլնի իմ սրբութինը, իմ մեռօնը, իմ աւետարանը, իմ խաչը. սրանից դէնը սրար աշխարքը ինձ համար հէչ. քու անունը պտի տամ ու ընկնեմ ջրի ու կրակի մէջ. հզար հզար գիւլլէքանց առաջ։ Քու մի անունը ինձ կփրկի ամեն փորձանքից. դու իմ ազատարար հրեշտակը պտես ըլնի, Լուսիկ ջան... Դու իմ...

ՀԵՐԻՔՆԱԶ

Լո՜ւսիկ, հա, Լո՜ւսիկ...

ԼՈՒՍԻԿ

(Վեր թռչելով) Վայ, վայ, ժամը դուս ա էկել (Դողդողալով նայելով դէպի իրենց պարտէզը, ուր վխտում են կանայք եւ աղջիկունք ամեն հասակի)։ Մնաս բարով. հմի նանը մազերս կպըճոկի։ Փախի։

ՍԱՐԻԲԷԳ

(Տապով կրկին գրկելով Լուսիկին եւ ամեն բանից յետոյ համբուրելով) Մնաս բարով իմ չախալաանի կանփետս... իմ մատաժնաս... իմ բլումանժաս... իմ յուս ու ապաւէնս... Մնաս բարով։ (Ինքը ծածկւում է)։

---

## ՏԵՍԻԼ Բ

ԼՈՒՍԻԿ, ՀԵՐԻՔՆԱԶ եւ ԿԱՆԱՅՔ եւ ԱՂՋԿՈՒՆՔ։

ՀԵՐԻՔՆԱԶ

Լուսի՛կ, ա՜յ, Լուսիկ... Ո՞ւր ա կորել էս աղջիկը...

ԼՈՒՍԻԿ

(Շփոթուած եւ արագ սրբելով պատի մօտերքը) Էս ա գալիս եմ, Նանի, ըտեղ եմ։

ՀԵՐԻՔՆԱԶ

Ի՞նչ ես շինում ըտեղարենք, քա՛։

ԼՈՒՍԻԿ

(Սրբելով) Պատատակն եմ սրբում։

ՀԵՐԻՔՆԱԶ

Քա. ինչ՞ սրբելու վախտ ես գտել, պըճնկած. ջանգիւլումաւորը քեզ ա մնում ախր։

ԼՈՒՍԻԿ

Պըծայ, նանի, պըծայ. գալիս եմ։ (Աւիլը ձեռքին՝ փլածքի վերայով անցնելով՝ իրանց պարտէզը։ Ջանգիւլումաւորներին) Բարով հզար բարի… Ես սհաթին, նանի։

ՀԵՐԻՔՆԱԶ

(Բարկացած) Քա, պըճնկես ոչ դու, որդի ես գրել ծաղկի ամանը։

ԼՈՒՍԻԿ

Ես սհաթին, նանի. պահել եմ որ չգողանան… (Իսկոյն արագապէս ծածկում է աջ եւ նոյն արագութեամբ երեւում է ծաղկի բղուղը ձեռքին. դնում է պարտէզի մէջ տեղը, որը մի փոքրիկ բղուղ է, բերնին դրած մի մեծ ծաղկեփունջ)։ Ըհ՛ը. համեցէք։

ԱՄԵՆՔԸ

(Ուրախ եւ ծափով) Նազանի տատի, Նազանի տատի, ջան գիւլումը քեզ ա սպասում… Նազանի տատի…

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Առաջ գալով) Ես սհաթին, ձեզ ղուրբան… (Մօտենալով ծաղկէփնձակի բղուղին) Դէ, էկէք, թափ էլէք, պառաւներ ու ջահէլներ, կնանիք ու աղջկերք, հարսներ ու կեսուրներ… Էկէք, չորս բոլորը շարւեցէք, ձեր վիճակն իմացէք, Աստուն փառք տուէք, Աստուն օրհնեցէք… ջան սաղութիւն ըլնի ձեր ամենին, մեն ձերին, պուճուրներին, արար աշխարքին։

(Բոլորը սրտատրոփ մօտենում են եւ կիսաբոլոր կանգնում Նազանի տատի յետեւում, երեսները դէպի հանդիսականները դարձրած)։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Հերիքնազին) Դէ էրեխուն բերէք։ (Բերում են մի 5—8 տարեկան երեխայ, նստեցնում են բղուղի յետեւը, երեսը դէպի հասարակութիւնը դարձրած։ Գլխին մի հաստ քողր են դցում, այնպէս որ ծածկում է ինչպէս երեխային, նոյնպէս եւ բղուղին։ Յետոյ քողրը բարձրացնելով, Նազանի տատը հանում է բղուղից ծաղկեփունջը եւ մի մի հատ ծաղիկ քաշելով, տալիս է շրջապատողներին, իսկ ինքը



վերցնում է ամբողջ մնացած փունջը)։ Դէ, ջահելներ ու ահելներ, ձէն պահէք։ (Երգում են)։

Արադը հեշտացել ա, ջան, գիւլում, ջան, ջան *)
Ճամփէքը կուշտացել ա, ջան, ծաղիկ, ջան ջան։
Իմ Նանիս խաբար տարէք, ջան, գիւլում ջան, ջան
Մուշտարիս շատացել ա, ջան, ծաղիկ, ջան, ջան։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Դիմելով երեխային) Դէ, հանի, բալէս, էդ բղուղիցը… Մի դատ հանի. ինչ ըլնում ա ըլնի։ (Երեխան հանում է մի բանով իրեր)։ Չելաւ, չելաւ (ընդհանուր ծիծաղ եւ քրքիջ)։ Եա գցի տեղը. էգպէս. հմի դրանցից մին դատ հանի, բալէս, մին դանա դատ. ինչ ըլնում ա ըլնի, ամմա մին հատ ըլնի։ (Երեխան հանում է մի մատնոց) Այ, ըտէնց, շատ ապրես, բալէս։ (Դառնալով շրջապատողներին) Ես ում մաննացն ա։ (Աղջկերանցից մէկը կարմրելով ձեռքը մեկնում է եւ վերցնում։ Ընդհանուր ուրախութիւն)։ Աստոծ տայ, բալէս, Աստոծ մուշտարիքդ դհա շատացնի։ (Երգում են։)

Ծաղիկ եմ քաղել Նարինջի,
Այ աղայ, վեր արի, փնջի.
Մէրս քեզ աղջիկ չի տայ.
Քանի ման գաս, եավնջի։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Դիմելով երեխային) Հմի էլ մի դատ հանի, բալէս։ (Երեխան հանում է մի կոտրած դանակ)։ Ես ումն ա։ (Լուսիկը ձեռքը մեկնում է ու առնում)։ Է՜հ, Աստոծ քու բանն աջողայ, բալէս։ Ինչի՞ ըտէնց դուս էկաւ, քուանամ ես… Դէ, էլի ձէն պահէք. թէ չէ կթողնեմ, կեթամ. ձեր մուրազը ձեր փորում կմնայ, հա՜։

Նախրատավին խնկի ծառ.
Խնձոր քաղեմ, արի, տար։
Ուրբաթ, շաբաթ քեզ մոհլաթ,
Կիս կիրակի արի տար։

(Երեխան հանում է մի օղ. Նազանի տատը ձեռքիցն առնելով) Ես ումն ա, մէյդան գայ։ (Մի աղջիկ առնելով տատի ձեռքից օղը,

*) Ինչպէս այս տան առաջին և երրորդ տողերից յետոյ երգւում է «ջան, գիւլում, ջան, ջան» իսկ երկրորդ և չորրորդ տողերից յետոյ «ջան, ծաղիկ, ջան, ջան», նոյնը անխախտ պիտի երգել նաև ամեն տների տողերից յետոյ։

ծածկւում է աղջկերանց մէջ) Այ, ինչ եմ ասո՛ւմ, բարով գայ սանի, ջանի ջան, բարով գայ սանի:

Վէրնաքամին գալիս ա,
Թիկնամէջքիս տալիս ա.
Մէյդան արէք անց կենամ,
Կարօտ եարս գալիս ա:

(Երեխան այս անգամ տանից ասելու ուրախ ուրախ ինքն է հանում մի պղնձէ մատանի): Էս ո՞ւմ մատանիքն ա, քո՞. աէրը գուս գայ, մի տեսնեմ էտ ո՞ւմ եարն ա գալի: (Մօտենում է մի աղջիկ եւ կարմրելով առնում): Աղջի քու, եարն ա գալիս, հա՛... Ջատ ապրիս. բարով գայ ու սանի: (Ամենքն էլ ուրախ ուրախ ծիծաղում են): Դէ, ձէն պահէք ասում եմ, թէ ոչ, հա՜...

Ջան գիւլում կասեմ, կշարեմ,
Տոպրակ կածեմ, կկարեմ.
Կարէ կասր ման կգամ,
Քանց քեզ լաւը կճարեմ:

(Երեխան հանում է մի կօճակ) Էս ո՞ւմն ա... թէզ արէք... (Մի կին է առնում: Փափուզն ընկնում է կանանց մէջ. իսկ ինքը քրքջում է): Դէ, ծափ տւէք է՜... Խո՞ չէք ծափ տալի... Ջանգիւլումը առանց ծափի չի սազում: (Երգի հետ սկսում են են ծափ տալ:)

Ճրագ դնեմ լիսացու,
Կարմիր խաւէն քիսացու.
Ես քու մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու:

(Երեխան տալիս է մի բանալի): Էս ո՞ւմն ա մէյդան գայ: (Լուսիկը խլում է տատի ձեռքից բանալին): Այ, ինչ եմ ասո՜ւմ, չատ ապրի՜ս...

ՀԵՐԻՔՆԱԶ

Քա, աղջի, ե՞դ ինչ ա. ախր քու վիճակը գուս եկաւ:

ԼՈՒՍԻԿ

(Թագնւելով աղջկերանց մէջ) Նանի, խաբար չեմ, իմ արեւը, եա բէխաբար ջիբիցս ա ընկել մէջը: (Ամենքը ծիծաղում են):

ՍԱԼբԻ

Քա, ա՛ կնիկ, ինչ անենք, ջահել չի՞... Աչքդ լի՞ս. լաւ գուս էկաւ էս մէկը, հա՜: Բաղդը դատը կանգնած ա:



ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Աստուծ մուրազներդ կատարի:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Ամեն, ամեն:

ՀԵՐԻՔՆԱԶ

Ջատ սաղ ըլնես. Աստուծ բունուքն էլ պահի: Աստուծ ձեր մուրազին էլ հասցնի:

ՍԱԼբԻ

Ջատ սաղ ըլնես:

ԱՄԵՆՔԸ

Ջատ սաղ ըլնես:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Դէ, աղջկերք, ձէն պահէք, զալբուլթուն մի արէք: Քա զորթ՝ լաւ ծափ տւէք է՜. գժւե՞լ էք, ինչ ա. եա՛: (Երգն եւ ծափը աւելի աշխուժով):

Գետը նի մտայ, խոր ա,
Քաթան չալխկս նորա.
Իմ նանին խաբար տարէք,
Ես օլքեայ, օլքեայ կորայ:

(Երեխան տալիս է մի չախմախի քար: Մինչեւ Նազանի տատի ,,էս ումն ա՚՚ ասելը, Սալբի նանը նրա ձեռքից խլում է):

ՍԱԼբԻ

(Խիստ կտրուած) Դէս տու, դէս տու... Էս իմ անբախտ գլուխը գետինը մանի, լաւ չի՜:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Քա, ա կնիկ, ամանչում չես. էս թաւուր բանիցն էլ մարդ իր սիրտը կկոտրի՞: Աստուծ քու թագաւորացու աղէգ պահի:

ԱԼՄԱՍՏ ՔԻՔԻՐ

Քա, փառք Աստծու, էրեխայ հօ չես, որ էս վիճակները բանի տեղ ես դնում:

ՀԵՐԻՔՆԱԶ

Դէ, բան ա էլի. ջահելների համար ա, մեզ համար չի հօ:

ՍԱԼբԻ

Բա ես ջահել չունեմ... Ես եմ, մինուճար տղայ. նրա վիճակն էլ ըսէնց գուրս գայ:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Քա, վոյ, փո՛րն իմ գլխին. ո՞վ էր իմանում, որ քու աղինը պտի դուս գայ:

ՍԱԼԲԻ

Չէ, հենց բայղուշ ես, բայղուշ. խէր սօյլամաղ ես:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Բայղուշ էլ ես ու՝ հլա մի զատ էլ էվել՝ Լերթաքաշ:

ՍԱԼԲԻ

Իմ լերթաքաշութիւնը ո՞րդի ես տեսել, բինամուս:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Դէ. դէ… լիզուդ քեզ քաշի: Բինամուսը հէնց դու ես, որ կաս:

ՍԱԼԲԻ

Դու իմ բինամուսութիւնն ե՞րի ես տեսել, տատ. հենց սրանց մէջն ասա. թէ չէ մուջառամդ գլխիդ կտոր կտոր կանեմ:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Ռէխդ քեզ քաշի, ասում եմ, թէ չէ հմի մազերդ կպըճո-կեմ. բէհայա:

ՍԱԼԲԻ

Դո՛ւ ես բէհայան, մենձով պուճուրով էլ էք բէհայա. քու օխտը պօրտն էլ ա բէհայա. հմի իմացի՛ր:

(Նազանի տատը վրայ է գալիս Սալբու վերայ, Սալբին էլ նրա վերայ, բայց շրջապատողները, որը տատի կողմն են պահում եւ որը Սալբու, մէջ են մտնում եւ չեն թողնում կռիւը մեծանայ:

ՄԻ ԿԻՆ

Քա, ինչ էք իրար եախից ձուար հաւաքում:

ՄԻՒՍ ԿԻՆ

Էս ջան գիւլում չէլաւ, խայտառակութիւն էլաւ:

(Սալբին գնում է, նրա հետ էլ մի քանիսները):

---

## ՏԵՍԻԼ Գ

### ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՍԱԼԲԻԻ ԵՒ ՄԻ ՔԱՆԻՍՆԵՐԻ

ՄԻ ԱՂՋԻԿ

Աման, չուզեցինք մենք էս թասը վիճակն ու ջանգիւլումը:



ՄԻՒՍ ԱՂՋԻԿ

Ո՞վ ա տեսել, որ ջան գիւլումին իրար մէս ուտեն:

ՄԻ ԿԻՆ

Գնանք, գնանք, թէ չէ խաթէն մեզնից ձեռք չի քաշիլ:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Սալբու յետեւից) Գետինը գնես բօյդ, ընհըրա՜…

ՄՆԱՑԱԾՆԵՐԸ

Նազանի տատի, Նազանի տատի ջան, քէ մատաղ, ջանգիւլումը մնաց:

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Գնացէք, գնացէք. Նազանի տատը էլ ձեզ համար ջանգիւլում ասող չի. թող ձեր ծակծկած Սալբին ասի: (Գնում է):

ՄԻ ՔԱՆԻՍԸ

(Նրա յետեւից գնալով) Տատի ջան, տատի ջան…

ՀԵՐԻՔՆԱԶ

Էս ինչ էլաւ, քա՛. հմի խալխն ինչ կասի. էս խալխ խայտառակութիւն էլաւ հօ:

ԱԼՄԱՍՏ

Հեղջ ջահէլների մուրազները սրտներում մնաց, քա՛: Մնաք յարով: (Գնալով) Ո՜ւֆ, քա դէ եսիմ է:

---

## ՏԵՍԻԼ Դ

### ՇԱՀԲԱԶ, ԿՈՍՏԱՆԴ, ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ:

ՇԱՀԲԱԶ

(Կոստանդի հետ գալիս են սարտէց յետին դռնով. կնկան) Հ՞ը. ջանգիւլումաւորդ ու՞ր են… Հմի խալխն ինչ կասի:

ՀԵՐԻՔՆԱԶ

Խալխ խայտառակութիւն, էլի: Էն քըքրած Սալբին արեց է: Ո՛չ իր մուրազին հասնի:

ՇԱՀԲԱԶ

Ըսէնց էք է. հերիք ա, որ մի տեղ մի էրկու իրեք կնանիք հաւաքւէք, ձեռաց իրար մէս կուտէք: Բա թաղարէքդ:

ՀԵՐԻՔՆԱԶ

Էլ ինչ թաղարէք. սաղ գնաց կորաւ, էլի:

ԿՈՍՏԱՆԴ

Մի նավաշէք. Սալբու գլուխը ես էն օյինը գամ, որ հէչ չմոռանայ։ Նա իմ ջանգիւլումը տակն ու վրայ անի՛։

ՇԱՀԲԱԶ

Դէ, դէ, ձէնդ։ Ես քու հոգին կհանեմ, թէ մի բան ես աբել։ Հալբաթ մեր ջան գիւլումն էլ ըսէնց պըծէր։ Գնանք մենք մեր բանին։ Դէ, ռադ էլէք։ (Բոլորն էլ գնում են տուն)։

(Հեռուից լսւում է ջան գիւլումի երգը)։

---

## ՏԵՍԻԼ Ե

*ՍԱՐԻԲԵԿ*

ՍԱՐԻԲԵԿ

(Գալիս է աջ կողմից մտահոգ) „Ջաղացի աջի կուռը, կղնդայ մէջի գիւլը. վայ իմ կորած բուլբուլը. քաշեցին խանի դուռը“... (Միջոց) Լա՛ւ, աչքս լո՛ւս... Իմ սիրած բլբուլը քաշեցին խանի դուռը՞... Ը՛հմ, Աստուծ վկայ ա, սաղ աշխարքը տակն ու վրայ կանեմ. քար քարի վրայ չեմ թողայ... Եավաշ, տեսնենք Լուսիկի վիճակն ինչ ա դուս էկել... (Նայում է աջ կանգուն պատի մօտից դէպի պարտիզի տան կողմը կուչ ու ծիգ անելով, որպէս զի Լուսիկի ծնօղներից չնկատուի։ Տեսնելով Լուսիկին այվանում) Լուսիկ, Լուսիկ... ուսիկ.. սիկ... սսս... Տեսաւ։ (Ձեռքով կանչելու շարժում է անում)։ Գալիս ա։

---

## ՏԵՍԻԼ Զ

*ՍԱՐԻԲԵԿ և ԼՈՒՍԻԿ*

ԼՈՒՍԻԿ

(Երևալով պատի մօտ՝ աջ կողմում) Դու ես։

ՍԱՐԻԲԵԿ

Հ՞ը։

ԼՈՒՍԻԿ

Իմացա՞ր։

ՍԱՐԻԲԵԿ

(Անհանգիստ) Ի՞նչը. իմ վիճակ՞ը։

ԼՈՒՍԻԿ

Հլա էդ չէ. մեր խայտառակութիւնը։



ՍԱՐԻԲԵԿ

(Վախեցած) Ի՞նչ, ո՞նց։

ԼՈՒՍԻԿ

Մեր ջան գիւլումը քանդեց։

ՍԱՐԻԲԵԿ

(Անհանգիստ) Ո՞նց. բա քու վիճակ՞ը։

ԼՈՒՍԻԿ

Իմ էրկուսն էլ դուս էկաւ, եաւ քանդեց։

ՍԱՐԻԲԵԿ

(Շտապով) Դէ որ քունը դուս ա էկել, ջհանդամը, որ քանդեց։ Ի՞նչ դուս էկաւ քեզ. բէ մատաղ, թէզ ասա։

ԼՈՒՍԻԿ

Լա՛ւ։ Առաջինը ասէնք հէչ։ Էս էր. Ծաղիկ եմ քաղել նաբընջի, Այ աղայ, վեր արի փնջի. Մերս քեզ աղջիկ չի տայ. Քամնի ման գաս եավնջի։

ՍԱՐԻԲԵԿ

(Վախեցած) Ո՛նց թէ։

ԼՈՒՍԻԿ

Կամա՛յ, կամա՛յ. արխէյին կաց. մէրս էլ կտայ, հէրս էլ. ամենքով էլ՝ քեզ կտան։ Հէրս քեզ շատ ա սիրում։—Էս մէկը հէ՛չ։

ՍԱՐԻԲԵԿ

Բա մէկել՞ը։

ԼՈՒՍԻԿ

Հ՞ը. ինչի՞ մթնեցիր... դրա համար արխէյին կաց։ Հա մէկէլն էլ էս. „Ճրագ դնեմ լիսացու, կարմիր խաւէն քիսացու. (արագ) ես քու մօրը հարսնացու. դու իմ մօրը փեսացու։

ՍԱՐԻԲԵԿ

Այ, ինչ եմ ասե՜լ, ես քու հոգուն մեռնեմ... Ամմա... մի բիչ խրար չեն բռնում։

ԼՈՒՍԻԿ

Բան չկայ. մենք կըռնացնե՛նք։ Բա քո՛ւնն ինչ ա. նամըղ ի՞նչ ասեց։

ՍԱՐԻԲԵԿ

Հէնց բանը դրանումն ա է... Նանս մէջքս կոտրեց։

ԼՈՒՍԻԿ

Ո՞նց. դէ մի ասա է՛։

ՍԱՐԻԲԷԳ

(Աչքերը ցած գցելով եւ մթնած)։ „Ջաղացի աջի կուռը, կը գնգայ միջի գիւլը"...

ԼՈՒՍԻԿ

(Վախեցած, արագ շարունակելով)։ "Վայ իմ սիրուն բլբուլը քաշեցին խանի դուռը՞"...

ՍԱՐԻԲԷԳ

(Իբր յանցաւոր) Հա։

ԼՈՒՍԻԿ

Եմ...

ՍԱՐԻԲԷԳ

(Թոթափելով մտքերը)։ Չէ, Լուսիկ ջան, ես քեզ չեմ թողնի. ո՞վ ա իմանում թէ ինչ ա գալու գլխներս...

ԼՈՒՍԻԿ

Ո՞նց...

ՍԱՐԻԲԷԳ

Ճար-չար՝ ինձ մի ամիս մոհլաթ տուր։ Ոնց որ ըլնի ես կազմակերպութիւնից էլի օտպուսկ կառնեմ, թէկուզ հինգ օրով. որ չթողնեն էլ՝ կփախչեմ ու դչի թեւերով կգամ կհասնեմ, հէնց էն օրն էլ կպսակւենք ու ալբէալը քեզ կտանեմ Երեւան։ (Վճռողաբար) Ես քեզ ըստեղ չեմ թողայ։

ՀԵՐԻՔՆԱԶ

(Աջ կողմից կանչելով) Լո՜ւսիկ... ա՜յ Լուսիկ։

ԼՈՒՍԻԿ

Էկայ, էկայ։

ՍԱՐԻԲԷԳ

(Շտապով) Իրիկունն ըստեղարէնք էլիս հա՛։

ԼՈՒՍԻԿ

Լաւ, լաւ։ Մնաս բարով։ (Գնաց)։

---

## ՏԵՍԻԼ Է

### ՍԱՐԻԲԷԳ

ՍԱՐԻԲԷԳ

(Մենակ։ Նայելով նրա դէպի տուն վազելուն)։ Գնաս բարով, իմ մարալը, իմ կաքաւը, իմ չակալադը... (Գալով նախաբեմ) Գնա՜ց... Է՜հ... Չէ. պէտք ա սրան ըստեղից փախցնել, թէ չէ...



ով ա իմանում... ո՞վ ա իմանում թէ թուրքերը վրայ չեն տայ մեր էս գեղին ու... „Վայ իմ կորած բլբուլը քաշեցին խանի դուռը"... (Իրան սիրտ տալով) Ասենք էս վիճակին էնքան էլ հաւատալ չի ըլնի... ամա դէ ո՞վ ա իմանում... Էլաւ՝ էլաւ. էն վախտը՞... Վախտը փիս ա... Մեր էս գեղականները չեն էլ մտածում... որ... որ... հրացաններ առնեն... որ թուրքերը կարող են իրանց էլ վրայ տան ու ինչ ասես անեն... (Ձեռքը գլխին է դնում եւ արմունկով յենւում է ծառին խիստ մտատանջութեան մէջ)։

(Հեռուից լսւում է ջան գիւլում)։

---

## ՏԵՍԻԼ Ը

### ՍԱՐԻԲԷԳ ԵՒ ՄԱՆՈՒԿ

ՄԱՆՈՒԿ

Հը՞. Սարիբէ՞գ... Սարերի փշերի ծերերն ո՞վ ա սրել։

ՍԱՐԻԲԷԳ

(Զշարժւելով) Է՜հ. դու էլ հէնց։

ՄԱՆՈՒԿ

Բա ինչ ես ռանգ ռուշդ խառնել էս Համբարձման օրը։ Լսո՞ւմ ես, այ, սա՜ղ գեղը ջան գիւլում ա տալիս, ա՜յ... լսո՞ւմ ես։ Ամա դու ընէնց՝ փասոն ես բռնել, որ, կասես, սաղ աշխարքի կոռ ու բեգեարը քեզանից պտի առնեն։

ՍԱՐԻԲԷԳ

Մի քիչ էլ ինձանից պտի առնեն, բա ո՞նց ես իմանում։

---

## ՏԵՍԻԼ Թ

### ՆՈՅՆՔ ԵՒ ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ.

(Հետզհետէ աջ ու ձախ փողոցներից հաւաքւում են գիւղականները այս փոքրիկ հրապարակը. որը նստում է, որը ման է գալիս, որը յենւում է ծառին, որը նստում է՝ նրա ընին՝ մէջքը տւած, որը չիբուխ է քաշում, կամ պատրաստւում է քաշելու)։

ՄԱՆՈՒԿ

Խի. ի՞նչ ա էլել որ։

ՍԱՐԻԲԷԳ

Բա հէչ բանից խաբար էք։

ՄԱՐԿՈՍ

(Գալուստին) Ասում են սրանց ջանգիւլումը փողմից ա էլել (ցոյց տալով դէպի Շահբազենց կողմը)։

ԳԱԼՈՒՍՏ

(Ծիծաղելով) Գիտում եմ։

ՍԱՐԻԲԷԳ

Սաղ աշխարքը տակն ու վրայ ա ըլնում, մարդիք են կոտորւում, մարդիք են կոտորւում. ամա հէչ ձեր վէջը չի։

ՎԱՆԷՍ

Ոխ․ էլ ինչ ա էլել։

ՍԱՐԻԲԷԳ

Այ քու տունը չէն՝ էլ ինչ ըլնի․ Բագու, Էրևան, այ, հմի էլ Նախչւանուցն ա փիս հաւեր գալիս... Տեսնում էք՝ ճամփէքն էլ կտրւել են. էլ գեղից գեղ մարդ չի կարում գնայ, որ Նախչւանից բանուման իմանայ։

ՄԱՆՈՒԿ

Դէ քու էդ ասածը չհալնելումն ա. մենք ինչ անենք։

ՍԱՐԻԲԷԳ

Ես չեմ ասում թէ դուք էք մեղաւորը. ամմա դէ բանն էլ հէնց նրանումն ա, որ ամենքդ էլ հազիր պէտք ա ըլնէք է։

ԱԶԻԶ

Եավաշ․ ինչ պըտի անենք, որ հազիր ըլնենք։

ՍԱՐԻԲԷԳ

Թազա եարաղ ասպաբներ պէտք ա ունենաք։ Ինչ էլ որ ունէք՝ հմի հէչ։ Պէտք չեն գայ։ Ըհէնց պէտք ա անէք, որ ձեր թշնամին վերստա ու կէսից, մի վերստից աւելի չթողաք ձեզ մօտիկանայ, թէ չէ... Ախր էս ղալմաղալը չհալնելուց գեղերն էլ կարողայ մանի՝ չէ՞։

ՎԱՆԷՍ

Եավաշ․ ընչի՞ համար ա էդ թազա եարաղ ասպաբը որ։

ՍԱՐԻԲԷԳ

Բա ես ի՞նչ եմ ասում. անկաջդ որդի էր։ Պէտք ա ունենաք, որ՝ թէ որ թուրքերը ձեր գեղին վրայ տան՝ նրանց հալածական անէք։ Թէ չէ...

ԳԱԼՈՒՍՏ

Թէ չէ ինչ... Ոխ են վրայ տալի որ։



ՍԱՐԻԲԷԳ

Այ հէնց բանը դրանումն ա է։ Մեր կազմակերպութիւնը ասում ա, որ էս խմորը հլա շատ ջուր վէկունի. պէտք ա. ասում ա, հազիր ըլնենք ամեն փորձանքի։ Զունքի թուրքերը...

ՄԱՆՈՒԿ

Ի՞նչ թուրքերը. մեզ ինչ պտեն անիլ որ։

ԳԱԼՈՒՍՏ

Մենք նրանց հետ ինչ ունենք բաժին բաժին անելու։

ՎԱՆԷՍ

Ըտէնց մի ասա, բալա. թուրքը որ ոսկի ըլնի ջէբդ մի դցի. էդ հօ իմանում ես։

ԳԱԼՈՒՍՏ

Իմանալն, ասենք, իմանում եմ...

ՄԱՆՈՒԿ

(Ընդմիջելով նրան) Ամմա բայց ես որ թուրքին չդիպչեմ, նա մեզ ինչ պտի անի։

ՍԱՐԻԲԷԳ

Ըտէնց մի ասէք. այ մեր կազմակերպութիւնն ասում ա...

ՄԱՆՈՒԿ

Տօ դէ ձեր կազմակերպութիւնը գլուխը քարովն ա տալիս, որ ասում ա։

ՍԱՐԻԲԷԳ

(Կատաղած) Դու ես գլուխդ քարովը տալիս (դաշոյնը հանելով և վրայ գալով, բայց գիւղականներն իսկոյն մէջ են ընկնում և բաժանում) Էս սհաթին փորդ կթափեմ, հէյվան։

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Եավաշ, աղա...

Եավաշ, էյ...

Սարսաղմցել էք, ինչ՞ա...

Էս համբարձման օրը արինն էր պակաս։

ՄԱՐԿՈՍ

Եա, տօ, էս օրւայ համբարձումը ղալմաղալիցն ա բռնել։

ՍԱՐԻԲԷԿ

Ըտէնց ա։ Մեր կազմակերպութեանի համար, օչովի չեմ թողնի, որ մի ծպտուն հանի։

ՎԱՆԷՍ

Դէ լաւ, լաւ... ջահէլ էր ասեց...

ՍԱՐԻԲԷԳ

Իրա ջահէլ գլուխը պատովը տւեց։

ԳԱԼՈՒՍՏ

Տօ, ջանում, հերիք էլաւ է՜…

ՍԱՐԻԲԷԳ

Տօ, ջանում, մեր կազմակերպութիւնը բշեր, ցրւեց չունի. գլխջութիւն չունի, ինչ զէնքեր առէք՝ բերիլ ա տալի, ամէնքին ծախծխում ու սիրահի տէր չինում. ամէնքին հասկացնում ա, թէ ինչ ա, հա՜մ… Մուզոյիթ ընեն, իրանց լիս հաւատը թուրքի ձեռք չգցեն… Ամմա սրա պէս ախմախները…

ՄԱՆՈՒԿ

(Իբր իրան չլսորելով)։ Ադա պէ լաւ է՜… Համար էլի անում էլի, վա՜…

ՍԱՐԻԲԷԳ

Ես քու համարը չամար կանեմ. գլ՞տում ես թէ չէ։

ՄԱՆՈՒԿ

(Ասանձին) Փի՜մ՜…

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Դէ լաւ, լաւ…

Դու քու բանն ասա, Սարիբէգ.

Տեսնում ես որ համար էր անում էլի։

Աստծդ սաս, ջանում…

Դու քու խօսքն ասա, քու խօսքը։

Կազմակերպութիւնը է՜լ ինչ ա ասում։

ՍԱՐԻԲԷԿ

Էն ա ասում որ՝ շատ փիս հաւ ա գալիս, ասըմ ա, էս բանից։ Թուրքերի միտքը ծուռն ա՝ չունքի Եափոնները նեղն են լծել սսին. սրանք էլ բասեցից են գլուխները բանձրացրել, ասըմ ա, ու ուզում են, ասըմ ա, որ սաղ հայերին կոտորեն, ես էս երգրիցը փախցնեն ու իրանք տէր դառնան մեր սաղ հողերին, սիրուն սիրուն գաշտերին, սարերին ու ձորերին… Էս մեր լիս հայաստանը թուրքացնեն, որ ետև էլ, իրանց խել-քով, ասի ձեռքից առնեն ու…

ՎԱՆԷՍ

Նա՜ւ… բա տէրութիւնը՞։

ՍԱՐԻԲԷԳ

Տէրութեան վրայ էլ հէչ յոյս չպէտք ա գնենք, ասում ա։ Ի՞նչ արեց, ասում ա, Բագուի, Երևանի կոտորածներից ետև, որ հմի ինչ անի։ Հլամ, թէ ուզում էր իմանայ, տէրութիւնը, ասում ա, ինքն ա թուրքերին թև ու թիկունք դառել… Մենք, ասում ա, ինքներս պէտք ա մեզ պաշտպանենք. մեր գլխի ճարը մենք ինքներս պէտք ա անենք, որ վերջն, ասում ա, ոչխարի նման չկոտորւենք։

ՎԱՆԷՍ

Էդ ամենն էա՜նց… Բա հմի մենք ինչ անենք։

ՍԱՐԻԲԷԳ

Ոնց թէ ինչ անենք։ Պէտք ա զէնքեր ունենաք, ռէվօլ-ներ, խանչալներ։ Սաղ գեղը եարաղ առարով պէտք ա լցնէք։ Ջահել ու հալիոր, մեծ ու պատիկ պէտք ա զէնք ունենաք ու նրա բանացնելն իմանաք, որ թշնամուն քշէք։ Թէ չէ վա՜յ ձեզ։

ԳԱԼՈՒՍՏ

Մեզ ո՞րդուց ա բանը։

ԱԶԻԶ

Մենք մեր քեասիբութիւնի եննույն ընկնենք՞, թէ եարաղ առարի։

ՍԱՐԻԲԷԳ

Էդ հմի ձեր բանն ա։ Թէ ամէնքով էլ չունենաք, բա գեղի կէսն էլ ա չպէտք ա ունենայ։

ՎԱՆԷՍ

Ախր, այ Սարիբէգ ջան, ո՞րդուց ախր. ո՞ւր ա փողը… Փող, փող… Հասկանում ես փողն ինչ ասել ա։

ՍԱՐԻԲԷԳ

Բաս թուրքերը ո՞րդուց են գտնում, ընէնց էլ դուք ճարէք։

ՄԱՐԿՈՍ

Ախր էս կռւ ու բէգերը, էս նալօգներն ու հարկերը, մեր նաֆասներն են կտրում. իմանում ես, թէ չէ։

ՍԱՐԻԲԷԳ

Բա թուրքերն էդ չունեն. ամմա նրանք բերում են իրանց խալին ու կարպետները, ոչխարն ու տաւարը ծախում են ու եարաղ առարի տալիս։ Ըռէնց էլ դուք արէք։

ՎԱՆԷՍ

Չէ, ախպէր, էդ քու ասած սիրահի համար ես իմ տաւարը չեմ ծախի։ Ինչ ընում ա, թող ընի։

ԱԶԻԶ

Տօ դէ, ջանում, ինչիս ա պէտք է:

ՎԱՆԷՍ

Զոռով, զոռով Թուրք ու հայ իրար կոտորելու համար ա էլի:

ԳԱԼՈՒՍՏ

Ընչանք համի որ Թուրքն ա մեր հաւին բըշ արել, որ համի անի:

ՍԱՐԻԲԷԿ

Դէ համի դուք էք իմանում: Մէկ օր վայ կտաք ձեր գլխին, ամմա եղի կըլնի:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Վեր կենալով նստած տեղից) Այ խալխը, ես հօ ընչանք համի չէի խօսում. ոնչ լաւ, ոնչ փիս: Դուք էլ ձենս էիք առում, ձեր խէլն ու շառը խօսում. ամմա իմացէք, որ էս բանի վերջը շառ ա, հա՛... Սիրտս սրփի պէս վկայում ա: (Ձիբուխը Թափ տալով ու գրպանը դնելով) Դէ համի էլ ինձ լսեցէք: (Հաւաքւում են նրա շուրջը): Հէնց էս բշեր էրազումս...

ՄԷԿԸ

Է՞հ, դու էլ ու քու էրազները:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հա բալաս. ես ու իմ էրազները: Մի քիչ համբերութիւն ունեցէք, լսեցէք... Էս իմ էրազը՝ էրազ չի, հրաշք ա, հրաշք, տեսիլք ա, մարգարէութի՛ւն ա:

ՎԱՆԷՍ

Քասըր ջան, էրազդ ասա տեսնենք:

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Ասա, ամի, ասա տեսնենք:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Շատ խորհրդաւոր դէմք ընդունելով եւ իբր աշխատելով ճիշտ յիշել ամեն մանրամասնութիւն): Եանի Թէ ես ու էս (ցոյց տալով մէկի վերայ) մեր սանահէր Մկօն կանգնած ինք մի բանձր, բանձր տեղ... Էս Մասիսն էլ մեր առաջին, ըսէնց էրեւում էր... Գլխի ձինը պլպլում էր, ըսէնց, (ձեռքի շարժելով) ոնց որ հարիր հազար ալմաստներ ըրնէին Թափած... Ներքեւն էլ, արանումը, կանաչ—կանանչ, ոնց որ մի դրախտ... Երգինքը ըսէնց պարզ, ոնց որ... ոնց որ... ինչ ասեմ... ոնց որ կապիտ զըմ-



ռուխտ, ոնց որ փիրուզ... Արեն էլ, տես, ոնց որ ոսկի էր շաղ տուել արար աշխարքի վրայ... անուշ, անուշ տաքացնում էր ամեն, ամեն տեղ... Բիրդան (սոսկալով) ես ու էս մեր սանահէր Մկօն, լսեցինք, որ Մասսի միջից մի գուգուց, մի գուգուց ա գալիս որ, որ ինչ ասեմ... ոնց որ մի սար շուռ գայ, ոնց որ էս գեղի շանք գայէք ու քարափներ իրար գլոշելով, իրար վրայ Թափելով գլգլոր ընկէին շատ շատ բանձրից էգա ներքե՛ւ, ներքե՛ւ:

ԳԱԼՈՒՍՏ

Եա՛...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Եաւաշ: Մի վախտ էլ տեսանք, որ Մասսի գլուխը բռնեց սեւ սեւ ամպեր, շատ սեւ ամպեր ու ալըէալը սաղ երգինքը մԹնեց, մԹնեց ու ամպերի գուգուոցն ու կայծակը աշխարք վեկալաւ:

ԱՄԵՆՔԸ

Յէսուս ու Քրիստոս:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Ըսէնց ամպերի գուգուոց ու կայծակը կայծակի վրա վրա խփելը՝ ամԹադան բարադան ոնչ լսել էինք, ոնչ էլ տեսել... Ջէ՛ հլա բօլ չէր...

ԱՄԵՆՔԸ

Ի՞նչ, ի՞նչ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Աւելի սարսափով): Բիրդան Մասսի գլուխը ճաքեց ու կրակ, կրակ, ի՞նչ կրակ... Սեւ մուխ ու ծուխ... գուգուոց, ճըԹ-ճԹոց, պա, պա, պա... (Գլուխը բռնելով) Կրակը, կրակը... Ի՛նչ կրակ... ոնց որ փառած, կրակ գառած ցեխ... կրակի՛ ցեխ, կրակի ալիք... բանձրանում էր, ըսէնց, (ցոյց տալով զոյգ ձեռքերով շատ բարձր) աստղերին գլոշում ու ընտեղից պլպլալէն Թափում, Թափում էր սաղ աշխարքի վրայ:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Վա՜յ քու տունը չէնի...

Էտ ինչ զի՛լում ա, տօ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Ամմա, որդի որ Թափում էր է, ձեռաց կրակ ու տեւրակ, քիւլ ու մոխիր էր դառնում էն տեղը: Էլ ծառեր, էլ լեռներ,

էլ ձորեր, էլ սարեր, էլ գեղեր, էլ չհարներ... ամեն, ամեն բան:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Տէ՛ր, մեղայ քեզ...

Դու մեզ փրկի, Տէր Աստուծ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հյա մի նավաշէ.ք, դուք ու ձեր Աստուծը... Մարթիք, եզներ, կովեր, գոմեշներ, հորթեր, ոչխարներ—ամենը խառնուած էին իրար, փախչում էին իրարից, ով ուր կարում էր... փախչում էին, ո՛նց էին փախչում ու ծակ ու ծուկ մտնում... Ամմա ամեն տեղ էլ, ամենքին էլ հասնում էր էն կրակ-տիլը. ամենքին էրում, փթաթում ու բուլ շինում:

ԱՄԵՆՔԸ

Էդ ինչ ա, տօ...

Էդ ինչ փորձանք ա...

Էդ ինչ անաքանդութիւն ա...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Դէ մի քիչ սաբր արէ.ք, վերջացնեմ է...

ՄԷԿԸ

Տօ, դէ բօլ ա է... Ջաններս ոնց որ փշերով ծակծկեցիր...

ՄԻՒՍԸ

Չէնդ կարի մի տեսնենք է...

ՄԷԿԸ

Ախր...

ՄԻՒՍԸ

Զխկում: Չես ուզում լսես, գնա քու բանին: Ամի ջան, ամի, վերջացրու:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հա: Մէկէլ ի՞նչ տեսնենք... Աստու զուլումը մեր գեղի վրայ էլ էկաւ... Մէկ էլ տեսանք, որ Մասըսից դուս թռած ցեխ-կրակից, ոնց որ մի երգեն լեզու էլ եկաւ, թափու մեր գեղի վրայ ու աւերն սկսաւ... Մեր գեղն էրվաւ, էրվաւ ճըթ-ճթալէն, ճռճռալէն ու մեր սաղ գեղականների մէջը առ ու փախն ընկաւ...

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Վայ քու տունն աւրի. ամի...

Դէ բօլ ա. Աստու սիրու խաթէր՝ բօլա:



Ով չի ուզում լսի, թող գնայ:

Ամի, տաա, ընչանք վերջն տաա:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Աւելի սարսափով) Առ ու փախն ընկա՜ւ, ո՛նց ընկաւ... Հերը որդուն ուրացաւ, մերը՝ աղջկանը... Փախան, փախան, առանց ետև մտիկ անելու, ամենքն էլ փախչում էին... Ամմա էդ փախչողների չարէքն էլ չպրծաւ... Լացն ու կոծը, շներէ ղուղան ու օրնոցը աշխարք վերկալաւ... Ահ ու ղարղանդէցս, ղարթնեցի քափի ու բրանքի մէջ, վեր թռայ տեղիցս ու... Երեսըս խաչ արի, խաչ արի... (Աչքերն ու ձեռքերը վերև բարձրացնելով) Տէր, դու փրկեալ զմեզ ի փորձութենից...

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Տէ՛ր, դու փրկեալ զմեզ ի փորձութենից:

(Ընդհանուր լռութիւն: Բոլորն էլ սարսափած եւ կաշկանդուած դրութեան մէջ են):

(Լսւում է հեռուից ջան գիւլումի երգը:)

ՄԱՆՈՒԿ

Սարիբէգ:

ՍԱՐԻԲԷԳ

Հը՞

ՄԱՆՈՒԿ

Մի գէնն արի, թէ քու գլուխը կսիրես:

ՍԱՐԻԲԷԳ

(Մօտենալով նրան): Ի՞նչ ա:

ՄԱՆՈՒԿ

Դու մի ինձ ասա՝ էդ գէնքը, որ ասում ես, ո՞նց ձեռք բերենք:

ՍԱՐԻԲԷԳ

Փող հաւաքի, արի Երևան: Մեր կազմակերպութիւնն էլ ունի, ուրիշներն էլ ունեն: Մի բերդանկան 50—60 մանէթ ա. հարիր փամփուշտն էլ՝ 15 մանէթ:

ՄԱՆՈՒԿ

Փամփուշտն ինչ զատ ա:

ՍԱՐԻԲԷԳ

Պատրոնները, գիտում ես, նրա գլուխքերը: Պա՜հ քու տունը չէն. էդ էլ չես իմանում:

ՄԱՆՈՒԿ

Պատրօնները գիտում եմ, ամա փամփուշտը...

ՍԱՐԻԲԵԳ

Դէ էգ պատրօնն ա, էլի. գնում ես մէջն ու խփում. բիրդամ մի վերստի վրայ եղանը վեր կգցես։

ՄԱՆՈՒԿ

Եա՞։

ՍԱՐԻԲԵԳ

Իմ արևը։ Դրանից լաւերն էլ կան՝ թանգ են—Մօսին, Մաուզեր, Բուլդկի վինտովկա, Մանչեստր... ռէվօլվեր էլ՝ հազար ջուրէն կայ։ Հա, Մանուկ, դու սրանց խելքին մի ընկնի. ինչ ունես-չունես՝ ծախի ու զէնք առ։ Այ, որ ձեզ սաղցած են տանում վայ ու վույը գցում էք... Սաղցած գնացէք է... Թէ մի 20—30 քեզ պէս տղերք սաղցած էլած ըլնէին է, սարեր չուս կայեք, Քրիստոսը վկայ ա... Ամմա դէ էլածն էլ, ինձ պէս խրանց անններում չեն նստում, գնում են չհարներս, ես սուսատան... Այ, արի գնանք իմ բերդանկան չանից տամ։

ՄԱՆՈՒԿ

(Ուրախացած) Գնանք։ (Գնում են)։

---

## ՏԵՍԻԼ Թ

### ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՍԱՐԻԲԵԳԻ ԵՒ ՄԱՆՈՒԿԻ

ՄԱՐԿՈՍ

(Կաշկանդուած դրութիւնից իբր ազատւելով) Աստոծ քու տունն աւիրի ոչ, Ամի։ Էդ ինչ ասեցիր դու...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Բա ո՞նց էք իմանում. էս Թուրքերի զուլմաղալը մեզ պտի հանի ո՞չ։

ՄԵԿԸ

Խո՞, Սարիբէգը չի իմանում ինչ ա ասո՞ւմ։

ՄԻՒՍԸ

Էրևան սաղ էգ էին խօսում, էլի։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Աստոծ բեխտաւորին ազատի։ Ես մեր գեղից, ընէնց, շատ եմ վախում։

ԳԱԼՈՒՍՏ

Է, լաւ, եավաշէք, հմի ո՞նց անենք։



ՎԱՆԷՍ

Ոնց պտի անենք. ուզենք, չուզենք՝ պէտք ա թուր ու թվանքի ճար անենք. թէ չէ վայ մեզ. զուլմ որ վախենալու ա։

ԱԶԻԶ

(Բարկացած) Տօ դէ, ջանում, հերիք ա է. հմի սաղ աշխարքը ալան թալանը հօ չնկաւ։

ՎԱՆԷՍ

Ով ա իմանում. բա մեր թաղարէքը չտեսնենք։

ԱԶԻԶ

Դէ տես, հը՛։ Ես որ ըտէնց բաների հետ գլուխ չունեմ. դուք ինչ ուզում էք, արէք։

ՄԱՐԿՈՍ

(Բարկացած առաջին կանգնելով) Խո՞ չունես. ես էս քեասիբը հալովս, որ պտի առնե՞մ.—դո՛ւ խի չըպէտք ա առնես։

ՎԱՆԷՍ

Հալբաթ։ Դու էլ պէտք ա ունենաս, ես էլ, սա էլ, սա էլ, այ, նա էլ, հէնց սա էլ... հէնց ամենքս էլ պտի ունենանք, որ բան դառնայ. բա՞ս։ Թէ չէ մի հատով, էրկու հատով եարայ չի տաղանայ։

ՄԱՐԿՈՍ

Եավաշէք մի բան ասեմ։ Էկէք տանուտէրին ասենք, որ մի հարիր հատ բերդանկայ առնի ու սաղ գեղի վրայ գնի. խարջի մէջ գցի թէկուզ։

(Այստեղից սկսած գիւղականների ձայներն սկսում են բարձրանալ, նոյն իսկ գոռգոռոցի հասնել։ Ընդհանուր շարժումներ ու աղմուկ թեր եւ դէմ կարծիքների, նաեւ նրանց մէջ, որոնք չէին մասնակցում բանակռւին)։

ԱԶԻԶ

Ո՞նց թէ... ըտէնց բան կլնի՞...

ԵՐՐՈՐԴԸ

Դէ ասա սաղ գեղը մաղլուն անենք, էլի։

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Խառն ի խուռն մէկը միւսի հետ միաժամանակ վիճելով)

Ո՞նց թէ... Փի՜ս...

Հալբաթ, հալբաթ, շատ լաւ ա ասում...

Բա ո՞նց... հալբաթ որ լաւ ա ասում...

Մեզանում ի՞նչ հարաբերութ կայ, տօ..
Բա աչխարհի նման կտորւենք...
Խի՞ որ... Ի՞նչ էլաւ որ...
Հալա հալայ մ...
Բա տէր ու տիրական չկա՞յ...
Տօ, ինչ ես ասում, ի՞նչ... հեղջ սղոմելի...
Բա անէրութիւնը կլթողայ որ մեզ կտորեն...
Թուրքերն իրանցը կանեն ու...
Եաւ էլ գնա ու տէր ու պատատատան ման արի...
Էն էլ թէ որ սաղ էլար...
Է՞հ, ինձնից եաւ թէկուզ սաղ աշխարքը տակն ու վրա ընի...
Չէ. թողանք մեզ կտորեն:

ԱԶԻԶ

(Մարկոսին) Ի՞նչ ես լորի լորի գուս տալի, այ դդում. հէչ հասկանում ես:

ՄԱՐԿՈՍ

Դդում էլ, դարման էլ: Բա ո՞նց:

ՎԱՆԷՍ

Խի՞. մեր օրը մեզ հերիք չի, էդ էլ թաղա նալօղ...

ՄԱՐԿՈՍ

Բա մեր գեղը թողանք քեաֆարի հաղի՞ն:

ԳԱԼՈՒՍՏ

(Ազիզին) Ով որ խօսայ խօսայ, հըա դու մի խօսա:

ԱԶԻԶ

Խի՞, խի՞ չպետի խօսամ ես:

ԳԱԼՈՒՍՏ

Տունն էլ ունես, բաղն էլ ունես, տաւարն ու աչխարն էլ ունես: Մենակ հէնց դու կարաս սասը բերդանկայ առնես:

ԱԶԻԶ

Հա, ջէրեղ լէն բաց արէք:

ՎԱՆԷՍ

Բա ո՞նց... Տարէն չորս հինգ կարաս գինի՝ մենակ դու ես խմում: Այ հմի, հէնց էս ահաթին ակնցդ գինու հոտ ա փչում. էլի մի բշերով քշերհանայ բութուլկէն չուռ ես տեել տաքրակդ:

ԱԶԻԶ

Խմել եմ, թէ չեմ խմել, քեզ ի՞նչ... թէ խմել եմ, իմ (կրծքին խփելով) մալն եմ խմել. գողութիւն հօ չեմ արել:



ՎԱՆԷՍ

Այ ես էլ հէնց էդ եմ ասում է. մեզնից շատերը սաղ տարւայ մէջ մէկ բոթիլկայ էլ չեն խմում, ամա դու՝ ընչանք իրիկուն՝ տասը կխմես: Այ, քանց թէ խմում ես՝ ծախի եարաղ ապարի առ: Հըա գեղին էլ օգնի:

ՄԵԿԸ

Բա որ եաստն կարան էլ ծախում մ:

ԱԶԻԶ

Ես ոչինչ չեմ տայ ու ոչինչ էլ ոչ ոքից չեմ ուզի:

(Ազիզը բարկացած գնում է: Սորան հետեւում են գիւղականներից մի երկուսն էլ):

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Նրանց յետեւից) Ըհ, ըհ, ըհ...
Էս էլ մեր գեղի իշխանները:

---

## ՏԵՍԻԼ ԺԱ

(Հեռւից, ձախ կողմից լսւում է հաւարի ձայն):

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Եաւաշէք, եաւաշէք... (Լռութիւն է տիրում: Լսողներն ականջները դէպի ձախ կողմն են դարձնում, եւ ամբողջապէս լսողութիւն դառնում, իսկ միւսները լուռ ու հետաքրքիր նայում են նրանց երեսին:) Հաւար են տալիս, տօ...

(Իրարանցումն ընկնում է գիւղականների մէջ: Մի փոքր առաջ գնացողներն իսկոյն յետ են գալիս: Մի քանիսը վազում են դէպի ձախ, բայց շուտով ներս են գալիս հովւի հետ):

---

## ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՈՅՆՔ ԵՒ ՀՈՎԻՒ

ՀՈՎԻՒ

(Ներս վազելով) Հաւա՜ր... Ձեր գլխի ճարն արէք. նախիրը տարան:

ԱՄԵՆՔԸ

Ո՞նց թէ... ո՞վ... ի՞նչ... մեր նախի՞րը...

(Տանիքագնից պատի մօտ երեւում են Հերիքնազը եւ Լուսիկը: Սորանք սաստիկ շփոթւած են եւ շուտ շուտ իրար հետ խօսում են եւ ծնկներին խփում: Աջ եւ ձախ կողմերից լցւում են բեմը նոյն խմբ երեխաներ եւ կանայք):

ՀՈՎԻՒ

Հա. սաղ տաւարը քշին, տարան: Ինձ էլ ուզումին սըպանին, ամա լաւ պըծայ. գիւղըն կանիս գիպաւ, ա՛յ:

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

Գիւղը՞ն...

Վա՜յ մեր տունն աւիրւաւ...

Քրդերն են...

Թուրքերն են...

Քանի հոգի են...

ՀՈՎԻՒ

Թուրքերն են, թուրքերը... Տաս տասնհինգ հոգի կըլէին:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Դէ. ով ինչ սիլահ ունի, դուս բերի...

Հասէք... թէ չէ իզը կկորցնեն...

Թէզ արէք... հա...

(Մի քանիսները վազում են զէնքի):

---

## ՏԵՍԻԼ ԺԳ

### ՆՈՅՆՔ, ՍԱՐԻԲԷԳ ԵՒ ՄԱՆՈՒԿ

ՍԱՐԻԲԷԿ

(Բերդանը ձեռքին եւ պատրոնտաշը խաչաձեւ կապած կրծքին ներս է վազում): Ի՞նչ խաբար ա, ինչ ա էլել:

ՄԱՆՈՒԿ

(Նոյնպէս հրացանով) Ի՞նչ ա էլել:

ՍԱՐԻԲԷԳ

Թուրքերը վրայ տւին:



ՄԻ ՔԱՆԻՍԸ

Մեր նախիրը տարան...

Մեր տունն աւիրւաւ...

Դէ, ինչ էք կաննել, քարացել...

Գնանք, տեսնենք ինչ ենք անում...

ՍԱՐԻԲԷԳ

Ա՜յ խալխը, ա՜յ թայգաչիեր. մի հինգ-վեց հոգի ինձ հետ գայ. թէզ. էլ ուրիշ մարդ պէտք չի:

ՋԱՀԵԼՆԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ ՆԱԵՒ ԿՈՍՏԱՆԴԸ

(Վազելով դէպի իրենց տները) Էս սհաթին մենք գալիս ենք, դու գնա:

ՍԱՐԻԲԷԳ

(Շուռ է գալիս որ գնայ, ասելով) Մանուկ, հասի ինձ. թէզ. ձամբին ձիաներ կգտնենք: (Այդ րոպէին աչքն ընկնում է Լուսիկին, որը առանձնացած խըրայիններից, կանգնած է կիսով չափ պատից բարձր, պարտէզի կողմից եւ աննկատելի ամենքից, աչքերն արտասուքով լի՝ աղօթում էր. իսկ երբ երկուսի աչքերը հանդիպում են իրար՝ նա խաչակնքում է նորան: Սարիբէգն այդ նկատելով, խկոյն դառնում է գիւղացիներին) Ձեր մի հատ տաւարն էլ չի կորչի. աբխէթին կացէք. խաչը մեզ հետ ա: Մանո՛ւկ, թուչենք... (վազում է դուրս դէպի ձախ):

ՄԱՆՈՒԿ

(Նոյնպէս) Թուչենք:

(Բոլորերեան գնում են նրանց յետեւից դէպի ձախ):

---

## ՏԵՍԻԼ ԺԴ

(Մարդկանցից մնում է միայն Գասպար ամին. իսկ կանայք եւ երեխայք, որոնք մնացել են՝ իրար մէջ շատ կամաց բշփշում են: Լուսիկը մինչեւ վերջը շարունակ նայում է դէպի ձախ):

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Բա որ եսասում եմ... էս հըլա մէ՛կ... (Հեռուից, աջ կողմից լսւում է ջան գիւլումի երգը): Դեռ հըլա շատերը չեն իմացել գլխնե-

ըխս էկածը... Հըա ջան գլխըում են ասում... (Գլուխը կախ դըած մոտենում է ծառին, նստում է նրա բնի մոտ, և յենվելով ծառին՝ խոր բացագանչում է) Օճճֆֆֆ....

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԱՄԱՑ ԻՋՆՈՒՄ Է:

# III

# „ՇԷՅԹԱՆԻ" ԳՈՐԾԵՐԻՑ

# ԱՆՁԻՆՔ

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ
ՇԱՀԲԱԶ
ԳԱԼՈՒՍՏ
ՎԱՆԷՍ
ՄԱՐԿՈՍ
ՄԱՆՈՒԿ
ԿՈՍՏԱՆԴ
ՄԻ ԳԻՒՂԱՑԻ
ՆԱԶԱՆԻ ՏԱՍ
ՀԵՐԻՔՆԱԶ
ՍԱԼԲԻ
ԼՈՒՍԻԿ
ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ
ՄՈԼԼԱ
ՍԷՅԻԴ
ՄԱՄԱԴ
ՀԱՍԱՆ
ՆԱՋԱՖ
ԱԼԻ
ՄԻ ԹՈՒՐՔ

*Հայ գիւղականներ երկու սեռի, ռուս զինուորներ, թուրքեր, թուրք կանայք, աղջիկներ եւ 8 տարեկանից սկսած թուրք երեխաներ, դարվիշներ եւ այլն:*

**ՄԱՅԻՍԻ 30-Ն Է 1905 Թ.**



# ԱՐԱՐՈՒԱԾ Գ

Տեսարանը ներկայացնում է երկրորդ արարուածի նոյն գիւղը եւ նոյն տեղը:

## ՏԵՍԻԼ Ա

*Փոքրիկ հրապարակը լցուած է գիւղականներով:*

ՇԱՀԲԱԶ

*Տօ ջանում, էս ինչ փորձանք ա, է... էս սալդաթները կոռ ու բեկնաւըն էլ մի դհից աւելացաւ: Էս ինչ զուլում էլաւ, ախր:*

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

*Զուլում սախը, պըծո՞ր: Մելքումենց սաղ աչարէն ջարդ ու փշուր արին, կորատեցին ու դըին իրանց կլրակրի պղնձի տակը, թէ ինչ ա՝ ցախ չունեն:*

ԳԱԼՈՒՍՏ

*Բաս: Հըա, լաւ էր, տանուտէրը գլանից հաոյ ձեռաց ցախի ճար արաւ, թէ չէ...*

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

*Հլամ գլանք, ոնց որ տեսնում եմ, մեր գլուխը շատ օյիններ են բերելու:*

ԱՄԲՈԽԻՑ

*Էլի էկան անօրէնները:*

ՎԱՆԷՍ

*Դուդ դէմն են գալի:*

ՇԱՀԲԱԶ

*Տզմըլք, հօ վըներիդ բան չկայ:*

ԱՄԵՆՔԸ

*Չէ, չէ:*

## ՏԵՍԻԼ Բ

(Երեւում են ձախ կողմից մի քանի զինւորներ սուինաւոր հրացաններով)։

ԶԻՆՒՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ

(Կոստանդին) Կանգնիր։

ԿՈՍՏԱՆԴ

Հը։

ԶԻՆՒՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Ձեռքերդ բարձրացրու։

ԿՈՍՏԱՆԴ

(Բարձրացնելով) Հ՛ը։

ԶԻՆՒՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ

(Շօշափում է Կոստանդին ձեռքերից սկսած մինչեւ ոտները։ Ամբոխին)։ Դո՛ւք ինչպէս։ Զէնքեր ունէ՞ք, թէ չէ։

ԲՈՂՈՐԸ

(Ձեռքները բարձրացնելով) Չէ, չէ, ըհ՜ը. էկէ՛ք, տեսէք։
(Զինւորները միանուագ խուզարկում են մի քանիսին)։

ԶԻՆՒՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Լաւ. բաւական է։ (Ամբոխին) Ցրւեցէք. շուտ։ Հաւաքուելու իրաւունք չկայ։

(Շատերն սկսում են բաժանուել փողոցներում։ Երբ զինւորները գնում են, ամբոխն ամեն կողմից կրկին հաւաքւում է։

---

## ՏԵՍԻԼ Գ

ՆՈՅՆ ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐԸ

ԳԱԼՈՒՍՏ

Տօ ջանում, սրանք ինչ են ուզում մեզանից է։

ՇԱՀԲԱԶ

Դէ տեսնում էք, էլի. երեկւանից մեր ափաթը կտրեցին. էլ տուն, էլ տեղ չեն թողնում, սաղ ման են գալիս։

ՎԱՆԷՍ

Թէ մի էրկուսից, զրուստ ա, խանչալ մանչալը խլեցին, ամմա մնացածներն էլ թէզ իմացան, սաղ պահտեցին. Թէ չէ տըներըս կաւիրէին էդ բեափուրները։



ՄԷԿԸ

(Շօշափելով իր գրպանները) Պա՜հ, տունդ աւերւի, ուսուս, չիբուխը ջիբէս հանեց։
(Խուզարկւածներն իսկոյն շօշափում են եւ իրենց գրպանները)։

ԳԱԼՈՒՍՏ

Անում են, անում, ջանում. հլա խալխի կնանքանցն էլ են կմջթում։

ԱՄԲՈԽԸ

Է՜... նանէ... Բա ո՞նց պտի ըլնի էս...

ՇԱՀԲԱԶ

Էնա ըլնում ա էլի. ճարըներս ինչ։ Ի՞նչ կարանք անենք։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Ախր, ջանում, սրանց ընչի՞ են զրկել մեր ջանին... մեր ո՞ր մեղքի համար ա, ախր, էս էկզէկուսը։

ԳԱԼՈՒՍՏ

Ինչ ա, Սարիբէկն ու մեր աղերքը գնացին մեր նախիրը եդ բերին ու մի հինգ վեց թուրք էլ ըսպանեցին։

ՇԱՀՊԱԶ

Բա ո՞նց անէին. նախիրը տանում էին ախր։

ԱՄԲՈԽԸ

Փիտա՜...

ՄԱՆՈՒԿ

Խաթրով խօշով եդ չէին տալիս ախր. այ, Կոստանդը ընտեղ չէ՞ր. փառք Աստու, տեսաւ էլի։

ԿՈՍՏԱՆԴ

Հլամ իրանք էին եդ գալել ու մեզ գիւղի բանել։

ՄԱՆՈՒԿ

Բա մենք թողնէինք համ մեզ ըսպանէին, համ էլ նախիրը տանէին։

ԱՄԲՈԽԸ

(Գրգռուած) Բա ըտէնց բան կլնէ՞ր։

ՄԱՆՈՒԿ

Հլամ Սարիբէգը քանի անգամ նրանց գաւաց, թէ նախիրը թողէք, գնացէք, մենք մարդասպանութիւն չենք ուզում, ամա նրանք կանեցին ու մեզ ամենիս էլ կրակի բանեցին։

ԿՈՍՏԱՆԴ

Գիւլլէքն, ըսէնց, անկաջներիս տակովը վզվզում էին։

ԱՄԲՈԽԸ

Տօ, բա ըսէնց բան կլնէ՞ր։

ՄԱՆՈՒԿ

Դէ Սարիբէգն էլ տեսաւ, որ բանըները խարաբ ա. համ նախիրը պտի ձեռաց գնայ, համ էլ մենք պըտի սըպանւենք, մեզ ամենքիս պառկացրեց գետնին՝ քարերի ետևն ու՝ ինքն էլ պառկեց ու իրա բանը տեսաւ։ Գիւլլէքն ըսէնց փշփշում էին իրար ետևից մեր գլխին...

ԿՈՍՏԱՆԴ

Ամա Սարիբէգը մի հատ գիւլլա զուր չգցեց։

ՄԱՆՈՒԿ

Նրանց թւանքները սաղ բերդանկայ, վինտովկայ ու մօսին էր, Սարիբէգի ասելովը։ Էն վախտը նախիրը թողին ու փախան, եփ հինգ-վեց թուրք վեր էին ընկել։

ԳԱԼՈՒՍՏ

Դէ՝ էկզէկուտն էլ՝ դրա համար ա էլի։

ՎԱՆԷՍ

Թէ մեր նախիրն ենք պըծացնում—սրանք են մեր ջանը հանում իրանց էկզեկուսով... թէ սուս ենք կենում—թուրքերն են մեր նախիրը տանում։

ԱՄԲՈԽԸ

Ըսէնց էլ բան կլնի՞։

ԳԱԼՈՒՍՏ

Տօ ջանում, էս սալդաթները սրանով մեզ բան չեն կարալ անեն. մենք մեր ջաւմէն կքաշենք...

ՇԱՀԲԱԶ

Լաւ էր նախիրը ձեռներիցս չգնայ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հմի՞ ինչ էք ասում. էս բանը մեզ պտի էժան նստի՞։

ԱՄԲՈԽԸ

Ինչ նստում ա, թող նստի։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Թուրքերը մեր ջանիցը բա չեն հանելո՞ւ։



ՄԱՆՈՒԿ

Չե՛ն կարալ... Նրանք մեր զօրը տեսան։ Որ՝ հի՛թուան, հարիր հոգի էլ գան, էլի չեն կարալ։

ՎԱՆԷՍ

Ղորթ որ... Էսքան սալդաթն էլ հըտ ըսեղ ա։

ԿՈՍՏԱՆԴ

Ո՞նց կարան, է։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Էս սալդաթներից խէլքս հէչ բան չի կտրում։

ՄԱՆՈՒԿ

Տօ ջանում, էդ հիչա ա հի՛չա։ Դուք էդ տեսէք թէ՝ Նախչուանիցն ինչ խաբար կայ։

ՎԱՆԷՍ

Եավաշէք. ղորթ Մարկոսը Բաշնորաշէնից չեկա՞ւ։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Էկել ա, էկել։

ՄԷԿԸ

Էս մի սհաթ կլնի, ինչ որ նրան տեսայ։

ՇԱՀԲԱԶ

Այ, նա շատ բաներ կիմանայ։

ԳԱԼՈՒՍՏ

Ըհը. էս էլ ինքը, այ, գալիս ա։ (Ամենքը նայում են դէպի աջ։) Տօ մի թէզ արի է՜։

---

## ՏԵՍԻԼ Դ

### ՆՈՅՆՔ, ՄԱՐԿՈՍ ԵՒ ԿԱՆԱՅՔ

ՄԱՐԿՈՍ

(Կուլիսից երևալով)։ Գալիս եմ էլի։ (Սա խիստ թթուած է։ Սորան շրջապատում են)։

(Հետզհետէ հաւաքւում են և կանայք. Նազանի տատը, Սալբին, Հերիքնազը և այլն։ Լուսիկը ու հարսը երևում են պատի մօտ)։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Հ՞ը։ Մարկո՛ս. ինչ խաբար. եփ ես էկել։

ՄԱՐԿՈՍ

Մի էրկու սհաթ չի ըլնի։

ԳԱԼՈՒՍՏ

Ի՞նչ խաբար կայ Նախչուանից։

ՄԱՐԿՈՍ

Ի՞նչ խաբար պտի։ Ղարախաբարից սուտհի ի՞նչ էք ուզում։

ԱՄԲՈԽԻՑ

Ի՞նչ, ո՞նց… մի սաս, տեսնենք։

ՄԱՐԿՈՍ

Էրեկ մի մարդ էր էկել Նախչուանից… (Գլուխը բռնելով) տէ՜ր Աստուծ… ընչե՜ր էր ասում… ընչե՜ր էր ասում… ընչեր են պատմում ընտեղի համար…

ԳԱԼՈՒՍՏ

Ասում են, ախր, թէ սաղ Նախչուանը թուրքերը տակն ու վրայ են արել։ Դրուստ ա եանի։

ՄԱՐԿՈՍ

Վայ քու տունը չէնի։ Տօ, չհարին ես ասում. բա սաղ մհալ՞ը… Էլ Թազագեղ, էլ Հաջիվար, էլ Սիս, էլ Գժաձոր, էլ Խալխալ, էլ Ալագի, էլ Թմբուլ, էլ Դիզավար, էլ Նորս, էլ Նորաշէն, էլ Եարըմջա, Նազարաբաթ, էրկու Մազրաները…

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Եա՜, տօ…

ՄԱՐԿՈՍ

Էլ Բիստ, էլ Քիւլթափա, էլ Աւինջ, չեմ գիտում, Աբրակունիս, Մարվան… Մի խօսքով սա՜ղ, սա՜ղ… ինչքան հայ գեղեր կան… սաղ կրակն են տուել, սաղ քարուքանդ արել, սաղ աշխարքը սրի են քաշել, աւիրել ու թողել։

ՇԱՀԲԱԶ

Վայ դրանց տունն Աստուծ քանդի։

(Բոլորն էլ սառած մնացած են)։

ԳԱԼՈՒՍՏ

Էդ ա որ սաղ ճամբէքը բռնուել են, է։

ՎԱՆԷՍ

Էդ ա որ սաղ աշխարքից բէխաբար ենք մնացել, է։

ՇԱՀԲԱԶ

Աստուծ դրանց տունն աւրի։ Եա՞։



ՄԻ ՔԱՆԻՍԸ

Դրանց բօքը ջնջուի. ինշալլա՜հ։

Եա՞, եա՞։

ՄԱՐԿՈՍ

Նախչուանի հայերի սաղ դուքանները կրակ են տուել. շատ դուքանդարներ հէնց մէջն էն էրվել։ Աղամալն ինքը…

ԱՄԵՆՔԸ

Եա, եա…

ՄԱՐԿՈՍ

Նրա փեսէն, պրիկաշչիկը… Իրեք Խալաթովները…

ԱՄԵՆՔԸ

Եա՜, եա, տօ…

ՄԱՐԿՈՍ

Քրիստոսի առէք կերէքը վկայ ա… Շա՜տ, շատ։ Էնքան են էրվել, էնքանն են կոտրել, որ… Շատ շատերի անուններն էին ասում, ամա դէ…

ՋԱՆԱՋԱՆ ՁԱՅՆԵՐ

Վայ դրանց տունը հրեղէն սուր մանի բարով։

Դրանց բօքը ջնջուի բարով։

Էս ինչ օրի հասանք մենք։

Եա՞, եա՞։

ՄԱՐԿՈՍ

Սաղ Բաղամլու գեղը թուրքացրել են—էլ տէրտէր, էլ դաս… ամենքին, ամենքին։ Տօ ջանում, ընէնց բաներ էին ասում, որ գլուխս կպաւ, վալլա։

ՁԱՅՆԵՐ

Ի՞նչ, ի՞նչ. դէ սաս տեսնենք է։

Աստու պատիժք ա, էլի։

ՄԱՐԿՈՍ

Եան էլ Խալխալու գեղում, Խաչատուր Բաբատով ասին, ինչ ասին… Նրա տանն են վրայ տուել ու մենձ ու պուճուրի սրի են քաշել, փուռթել։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Վայ, վայ, վա՜յ…

ՄԱՐԿՈՍ

Ինչ ասեմ, ո՞ր մինն ասեմ… Հա. ասում են՝ էլ վից-կոպրնատը, էլ մեր առաջնորդը, էլ Երևանու գլուխն… չեմ իմանում,

էլ ով առին, սաղ գնացել են Նախչուան։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Եաւ, եաւ՜...

ՄԱՐԿՈՍ

Հա՛. եաւ էլ ասում են թէ՝ Երեւան էլի են Թուրքերը հայերին վրայ տալել մի օխտ ութ օր առաջ...

ՃԱՀԲԱԶ

Եա, էլի՞

ԳԱԼՈՒՍՏ

Եղե... ի՞նչ։

ՎԱՆԷՍ

Նախչուանայ օրն են գցե՜լ։

ՄԱՐԿՈՍ

Հէնց էդ ա որ չէ, է՜... Ջանըմսան հայերը Թուրքերին էն օրն են գցել, որ ընչանք հմի, ասում են, մտել են ծակերը, էլ դուս չեն գալիս։ Իրանց դուքան բազարը փակել են ու մտել տները։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Այ ղոչաղ հայե՜ր։

ՃԱՀԲԱԶ

Տօ ջանում, Երեւանայ բանը հեշտ ա... Դու էն ասա թէ ոնց ա էլել, որ Նախչուանն ըտէնց ա էլել։

ՎԱՆԷՍ

Ղո՜րթ, ոնց ա բանն սկսել է։

ՄԱՐԿՈՍ

Ո՞վ ա իմանում։ Ասում են եանի թէ հինգ վեց օխտ ութ հայեր՝ մի հեղջ հաջու են սըպանել։

ՃԱՏԵՐԸ

Հեղջ ցաւի պայ, հեղջ դարդի, հ՜ը...

ՄԱՐԿՈՍ

Եանի թէ՝ էն էլ Նամաղ ղմիշ անելիս։ Դէ՝ դրանից եաւ էլ՝ Թուրքերը սաղ չհարին են վրայ տալել։

ԳԱԼՈՒՍՏ

Եավաշ. ընչանք հմի բա հայի ձեռքով հէչ Թուրք չի սըպանուե՞լ։



ՃԱՀԲԱԶ

Եա խի՞ չէր ըտէնց բան ընում։

ՄԱՐԿՈՍ

Տօ ինչ ես ասում, ի՜նչ. հլամ ասում են, որ նրա բարեկամը՝ մոլլա ա, ինչ ա, ասել ա քի. հայերը չեն սըպանել մեր հաջուն, սուտ ա, ասել ա. մեր հաջուն, ասել ա, փլա՛ն-փլա՛ն Թուրքն ա սըպանել։ Ամա բայց լսո՞ղն ով ա։ Թուրքերը մաննեբին փաթաթուն են արել—հայերն են, որ հայերն են։

ՁԱՅՆԵՐ

Վա՜յ դրանց սիրտը հրեղէն սուր մտնի հը...

Աստուծ ազատի մեզ Թուրքի չառից։

ՄԱՐԿՈՍ

Դրանից եաւ հայերը իրանց դուքան բազարը սաղ փակուած են. չունքի իմացել են, որ Թուրքերից ինչ հաս ա գալիս, որ պտի վրայ տան։ Հէնց էդ օրն էլ՝ չհարում էլած չէլած դուն-չանը գրկել են, չեմ գիտում ուր... ընէնց որ էլ սաղթաթ չի մնացել սաղ չհարում։

ՃԱՀԲԱԶ

Էդ հօ դասալի են արել, տօ։

ՄԱՐԿՈՍ

Եա ո՞նց։ Եաւ խանն ու Երեւանայն էկած ռուս մեծաւորն էլ դուս են գալիս քաղաքն ու՝ հայերին զօռում են, որ դուքան բազարը բաց անեն, եանի թէ ամօթ ա... իրանք էլ հաւատացնում են հայերին, թէ արխէյին կացէք, ոչինչ չի պատահի... Խանն էլ իր գհից ասել ա թէ՝ թէ ձեզ մի բան պատահի, ասել ա՝ ես եմ պատասխանատու։

ԳԱԼՈՒՍՏ

Եա եաւ էլ ոնց ա էլել էդ անարանդութինը։

ՄԱՐԿՈՍ

Դէ հայերն էլ, հաւատում են դրանց ու դուքանները բաց անում... Չի քաշում կէս սհաթ-մի սհաթ, բիրդան Թուրքերը վրայ են տալիս սաղ հայերի դուքան բազարի վրայ ու թալան թրաշը գցում, փէթում ու կրակի տալիս։

ԱՄԲՈԽԸ

(Ապշած ու սարսափած) Եմա՜. .

ՄԱՐԿՈՍ

Հա Երեւանու գլավէն էլ, մեր առաջնորդն էլ անջաղ են ըսպանուելուց պըծել...

ԱՄԲՈԽԸ

(Նոյնպէս եւ յուսահատ) Փը՜մ՜մ՜...

ՄԱՐԿՈՍ

Տօ ջանում, էդ բաթմաստրներն էկել հասել են ընչանք մեր Մարտիրոս գեղը, հա՛։ Հմի էլ մեր գեղերին են սաթաշմիշ ընում։

ԳԱԼՈՒՍՏ

Դէ որ ըտէնց ա, եավաշ եավաշ դէմն էլ կգան, էլի։

ՇԱՀԲԱԶ

(Շշմած) Հայբաթ...

ՎԱՆԷՍ

Էրեւում ա, էլի...

ՄԱՐԿՈՍ

Սաղ գեղերն ասում են պտի արնով օղղեն։

ԲՈԼՈՐԸ

Իրանք օղողեն արնի մէջ բարով։
Վայ գըրանց մուրազներն իրանց սրտերում մնան։
Վայ կտորուեն բարով...
Աստու հրեղէն սուրը մտնի գըրանց ջիգեարի մէջը...
Բա մենք ինչ անենք...
Բա հմի մենք ո՞նց անենք։

ՎԱՆԷՍ

Էն պտի անենք որ... հմի էլ դէս ու դէն չկայ... պէտք ա տանուտէրին ասենք, որ մի էրկու հարիր հատ թուանքներ ճարի, մէկին էրկու տայ ու հասցնի մեզ։

ՇԱՏԵՐԸ

Էլ ուրիշ ճար չկայ։

ԿՈՍՏԱՆԴ

Թող մի ձեռքս մի այնպէս ընկնի, եա բերդանկայ...

ՇԱՏԵՐԸ

Տաս հզարի դէմ դուս կգանք էն վախտը...
Բա որ ասում էինք մեզ սիլահ ա հարկաւոր...
Էս օրւայ համար էինք ասում, ա՜յ...



ՇԱՀԲԱԶ

Բա որ էս անիծուած սալդաթները գլխներիս տան առնեն։

ԳԱԼՈՒՍՏ

Խի, ինչ էր էլել որ. բա մեր ձեռքերը փլաւ են ուտո՞ւմ. չենք կարա՞լ ընէնց պահենք, որ սկի սատանէն էլ տեղը չգտնի։

ՎԱՆԷՍ

Տօ, խի՞ չենք կարալ է։

ՄԱՆՈՒԿ

Համիշա հօ ըստեղ սալդաթ չի ընելու։

ԳԱԼՈՒՍՏ

Տղերք. հմի էլ սալդաթից վախենալու վախտ չի. ով ինչ ունի թաքուն հազրուի... Խանչալներդ սրէցէք, թուանքներդ սարքի բերէք... գիւլլա բարութ ով ունի մէջ տեղ բերի։

ՎԱՆԷՍ

Դուք ու ձեր Աստուծը, էլ մի ուշացնէք... ամա ընէնց արէք, որ սալդաթները չտեսնեն հա՛։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Մէջ է գալիս լացով)։ Աման ձեզ մատաղ, հոկում արէք, ժամ պատարագ արէք, սաղ գեղականներով մատաղ արէք... Փիս էրազ եմ տեսել էս քշեր, շատ փիս էրազ։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Էլի էդ գահրմար էրա՞զը։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Դէ էնա, ոչ ընի, տեսնում էք կատարւում ա էլի։

ՄԻ ՈՒՐԻՇԸ

Տատի, դո՞ւ ինչ ես տեսել։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Լացով ու ծնկներին խփելով եւ նեարդային շարժումներով)։

Մեր գեղը ձեռաց պտի գնայ... մեր գեղը ձեռաց պտի գնա՜յ... Մատաղ արէք, հոկում արէք, ձեզ ղուրբան, ձեզ ղուրբա՜ն։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Տօ, ինչ ա ախր է։
Մի թէզ ասա, տատի է։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Էս քշեր էրազումս սաղ գեղականներով դուս էկանք գե-

գից գուս՝ ու մէկ էլ տեսանք, որ հզար հզար Թուրքի ու քրդի ղօնչումներ վրայ են տալիս մեզ... Մեր ջահելներն էլ Թումանք-ներ էին, որ կրակում էին նրանց վրայ...

ՄԻ ԵՐԿՈՒՍԸ

(Նրա խօսքը կտրելով)։ Թումանքների ձէնը լսեցիր, տատի։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Անկաջներս քառանան, լսեցի, լսեցի...

ԳԱԼՈՒՍՏ

Բաս էս անգամ շատ փիս բաներ ենք լսելու, եա տեսնելու. մուղայիթ կացէք։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Տատի, եղե՛, եղե՛։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

(Իբր յանկարծ յիշելով եւ նիարդային երկիւղով)։ Հա, հա... տեսայ սուրբ Մարիամ Աստօծածնին... (խաչ է հանում երեսին. կանայք եւ շատերը նոյնպէս)։

ԲՈԼՈՐԸ

(Անհամբերութեամբ)։ Եղե՛, եղե՛։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Լաւ էրազը չի կատարուի, ամա փիսը՝ տրէշալը կը կատարուի։

ԲՈԼՈՐԸ

(Անհամբեր)։ Նազանի տատի, եղե՛։

ՆԱԶԱՆԻ ՏԱՏԻ

Սուրփ Աստօծածինը, մեռնեմ ես նրա զօրութիւնին, ըսէնց, ձեռքերը բաց, բանձր բռնեց ու եանի թէ մեզ, ըսէնց, պահում էր... Ամմա մէկ էլ ի՛նչ տեսնենք—սաղ նրա ձեռքերն, ըսէնց, Թուրքերի գիւլլէքանցից ծակծակուել էր ու արինն ըսէնց, թափում էր նրա ձեռքերից... (Դարձեալ լացով ու ծընկ-ներին խփելով)։ Դուք ու ձեր Աստօծը, այ խալխը,—պատարագ արէք, մատաղ արէ.ք, հսկում արէք...

ԲՈԼՈՐԸ

(Վախեցած եւ կաշկանդուած)։ Վայլա, բիլլա, պէտք ա անենք։

ՎԱՆԷՍ

Մարգար, ըստեղ արի։



ՄԱՐԳԱՐ

Հ՞ը։

ՎԱՆԷՍ

Գնա, էս սհաթին մի ոչխար բեր։

ԲՈԼՈՐԸ

Եղը, եղը, ո՞չխարը որն ա։

ՎԱՆԷՍ

Թող եղն ըլնի։ Մի լաւ մատաղի պատրաստութիւն տես։ Տէրտէրին էլ ասա... Չէ, չէ, դու գնա քու բանին։ (Ամբոխի միջից մէկին առաջ քաշելով)։ Դու էլ վազգի. տէրտէրին ասա, որ ժամերը տայ. հէնց էս սհաթին հսկում անի... (Գնում է)։ Չէ, պէտք ա, պէտք ա։ Եգեւ սաղ գեղականները ծախսը կքաշեն։

ԲՈԼՈՐԸ

Հալբաթ, հալբաթ որ սաղ գեղականները պտի քաշեն։

ՄԱՐԿՈՍ

Այ, խալխը... (իբր նոր յիշելով) եաւաշէք... Բաշնորաշէնից որ գալիս էի, տեսայ Էն հեռւում ինչ որ սեւին էր տալիս. ըսէնց երգէն տեղ էր բռնել... մի ընէնց էլ թող էր բանձրացել որ...

ԲՈԼՈՐԸ

(Թուքները կպած)։ Վայ քու տունը չէնի...

Թուրքեր էին։

ՄԱՐԿՈՍ

Ամմա փիքրս ընէնց էկաւ որ՝ ոչխարի, եա տաւարի սուրու պէտք ա ըլնէր։ Էլ բանի տեղ չդրեցի։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Վայ բու տունն Աստօծ չինի...

Թուրնէրըս կպցրիր, տօ՛...

Աստօծ քու Թուքը ու կպցնի, հ՛ը...

ԳԱԼՈՒՍՏ

Ով ա իմանում, հալբաթ Նախչուանից, եա նրա գեղերիցն են քշում էդ սուրուները։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Հալբաթ, հալբաթ...

Վայ դրանց տունն Աստօծ աւիրի...

Էդ բաթմաստար անաստօձների քոքը ջնջուի սաղ աշխարքից բարով։

(Հսկման զանգակները քաշում են։ Ամենքը մի առանձին երկիւղածութեամբ եւ ջերմեռանդութեամբ երեսներին խաչ են հանում)։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Դէ, այ խալխը, առաջ ընկէք. մենձով, պուճուրով—սաղ գեղականներով ժամ գնանք, հոկում անենք, էգուց էլ ժամ ու պատարագ անենք, բալքամ Աստուծ մեզ էս ղաղաբից ազատի։ Գնանք։

ԲՈԼՈՐԸ

(Կրկին երեսները խաչակնքելով) Գնանք, գնանք... (Շարժւում են)։

(Այս միջոցին խիստ հաւարի ձայն է գալիս։ Բոլորը սառչում են իրենց տեղերում։ Ներս է վազում մի գիւղացի)։

---

## ՏԵՍԻԼ Ե

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԻ ԳԻՒՂԱՑԻ

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ

(Սրտապատառ եւ հեւալով)։ Հարա՜մա՜յ... մեր տունն աւէրվաւ... փախէ՜ք...

ԲՈԼՈՐԸ

(Լեղապատառ)։ Ինչ ա, տօ, ինչ ա...

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ

Թուրքերը վրայ են տալիս մեր գեղին... Մեր հանդաւորներին սպանոտեցին... Հարա՜յա՜յ... Գլխներիդ ճարը տեսէ՜ք...

(Լաց ու կոծը, երկիւղն ու սարսափը տիրում են ամենքին)։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Ո՞նց, ո՞նց։

Քու տունը չէն, ինչ ես ասում։

Ձատ են, տօ, չատ են...

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ

Հարիր հզար հոգի. հարիր հզար... Փախէ՜ք—ով կարայ փախչի... (Ինքը նոյնպէս հաւար տալով փախչում է դէպի աջ)։

(Շատ հեռուից լսւում են մի քանի հրացանների տրաքոցներ)։

ՎԱՆԷՍ

(Լեղապատառ) Այ խալխը, ձեր գլխի ճարն արէք... ձեր ճարը տեսէք։ Ով կարայ, թող փախչի. թէ՜գ։ (Ինքն սկսում է փախչել դէպի աջ)։

---



## ՏԵՍԻԼ Զ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ ԻՒՐ ՄԱՐԴԻԿՆԵՐՈՎ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ներս գալով ձախ կողմից) Եավաշէ՛ք, մի՛ փախէք, մի վախեցէք, ես եմ, ես... Ինձ հաւատացէք... Եա էկէք... էս տեղ էկէք... Ոչինչ չի լինի... Գլխովս եմ երդւում... Տեսէք, ինչ եմ ասում... մի էստեղ լսեցէք...

(Կամաց կամաց փախածներից շատերը յետ են գալիս սարսափի եւ անորոշ դրութեան մէջ. չգիտեն կանգնեն, թէ փախչեն։ Սարսափելի յուզմունք է տիրում)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ինձ լսեցէ՛ք, ա՛յ մարդիկ... ա՛յ խալխը... Ես որ իմացայ թէ ձեր գեղին վրայ են տալիս, ալբէալը ձիս նստեցի ու հասայ. ամբոխին կանգնացրեցի. նրանք հմի սպասում են ինձ։ Դէ, հմի լսեցէք ինչ եմ ասում։

ԱՄԲՈԽԸ

Ասա, ասա, ղուրբան ջանիդ։

Ի՞նչ ես հրամայում, հրամայի...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ես ձեր հայը շատ եմ կերել։ Մենք ամենքովս էլ իրար հաց կերել ենք։ Էն հացը ինձ քոռացնի, թէ ես ձեր փիսն եմ ուզում... Ձուտ արէք. չուտ մի տասը հազար մանէթ փող հաւաքէք. հաւաքեցէք իրար մէջ, թէգ, որ տանեմ սւսնեմ իրանց ու ձեր եախէն պրծացնեմ... թէգ հա.-թէ չէ ամեն բան կորած է։

ՎԱՆԷՍ

Այ քու տունն Աստուծ չինի, բաշ. էս հալին, էս դրութեանը որդիանց, ախր, ճարենք... հմի սաղ գեղականներին ո՞նց հաւաքենք... Առուփախն ընկաւ հմի սաղ գեղը։ Ախր ժամանակ ա պէտք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էլ չեմ իմանում. դուք ու ձեր Ալլահը թէգ արէք, մեղք էք. գլխներդ ու մալ ու մուլքներդ պրծացրէք... Ես ձեր թասիբն եմ քաշում, այ ձեր տունը քանդուի... Թէ՜գ...

ՄԻ ՔԱՆԻՍԸ

(Նփոթւած) Շատ շնորհակալ ենք, աղա…

ՇԱՀԲԱԶ

Ես իմ էրկու հարիր ութանասունըօխտ մանէթն եմ տալիս։ Ով ինչ ունի հանի. թէզ, ժամանակ չկայ… (Ինքը վազելով դէպի տուն փող բերելու) Էս ա ես գնում եմ, բերեմ… (Գնաց)։

ՄԱՐԿՈՍ

Դուզ մի հարիր էլ ես եմ բերում։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Եավաշէք. էսէնցով բան չի դառնայ։

ԳԱԼՈՒՍՏ

Ջանում, այ Մուրթուզալի բէգ, այ աղա ջան, գլխիդ մեռնենք… հլա մի հզար մանէթ տար տուր իրանց, թող վրայ չտան. ընչանք իրիգուն մի չորս հզար մանէթ էլ ոնց որ ընի կըբատենք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Հինգ հազարը քիչ է ախր, ձեր տունը քանդուի, ես ինչպէս անեմ։

ՄԱՐԿՈՍ

Ոնց ուզում ես արա. քու դուռն ենք ընկել, քու փէշն ենք բռնել։

ԳԱԼՈՒՍՏ

Աղա ջան, որ հինգ հզարն էլ գըտնենք՝ մենձ բան ա։ Որգիան ա, ախր, գեղականների մէջ տասը հզարը։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Լաւ, լաւ ջհանդամը… Հինգ հազարը հասցրէք. ես մի թահըը կանեմ։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Աստօծ քեզ սաղ պահի, աղա։
Աստօծ քեզ մեր գլխիցն անպակաս անի։
Աստօծ քեզ կեանք տայ, ումըր ու արև տայ…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Դէ, թէզ արէք. հազարը հասցրէք, թէ՛զ հա. ժամանակ մի կորցրէք…

(Գիւղականները իրար յետևից գնում գալիս են ու փողեր բերելով տալիս են Մուրթուզալի Բէկին. որը 100, որը 60, որը 5, որը 10 և այլն մանէթներով)։



ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Տօ ջանում, թէզ արէք… Վալլա, վրայ կտան. էլ ինձ չեն սպասիլ. էնենց արէք,որ գեղը չհասնեն… (Համարելով և փողերը գրպաններն ածելով) Դէ, էս էլաւ 690 մանէթ… թէզ արէք, թէ՛զ… թէ չէ էլ ես պատասխանատու չեմ լինի, հա՜… (Բերում են ով ինչ ունի։ Ստանալով) Էլ բերող չկա՞յ։

ՄԷԿԸ

Աղա ջան, իմ ունեցած-չունեցածս էս ա. իրեք մանէթ հինգ շահի… Էս էլ առ, ինչ անեմ… Թող իմ վերջի կապէկս էլ քեզ ղուրբան ընի։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ստանալով) Ըհ, ըհ… իրեք մանէթ հինգ շահով խարայ չի սաղանայ… (Նայելով շուրջը) Էլ ոչո՞ք չկա՞յ…

(Դրամ բերողների ծայրը կտրւում է։ Ամենքն էլ սրտատրոփ և սպրտնած իրար երես են նայում)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էս էլաւ երկու հարիւր յիսուն.. բոլորը միասին՝ ինը հարիւր քառասուն։ Հազարը դզէք… Հ՞նար էք անում, ինչ ա… Ես ձեզ համար չարչարւում եմ հիրիք չի, դեռ էսքան էլ սպասեմ։

(Երկու հոգի էլ բերում են և տալիս են 60 ր.)

ՎԱՆԷՍ

Ըհը, աղա ջան, էս էլ քու վաթսունը.—դուզ հզար էլաւ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էլ ինչ ունէք, բերէք,..

ՄԻ ՔԱՆԻՍԸ

(Նրա խօսքը կտրելով) Այ աղա, քեզ ղուրբան, էլ ո՞նց անենք ախր… ուրդուց…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ախր էս հազարը քիչ ա, քիչ. մի հինգ հարիր էլ հասցրէք, որ ամենքին լաւ արբէլինացնեմ… թէ չէ կարող են ինձ չլսել ու գան ամենքիդ կոտորեն… Տաս-տասնուհինգ հազար մարդ են թափ էլել։ Հանաք մասխարութիւն է… Դուք ու ձեր Աստուածը շուտ արէք։ Ինձ մհաթալ մի արէք… Մեղք էք… Սիրտս կըտրատւում է, ախր։

ԳԱԼՈՒՍՏ

Էդ հլա տար, քեզ ղուրբան, (ոտներն ընկնելով) ոտներդ պաչեմ...

ՄԻ ՔԱՆԻՍԸ

(Նոյնպէս ոտներն ընկնելով) Քեզ ղուրբան աղա, մեզ ազատցրա... Անչար էդքանն էլ դըստեցինք... Տեսար էլի:

ԳԱԼՈՒՍՏ

Տեսնում ես էլի, աղա... ամենքն էլ իրանց վերջին ոթարը բերին: Ընչանք խըխկուն մուհլաթ տուր մեզ:

ՄԱՐԿՈՍ

Ընչանք խըխկուն, քեզ մատաղ, ոնց որ ընի չոըս հզարը կը ղըստենք:

ՉԱՀՐԱԶ

Որ չելու էլ՝ կեթանք մեր էս հարևան գեղերից պարտք կառնենք ու կբերենք:

ՎԱՆԷՍ

Բուշարթ վրայ չասն, մեր տունը չ.քանդեն:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Իբր կակղելով) Ինչ արած... (մտածելով) Տեսնեմ, բալքա մի թահար անեմ:

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Աստօծ քեզ հաստատ պահի
Աստօծ քեզ ումրը ու արև տայ
Աստօծ քու մինը հզար անի
Աստօծ քու թուրը կտրուկ անի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Դրամները գրպանն ածելով, իւր տղերքանց) Գնանք: (Ամբոխին) Դէ, որ էդպէս է, հիմայ արխէյին կացէ.ք. ձեր բանին կացէ.ք: Հինգ հազարը թամամեցրէ.ք հա՛, որ կապէկ պակաս չլինի: Ինչքան շուտ ճարէք՝ ձեզ համար լաւ: Ինչքան շուտ բերէք, էնքան էլ շուտ նրանց ճանապարհ կդնեմ, ձեր խախէն կազատեմ:

ԲՈԼՈՐԸ

Աչքներիս վրայ, աղա...
Գլխներիս վրայ:
Այ քու բանն Աստօծ յաջողայ:



ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Դէ, ես անպարտ: Հա. էլ փախչելու մասին չմտածէք: Որ գեղին էլ վրայ տան՝ մի փախեցէ.ք. արէլը ես նրանց առաջը կառնեմ: (Իւրայիններին) Տղերք, գնանք. թէզ հասնենք նրանց: (Տապալով գնում են):

## ՏԵՍԻԼ Է

### ՆՈՅՆ ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐԸ:

ԳԱԼՈՒՍՏ

Դէ, այ խալխը, էս պղպղը մի քիչ գլխներիցս հեռացրինք: Գնացէք ձեր գեղականներին կանչեցէք: Տանուտէրն էլ: Մի ձևաց հաւաքւենք, տեսնենք ինչ ենք անում:

ՄԱՐԿՈՍ

Բա ո՞ւր ա ըսէնց վախտ մեր տանուտէրն է. ինչի՞ հէչ մէյդան չի գալիս:

ՎԱՆԷՍ

Դէ էնա հմի էլ տալմաթեկրայն ա ընկած:

ՉԱՀՐԱԶ

Գնացէք նրա եաեից: Էլ ինչ էք կանգնել: (Մէկին) Այ հէնց դու վազի, ինչ ես ււէյդ բաց արել ու կանգնել: (Նա գնաց. նրա յետևից) Թէզ հա:

ՄԱՐԿՈՍ

(Մէկի օձիքից բռնելով) Բա դու ինչ ես իշի նման անկաչներդ կախ արել. դու էլ վազդի, (միւսին) դու էլ... (երրորդին) դու էլ... թէզ վազեցէք ու ձեր գեղականներին թափ արէք էստեղ: (Նրանք գնացին աջ և ձախ): Թէզ հա:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ, (յուսահատ)

Այ խալխը, ես ընէնց եմ իմանում, որ ոնչ գեղականները մի բան կչինեն, ոնչ էլ ձեր տանուտէրը: Բէյա դղղըը մեր գլխին կանգնած ա, կանգնած... Երկինքն էլ ա մեր գլխին խռով գալու... Այ, տեսնո՞ւմ էք (ցոյց տալով հորիզոնի կողմը) ամպերը... Տնարանդութինը մեր գլխին իրար եաեից ա գալու: Աչքներդ բաց արէք:

ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐԸ, (նայելով հորիզոնին:)

Պա՜հ. էս անգամ մեր տունն ավիրաւ:
Հանդ ու հանդստանը վէ կունի:

Գիւղականները նայում են հարևանին երկիւղով և խորը թշուառութեան և անճարութեան նշան, որը գլուխն է շարժում, որը ծնկանն է խփում և որը աղօթք է մրմնջում։

ՎԱՆԷՍ

Շատ փիս կարկուտի ամպեր են… Վայ մեր օրին…

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Հմի ես էգ կարկտին էլ եմ ռազի… Ես գիւղէ կարկտէյն եմ վախում, գիւղէ կարկտից։

ՄԻ ԵՐԿՈՒՍԸ, վախեցած

Ինչ խէր սօյլամաղն ես, ամի։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

Ախպէր, իմ սիրտը վկայում ա… Վալլա մեր գլխին գէսաշխաղ կայ։ Էս սպիտակ մազերիս հաւատացէք։

ԳԱԼՈՒՍՏ

Տօ ջանըմ, ամպեր են, կգան էլ կերթան էլ։ Մէկէլ տարին էլ կգանէին, մէկելոն էլ կերթէին։ Դուք էս ցաւի ճարն արէք։ Էս օր, հէնց էս սհաթին, չորս հզարի ճարն արէք, չորս հզարի։

ՎԱՆԷՍ

Դէ հմի ասեք որդևան ենք ճարում էգքան փողը։

ՇԱՀԲԱԶ

Ո՞նց որդևան։ Հէնց հզարը, կհեղանենք, Աղըլից կառնենք։

ՄԱՐԿՈՍ

Հայրաթ։ Նա էր տասում թէ մեկ եարաղ ապար պէտք չի։

ՄԻ ԵՐԿՈՒՍԸ

Դէ թող հմի շինքն էլ երկարի։

ՇԱՀԲԱԶ, գնալով

Ես էս սհաթին գալիս եմ։

ՄԱՐԿՈՍ

Ո՞ւր ես գնում, ա՞։

ՇԱՀԲԱԶ

Էս ա գալիս եմ։ Աղըլի շինքեցը ես ինքս պէտք ա բռնեմ ու քաշտամ բերեմ։ (Գնաց)։

(Ծաս հեռուից որոտմունք)։



## ՏԵՍԻԼ Ը

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ (արտասանքի ազդեցութեան տակ)։

Էյ խալխը, սիրտս շատ փիս շուռ էկաւ… ինչ որ ըստեղ (ցույց տալով իր կուրծքը) մի բան կրծէ… Սիրտս ասում ա՝ էն բաթմասար Մուրթուզալի բէկը համ փողները տալու, համ էլ մեզ արխէյինացրից։

ՇԱՏԵՐԸ

Ո՞նց թէ…
Նա բանից բան չի անի, ջանում…
Նա մեր հացով օրթում կերաւ…
Նա իր գլխովն օրթում կերաւ ախր…
Չէ, ջանում, բանից բան չի ըլնի…

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ

(Դողալով) Վալլա,նա մեզ խաբէց…Վալլա, նա մեր գլխի սաղ կէ կակղ բարձ զրեց… (Աւելի համոզուած) Այ խալխը. ձեր գլխի ճարը տեսէք։ Ով ինչ սիրած անի մեր անի ու փախչի մեր էս տարի դաշը։ Նոր էլ մեր գեղը չենք կարայ պահիլ։ (Աւելի սարսափով) Օղլուշաղներիդ փախցրէք, դուք ու ձեր Աստուծը։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Տօ ջանում…
Ըտէնց էլ աչքակապութիւն կլնի՞…
Հայա—հայա ա…
Բա էլ նրա էրեսը մեր էրեսին դիպչելու չի՞…

Ծաս հեռուից որոտմունք։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ (Աւելի դողալով եւ նևարդային ցնցումներով)

Ամա՜ն, այ խալխը, ահաթը ձեզնից մի փախցրէք… Մեր ջահիլներն ախտա են… (Ձայը կտրած) Ըհը… (Ծուռ է գալիս փախչելու) Էս ա՜ս… հէնց առաջինը ես եմ փախչում… (Դառալով եւ փախչելով դէպի աջ) Փախէ՛ք .. փախէ՛ք…

## ՏԵՍԻԼ Թ

Ձախ կողմում լսում է հարայ—հրոց. մի ինչ որ անբնական բան է կատարւում այն կողմերում։

ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԱԿԱՆՆԵՐ

(Ձախ կողմից դուալով) Վայ ալին, վայ ալին, փախէ՛ք ..
(Անարեկած՝ բոմի վրայից փաղելով դէպի աջ) Սիգլանտուոյին… փոթոտեցի՛ն. փախէ՛ք… (Փախչում են աջ)։

(Բեմի վրայ տօ ու փախ է: Բոլորն էլ սրտատրոփ փախչում են աջ «Հարա՜յ, հաւա՜ր… Փախէ՛ք» գոռալով):

**Ձախ կողմից ներգնէտ. լսւում են ուժեղի պարզ՝ թուրքերի ձայներ «Վուրրն… վուրրն…»:**

Նորանոր գիւղականներ, նոյնպէս սրտատրոփ, բայց լուռ փախչում են բեմի վրայով աջ կողմը—մի մի կամ երկու երկու և կամ մի քանի հոգով իրար յետևից, երբ կամենալով ազատել միայն իրենց գլուխները:

---

## ՏԵՍԻԼ Ժ

ԹՈՒՐՔԵՐ

(Գոռալով և բաց դաշոյններով)· Վու՛րրն… խփեցէ՛ք… վու-ր՛րն… ոչ մէկին միք խնայի… (Անցնում են աջ):

*Երևում է մարդկանց փախուստ նաև յետևի փողոցում: Թուրքերից մի երկուսը բաց դաշոյններով, որը փողոցի դռնից և որը փլուածքից մտնում են Ճահրագենց տունը: Յետոյ լսւում է ինչպէս կոտրատում, ջարդում են նրանց տան դռները: Բաց դաշոյններով և զարմանալի դէմքերով հետզհետէ երևում են նորանոր թուրքեր, որոնք հարւածելով վայր են գցում ամեն մի պատահած փախչող գիւղականի և անցնում են դէպի աջ: Նոյնն երևում է և յետևի փողոցում: Այս բոլորը՝ ձախ կողմից եկած խուռն փոթորկի նման՝ անցնում է աջ կուլիսի յետևը:*

*Բեմից դուրս՝ գիւղի ամեն կողմերից՝ լսւում է, ինչպէս ամենայն ինչ կոտրատում և քարուքանդ են անում. լսւում են նաև թուրքերի կատաղի «վուրրն» բացագանչութիւնները և գիւղականների հարայ—հաւարը:*

*Կամաց կամաց իջնում է*

ՎԱՐԱԳՈՅՐԸ

# ՊԱՏԿԵՐ

Նոյն տեսարանը, մի քանի ժամից յետոյ:

*Թուրք կանայք, աղջիկներ և տղաներ եօթ—ութ տարեկանից սկսած կողոպտում են արդէն անտարդարնակ տները: Մի քանիսը Ճահրագենց տանից դուրս են քաշում գորգեր, կարպետներ, փալասներ, քէչաներ, կերակրի պղինձներ, տաղաշոր, բղուղներ, ամաններ և այլն և այլն: Մի քանիսներն էլ բեմի աջ կողմից (կուլիսների յետևից) բերում տանում են դէպի ձախ նոյնպիսի իրեղէններ, նոյն իսկ տան դռներ, լուսամուտների շրջանակներ,*



*փեղկեր ապակիներով և այլն՝—ամեն մէկը իր հասակի և կարողութեան համեմատ: Այսպէս շարունակւում է, հետզհետէ նւազելով, մինչև ԺԳ տեսիլը:*

**Ստէպ ստէպ կամ երբեմնապէս լսւում են գիւղի զանազան կողմերից հրացանների եզակի ձայներ:**

---

## ՏԵՍԻԼ ԺԱ

ՄՕԼԼԱ, ՍԷՅԻԴՆԵՐ և ԴԱՐՒԻՇՆԵՐ գրօշակներով:

ՍԷՅԻԴ

Մօլլա աղա, էլ մեր գնալն ու գործի գլուխ կանգնելը չա-ժի, դուք ենք առաջ գնում. գեղականները աղ փախել են. մեր աղերքն առանց մեզ էլ իրանց բանը տեսնում են:

ԴԱՐՎԻՇ

Հըմ, մեր դոշշարների առաջ ո՞վ կարայ կանգնի:

ՄՕԼԼԱ

(Սէյիդին) Ես էլ եմ այդպէս կարծում: Դէ որ էդպէս է մենք էլ կերթանք սրանց քէլխան զորքաղայլն կանենք:

ՍԷՅԻԴ

Ճատ լաւ: Դու մեր ս. Ղուրանը կդնես նրանց ուխտարա-նի տեղ. ուխտարանն էլ, քէթարներն էլ կճղատես ու կըակին կը-տաս. մնացածն էլ մենք կանենք:

ԴԱՐՎԻՇ

Գնանք, գնանք, բանի կարևորը չի էկել, մի դրանց զան-գերն էլ ջարդաենք ու վեր ածենք:

ԲՈԼՈՐԸ

(Գնալով դէպի աջ) Եա՜ Ալի, եա՜ հողրաթ Արաս.. (գնացին):

---

## ՏԵՍԻԼ ԺԲ

ՀԵՐԻՔՆԱԶ, ՆԱՋԱՓ, ՀԱՍԱՆ, և յետոյ ՄԱՌՐԹՈՒ-ՋԱԼԻ ԲԷԿ և ՄԱՄԱԴ

ՀԵՐԻՔՆԱԶ

(Սարսափահար փախչելով տանից) Հաւա՜ր… ոսլամնեյի՛ն… հասէ՛ք…

*Նրան հետևում է Նաջաֆը դաշոյնը ձեռքին, իսկ փողոցի դռնից ներս է վազում Հասանը և, Հերիքնազի առաջը կտրելով, դաշոյնի մի հարւա-ծով գետին է տապալում նրան: Նաջաֆը կրկին տուն է վազում:*

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Ձախ կողմից բամ դալով եւ նկատելով) Աֆֆարիմ... դոշշաղ... (կանչելով) Հասան։

ՀԱՍԱՆ

(Գալով նախորեմ պատի փլածքից) Բալի, բաղյ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Բեխերը ոլորելով) Հը՛, լաւ քեֆի եմ միրանք։ Դոշշաղ եմ եսում։

**Թառուհսակ Բամի։**

ՀԱՍԱՆ

Էլ ասիլ կուզի՞։ Նոր տեսար քու աչքովն էլի։ Ձեռով էլ գեղը կլակ կանենք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Դու էլ ասա. լաւ հունձ ունե՞ք։

ՀԱՍԱՆ

Հունձ չէ, ամա լաւ թալան կայ։ (Ցոյց տալով իրենց ընտանիքների վրայ, որոնք մրջիւնի պէս կրում են ամենայն ինչ). Տես ինչ են անում միրանք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Ինչպէ՞ս թէ հունձ չկայ... Բաս գիւղացիք ուր են։

ՀԱՍԱՆ

Ամեն բան թողին ու փախան։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Փախան... Չէ՞ որ ինձ խոստացան հնազանդել ու չտես հազարի ճարն անել։ Բաժմառարնե՛ր։ Խաբեցին։ Թալաքս չբանեց։ (Հասանին հասցած ոխով) Բաս աշխերը, հօրանները, կո՞վերը... Բաս չկարողացի՞ք գրանցից ոչս անել։

ՀԱՍԱՆ

Ասանցի գրանց ինչ կլինի, բաղյ։ Ծակուծուկերից չատերին ենք դուրս քաշել։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Տօ, ջաններդ հանեցէք, մի լաւ քէֆ արեցէք ու յետոյ կոտորէք է՛։

ՀԱՍԱՆ

(Բեխերն ոլորելով) Մեր ազերը լազաթ են քաշում, բաղյ. սիրուններին գերի ենք վերցնում, մնացածներին էլ... հէնց իրանց մարդկերանց առաջ...(աչքով անելով) գիտում ես էլի...Իրանց հետ էլ յետոյ կոտորում ենք։ Խանչալներս լաւ թամզեցին ժանգից։ (Դաշոյնը ցոյց տալով) Տես ինչ պլպլում ա։ Կասես լուսնակ



-րնի։ Հմի էլ մնացել են հովիւները, պառաւներն ու լակոտ լակոտ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Տօ, դրանց բոլը կորեցէք է՛. դրանց մասսարը ես... (Զայրացած) Փաթեցէք ու ածէք ջրհորների մէջ։

ՀԱՍԱՆ

Հըմ, բաղյ. չատերին հէնց սաղ սաղ ենք գցում։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Էդ լաւ է։ Բնհաւթեան ժամանակ քեչ մէջերնեց կերեւան։ Մամադ։

ՄԱՄԱԴ

(Խոյն որովան շան պէս առաջ գալով) Բույուր, բաղյ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Կգնաս մեր դոշշաղներին կասես, որ թալան թողալեց յետոյ գնան էս վերի գեղակի առաջը բռնեն ու սաղ ջարդը դէնն անեն. գեղի վրայ։ Հասկանո՞ւմ ես։

ՄԱՄԱԴ

Գիտում ուստա։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Որ սաղ գեղը իր ամեն ծակուծուկերով ջրով լցի, որ ոչ մի տուն ոչ մի պատ ատղում չպրծնի, խմմի ու բանդղի։ Թախ կացած, գոմչաններն էլ իրանց ծակերամը խեղդուեն։ Քար քարի վրայ չթողնեն տառ։ Յետոյ էլ աստ. որ սրանց սաղ արտերը ցելնի, գարու, բամբակի—ինչ էլ որ լինի—կրակի տան. մի հատ բան էլս չմնայեն։ Իմացա՞ր։

ՄԱՄԱԴ

Բաշ ուստա, բաղյ։

ՀԱՍԱՆ

Ու՜ֆ. ինչ եմ ասնում...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Թող իմանան էդ բաժմառար գաւչանները, թէ Մուրթուզալի բէկին խաբելն ինչ կնշանակի։

**Գնում են։**

ՀԱՍԱՆ

Ամմա, բաղյ, վախում եմ կորկոտը մեր աղբաւթը խառնի։ Տես ինչ արձակ ամպեր են գալիս։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Բան չկայ։ Կարկուտը մեր պակասը կթամամեցնի։ Հանցի-

բում, որտեղ մեր կյանքը չկանի, կարկուտը կբռնի. արևելյան կայ:

**Տաճրաղենց տանից աղմուկ է լսւում**

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Փի՜… Ի՞նչ խաբար է էնտեղ: Ինչի՞ են իրար մէջ ուտում:

---

## ՏԵՍԻԼ ԺԴ

### ՆՈՅՆՔ, ՆԱԶԱՓ և ՄԻ ԹՈՒՐՔ

ՆԱԶԱՓ

(Բաշբաշելով մի Թուրքի դէպի նախաբեմը) Այ, բալէ, էն հագիր հաղթարաշներից մէկն էլ սա ա: Ամեն մարդ աներից բան ման ա հանում, գնում ա գուռ, որ իրանց օղլուշաղները գան տանեն, ամմա սա մէջ տեղից լաւ բաները Թռցնում ա: Բաս էլ ինչի՞ց մենք բեգ, եա մօլլեքանց ու սէյիդներին բաժին հանենք:

ՄԻ ԹՈՒՐՔ

(Կամենալով արդարանալ) Վալլա, բալէ…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Զէնդ, չուն: Թէ կերակուր ես ուզում, ինչի՞ չես ինքդ էփում ու չալամիչ ըլնում: Ո՞նց ես հիմի Թիրա Թիրա անում… Իմանալդ:

ՄԻ ԹՈՒՐՔ

(Նոյնպէս) Ախր, բալէ…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ (կատաղած ճանկելով ատրճանակը)

Դու դեռ խօսում ես… (արձակում է գնդակը):

ՄԻ ԹՈՒՐՔ (Խոկոյն ընկնելով բէկի ոտները)

Աման, բալէ, էս անգամ բաշխի…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բէզէլյամա՜Թ: (Միւսներին) Թէ մէկ էլ կտեսնէք էզպէս բան անելիս. տեղն ու տեղը շանսատակ արէք: Ով որ էլ ըլնի՝ սաղ տեղը անկաշը Թողէք: (Արգալի տալով) Ջահանդամե՛լ… (ատամները կրճտելով) Ճա՞ն մէկը:

(Մի Թուրքը վեր է կենում ու կուչ եկած հեռանում է):

---

## ՏԵՍԻԼ ԺԵ

### ՆՈՅՆՔ, ՄԱՐԿՈՍ և ՕՐՈՒՋ

Այս միջոցին զարգանայած Մարկոսը՝ կացինը ձեռքին՝ վազում է աջ կողմից բեմ, իսկ նրա յետևից Օրուջն ու մի ուրիշ Թուրք բաց դաշոյններով հետևում են նրան:



ՕՐՈՒՋ

(Գոռալով աջ կուլիսի յետևից) Ճան սատակ արէք գլան… խփեցէք… (վազելով բեմ) Իփեցէք էդ գանդուռ-զարմանին, վուրըն…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Հանելով ընից ատրճանակը) Վուրըն, ուշաղլար. սատկացրէք…

(Բեմում եղած Թուրքերը կոմէջ են անում Մարկոսին և հէնց այն ժամանակ, երբ նորան պէտք դաշոյններով տային, կացնի մի հարուածով վայր է գցում նրանցից մէկին և ինքն էլ ընկնում է միւսների հարուածներից: Մուրթուզալի բէկը կրակում է ընկած Մարկոսի վրայ ատրճանակը: Բոլորը Թափւում են սրա դիակի վերայ և ծակծակում):

ՕՐՈՒՋ

(Կատաղած) Սա ուԹ ինը մուսուլման սպանեց էս ահաԹին… Սրա մասսարը եա… (Արգալի տալով) Լաւ ծակծակեցէք էս շանը:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Մօտենալով վայր ընկած Թուրքին) Ա՜լի, Ա՜լի…

ԱԼԻ

Մեռա՜յ… Օղ՜լմ… Վա՜ա՜խ…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ալիին անտղելուց յետոյ) Տեսաք էզ շունն ինչ արեց…

(Մի քանիսը խիստ զայրոյԹով կրկին վրայ են գալիս Մարկոսի դիակին, որոնցից մէկը նորից ծակծակում է դաշոյնով, իսկ մի երկուսը ապտակներ են խփում դիակին:)

ԹՈՒՐՔԵՐԻՑ ՄԷԿԸ

(Ծնկանը խփելով) Վա՜խ, բալէ, աղերք… Ալին ջահանամԹը գնաց:

ՄԻՒՍՆԵՐԸ

(Տրջապատելով Ալիի դիակը նոյնպէս) Վա՜խ… Վա՜խ… Ճէյիզ ա…

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Նոյնպէս) Հայի՜ֆ, հայի՜ֆ… Դէ, ինչ արած… վեր կալէք շուտով մարմինն ու տարէք: (Ցոյց տալով դէպի աջ կուլիսի յետևը) Էնտեղի ջահանամԹի արժանի մուսուլմանների դիակներն էլ տարէք գան տանեն, Թէզ:

(Վերցնում են Ալիի դիակը և տանում են ձախ, իսկ Մուրթուզալի բէկն ու Մամադը գնում են աջ):

ՆԱԶԱՓ

(Հասանին քաշելով բեմի մի կողմը, ծածուկ) Հա՛սան, էսահդ… (ցոյց տալով Տաճրաղենց տունը) մի հարս կայ. Թո՛ւնդրի մէջին գնանք՝ տես խելքդ ինչ է կտրում:

ՀԱՍԱՆ

Հա՛րս: Գնանք: Ախ մամի, չի՞ախչի:

(Երկուսով էլ շտապում են Շահբազենց տանը):

ՆԱՋԱՓ

Չի կարալ. էնտեղ մարդ կայ: Հըս մի սրիչ նաֆաս էլ ա լւում: Տեսնենք:

Գնացին:

**Տեղ տեղ ծուխ է բարձրանում: Հրկիզում են տներ: Զանգակների հուսահատ կամ իբր կոչնակի խուլ կամ ճչող հնչյուններ, ոռնոց, ընդհատումներով, տևում են մինչեւ վարագույրի վերջը: Խուլ ձայներ: Կայծակներ: Մութ:**

---

## ՏԵՍԻԼ ԺԵ

### ՄՕԼԼԱ, ՍԷՅԻԴՆԵՐ, ԴԱՐՎԻՇՆԵՐ, ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ եւ ՄԱՄԱԴ

*Աջ կողմից գալիս են Մօլլան, Սէյիդներն ու դարվիշները իրենց նոյն դրօշակներով և ձեռքներին՝ արծաթեայ խաչեր, բուրվառներ, անօթներ, մատանիներ և եկեղեցական զանազան իրեր: Սրանց հետ են նաև Մուրթուզալի Բէկը և Մամադը:*

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բաս էս զանգերի ձէնն ինչի՞ են գալիս: Բա չկարեցար քաղաքանց անել գըանց քիլիսան:

ՄՕԼԼԱ

Ո՞նց քաղաքանց անես, բաղլ. քար ու կրով շէնք ա սիր: Զանգերն էլ՝ մինչև վեր չգցեն ու կոտրատեն, ագերը չեն հեռանալ էնտեղից:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Հա: Էդ էլ բան է:

---

## ՏԵՍԻԼ ԺԶ

### ՆՈՅՆՔ, ԳԱԼՈՒՍՏ եւ ՄԻ ԹՈՒՐՔ

*Աջ կողմից վազում է Գալուստը սարսափած և հեւալով, որին հետևում է դաշոյնաւոր մի Թուրք:*

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ (կատաղած).

Փիի՜... Էս գավշաններէ բուքը չկարեցի: (Հանում է ատրճանակը և կանգնում է առաջը կտրել):

ԳԱԼՈՒՍՏ

(Ընկնելով մօլլայի ոտները) Աման Մօլլա աղա, ինձ ազատիր. ես մուսուլման եմ:



ՄՕԼԼԱ

(Ձեռքով խոյսն կանգնելու նշան է անում շրջապատողներին): Սպասեցէք: (Գալուստին հետեւող Թուրքը, չնկատելով այդ, կամենում է հարուածել Գալուստին, բայց Մօլլան գոռում է նորա վերայ և յետ է մղում) Եամա՜ն, հէյվա՛ն. սա մուսուլման է: (Գալուստին) Վեր կաց գնանք, ուխտացեալ մուսուլման:

**Կայծակներ: Որոտմունք:**

*Մօլլան, իր խումբը, Գալուստը և միւսները գնում են ձախ. իսկ Մուրթուզալի բէկը և Մամադը ուղղւում են դէպի աջ:*

**Ռումբ. խուլ մինչեւ ամպերից:**

## ՏԵՍԻԼ ԺԷ

### ԼՈՒՍԻԿ, ՀԱՍԱՆ, ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ, ՄԱՄԱԴ

*Սուր ծղրտոց է լսւում Ջահրազենց տանից: Աջ կողմից բեմ են վազում Մուրթուզալի Բէկն ու Մամադը. իսկ տանից դուրս է նետւում սարսափահար Լուսիկը, որին հետեւում է բաց դաշոյնով Հասանը: Մուրթուզալի Բէկը Լուսիկին տեսնելուն պէս զգաստ է.*

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Եավաշ, Հասան. վարմա, վարմա... չխըխ... Սաղ պէտք է բռնենք էդ ջէյրանին... (Ինքն էլ է վազում Լուսիկի հանդէպ. Մամադը նոյնպէս: Երբ սրանք մտնում են պարտէզ և համարեա Լուսիկին շրջապատում են, նա իբրեւ այծեամ դուրս է պրծնում նրանց առաջից և իրան գցում է նախարեմ: Երեքով էլ հասնում են Լուսիկին և կրկին շրջապատում): Մի խիլի. դա ջէյրան է, դա մարալ է, դա ջավահիր է:

*Կալմէջ են անում Լուսիկին և բռնում:*

**Միմիանց հետեւող կայծակներ: Ծառանալող խուլ ձայներ:**

ՀԱՍԱՆ

Գա՜յ. զըուստ որ ջավահիր ա, բաղլ. ծալի փրփուր ա, ծալի փրփուր: Ես սրա եփսը չէի տեսել:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մամա՛դ:

ՄԱՄԱԴ

Բալի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Սրան սաղ սալամաթ կհասցնես մեր եանը:

ԼՈՒՍԻԿ

(Ձեռնթափվելով նրանց ոյժին) Աման, գաւ ու ձեր Ալլահը, ինձ մի սպանէք:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Օյմա՜ղ... Թշերդ ուտեմ, աչքերդ ուտեմ, օյմա՜ղ (Լուսիկը ձեռ բռնած՝ այնուամենայնիւ շատ է քաշքաշւում ու իրեն թափէ թափ տալիս): Հ՞ը... Ի՞նչ էք դէս ու դէն ընկնում... մի կաքաւի հախից էլ չէք կարում գա՜լ:

ԼՈՒՍԻԿ (նոյնպէս)

Ամա՜ն, ինձ էստեղ մորթեցէք. . (Աւելի խիստ հակառակելով եւ լալով) Ես խանի տունը չեմ գնա՜յ, չեմ գնա՜յ, չեմ գնա՜յ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Կերթա՜ս, բախտդ կըծեմ, կերթա՜ս... (Մամադին) Տօ, խանչալդ գիր բռնած է: (Նա գնում է): Վեր կալ սրան... Հասան, ոտից բռնիր, թէզ... Հ՞ը (Մամադին) գցիր թեւդ տակը, ի՞նչ ես...

ՄԱՄԱԴ

Շատ ա չարալաչմիշ ըլնում, բէգ:

ՀԱՍԱՆ

Փրանգի չի գալիս ախր:

Լուսիկը ձեռքը դցում է Մամադի դաշոյնին և մի ակնթարթում՝ դուրս քաշելով ընից, բարձրացնում է, որ խփի նրան, բայց Մուրթուզալի Բէկը՝ Լուսիկի յետեւից՝ խոկոյն բռնում է նրա ձեռքը և միւս ձեռքով խլում է դաշոյնը: Լուսիկը բարկութիւնից ճչում է:

ՄԱՄԱԴ

Պայ, պայ...

ՀԱՍԱՆ

Է՞ս ինչ նամանն ա. բէգ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Ջէյրան է, ջէյրան... Ջէյրանն էլ թալաք ընկնելիս չարալաչմիշ է ըլնում: (Յաջողեցնում են բռնել Լուսիկին եւ դցել Մամադի թեւի տակը): Հ՞ը... բռնի... այ, էդպէս...

**Փոթորիկ:**

Լուսիկն ուժասպառ է: Մամադը ձեռքը դցելով Լուսիկի երանից՝ մաւթարայի մէջ՝ ամուր բռնում է և սեղմում իր կողքին:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Առ խանչալդ, առ՜... (Մամադն առնում է եւ պատրաստւում է դուրս վազել դէպի ձախ): Մամադ, դրա մի դանա մազը գլխից չլէար է վեր ընկնի:

ՄԱՄԱԴ

(Գնալով) Բաշ ուստա:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

(Մամադի յետեւից գնալով) Մի լաւ խալաթ ունես ինձ:



ՄԱՄԱԴ

(Կուլիսներում) Բա գլուխը սաղ ըլնի ինձ հմար:

ՀԱՍԱՆ

(Հետեւելով նրանց) Բա հա, բէգ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԵԿ

Բա խալաթն ուրիշ է:

Գնացին: **Որոտմունք:**

## ՏԵՍԻԼ Ժ-Ը

ԶԻՆՈՒՈՐՆԵՐ, ՇԱՀԲԱԶ և յետոյ ՀԱՍԱՆ:

Աջ կողմից գալիս են զինուորները, որոնք գնում են դէպի ձախ:

ՇԱՀԲԱԶ

(Հեռւից տեսած լինելով Լուսիկին փախցնելը, ծակծակւած գազանի պէս, աջ կողմից ներս է վազում դաշոյնը ձեռքին եւ խելագարի պէս դիմում է զինուորներին) Այ սալդաթներ, բրխուս տաքան... Հասէք իմ եղնից... Ինչ ուզէք կտամ...

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Մեզ հրամայած չի: (Շահբազը յոյսը կտրած, շտապում է միայն ինքը վազել Լուսիկի յետեւից: Շահբազի առաջը բռնելով) Կանգնի՛ր: Խանչալդ տէն տուր:

ՇԱՀԲԱԶ

Ձեր տունը քանդւի, ըրեխէք...

ՆՈՅՆ ԶԻՆՈՒՈՐԸ

Չի կարելի: (Կամենում է խլել Շահբազից դաշոյնը: Նա վերջին ճիգով ընդդիմանում է, ձգտելով վազել դէպի ձախ):

ԶԻՆ. ՄԻՒՍԸ

(Հրացանի կոթով ոտից խփում է Շահբազի մէջքին) Քեզ ասում են տուր:

ՇԱՀԲԱԶ

(Տարածւելով եւ զոռալով) Ձեր տու՜նն աւրւի...

ԶԻՆ. ՄԻՒՍԸ

Նու նու, ձէնդ: (Դաշոյնը խլում են): Իրաւունք չկայ:

Զինուորները գնացին ձախ:

ՇԱՀԲԱԶ

(Մնչալով եւ գլխին խփելով) Վա՜՜խ-խ-խ...

## ՏԵՍԻԼ ԺԹ

### ՃԱՀԲԱԶ և ՀԱՍԱՆ:

*Ձախից շտապով գալիս է Հասանը՝ ուղղւելով դէպի Ճահբազենց տու-նը: Տեսնում է տղէն Ճահբազին, իսկոյն դաշոյնը մերկացնում է և յար-ձակւում նորա վերայ: Ճահբազն այդ տեսնելով սարսափով ցատկում է նրա առաջից և փախչում է, իրեն գցելով պարտէզ և յուսալով ծածկուել խոր տա-նը. բայց ճանապարհի կիսին տեսնում է ոտքի առաջ ընկած հերկընոտի գի-տկը, ճիչ է արձակում: Այստեղ նորա ծնկները թուլանում են, վայր է ընկ-նում գիտկի վերայ, գրկում է գիտկը և խելագարուած զառում է.*

ՃԱՀԲԱԶ

Հերկընոտ, Լուսիկին տարան:

ՀԱՍԱՆ

(Վրայ հասնելով) Չէնդ... (ծակծակում է Ճահբազին դաշոյ-նով մէջքից) քու մասադը ես...

**Բարձրանում են խիստ դղրդիւն և գռեգռոցներ**, որոնք առաջանում են ըստ երևոյթին եկեղեցւոյ զանգակները միմեանց յետևից վայր ընկնելուց և մի ինչ մեծ շէնքի մի մասը քանդւելուց:

**Ծառուղինքի սրտմնգով որոտմունք, կայծակներ և կարկու-տի հեղեղ** մինչև վարագոյրի իջնելը:

Հասանը պատսպարւում է Ճահբազենց տանը:

Ճառ կամաց իջնում է

**ՎԱՐԱԳՈՅՐԸ**

---

# IV

# ՄԱՐՄՆԱՑԱԾ ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆ

(ԿԱՆԳՆԵԼ Է ԽՍԼԱՄԸ)

## ԱՆՁԻՆՔ

ՃՈՒԲԻՒՐ ԱՂԱ, խմբագիր մի թուրք լրագրի։
ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ, խմբագրութեան քարտուղար։
ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ, այդ լրագրի գրաքննիչ։
ՄԷՏՐԱՆՊԱԺ ՏՊԱՐԱՆԻ
ՄԻՐԱՔԵԱՆ
ՄԱՐՈՒԳԵԱՆ
ԱԲԱՍ ԱԼԻ, լրատու
ԳԱՆՁԱԿԵՑԻ }
ՆՈՒԽԵՑԻ } թուրքեր
ՇԱՄԱԽԵՑԻ }
ԹԱՂԻ, խմբագրատան տարլին ծառայող։

**ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ն Է 1905 Թ.**

## ԱՐԱՐՈՒԱԾ Դ

Տեսարանը ներկայացնում է մի թուրք լրագրի խմբագրատունը։

Մեծ սենեակ։ Աջ կողմում դէպի խորքը մի դուռն, որ տանում է դէպի փողոց. Ձախ՝ երկու դուռն՝ մէկը-տպարան, իսկ միւսը-խմբագրատան միւս սենեակները։ Խորքում չորս կամ հինգ լուսամուտներ. իսկ նրանց բաժանող պատերից մէկի վերայ ամրացած է հեռախօսի ապարատը։

Բեմի վերայ. աջ՝ խմբագրի սեղանն է, լի զանազան թղթերով, իսկ ձախ՝ քարտուղարի, որի վերայ աւելի եւս լցուած են թղթեր, յօդուածներ, գրքեր եւ այլն։ Խմբագրի սեղանի առաջ՝ բազկաթոռ. իսկ մնացած տեղերում՝ աթոռներ։

### ՏԵՍԻԼ Ա

*ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ ԵՒ ՅԵՏՈՅ ՄԷՏՐԱՆՊԱԺ*

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

*(Նստած է իր սեղանի մօտ. խիստ զբաղուած է. մի փոքր յետոյ՝ մատը դնում է էլեկտրական կոճակին. լսւում է տպարանում զանգակի շարունակ, զող ի զող, ձայնը. ներս է գալիս մէտրանպաժը)։*
Ի՞նչ եղաւ վերջին յօդուածը. այսպէս չի կարելի։

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Ի՞նչ արած. գրաշարի խիստ պակասութիւն կայ, անպատճառ պէտք է մի երկուն էլ վարձենք։ Լրագրի համարը կարող է ուշանալ։

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Ի՞նչպէս թէ կարող է ուշանալ. անկարելի բան է: Մի կամ երկու ժամ սովորականից ուշանալը՝ կնշանակէ համարները երկաթուղուն չհասցնել ժամանակին. և Իրանում, Թուրքիայում, Արաբիայում ամեն տեղ, մի երկու երեք օր ուշ կստացուի մեր լրագիրը և վարկն ու նշանակութիւնը կնսեմանայ... Նամանաւանդ մի այսպիսի ժամանակ, երբ ամբողջ Իսլամ աշխարհը նիարդային անհանգստութեամբ սպասում է նորանոր լուրերի:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Ի՞նչ արած. գրաշարները ջանընթերից դուրս են գալիս. շատ ձեռագրներ ուղղակի չեն կարդացւում... մինչև բառը բառից ջոկում են, րոպէներ են անցնում:

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Դէ, ես ոչինչ չեմ ուզում իմանալ: Խմբագիրն ուղիղ կգլխատի: Դուք գիտէք:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Ինչքան ուզում է՝ գիտի. որ ճար, իլլաջ չկայ...: Անպատճառ պէտք է վարձել գոնէ մի երկուսին: Երբ գրաշարի չարւածքի քանակը համեմատաբար պակասի, երբէք չի կարող այնուհետև ուշանալ:

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

(Զնայելով վերան) Ո՞րտեղ կայ գրաշար:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Մի երկուսը կան „Լոյսի“ տպարանում, բայց թոյլ են. իսկ „Մազութի“ տպարանում մէկը կայ, որ զարմանալի արագաշար է և համարեա անսխալ: Մեքենայի հետ կմրցի:

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Իհարկէ թուրք է:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Չէ. հայ է: Երեքի բան կանի:

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Չէ, չէ. աստաֆրուլլա:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Նրան կարելի է անմեղ բաներ տալ շարելու:



ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Դու շատ ազատամիտ ես:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

Ազատամտութեան բան չկայ: Գործն է պահանջում:

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Աստաֆրուլլա: Մենք ասում ենք հայերի քաքը ջնջենք, իսկ դու ուզում ես դեռ բերենք մեր թևի տակ տաքացնենք էլ: Մէկին կարելի է տասով փոխարինել, միայն հայ չլինի: Ինչ գնով լինում է՝ լինի: Գնա: Հա, սպասիր: Այսօր դու էլ օգնիր շարուածքում. իսկ վաղուան համար ճար կանենք:

ՄԷՏՐԱՆՊԱԺ

(Գլուխը կախ գնալով) Լաւ:

---

## ՏԵՍԻԼ Բ

### ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Ախմմխ... Զամաչից էլ: (Մոտենում թղթերը շուռ է տալիս): Ախր մեր գրաշարներն էլ գրաշարներ չեն է... Փահլայի նման բաներ են: Գիտի կողքերին կանգնես ու շարունակ բզես, բզես, իշի նման բզես... (Արհամարհանքով) Անուս են, անուս... դժուարաշարժ են: Ուրիշ լրագրների համեմատութեամբ մեր գրաշարները համարեա կրկնակի են ու էլի գործը կաղում է: (Դարձեալ թղթերը շուռ է տալիս): Զարմանալի բան է, ճըշմարիտ. մի երկու քայլ չես կարողանում անել առանց հայի անհրաժեշտութիւն զգալու: Ի՞նչ արած: Նրանք կուլտուրապէս շատ են առաջ գնացել... թէև... (սխերիմ) շուտով յետ կերթան... (Աւելի թոյնով) Ուր գնում ես՝ հայ, ուր նայում ես՝ հայ, հայ ու հայ... Նայում ես երեսներին՝ ուղղակի թքամաններ: Ուզում ես միայն թքել նրանց վերայ: Զեռքիդ եղած նոյն իսկ անմեղ դանակը հանել ու զուգ փորները ճղել... Ո՜ւֆ... Ինչքա՜ն զզուելի են: Գիշատիչ թռչունների ապաւորութիւն են թողնում... որոնց պէտք է կոտորե՜լ կոտորե՜լ...

## ՏԵՍԻԼ Գ

### ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ ԵՒ ԱԲԱՍ ԱԼԻ

ԱԲԱՍ ԱԼԻ

(Արագ գալով խմբագրատան դռնից)։ Սալամ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Հ՞ը. ի՞նչ խաբար։

ԱԲԱՍ ԱԼԻ

(Շատ արագ)։ Էնսկլի փողոցում չորս-հինգ թուրք կալմէջ են անում մի հայի։ Հայն ատրճանակն իսկոյն պարպում է վրանները. նրանք փախչում են։ Ես, ինհարկէ, փսսան եմ ասում։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Դէ գրիր, գրիր։

ԱԲԱՍ ԱԼԻ

Փի՜. ես նիւթը առեցի դու էլ խմբագրիր էլի։ Մինչև իմ գրելը՝ ես տասը ծակ ու ծուկ կմտնեմ։ (Արագ հեռանում է)։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Սպասիր, սպասիր։ Պօլիցիային յայտնուե՞լ է։

ԱԲԱՍ ԱԼԻ

(Դռան մէջ)։ Հա, հա. գնացին յայտնելու։ (Ուզում է ծածկուել)։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ի՞նչպէս։

ԱԲԱՍ ԱԼԻ

Ցօ դէ գիտես, էլի։ (Արագապէս ծածկւում է դրան յետևը)։

---

## ՏԵՍԻԼ Դ

### ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

(Իսկոյն գրելով)։ Երեկ, ժամի 10-ին, Էնսկլի փողոցում իննը հայեր կալ մէջ արին մի խեղճ պարսկաստանցի թուրքի և ուզեցան սպանել։ Պարսկահպատակ թուրքը, իսկոյն ռէվօլվերը հանում է և գնդակներն արձակում է իրար ետևից։ Հայերը փախչում են։ Ականատեսները ասում են, որ նրանցից մէկը վիրաւորուել է։ Պօլիցիականները մի փոքր ուշ հասան։ Չարագործներին անյայտացան։ Այս դէպքը խիստ յուզմունք պատճառեց թուրք հասարակութեան մէջ։ (Մատը դնում է կռնակին. գալիս է մէտրանպաժը)։ Իսկոյն չարել տուր այս։ (Մէտրանպաժը թուղթն առնելով, դնում է։ Հեռախօսի սիգնալ։ Միրզա Իւսուֆն իսկոյն գնում է մօտը)։ Զահլա տարան էլի։ (Ականջ է դնում. յետոյ) Ո՞վ է... Դու ո՞վ ես... Դեռ ոչինչ չկայ։ Հ՞ը։ Դեռ չէ եկել... Այսօ՞ր... Մօտ տասը հոգի հայեր ուզեցել են սպանել մի խեղճ պարսկահպատակ թուրքի. չի յաջողել. նա իսկոյն ռէվօլվերն արձակել է. փախել են. պօլիցիան գիտէ։ (Վերջացնում է եւ գալիս է դէպի իւր գրասեղանը)։ Այ, հիմա միաժամանակ մեր միւս լրագում էլ կտպուի։ Ներկայ լարուած դրութեան համար դա շատ նշանաւոր բան կլինի։ (Հազիւ նստելով տեղը, դրրդում է հեռախօսը. վեր թռչելով)։ Փի՜... չեն թողնելու բաներներիս կենանք էլի. պէտք է մէկը սրա մօտ կանգնի ու հարցերին պատասխաններ տայ։ (Կրկին դրրդիւն հեռախօսի)։ Թ՜ուհ... (Զայրացած մօտենալով)։ Ո՞վ ես։ (Իսկոյն կակղելով եւ կուչ գալով)։ Հաջի Աղա, դո՞ւք էք... (Ժպտալով եւ գլուխ խոնարհեցնելով հեռախօսի առաջ)։ Ոչ, աղա, դեռ ոչինչ չկայ։ (Այնպիսի դիրք է ընդունում, որ կարծես անձամբ նրա մօտ կանգնած է եւ պատասխանում է կուչ ու ծիգ գալով)։ Այս օրւայ հեռագրների մասին արդէն դուք գիտէք։ Երեւում է, որ սպանուած խեղճ ֆանարչու թաաիրը մեր ձուչեցէք գետով չեն տալ... Մեծամեծ տրաքրցների ենք սպասում։ (Խոնարհութեամբ լսելով)։ Շատ լաւ, աղա. ուրիշ ոչինչ չէ՞ք հրամայում... (Գլուխ տալով հեռախօսին)։ Սալամաթ. Աստուած քեզ կեանք տայ մեզ համար։ (Ուրախ ժպիտով գալիս է իւր տեղը)։



---

## ՏԵՍԻԼ Ե

### ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ, ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ ԵՒ ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

(Այս վերջինները ներս են գալիս եւ ձեռք են տալիս Միրզա Իւսուֆին, որը նրանց սալամին պատասխանելով նստում էր իր տեղը)։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Հ՞ը. Ձուչիից ի՞նչ կայ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Այս հեռագրներն են. համեցէ՛ք։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

(Միրզա Ջաբբարին)։ Առաջ մի նայենք այս հեւագրները եւ յետոյ շարունակենք մեր խօսակցութիւնը։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Հա, հա. հետաքրքիր է. կարդա։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

(Արագ թերթելով հեռագրները)։ Շարունակւում են սպանութիւնները. հիմայ մեր գործը յաջող՞ է։ Լսիր։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Ո՞րտեղից է։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Շուշիից։ Հիմա միւսը տեսնենք։ Շուշի. խիստ հրացանաձգութիւններ են. սպանուածների և վիրաւորուածների մասին դեռ տեղեկութիւն չկայ. երկու կողմն էլ ամուր են կանգնած։ (Բարկացած)։ Հը, տեսնում էք էս բէհօյա էրմանիներին։ (Երրորդը)։ Աղդամ. մենք ինչ սուտ անում ենք. երեք օրւայ մէջ հարիւրից աւելի ճանապարհորդ հայեր ենք կողոպտել. շատերին գերի ենք վերցրել, շատերին էլ սպանել. Մամադ։ (Աւելի բարկանալով)։ Հ՞ըմ, ախմախ. սա էս տեսակ հեռագիր կտա՞ն. արչի ծառայութիւնն է արել. հայերը կարող են օգտուել այսպիսի դօկումենտներից։ (Չորրորդը)։ Շուշի. սաստիկ հրացանաձգութիւնից յետոյ մենք զօրանոցում ապաստան գտանք. մեր մեծամեծները հաշտութիւն ուզեցին, բայց ամբոխը խոստացաւ կոտորել նրանց, եթէ այդպիսի բան անեն։ Այս բոլէխս Աղդամից գնացած մեծ բազմութիւն եկաւ մեզ օգնութեան. Միրզա։ Աֆֆարիմ... Ինչ եմ ասե՞լ... Իսլամի յաղթանակը մեր խուժանի մէջն է։ Թէև... դժւար դէպքերում ես դէմ չեմ հաշտութեան։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Ի՞նչպէս։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Հաշտութիւնը մեզ համար նեցուկ է, փրկութիւն. իսկ հայերի համար՝ կապանք, կորուստ։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Դժւարանում եմ հասկանալ։



ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Շատ պարզ է։ Երբ հայերը մեզ կզռեն՝ իսկոյն պէտք է հաշտութիւն խնդրել։ Հայերն այդ հաշտութեանը նայում են իբրև թշնամական գործողութեանց վերջաւորութեան վերայ, ուրախանում են, իսկոյն դադարում և միամտւում, այն ինչ մենք, ժամանակ վաստակելով և նրանց ոյժերին ծանօթանալով միչդ կունենանք նորանոր պատրաստութիւններ տեսնել և նոր ոյժերով յարձակւել նրանց վերայ, յանկարծակիի բերել նրանց և կատաղի կոտորած սկսել։ Ապա՞։ (Կարդում է հինգերորդ հեռագիրը)։ Շուշի. մեզնից շատերը սպանւեցին. մինչև 50—60 հոգի. կանգնած ենք ամուր. Միրզա։ (Բարկանալով)։ Տեսնում էք էլի. հայերն ինչպէս դիմադրութիւն են ցոյց տալիս, է՜։ Ապա որ ես ասում եմ՝ պէտք է ջնջե՛լ, իսպառ ջնջել այդ միլլէթին։ Միրզա Իւսուֆ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Բալի։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Շարւո՞ւմ են։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Արդէն։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Իհարկէ...

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Անհոգ կացէք։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Լսէ։ (Միրզա Ջաբբարին) Զարմանալի քաղաքագէտ է։ Հիմա ինձանից լաւ է կազմում հեռագրներն ու լուրերը։ Հէնց նամակներն ու թղթակցութիւններն էլ պակաս չէ խմբագրում։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Արժանաւոր ուսուցչի՝ արժանաւոր աշակերտ։

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Հա, հիմա շարունակենք մենք մեր խօսակցութիւնը։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Ես այն էի ասում, որ դու պէտք է հասկանաս և իմ դրութիւնը։ Ամեն անգամ դու ինձ այնպիսի դրութեան մէջ ես դնում, որ շարունակ ես ահ ու երկիւղի մէջ եմ։ Ամեն բոպէ

կարող են ինձ ծառայութիւնից զրկել և դատի ենթարկել։ Եւ ես ամենայն օր սպասում եմ դրան։ Ձէ, սիրելիս, այդպիսի յօղուածներ, այսուհետև... (շեշտելով ամեն մի խօսքը) ոչ մի կերպով չեմ կարող թոյլ տալ։ Ներիր։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Նոյնպէս շեշտելով) Պէտք է թոյլ տալ։ Գործի ամբողջ յաջողութիւնը կախուած է այդպիսի մի շարք յօղուածներից։ Հասկանում ես... Ամբողջ յաջողութիւնը։

ՄԱՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Ես շատ լաւ եմ հասկանում քեզ։ Միթէ ես ինքս քեզ գործակից չեմ։ Բայց համաձայնիր, յիմարութիւն կլինի իմ կողմից՝ կրակը տեսնել և ընկնել ուղիղ մէջը։ Դա անմտութիւն է։ Միայն հայերը կարող են մի այդպիսի բան անել։ Ձէ, եղբայր, ես ընտանիքի, որդոց տէր եմ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Հա. Շուքիւր աղա. Հաջի Ահմադ Աղան էր հարցնում քեզ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Իսկոյն) Հաջի Ահմադ Աղա՞ն։ Բան էր ասո՞ւմ։

ՄԱՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Չգիտեմ. հարցնում էր։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Լաւ։ (Յանկարծ ճակատին խփելով)։ Պոյ, պոյ. ինչպէս մոռացել եմ... Հաջի Ահմադ Աղա ասաց, միտս ընկաւ։ (Միրզա Ջաբբարին). Այ քու տունը չէն. այս երկու օր է ինչ Հաջի Ահմադ Աղան ինձ մի 200 մանէթ է տուել, քեզ տալու համար։ Նա ասում էր, որ քո աղայի մասին շատ գովասանքով են խօսում Պետերբուրգից եկողները։ Որ այդպէս լաւ աղայ է, ասում է, այս 200 մանէթը տուր հօրն, ասում է, որ իրան զրկի ինձնից փեշքաշ։ (Հանելով գրպանից դրամները եւ տալով) Համեցէք։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Շատ ու շատ սաղ լինի։ Աստուած կեանք տայ մեր Հաջի Աղային։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Իսկ ամսականն, ի հարկէ, իւր կարգով։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

(Համբուրելով մանեթի ծայրերն ու դնելով աչքերին) Շատ



շնորհակալ եմ։ Այսուհետև իսկ կերթամ իրա մօտ շնորհակալութեան։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այդ ինհարկէ, քո գործն է։ Շարունակենք։ Ես այն էի ասում, որ այդպիսի յօղուածներ, քանի քեզ չեն նոյն իսկ պաշտօնազուրկ արել, պիտի թողնես։ Դու ոչինչ պիտի չտեսնես ու հասկանաս։ Մի քիչ էլ գոհ է հարկաւոր։ Թէև դու քո կաշուից վախենալու ոչինչ չունես։ Իսկ եթէ ընկար, բարձրացնելը չնչին բան է։ Քեզ, անշուշտ, կախ չեն տալ. շատ շատ պիտի դատի ենթարկեն։ Առաջին դէպքում փողը ամենազօր է Ռուսիայում, իսկ երկրորդ դէպքում՝ դու քո ռոճիկդ կը ստանաս Հաջի Ահմադ Աղայից։ Էլ վախենալու ինչ ունես։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Սիրելիս, աղա, դու էլ չափից շատ ես դուրս գալիս է։ Հետզհետէ այն մտքին եմ յանգում, որ ռուսների բաները խարաբ է. որ նրանք միանգամայն թուլացել են. որ մենք պէտք է հիմայ պատրաստուենք ռուսի դէմ ոտքի կանգնելու, քանի որ նա եւրօպական հարցերից լուծում է և արդէն թուլացել է. որ, վերջապէս, Կովկասը, Թուրքեստանը մերն են և այլն և այլն։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այո, այո։ Միթէ սուտ է։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Ո՞վ է ասում որ սուտ է։ Բայց դու Ռուսաստանի ամբողջ տասն և հինգ միլիոն, իսկ մեր դուրս բերած հաշւով դեռ 30 միլիոն մուսուլմանների աչքերն ես բաց անում։ Թուրքիայի, Պարսկաստանի, Արաբիայի, Եգիպտոսի, մինչև անգամ, Հնդկաստանի, նոյն իսկ ամբողջ աշխարհի Իսլամին ես գրգռում ռուսի դէմ։—Այդպէս չի լինի։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այո, անշուշտ հարկաւոր է։ Պէտք է հասնենք դրան և իմ մտքերիս ամբողջ թափը ուղղուած է այդ նպատակին։ Այդպէս են մտածում և մեր շատ ու շատ հասկացող մուսուլմանները։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Բայց ռուսաստանում հրատարակուող լրագրո՞վ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ո՞վ է իմանում։ Ո՞վ է մուսուլմանից դուրս կարդում

թուրք լրագրներ: (Ոգեւորւած): Հէնց մեր բաղդը դորանով է աջ: Մեր դիրքը, դրութիւնը հանգամանքները ամեն կողմից բացառիկ են: Մենք պիտի օգտուենք ամենալայն չափերով, քանի որ մեր լեզուն, մեր լրագրութիւնը անմատչելի են ոչ մուսուլմանների համար և ընդհակառակն՝ մատչելի միմիայն մեր, մուսուլմաններիս, համար: Ինչու չօգտուենք:

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Հ՜ըմ. էս բլաֆուր էրմանիները միան հոտառութիւն ունեն. չէյթանի ջինս են: Բնական է, որ կծիկի ծայրից բռնեն, հա պիտի քաշեն, հա պիտի փաթաթեն իրենց մատների վրայ և կառավարութիւնը նոյն իսկ նրանց միջոցով կիմանայ ամեն բան:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Շատ չնչին բան: Մեր հարիւրաւոր յօդւածներից միայն մի երկուսը հազիւ է ընկնում հայերի ձեռքը: Ինչքան ուզում են՝ դէմը թող գրեն: Ինչ որ էլ գրում են՝ իրենց մէջն էլ մնում է: Կառավարութեանը նրանց միջոցով համարեա թէ ոչինչ չի հասնում: Իսկ մեր գրածները սկզբից մինչև վերջը մաքուր ոսկու գին ունեն ամբողջ Իսլամութեան համար: Ապա: Թող հայերն ինչ ուզում են անեն. որքան կամենան թող շների պէս ոռնան ու զուզա տան: Մուսուլմաններից լսողն ով է: Իմացողն ով է: Իսկ մենք մեր սերմերը գցում ենք առանց մի հատիկ վնասի:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Եւ ամենապարարտ հողի վրայ:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Հասկերը սկսում են հասունանալ. շուտով էլ հունձը կըսկսուի: Եւ կտեսնենք: Պէտք է միայն օգտուել:

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Շատ բարի: Օգտուենք: Իսկ եթէ հայերն այն գաւառներում, ուր թւով մի քանի անգամ շատ են թուրքերից, յարձակուեն մերոնց վրայ, սրի և հրի դէմ անեն, ինչպէս մենք անում ենք հայերին—այն ժամանակ:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Օ՜, այդ երբէք չի լինի: Եւ ահա ինչու: Առաջին՝ հայերը կուլտուրական ազգ են, անսովոր զէնքի և նախայարձակման.



երկրորդ՝ կառավարութիւնն այդ դէպքում նրանց հետ հանաք չի անիլ և երրորդ՝ նրանք կվախենան այստեղ մի որ և է սուր դրութիւն ստեղծելուց, որովհետև գիտեն, որ այնտեղ, Պարսկաստանում, մօտ երկու հարիւր հազար հայերից մի հատը կենդանի չի պրծնի, որին առանց այդ էլ ձգտում ենք մենք:

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Այո... Նրանց դրութիւնը խիստ կրիտիկական է:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Անկասկած: Հէնց դրա մէջն է մեր ոյժը: Եւ մենք, կըրկնում եմ, պէտք է օգուտ քաղենք նրանց այդ անելանելի դրութիւնից. ապա թէ ոչ՝ մենք ամեն ինչ կկորցնենք:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Ոգեւորւած): Անշուշտ: Պէտք է օգտուենք, քանի որ այսօր կառավարութիւնն ինքն է գալիս մեզ օգնութեան: Բայց, օգտուելով հանդերձ, պիտի աւելի հեռուն նայենք: Քայքայելով, ոչնչացնելով հայութիւնը, մենք զէնքի, կարողութեան և նոյն իսկ հողերի տէր կը դառնանք Իսլամին այս երկրում: Ուստի միևնոյն ժամանակ, պիտի արմատացնենք նրա մէջ և այն միտքը, որ շուտով, շատ շուտով, մօտ ապագայում նոյն զէնքը պիտի գործադրենք մենք մեր դարաւոր թշնամու—հէնց ռուսի դէմ: Ահա այդ հիմքը այժմեանից պէտք է դրուի: Այժմեանից պիտի հասկանան մեր մուսուլմանները, որ ռուսն արդէն անզօր է, որ ներկայ պատերազմն ապացուցեց այդ... որ այս բռնկուած ներքին խառնակութիւնները քանի գնան, պիտի զարգանան և հրէշաւոր չափերի պիտի հասնեն և որ այս խառնակութիւնները հիմնովին պիտի ջլատեն, քայքայեն ռուս կառավարութեան փտած ոյժը, ամբողջութիւնը... Պիտի իմանան նաև, որ մօտենում են մեր ցանկալի, մեր երազած ժամանակները, որ, վերջապէս, մեր վաղուցւայ ցնորքները իրականանալու վրայ են. որովհետև, կարող է պատահել, որ ռուսաստանի ազգերը կկանգնեն և զէնքի ոյժով իրենց անջատումը կպահանջեն.—ահա այդ մոմենտը մենք մեր ձեռքից պիտի չփախցնենք. պիտի դուրս շպրտենք ռուսներին Կովկասից, ինչպէս և Անդրկովկասեան երկրից: (Ոգեւորւած): Ես հաւատում եմ, ես համոզւած եմ, որ այս այսպէս պէտք է լինի:

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

(Վեր կենալով)։ Արէք, ինչպէս գիտէք։ Միայն... հակառակ դէպքում...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ես խոստանում եմ Հաջի Ահմադ Աղայի անունով, որ...

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Ուրեմն... (Ձեռք է մեկնում հրաժեշտի)։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Ուրախ սեղմելով նրա ձեռքը եւ թափ տալով)։ Շնորհակալ եմ։ Ամեն ինչ ես իմ վերայ եմ առնում... Այո, Միրզա Ջաբբար, հետզհետէ կշարունակենք ցցել աւելի հաստատուն փունդամենտներ մեր Իսլամ ժողովրդի սրտերի մէջ... (Աւելի ոգեւորուած) Թող միայն կաթիլներով, կաթիլներով մտցնենք այս մեծ գործի սաղմերը նրա երակների մէջ, նրա արեան մէջ և ես աւելի հաստատուն քայլերով կերթամ ընդ առաջ՝ Իսլամի վերայ նոր ծագող արևին։

ՄԻՐԶԱ ՋԱԲԲԱՐ

Արա՛, ինչպէս գիտես։ Իսկ ես մի գնամ Հաջի Ահմադ Աղայի մօտ։ Մնաս բարև։ (Սեղմելով եւ Միրզա Իւսուֆի ձեռքը՝ գնում է)։

---

## ՏԵՍԻԼ Զ

### ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ ԵՒ ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ամա ինչ լեզու ունի՜ս։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Մտքերով զբաղուած)։ Ի՞նչպէս։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Նպառած քարեր կծակի, Մուհամմէդի գերեզմանը վկայ է։ Լաւ կակղեց...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Նոյնպէս)։ Հա՛։ (Մօտենում է հեռախօսին. սիգնալ)։ Արդեն ամենն է։ Հ՞ը։ Խնդրէք մի զահմաթ քաշի տէլէֆօնին մօտենայ։



(Սիգնալ)։ Ո՞վ էք։ (Իսկոյն գլուխ տալով հեռախօսին)։ Ես եմ, Հաջի Աղա. քու Շուքիւրը։ (Ժպտով)։ Նոր երկու հարիւր մանէթ տուեցի Միրզա Ջաբբարին։ Ասեցի, որ դու ես տուել ինձ իրան տալու համար։ Ասա որ դու նրա տղայի համար շատ լաւ ես լսել Պետերբուրգից եկողներից։ (Լսում է) Հ՞ը։ (Նոյնպէս) Հա՛։ Անհրաժեշտ էր։ (Դարձեալ լսում է)։ Չէ դեռ ուշադրաւ տեղեկութիւններ չկան։ Հիմա կարգին պատերազմ է Շուշիում։ Ամեն բոպէ սպասում ենք նոր հեռագրների։ (Լսում է) Հ՞ը։ Հա, հա, աղաս... Այստեղ էլ ամեն բան կարգադրուած է։ Այսօր կամ վաղը այստեղ էլ կսկսուի։ Դու աշխատիր հէնց այսօր մի երկու շարաթով քաղաքից հեռանալ։ (Լսում է)։ Շատ լաւ։ Խմբագրատանից իսկոյն կը գամ քո մօտ։ (Դադարելու ազդանշան։ Ուրախ տրամադրութեամբ հեռանում է հեռախօսից եւ ձեռքերը տրորելով ման է գալիս)։ Միրզա Իւսուֆ։ Լրատուններից ինչ կայ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Միայն մէկն է եկել։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հ՞ը։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Մի քանի էլմանիներ կալ մէջ են արել մի խեղճ պարականպատակ թուրքի սպանելու նպատակով, բայց իգիթը աէվօլվերը հանում է ու վրաներն արձակում։ Հայերը փախչում են։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Լաւ... (Կարճ մտածելուց յետոյ) Իսկ՛կանը։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Գիտես էլի։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հը՛մ։ Շարժում են։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ի հարկ է։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Իսկ դէպքն եղե՞լ է։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Եղել է։ Էնակի փողոցում։ Մի ժամ առաջ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Ման գալով) Բէգէյլրաթնե՜ր։ Մի հոգու հախից էլ չեն կարողանում գալ։ Գօլիցիային յայտնել են։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Իսկոյն։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Իսկ գեներալ գուբերնատորին։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Չգիտեմ ճշմարիտ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ի հարկէ չէ։ Ախմախներ։ Չէին կարող մի տաս քսան մարդ հաւաքուէին ու գնային ղանգատով։ Նամանաւանդ հիմայ։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Այդքանը երևի չեն մտածել։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Լրատուն ճանաչո՞ւմ է նրանց։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Մի երկուսին, կարծեմ, ճանաչում է։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ուրեմն իրան տաս, թող անպատճառ այդ բանը սարքի և նոյն իսկ այսօր։ Մի դօկումենտ էլ այդ կլինի։ Ծովը կաթիլներից է կազմւում։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Աչքիս վերայ։ Ի՞նչպէս ես էլ աչքաթող արի...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Քեզանից չէր։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ոչինչ. դրա առաջը կառնենք։ Միայն .. Շուքիւր աղա... մի միտք է ծագել իմ մէջ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ասա՛։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Որովհետև Շահի գալստեան համար, հայերը, ինչպէս գրում են նրանց լրագրները, ուզում են պատգամաւորութիւններ ուղարկել Բալաջարայ և Հաջիկաբուլ, ուստի, ես կարծում եմ, մենք էլ պիտի դրա հակառակը անենք։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Լարուած ուշադրութեամբ) Ի՞նչպէս։



ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ի հարկէ մենք էլ պատգամաւորութիւն կուղարկենք Բալաջարա, կամ, Թէկուզ, Պէտրովսկ, որպէս զի միջոց ունենանք օր առաջ նախապատրաստելու Շահի տրամադրութիւնը ի վնաս հայերի։ Սևկալի գոյներով նկարագրելով նրան հայերի արարմունքները, պիտի աւելացնենք նոյն իսկ մի այսպիսի բան. Թէ հայերը Շուշիում իբր յարձակուել են մեր մզկիթի վերայ և քսան-երեսուն պարսկահպատակ Թուրք ծնօղների աչքից իբր մորթոտել են և քթներն ու ականջները կտրելով տարել... Կամ սրա նման մի բան։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հրաշալի... հրաշալի միտք... Աֆֆարիմ, Միրզա Իւսուֆ... Պէտք է այդ մտքից օգտուել... Ես հէնց այսօրւանից այդ կարծարծեմ և կաշխատեմ իրագործել։ Հրաշալի՜ միտք... Մարհաբա՛։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Զարմանալի միլլէթ են, ճշմարիտ, այս հայերը. հէչ գաղտնիք պահել չգիտեն. իրենց ձեռքով իրենց տունն են քանդում։ Նրանց անելիքի մասին մենք ամիսներ առաջ գիտենք. իմանում ենք նոյն իսկ, թէ որ օրը և որ ժամին ինչ են անելու։ Եւ մենք այս անգամ էլ կօգտուենք նրանց բոշբողազութիւնից։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Անշուշտ, անշուշտ։ (Մտածմունքով) Եթէ հայերի այդ բոշբողազութիւնը չը լինէր մենք նրանց հախից չէինք կարող գալ։ (Հեռախօսի ազդանշան։ Քարտուղարն իսկոյն մօտենում է հեռախօսին։ Շուքիւր աղան մտքերով զբաղուած մօտ է գալիս)։

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Ո՞վ ես... Դո՞ւ ով ես... Հա։ Չէ, դեռ ոչինչ։ Բայց առ բայց սպասում ենք հեռագրների։ (Դադարման նշան։ Գալով իւր տեղը) Հաջի Մամադ աղան։

---

## ՏԵՍԻԼ Է

### ՆՈՅՆՔ ԵՒ ԹԱՂԻ

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հ՞ը. հեռագի՞ր. տուր տեսնեմ, շուտ։

ԹԱՂԻ

Չէ, աղաս: Էն Գեանջցին, Նուխեցին ու Շամախեցին են էկել: Քեզ են հարցնում:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

(Յիշելով) Հա: Ներս հրաւիրիր: (Թաղին գնաց): Միրզա Իւսուֆ... Համարը հօ չի ուշանայ այսօր:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Չէ, կարգադրել եմ: Արխէյին կաց:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Ես քեզանից միշտ արխէյին եմ:

---

## ՏԵՍԻԼ Ը

### ՆՈՅՆՔ, ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՇՈՒՇԵՑԻ ԵՒ ՆՈՒԽԵՑԻ

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

(Վեր թռչելով տեղից եւ մօտենալով նրանց) Այ բարով հազար բարի էք եկել: Համեցէք: Բույուրն: Նստեցէք խնդրեմ: (Ինքն էլ է նստում) Ի՞նչ զուլլուղ:

ԳԱՆՁԱԿԵՑԻ

Մենք այսօր գնում ենք. եկանք վերջին անգամ ձեր զուլլուղին: Արդեօք հրամայելու էլ բան չունէ՞ք:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Չէ: Շատ շնորհակալ եմ: Է՜յ վալլա: (Յանկարծ յիշելով) Հա. լաւ յիշեցի: Ես գլխաւորը մոռացայ ձեզ խնդրելու: Լաւ էր որ եկաք:

ԲՈՒԼՈՐԸ

Բույուր, աղա:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Գեանջայում ի հարկէ դուք կտեսնեք Սէյիդ աղա Բաղային:

ԳԱՆՁԱԿԵՑԻ

Ի հարկէ:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Նա ինքը մի լաւ մարդ է. բայց մեր այս գործում շատ յիմարութիւններ է անում: Նրան ասա, որ եթէ նա ներգործական դեր չէ ուզում կատարել, գոնէ թող խանգարող չլինի մեզ:



Նրան ասա, որ ինչպէս ես, նոյնպէս և մենք բոլորս, հրամայում ենք նրան թողել և սուս ու փուս տեղը նստել. որովհետև, եթէ նա ուզում է պաշտպանել, թող ամենից առաջ իր գլուխը պաշտպանի, ոչ թէ հայերին: Մեզ նրա եղբայրութեան քարոզները՝ ոտից ցգլուխ վնասակար են:

ԵՐԿՈՒՍԸ

Բալի:

ԳԱՆՁԱԿԵՑԻ

Բաշ ուստա:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Յետոյ ասա ձեր Դալի աղային և ասա նրան, որ եթէ նա ռազբօյնիկ է, թող իր ռազբօյնիկութիւնն անի ու խելօք կենայ: Ինչ է գիւղէ գիւղ ընկնում և մուսուլմանների առաջն առնում և չի թողնում, որ հայերի հետ իրենց հաշիւները տեսնեն: Ռազբօյնիկութիւնն ու եղբայրասիրութիւնը իրար չեն բռնում:

ԳԱՆՁԱԿԵՑԻ

Բալի: Նա մի վախտ էդ ախմախութիւնն անում էր, իսկ հիմայ... եավաշ եավաշ...

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

Նոյնն էլ ասացէք, ձեզանից ով որ կտեսնի, Աղդաշեցի Հաջի Մամադ աղային, նրա եղբօրը Փաշաբէգին, Հաջի Քեարիմ Զարիֆոլլին և նրա որդի Ահմադին և մի խօսքով բոլոր նրանց՝ որոնք այդպիսի յիմարութիւններ են անում: Ասացէք, որ խելօք կենան, յիմար հանաքներ չանեն, Իսլամի դէմ չկանգնեն, թէ չէ հ՞ը... (Նուխեցուն եւ Շամախեցուն) Ձեր կողմերն էլ մի քանի այդպիսի ախմախներ կան: Նրանցից էլ զգուշացրէք: (Շամախեցուն) Նամանաւանդ ձեր Հաջի Մէջիդ էֆէնդուն, Աղա Սէյիդ Ալիին և Սէյիդ Միր Աղային ու նրանց արբանեակներին:

ԱՄԵՆՔԸ

Բալի:

Բաշ ուստա:

Գեօզըմ ուստա:

ՇՈՒՔՈՒՐ ԱՂԱ

(Տեղից վեր կենալով եւ ոգեւորուած) Ուրեմն միակ խօսքս է— օգտուեցէք, որքան կարելի է շատ: Ոչ մի միջոց ձեռքներիցդ մի թողէք: Տարածեցէք ամեն տեղ, ամենքին, ինչ որ ձեզ երեկ

տսեցի։ Իմացէք, որ այսպիսի դէպք հարիւր տարին մի անգամ չի պատահի։ Կոտորեցէ՛ք, ջարդեցէ՛ք, փչրեցէ՛ք, այրեցէ՛ք աջ ու ձախ, առանց խղճահարուելու, առանց վախենալու։ Վախենալը միայն նապաստակներին է յատուկ։ Է՛լ եմ ասում. ռուս կառավարութիւնից երբէք չվախենաք—նա՝ մեզ հետ է։ Ահա ինչ որ կարող էի յիշեցնել ձեզ, ձեր գնալուց առաջ։ Իսկ վերջին խօսքս էլ այս է՝ ով որտեղից որ գալու լինի՝ թող անպատճառ առանց ինձ տեսնելու չգնայ։ Ես վերջացրեցի։

---

## ՏԵՍԻԼ Թ

### ՆՈՅՆՔ ԵՒ ԹԱՂԻ

ԹԱՂԻ

Աղաս, երկու հայ են եկել։ Քեզ ուզում են տեսնեն։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ովքե՞ր են։

ԹԱՂԻ

Չեմ ճանանչում, վալլա։ Մէկը Միրաքեան ասեց, մէկելն էլ Մարուգեան։ Թազա մարդիկ են էրևում։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ըհըըը՜… (Մտածմունք)։

ԵՐԵՔ ԹՈՒՐՔ

Դէ, ուրեմն (վեր կենալով) մենք մուրախաս ենք։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Չէ. մի քիչ սպասեցէք։ Այս եկողներին ճանապարհ գնեմ, յետոյ։ Նստեցէք խնդրեմ։ Թաղի՛։

ԹԱՂԻ

Բալի։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Դու էլ մինչև վերջը էստեղ կմնաս, որ… ճանապարհ դնես դրանց։

ԹԱՂԻ

Բաշ ուստա։



ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Գնա, հրաւիրիր։

(Թաղին գնում է, իսկ Շուքիւր աղան նստում է)։

---

## ՏԵՍԻԼ Ժ

### ՆՈՅՆՔ, ՄԻՐԱՔԵԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԳԵԱՆ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Նրանց երևալուն պէս, իսկոյն վեր կենալով և մինչև դուռը ընդ առաջ գնալով) Այ բարով հազար բարի։ Լոյսը ձեզ տեսնողի երեսը… Համեցէք, համեցէք.։. (Ձեռք է տալիս երկուսին էլ, իսկ մէկին՝ ձեռքը շարունակ բռնած, իսկ միւս ձեռքը նրա մէջքին դրած՝ առաջ է գալիս և նստեցնում է երկուսին էլ)։ Համեցէք խնդրեմ։ (Դիմելով ոտքի կանգնած երեք Թուրքերին էլ) Դուք էլ համեցէք, նստեցէք, աղաներ։ (Բոլորին նստեցնելուց յետոյ՝ դիմելով հայերին) Ի՞նչ զուլլուղ, գին այրի ղարդաշներ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Կարո՞ղ ենք այստեղ մենք մի փոքր պարզ խօսել։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ի հարկ է՛։ Յուսով եմ, որ մի առանձին գաղտնիք չունէ՞ք։

ՄԻՐԱՔԵԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ոչինչ, ոչինչ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ես պատրաստ եմ ձեր զուլլուղին։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ներողութիւն։ Մի բոլորովին միջանկեալ բան կուզեմ ասել։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Խնդրեմ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Երևակայեցէք։ Դարձեալ աջ ու ձախ չշնջում են, որ Թուրքերը այս օրերս սկսելու են իրենց յարձակումները։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Զարմացած) Այստե՞ղ։

ՄԻՐԱՔԵԱՆ

Այս. այստեղ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Պրօվակացիա։ Կրկին պրօվակացիա։ Այդպիսի բան այլ եւս չի կարող լինել։ Այո, գուցէ մի ուրիշ տեղի մասին են ասում, ինչպէս հիմա Շուշին է՝ ուրիշ բան։ Բայց այստեղ—երբէք։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Նոյնպէս ժպտով) Բայց, առանց հանաքի, խօսում ենք։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Անկարելի բան է։ Ես գլխովս եմ երդվում։ Միանգամայն միամիտ եղէք և այդպիսի լուրեր մի թողէք, որ տարածեն։ Մենք երկու ազգերս էլ տեսանք, թէ ինչ կորստաբեր հետեւանքներ եղան երկուսիս համար էլ։ Դա չէյթանի գործ է։ Դա պրօվակացիա է։

ՄԻՐԱՔԵԱՆ

Ուրեմն...

ՇՈՒՔՆԻՐ ԱՂԱ

Ոչ, ոչ. բոլորովին միամիտ եղէք։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ուրեմն անցնենք բուն խնդրին։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Խնդրեմ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Մենք եկած ենք շատ ու շատ հայերի կողմից մի փոքրիկ խնդիրքով։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հայերի կողմի՞ց։ Խնդիրքո՞վ։ Ես պատրաստ եմ գլուխս գուրբան անելու անգամ։ Ես առաջուց խոստանում եմ ամեն ինչ կատարել։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Շատ շնորհակալ ենք։

ՄԻՐԱԳԵԱՆ

Ձեր սիրալիրութեան մասին չէինք կասկածում։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հրամայեցէք խնդրեմ։

ՄԻՐԱՔԵԱՆ

(Շատ կակող)։ Ահա թէ բանն ինչումն է։ Ձեր հրատարակած լրագրում շարունակ այնպիսի լուրեր և թղթակցութիւններ են տպագրւում, որ... մի փոքր... հակասում է... այսպէս ասած... ճշմարտութեանը։



ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Իբր զարմացած, բայց խիստ սիրալիր)։ Իմ լրագրո՞ւմ։ Ես այդպիսի բան երբէք թոյլ չեմ տայ։ Դա իմ ուղղութեան դէմ է։ Հա, գուցէ ինձ լրատուներն ու թղթակիցներն են սխալեցնում, ես այդ չգիտեմ։ Բայց և այդ դէպքում կասկածելի է, որովհետև ոչ մի թղթակցութիւն ես չեմ տպում, մինչև կրկին գրագրութիւն չեմ սկսում հեռագրով այն տեղերի հետ, որոնցից ստացուած են լուրերը կամ թղթակցութիւնները։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Հէնց բանը նրանումն է, որ այնուամենայնիւ տպւում են անհամար անճշտութիւններ, որոնք մեծապէս վնասում են թուրք հայկական եղբայրական յարաբերութիւններին։ Ուստի մենք, հայերս, կխնդրէինք օգնել մեզ այս հրդեհները հանգցնելուն։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ես միշտ պատրաստ եմ եղել և միշտ այդ ուղղութեանն ենք ծառայել ես և իմ լրագիրը։ Եղբայրութիւնն ու հաւատարմութիւնը իսլամական կրօնի հիմքերից մէկն է։ Ես շարունակ ասել եմ և գրել, որ ձեր լրագրները լաւ չեն անում. պէտք է լռութիւն պահպանեն ամեն մի դէպքի համար. որովհետև ամեն մի լուր, լինի նա մտացածին, թէ ճշմարիտ, միշտ ամենագրգռիչ կերպով ազդում է մասսայի հոգեբանութեան վրայ։

ՄԻՐԱԳԵԱՆ

Ուրեմն դուք կամենում էք ասել, որ ձեր թուրքերը, ինչ էլ որ անելիս լինեն Կովկասում, պիտի ծածկել, լռել, որ...

ՇՈՒՖԻՒՐ ԱՂԱ

(Իսկոյն)։ Ուրիշ ելք չկայ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Բայց դա մի փառաւոր թակարդ է հայերիս համար։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Բոլորովին։ Բայց դրա փոխարէն գտնուեցին հայեր, որոնք սարքեցին լրագրական ագիտացիա, տարածելով աշխարհի բոլոր կողմերը թուրքերիս մասին հրէշաւոր չափերով չափազանցացրած լուրեր, յօդուածներ ու հեռագիրներ։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ներողութիւն։ Հայերս միայն պաշտպանւել ենք։ Ստիպ-ւած ենք եղել պաշտպանուելու։ Ռուսաց գործակալութեան հե-ռագրները, որոնք այս տեղից են գնում և միշտ թուրքերից, բաւականին ապացոյցներ են մեր ասածին։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Իսկ ձեր ամբողջ լրագրութիւնը, որ հրատարակւում է հայերէն թէ ռուսերէն՝ հայերի ձեռքով՝ ապացուցանում են իմ ասածներս։ Եւ այդ բոլորը կատարւում է նոյն իսկ նրանց դէմ, որոնց հետ հաշտւում էք, համբուրւում էք. իսկ յետոյ զանա-զան դօկումենտներ էք տալիս լրագրներին։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Եթէ դօկումենտներ են՝ կնշանակէ ճիշտ են։

ՄԻՐԱՔԵԱՆ

Բայց, ճշմարիտ, ես ուղղակի զարմանում եմ։ Դուք շա-տում էք մեղադրել հայերին այն բանի համար, որի մէջ ամ-բողջապէս մեղաւորը թուրքերն են... Օրինակ՝ դուք պահանջում-էք մեզնից ոչինչ չտպագրել լրագրներում թուրքերի չահա-տակութիւնների մասին, թէկուզ բնաջինջ լինէր ամբողջ հայու-թիւնը, այն ինչ դուք և ձեր միւս օրգանները աշխարհ էք թըն-դացնում ամենազրգռիչ լուրերով, յօդուածներով և տէնդենցիօզ լուսաբանութիւններով, նոյն իսկ ամենաչնչին դէպքերի մասին, եթէ դրանց առիթ են եղել հայերը... Դուք, նեղն ընկած ժա-մանակ, խկոյն հաշտութիւն էք խնդրում, համբուրւում էք, իսկ յետոյ, միւս օրը, աւելի եռանդով էք կտորածն սկսում և սպա-նեցքը չէյթանի վրայ գցում ու մեզ մեղադրացնում։ Չէ որ ամեն անգամ ապացուցւած է։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ներողութիւն. այդ դուք էք անում։ Մեր բէյսներն ու կրօ-նաւորները աշխատում են միշտ խաղաղութիւնը հանգցնել, բայց ձեր հայ կրօնաւորները, կոմիտեաներն ու գաղանի ընկերու-թիւնները, անխտիր բորբոքում են։ Մեզնից արեան հեղեղներ գնացին և մենք համբերութեամբ տանում էինք և ոչ մի անձի և համարեա թէ ոչ մի գանգատ չտուեցինք...

ՄԻՐԱԳԵԱՆ

(Վրդովւած)։ Բայց ներեցէք. դուք կամ մեզ էք կոյր հա-



մարում, կամ ձեզ էք միամիտ ձեւացնում։ Դա, ներողութիւն, ակամայ վրդովեցնում է։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Նոյնպէս)։ Եւ այդ հոգով էլ տանում էք ձեր լրագիրը։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այո։ Միշտ ճշմարտութեան վերայ հիմնւած։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Որ դուք և ձեր լրագրները ընդհակառակն միշտ և շա-րունակ յեղաշրջում էք ճշմարտութիւնը, փաստերը, այդ երեւում է ձեր ամեն մի համարից, ամեն մի յօդւածից. որ դուք...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Ընդմիջելով նրան)։ Փաստեր, փաստեր։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Անհամար։ Թէկուզ իբրև օրինակ վերցնենք հէնց Բագւի ամբողջ դէպքը։ Ո՞րպիսի յեղաշրջումներով և միտումաւոր լու-սաբանութիւններով էին բացագրւում ձեր օրգաններում։ Վերցնենք մուսուլմաններից այն տէնդէնցիօզ զեկուցագիրը, որը Յունիսի 10-ին ձեր պատգամաւորութիւնը ներկայա-ցրեց երկրիս փոխարքային։ Վերցնենք ձեր այն հիմնովին սարքած լուրերը, որ տարածւում են Պարսկաստանում, թէ ձեր լրագրների. թէ մասնաւոր նամակների և թէ մարդկանց միջոցաւ, որպէս զի գրգռէք պարսիկների կրքերը և այնտեղի մի բուռն հայերին էլ ոչնչացնէք...

ՄԻՐԱՔԵԱՆ

Միթէ միայն այդ։ Խօսենք և միւս դէպքերի մասին։ Օրի-նակ. հայերի կազմակերպւած յարձակման մասին Երևանում, որ հիմնովին սխալ է և յեղաշրջւած... Խօսենք Երևանի և Նախի-ջևանի գանգատների մասին, որ երբ որոշ գանգատահարութիւ-նով, որոշ յարձակումներ են կատարել հայերը, այն ինչ ոչ մի գանգատահարութիւն չէ եղել, ինչպէս և յարձակումները հայերի կողմից չի եղել բնաւին։ Խօսենք Երևանի քաղաքագլխի մասին, որ երբ նա իր կալւածքում հարիւրաւոր զինւած հայեր է պա-հել այդպիսի յարձակումների համար, որ միանգամայն սուտ է. քանի որ նա Երևանի մօտ ոչ մի կալւածք չէ ունեցել և ինքը այդ ամբողջ ընդհարումների ժամանակ և դեռ շատ առաջ Թի-ֆլիզումն է եղել։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Դուք փաստեր էք պահանջում. ահա փաստեր. և դուք շատ լաւ էք հասկանում, թէ ինչ անհերքելի փաստեր են սրանք, իսկ այսպիսի փաստեր տասնեակներով կարելի է բերել:

ՄԻՐԱՔԵԱՆ

(Մարուգեանին) Սպասիր խնդրեմ: (Շուքիւր աղային) Ինչո՞ւ չը վերցնենք Նախիջեւանի քաղաքի անցքերը, Նրա գաւառների անցքերը, ամբողջ Բաղամու գիւղի բնի մահմեդականացումը, Ղարաբաղի և Դարալագեազի անցքերը... Վերջապէս, ինչու չը վերցնենք հենց հիմայ, այս բոլորի կատարած՝ Շուշիի անցքերը և դրանց լուսաբանութիւնները...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Ընդմիջելով նրան) Այո, այո, վերցնենք, վերցնենք: Ամեն ինչ ապացուցված են հազարաւոր դօկումենտներով և ես այդպիսի դօկումենտներ շատ ունեմ: (Խօսք խառնելով) Բայց հա... Ինչո՞ւ երկարացնենք: Դուք մի կողմ թողէք իմ լրագիրը, որը՝ մասամբ սխալված՝ գիտակցական ուղղութիւն է բռնած ձեր լրագրերի դէմ... Դուք վերցրէք իմ, առանձնապէս իմ, անհատական գործերը և կշռեցէք թէ ինչ ուղղութեամբ եմ գնում ես:—Ահա, (ցոյց տալով երեք Թուրքերի վրայ) սրանք... ահա, այս մէկը Գեանջեցի է, այս մէկը Շամախեցի...

ՇԱՄԱԽԵՑԻ

(Մի փոքր բարձրանալով տեղից եւ գլուխ տալով) Բա՛լի:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այս մէկն էլ Նուխեցի է: Համեցէք պարոններ, ահա սրանց հարցրէք, թէ մինչև ձեր գալը ես ինչ էի ասում սրանց: Համեցէք:

(Երեք Թուրքերն էլ յանկարծակի եկած՝ շատ վատ են զգում իրենց, չիմանալով թէ ինչ են պատասխանելու):

ՄԻՐԱՔԵԱՆ

(Վրդովուած) Հետաքրքիր է:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Համեցէք էլի. դուք հարցրէք:

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Նոյնպէս): Դուք ասացէք էլի. միեւնոյն բանն է. նրանք գուցէ դժուարանան ասելու:



ՄԻՐԱՔԵԱՆ

Այո... խեղճերը շփոթուեցին ձեր անակնկալ...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Ընդմիջելով եւ իսկոյն): Այստեղ շփոթուելու ոչինչ չկայ: Ահա սրանք գնում են իրենց երկրները: Ինձնից եկան խորհուրդ հարցնելու և իրենց ցաւերն յայտնելու: (Թուրքերին): Այդպէ՞ս է թէ ոչ, ղարդաշներ:

ԹՈՒՐՔԵՐԸ

Հրամանքեղ:

Բալի:

Հէնց դրա համար ենք էկել:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ես էլ ձեզ ինչ ասեցի: Ասեցի թէ գնացէք, ամեն կերպ աշխատեցէք յարմարուել և համերաշխութիւն մտցնել բոլոր մուսուլմանների սրտերի մէջ...

ԹՈՒՐՔԵՐԸ

Վալլա դրուստ ա:

Իմ գլուխը վկայ ա:

Ինջիլ ղուրան հախկը:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ասեցի որ այս բոլորը սուտ սարքած բաներն են... որ նա մեզ ամենիս ուզում է խեղճացնի, մեր բոլորիս տուները քանդի...

ԹՈՒՐՔԵՐԸ

(Աւելի թեթեւ շունչ քաշելով): Վալլա դրուստ ա:

Բալի, աղա, բալի:

Ալլահը գիտի, որ դրուստ ա:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ասեցի որ ամեն կերպ աշխատեցէք շէյթանին ձեր միջից հեռացնել. որ այսուհետև ոչ ոք չը համարձակւի մի հատ հայի մի հատ չոփին դիպչել: Այ, պարոններ, հարցրէք: Ինչո՞ւ չէք հարցնում: (Թուրքերին): Յետոյ էլ ասեցի որ...

ՄԻՐԱՔԵԱՆ

(Այլ եւս չկարողանալով զսպել իրեն եւ վեր թռչելով տեղից ու ձեռքն ամուր սեղանին խփելով): Սուտ է, սուտ է... Այդ երեւաց ձեր ամբողջ խօսակցութիւնից, այդ երեւաց այս երեքի խայտա-

ռակ դրութիւնից, այդ երեսից ձեր դէմքից և այս խեղճերին աչքով անելուց։ Բաւական է։

ԹՈՒՐՔԵՐԸ

(Վրդովւած)։ Փիհ՛...

(Միրզա Իւսուֆը խիստ անհանգիստ է, պահում իրեն)։

ՄԱՐՈՒԳԵԱՆ

(Նոյնպէս խիստ վրդովւած)։ Այո, սուտ է։ Ձեր կօմեդիան միանգամայն անյաջող էր։ Մենք յոյս ունէինք, որ գոնէ մեր խնդիրքով մի փոքր ձեզ կհաւաքէիք, բայց...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Շփոթւած)։ Սպասեցէք... դուք սխալ...

ՄԻՐԱՔԵԱՆ

Դէն գցիր դիմակդ, դա շատ թափանցիկ է։ Մենք դրա միջով տեսնում ենք քո գայլի ատամները և գժոխային կրակով լի աչքերդ... Դէն գցիր դիմակդ. մի կարծիր թէ կվախենանք. մենք այդպիսի դէմքեր խի՛ստ շատ ենք տեսել... Դէն գցիր դիմակդ, որ աշխարհը տեսնի քեզ, ճանաչի քեզ... Իսկ մենք, մենք... քեզ վաղո՛ւց կը ճանաչենք։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Խիստ բարձր եւ նեարդային ծիծաղ)։ Հա, հա հա՛...

ՄԱՐՈՒԳԵԱՆ

Ծիծաղիր, ծիծաղիր՝ քեզ յատուկ ծիծաղով։—Այդպէս միայն գեերն են ծիծաղում։ Գնանք, Միրաքեան. էլ ոչ մի յոյս։ (Դուրս են գնում արագ)։

(Միրզա Իւսուֆը այլայլւած՝ գրպանից հանում է ատրճանակ եւ ուզում է յարձակւել նրանց վրայ։ Շուքիւր Աղան այդ նկատելով, ձեռքի մի շարժումով կանգնեցնում է նորան)։

---

## ՏԵՍԻԼ ԺԱ

### ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՄԻՐԱՔԵԱՆԻ, ՄԱՐՈՒԳԵԱՆԻ ԵՒ ԹԱՂԻԻ

ԹՈՒՐՔԵՐԸ

(Խիստ վրդովւած)։ Փիհ՛...



ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Յանկարծ ճակատին խփելով եւ վազելով դէպի դուռը, շատ արագ եւ վճռողաբար կանչում է)։ Թաղի, Թաղի... էս րոպէիս վերադարձիր, չէ՛ս... վերադարձիր, ասում եմ... Իսկոյն վերադարձիր։

---

## ՏԵՍԻԼ ԺԲ

### ՆՈՅՆՔ ԵՒ ԹԱՂԻ

ԹԱՂԻ

(Երեւալով դռան մէջ գազանային հայեացքով, մերկ դաշոյնը ձեռքին եւ խեղդւած ձայնով) Ի՞նչ ես ասում...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ո՞ւր էիր գնում. ինչի՞ համար։

ԹԱՂԻ

(Նոյնպէս) Ես պէտք ա ջհաթի փորն էլ հէնց փիլաքեանի գլխին թափէի։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Վճռական) Չհամարձակւես։ Խանչալդ դիր տեղը... Դիր տեղն, ասում եմ... (Թաղին խրում է դաշոյնը իւր բոյնը)։ Դէ, հիմա ազատ ես. գնա։

---

## ՏԵՍԻԼ ԺԳ

### ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ԹԱՂԻԻ։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Երեք Թուրքերին) Էս էլ ձեզ հարկաւոր էր տեսնել... որ լաւ հասկանաք, թէ ինչ պտուղներ են հայերը։ Հէնց ամենքն էլ այդպէս են է՛, ամենքն էլ...

ԳԱՆՁԱԿԵՑԻ

Բալի, մենք լաւ ենք ճանաչում։

ՇԱՄԱԽԵՑԻ

Ես քու նշանին էի սպասում, աղա։

ՆՈՒԽԵՑԻ

Դու մի աչքով անէի՛ր, մենք էրկսին էլ տեղն ու տեղը կը թաղնէինք։ Ափսո՛ս։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Չէ. մի մոռացէք, որ այստեղ խմբագրատուն է... Դէ, աղաներ, Ալլահը ձեզ հետ: Ազատ էք հիմա: Գնացէք ու ձեր բանն իմացէք:

(Պատգամաւորները գլուխ տալով Շուքիւր աղային եւ Միրզա Իւսուֆին, դուրս են գնում):

---

## ՏԵՍԻԼ ԺԴ

### ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ ԵՒ ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Երբ Թուրքերին մինչեւ դուռը ճանապարհ դնելուց յետոյ, ժպիտով, Միրզա Իւսուֆին) Եւ դու, Միրզա Իւսուֆ:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

(Աչքերը ցած գցած եւ դողալով) Մի թէ կարելի՞ էր համբերել...

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Նը՞հ, սիրելիս. մեծ գործի մէջ մանուկը մեծ էլ համբերութիւն պիտի ունենայ: Իմացիր: Համ-բե-րու-թիւն...

---

## ՏԵՍԻԼ ԺԵ

### ՆՈՅՆՔ ԵՒ ԹԱՂԻ

ԹԱՂԻ

(Ներս բերելով հեռագրներ) Թէլէգրաֆ:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Ահա՜մ, դէս տուր, չո՜ւտ շարժիր: (Խլելով ձեռքից) Ի՞նչ կա կրնկներից վերայ պառայտ գալիս: (Նեարդային ախոյժով բանում է հեռագրները): Ղարս. մեր սարերի մէջ վաշկանի ձայներ են լսւում. Ահմադ: Ըհ՞ը, այս լա՜ւ է: (Միւսը) Ախալցխա. Գլինձը եռում է. տեսնենք. Իւզա: (Առանձին) Ո՞րն է. հա, իմացայ: Ջատ լաւ: Կեցցէ՜ Իսլամը: (Երրորդը) Թաւրիզ. Հաղորդեցէք, ինչ է կատարւում այդտեղ. Չէյխ: (Ուրախ) Ըհը՞... Միրզա Իւսուֆ, իսկոյն պատասխանիր, որ...



ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

(Խօսքը խլելով նրանից) Որ ամեն տեղ հայերը յարձակւում են մուսուլմանների վերա. Շուշիում և մհալներում հայերը մեծ կոտորած են անում. մեր կանանց և աղջիկներին բռնաբարում են. մեր մէչիդները քարուքանդ են անում և սրբապղծում: Պատմութեան մէջ չլսուած գազանութիւններ: Իսլամը ձեռաց գնում է:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Հրաշալի: Աւելացրու: Իսկոյն միջամտեցէք կայսրին, նամեստնիկին և կաթուղիկոսին:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Հա, հա—իսկոյն: (Գրում է):

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Չորրորդը): Շուշի. ըհը՞, տեսնենք: Յայտնի է, որ Խաչէն գիւղը պատրաստւում էր վրայ տալ մեր թուրք գիւղերին և մենք հիմնայատակ արինք այն. իսկ հիմա միւս հայ գիւղերն են նախիրները բշում և աշխատում են մեզ դուրս քաշել: Համբերութիւնից դուրս գալով թուրքերը վրայ տւեցին և մի քանի հայ գիւղեր էլ քարուքանդ արեցին: Մանրամասնութիւնները՝ վաղը: Իւզա: Աֆֆարիմ. աֆֆարիմ. ամեն ինչ կատարեալ ուստայութեամբ էլ գրել է: (Հինգերորդ): Թիֆլիզ. Բօրչալուում մուսուլմանների մէջ նկատւում է խիստ անհանգիստ տրամադրութիւն. սաստիկ վախենում են հայերից. Օրուջ: Ըհը՞. բրաւօ, Բօրչալուն էլ:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

Այ, թէ յաջողուի մեր ծրագիրը—Թիֆլիզն էլ վրայ տանք, հա:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Մի թէ կասկածում ես: Գործը շատ հիմնաւոր է դրած. միամիտ եղիր: (Վեցերորդ): Դերբէնդ. մեծ պատրաստութիւն է տեսնւում հայերի մէջ. մտադիր են յանկարծակի բերել մեզ և ամենից կոտորել. կաշխատենք դէմն առնել. թէև սարսափի մէջ ենք. Ալի:

ՄԻՐԶԱ ԻՒՍՈՒՖ

(Մրծաղ) Վարպետութեամբ է գրել. դաշնակ:

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Եօթներորդ): Ջուլֆա. Պարսկաստանից բազմաթիւ հայեր են

երևացել. բոլորն էլ լաւ զինուած և Թուրքերի հագուստով. (ծիծաղ)։ Էս մէկը շատ լաւ էր... և պիտի Արազն անցնեն ու գնան դէպի Ղարաբաղի սահմանները և Շուշի, իրենց միլլէթին օգնութեան. Զուլֆիգար։ Աֆֆարիմ, (ծիծաղ)։ Աֆֆարիմ։

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Երևելի երգիծաբան է երևում։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

Այ, վարպետութիւն. Թող հայերն այսպիսի դօկումենտներից օգուտ քաղեն։ Մարհաբբա։ (Վեր է թռչում տեղից եւ խիստ ոգեւորուած ու ձեռքերը տրորելով ման է գալիս)։

## ՏԵՍԻԼ ԺԶ

### ԹԱՂԻՆ ԲԵՐՈՒՄ Է ՄԻ ՆՈՐ ՀԵՌԱԳԻՐ

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Իսկոյն խլելով հեռագիրը)։ Շուշի... Ըհը, տեսնենք... Տեղի ունեցաւ հաշտութիւն. մեր մարդիկը կոտորեցին... (զարմացած) Ինչպէս թէ... (նայում է ստորագրութեան) ով է գրում այս... (ուրախ) Հա՛, Քեարիմն է, տեսնենք։

ՄԻՐԶԱ ԻՍՈՒՖ

Նա շատ վարպետ է. չարաճակիր։

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Կարդալով) Մեր տներն այրեցին, Թալանեցին. մենք հազիւ կարողացանք մի չորս հարիւր հայի տուն այրել... (երկուսով էլ ծիծաղում են ուրախացած). մեր վնասները աննշան են. զօրքը խուզարկում է. (ծիծաղ) զինաթափ են անում։ Դիմեցէք նամեստնիկին. Քեարիմ։ Մալադէց։ (Վերջացնելուց յետոյ մի երկու անգամ ման է գալիս ինքնագոհութեամբ եւ ապա իսկոյն մօտենում է սեղանին)։ Հա՛. հիմա հարկաւոր է մի լաւ հեռագիր կազմել Ռուսական հեռագրական գործակալութեան համար։ (Գրում է)։ Հայերն ասպատակում են։ Եւլախից մինչև Շուշի երթևեկութիւնը միանգամայն կտրուած է աներևակայելի Թալանների և սպանութիւնների պատճառով։ Քաղաքում սրածութիւն և հրդեհ։ Թուրքերը խնդրում են հաշտութիւն. մերժուած է։ Շտապ օգնութեան մեծ կարիք կայ։ Հա. Միրզա Իսուֆ, էս մի զահմաթ



չլինի, տար տուր արտագրեն մաքուր և իսկոյն ուղարկիր հեռագրատուն։ (Միրզա Իսուֆը շտապով գնում է)։ Շէյխի հեռագիրն էլ չմոռանաս։

## ՏԵՍԻԼ ԺԷ

### ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ ՄԻԱՅՆ

ՇՈՒՔԻՒՐ ԱՂԱ

(Մօտենալով հեռախօսին. սիգնալ)։ Քաղաքագլուխն Ուլբրի-փումն է։ Շուքիւր Աղա։ Դէ, շուտով խնդրեցէք տէլէֆօնին մօտենայ... (Սպասում է. սիգնալ)։ Դու ես։ Դէ լսիր։ Մեծ տեղեկութիւններ։ Մեր գործերն անսպասելի յաջող են։ Հ՞ը։ Հա, հա։ Ղարս, Ախալցխա, Բորչալու սկսում են եռալ։ Շուշիում և մհալներում սպասածից վեր է։ Բայց դու իսկոյն մի հեռագիր պատրաստիր նամեստնիկի անունով և հարայ բէգամ բարձրացրու ու պաշտպանութիւն պահանջիր։ Մուսուլմանները ձեռաց գնացին, տաս։ Գրիր, որ համբերութեան չափ և սահման պէտք է լինի։ Հ՞ը։ Գամ միասին գրենք։ Լաւ։ Մի կէս ժամից քո մօտ կլինեմ։ (Գալով առաջ եւ ուրախ)։ Այս էլ այսպէս։ Հրաշալի։ (Մտքով զբաղուած)։ Ը՜հը՜ը... սկսում է... ամենայն տեղ, ամենայն ինչ կատարեալ է... պատկերն աննկարագրելի։ (Դիւական ծիծաղ)։ Դժոխք դարձրինք Նախիջևանն ու նրա գիւղերը... դժոխք դարձրինք ամբողջ Շարուրն ու Դարալագեազը և շատ ու շատ տեղեր... մուխի և ծուխի մէջ բլբլուող լեզուաձև բոցերով պլպլում է այժմ Շուշին... աւերակ են դառնում գաւառները... և շուտով, մի երկու օրից յետոյ, դժոխք պիտի դառնայ և Բաքուն... Բայց մի ա՜յնպիսի դժոխք—կրակ և աւերածութիւն, կողոպուտ և սրածութիւն,—որ ոչ լսուած լինի և ոչ էլ տեսնուած... Նոյն իսկ պատմութեան մէջ չակնարկուած մի դժոխք... Դժո՜խք, որի առաջ պիտի սոսկայ, սասանի ամբողջ մարդկութիւնը. դժո՜խք, որի մասին պիտի չկարողանայ ձևակերպել ամենալայն երևակայութիւնը, ամենափայլուն ֆանտազիան... (Միջոց)։ Ըհ՜ըհը՜ը... ամբողջ աշխարհի հայութիւնը, այսպէս, այ, հիմայ այս բռանս մէջն է... ոտնատակ կտամ այսպէս, այ, (ոտը նոյն տեղում յատակին աջ եւ ձախ ուժգին տրորելով) կարարե՛մ, իբրև

մրջիւնների, որ հետքերն անգամ չմնան... Ահա՜ը՜ը՜ը... սկսւում է հատուցումը, մեր պարտքերի վճարը և վճար՝ ահագին տոկոսով... (Դիւական ուրախութեամբ): Ամբողջ անդրկովկասը բռնկւում է, ճռնչում է... հրդեհը հետզհետէ բարձրանում է, բարձրանում է և պիտի կլանի ամբողջ երկիրը, ամբողջ երկինքը, ամբողջ տիեզերքը... Այո՜... ծովը շարժւում է, հեղեղում է երկիրը իր սարսափելի ալիքներով, որից յետոյ պիտի մնան միայն սարերն ու ապառաժները... Եւ այդ սարերի և ապառաժների վրայ Իսլամը պիտի կանգնեցնի իր յաղթական դրօշակը ամո՜ւր, ամո՜ւր, անխորտակելի... Հ՜ըմ... (Քմծիծաղ): Երմոլովն ասել է՝ հպատակուիր Կովկաս, գալիս է Երմոլովը... իսկ ես հիմա կասեմ՝ հպատակուիր Կովկաս, կանգնել է Իսլամը:

ՎԱՐԱԳՈՅՐ

# V

# ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ

## ԱՊՕԹԵՕԶ

## ԱՆՁԻՆՔ

---

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ
ՆԱԶԼՈՒ ԽԱՆՈՒՄ } նորա կանայք
ԳԵՕԶԱԼ ԽԱՆՈՒՄ
ՋԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ
ՄԱՄԱԴ, նորա թիկնապահ ծառան
ՀՈՒՍԷՅԻՆ, չինական գրագիր
ՄՕԼԼԱ
ՀԱՍԱՆ
ՆԱՂԻ
ՍԱՐԻԲԷԿ
ԿՈՍՏԱՆԴ
ՄԱՆՈՒԿ

*Հայ կտրիճներ եւ Մուրթուզալի բէգի ծառաներ:*

**ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆ Է**

*ՀՈՐՍ ԳԻՒՂԸ ԴԱՐԱԼԱԳՅԱԶՈՒՄ*

---

## ԱՐԱՐՈՒԱԾ Ե

Տեսարանը ներկայացնում է մի ընդարձակ պարտէզ Մուրթուզալի Բէկի բնակարանի առաջ: Ձախ՝ նրա կացած տունն է. դուռն եւ լուսամուտներ: Տանից իջնում են պարտէզ մի քանի սանդուխքներով: Նախաբեմից դէպի աջ տանում է դէպի պարտէզի խորքերը, իսկ ձախ՝ Բէկի ծառաների բնակարանը. (որից յետոյ Բէկի տունն է): Խորքում եղած պատը բաժանում է պարտէզը փողոցից. պատի աջ կողմում կանգնած է պարսկական ճաշակով մի դարպաս. որանից երեւում է փողոցը իսկ յետոյ, ինչպէս եւ ամբողջ պատի վերեւից՝ երեւում են տէրասի պէս հետզհետէ իրար վրայ բարձրացող գիւղական տներ, որոնցից յետոյ էլ՝ անտառապատ լեռների մի շարք:

Իրիկնապահ է:

---

### ՏԵՍԻԼ Ա

*ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ, ՄՕԼԼԱ, ՀՈՒՍԷՅԻՆ, ՀԱՍԱՆ ԵՒ ՆԱՂԻ*

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

*Վերջապէս ես էն եմ ուզում ասել, որ էս անգամ գոնէ մեր թասիբը պէտք է գետնով չտանք, հա՜... Թէ չէ, բայց էն, որ մենք կկորչենք ու մեր սաղ գեղերը հայերի ձեռքը կգցենք, սաղ աշխարքումն էլ կխայտառակուենք... մեր խալամութեան նշանակութիւնն էլ հողին կհաւասարենք... Այ մի քանի օր ա-*

ռաջ գիր տացայ մեր կաղէժ դուս տուող՝ աշխարքին լույսյանի՝ Ջուքիսր աղայից:

ԱՄԵՆՔԸ

Բա՛լի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Նա մեզ ուղղակի ուշունց է տալիս: Ձեր թժալրն, ասում է, շունն է կերել: Ի՞նչ մուսուլմաններ էք, որ հայերի բոքը չէք կարողանում ջնջել ձեր Դարալագեազից... Ղալմաղալը, դրուստ է, բարձրացրիք, ասում է, թալանթրաշն արեցիք, բայց չհասաք մեր գլխաւոր նպատակին—չջնջեցիք ձեր մէջից հայութիւնը... Դեռ էգ հերիք չէ, ասում է, մի տասը քանի ֆիդահիների ձեռքին էլ խեղճացել էք: Ամենից առաջ, ասում է, դրանից կոտորեցէք, որ ձեր ձեռքն ու ոտքը բացվի. թէ չէ, ասում է, ամբողջ Իսլամը կթքի ձեր երեսին ու ձեզ էլ մուսուլման չի համարի:

ՄՈԼԼԱ

Ճիտ դրուստ ա ասում, շատ:

ՆԱՂԻ

Բա մեր թժալրն ուր ա:

ՄՈԼԼԱ

Բա մենք ինչ մուսուլմաններ ենք, որ էգ քսոտ ֆիդահիների հախիցն էլ չենք կարում գալ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Մտածելուց յետոյ): Դրուստ որ էգ բաթմաստարները մեծ հաստատութիւն ունեն... Որ գիւղին որ վրայ տալինք էս վերջին ժամանակները, չէյթանի պէս մեր եսնից բուսնցին ու մեզ գիւլլի ու կրակի կալեցին: Հիմա մենք պէտք է պատերազմական ֆանդ բանացնենք, որ դրանց հախիցը գանք, թէ չէ մեզ կուտեն: Տեսնում էք էլի. ես մինչև օրս դրանց ձեռքից դեռ չեմ կարողանում գնալ իմ գիւղը, իմ տուն ու տեղը:

ՆԱՂԻ

Ո՞նց գնաս, բաղյ:

ՄՈԼԼԱ

Քու գիւղի չորս բոլորը հայերի գիւղեր են տխր:

ՀԱՍԱՆ

Դու հըս բունն ես ասում, բաղյ, չէ՞ որ մեր սաղ թուրքերն էլ էս վերջի վախտերը չեն կարողանում դուրս գալ իրանց գեղերից:



ՄՈԼԼԱ

(Վրդովված) Փի՜... Դրանից պէտք է վերջ տանք, թէ ոչ:

ՀԱՍԱՆ

(Նոյնպէս վրդովված) Դրանց հախիցը պէտք ա գանք, թէ չէ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Այ, ես էլ հէնց դրա մասին եմ ուզում ասել: Պատերազմական ֆանդ, փոլիթիքա՝ իմանո՞ւմ էք: Մենք հիմա միաժամանակ երկու բան պէտք է անենք:

ԱՄԵՆՔԸ

Բալի, բալի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մենք հիմա մի չորս հինգ հարիւր հոգով պիտի վրայ տանք մի հայ գիւղի վրայ, իսկ մի երկու հարիւր հոգի էլ պիտի մեր քամակը պահեն էգ ֆիդահիներից: Հա. քանի հոգին են էգ կոտորածները. ձեզանից ո՞վ է իմանում:

ՀԱՍԱՆ

Մարդ դրանցից հէչ գլուխ չի հանում: Տաս տասնուհինգ հոգի են, ասում են, ամա հզարի ձէն են տալիս: Մհալի որ ծերին ասես՝ ալէյալը բռնում են:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Տեսնո՞ւմ էք. ուրեմն հէնց որ դրանք երեւացին թէ չէ, մեր եսնի հարիւր հոգին շուտ պիտի գան և վրայ տան նրանց. խսկ միւս հարիւրը, որ երկու երեք վերստ մեզնից հեռու պահուած կլինեն, ձեռաց պիտի կալեն նրանց քամակը: Այսպէս կալ մէջ կանենք նրանց, թէկուզ յիսուն հոգի լինեն, կրակի մէջ կը դցենք ու ճանճի պէս կկոտորենք:

ՄՈԼԼԱ

(Ուրախացած): Բալի, բալի, բաղյ:

ՆԱՂԻ

(Խիստ ուրախացած): Ինչ եմ ասե՜լ:

ՀԱՍԱՆ

(Նոյնպէս): Լաւ թալաք կնի հա՜:

ՆԱՂԻ

Ֆիդահիների հախից որ էկանք—պրծա՜ւ... Մնացած հայի գեղերը մերն են:

ՀՈՒՍԷՅԻՆ

Տաս տասնըհինգ օրում սաղ Դարալագեազը կորբենք հայերից։

ՀԱՍԱՆ

Կմնայ Ձարուրը. էն էլ մի քանի հատ հայ գեղեր են. էլլու իրեք օրայ կխրակուր ա մեզ համար։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Հուսէյի՛ն, քանի հոգի են եկել մեր Թուրք գիւղերից։

ՀՈՒՍԷՅԻՆ

Ամենքն էլ. մօտ ութանասուն հոգի։ Նրանցից շատերը էս իրեք, չորս օր ա, ինչ էկել են։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Մտածելով) Շատ լաւ։ Էգուց ես դուրս կգամ գիւղը և ինքս էլ ամենքի հետ կխօսամ ու ամեն պլանները էլ կհասկացընեմ։ Հա, Հուսէյի՛ն, զանգատը պատրա՞ստ է։

ՀՈՒՍԷՅԻՆ

Բալի բալյ, ծոցումս է։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էնպէս ես գրել, ինչպէս ասել եմ։

ՀՈՒՍԷՅԻՆ

Խօսք—խօսք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մի տուր անենեմ։ (Կարդում է)։ Նորին բարձր գերազ... Հա լաւ։ Դարալագեազի բոլոր Թուրք գիւղերից ամենախոնարհ զանգատ։ Լա՛ւ։ Դարալագեազի հայերը մեզ մի րոպէ հանգստութիւն չեն տալիս. օր չի լինում, որ մեզ վնաս չտան, մեզ անաքանդ չանեն։ Ամեն օր մեր նախիրներից հինգ վեց տաւար է պակսում, սուրուներիցս էլ տասով, քսանով ոչխար։ Մենք, մուսուլմաններս, գիւղերից խկլի չենք կարողանում դուրս գալ։ Ճանապարհներին մեր մարդկերանց հայերը կամ թալանում են, կամ սպանում և կամ սաղ սաղ գողանում ու անյետացնում։ Մեր խոտերը, մեր արտերը, մեր վար ու ցանքը՝ սաղ փչացնում են, ոտնատակ տալիս ու այրում. յոյս եւ համբերութիւնից հատանք։ Էլ ոչ մի ելաջ չկայ տանելու էս դրութիւնը։ Քանի անգամ, թէ գրաւոր և թէ բերանացի յայտնել ենք մեր պրիստաւին, քանի անգամ զանգատուել ենք նաչալնիկին, ամա



նրանք էլ հայերի հախից չեն կարում գալ։ Ընկնում ենք ձեր բարձր գերազանցութեան ոտները և աղիողորմ լացով խնդրում ենք շուտափոյթ կարգադրութիւն։ Սորա տակ ձեռք ենք դնում Դարալագեազի բոլոր Թուրք գիւղերից հետեւեալ ընտրուած մարդիքս... (Ծալելով եւ տալով Հուսէյինին)։ Լա՛ւ... շատ լաւ է գրած։

ԱՄԵՆՔԸ

(Հաւանութեամբ)։ Բալի, բալի. շատ լաւ է գրած։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ուրեմն էս զանգատի տակ, հէնց էս իրիկուն, բոլորին էլ ձեռք քաշել տուր ու էնըաշաէն ուղարկիր Բաշնորաշէն, որ փոշտը գցեն։ Իսկ վրա հինգերորդ օրը՝ պէտք է ամեն կողմերից հաւաքուած լինէք, որ միասին, ամենից առաջ վրայ տանք մեր մօտի էս Հասանքեանդ հայ գիւղին։

ՄՈԼԼԱ

Եաւաշ, բալյ. լաւ չի՞ լինի որ մեր էս զանգատի պատասխանին սպասենք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Թէ մենք պատասխանի կսպասենք—լա՛ւ հայի կհասնենք... Մեր անելիքը առանց յետ գցելու պէտք է անենք։ Էստեղ փոլիթիքա է հարկաւոր։ Թող իմանան, որ եանի թէ ջաններիս հատաւ, էլ համբերել չկարողացանք։ Տօ ջանում, որանով մենք իշխանութեանը հայերի եախից բռնելու թութաջաղ պէտք է տանք, վասսալա՛մ։

ԱՄԵՆՔԸ

Վասսալա՛մ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մի կէս սհաթից յետոյ՝ ես էլ կգամ ու ձեռք կքաշեմ էս զանգատի տակ։ Դուք գնացէք ու հիմիկուանից սկսեցէք ձեռք քաշելը. գլխումն էլ ինձ համար տեղ պահեցէք։

ԱՄԵՆՔԸ

Բաշուստա, գեօզում ուստա, բալյ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էլի իմացէք հա՛... Էս անգամ եա պէտք է դրանց մինչև վերջին լակոտը սրի քաշենք, որ սաղ մնացածներն էլ ամեն բան թողնեն ու փախչեն գեդար գեալմազը ու մենք էլ եավաշ եավաշ տէր դառնանք նրանց հողերին, նրանց գիւղերին, եա

թէ չէ ամենքովս էլ պէտք է մեր մէյիդները էն չների ձեռքը գցենք: Երկուսից մէկը—հա՛:

ՀԱՍԱՆ

Էդ վերջինը որ հէչ չի ըլնի: Գեղերն ինչ ունեն որ՝ հէչ: Ում մէջ էլ մի քիչ հունար կար, սաղ կոտորեցինք—պրծանք. մնացածներն էլ ոչ եարաղ ունեն, ոչ ասպար:

ՄՕԼԼԱ

Էլածն էլ իշխանութիւնը սաղ ձեռքներիցն առաւ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Թող ամենից առաջ էդ փիդաիների հախիցը գանք մի:

ՆԱՂԻ

Նրանց գեղերն էս գլխից պլոփ բռնենք ու էն գլխից դուս գանք, վասսալամ:

ԱՄԵՆՔԸ

Վասսալա՛մ...

ՆԱՂԻ

Արխէյին կաց, բաշյ. քու նաֆասը մեր վրայ ըլնի՝ հերիք ա: Գնա՛նք:

ԱՄԵՆՔԸ

Հայրաթ: Քու գլուխը սաղ ըլնի մեզ համար:

ՄՕԼԼԱ

(Գնալով) Տեսնենք Ալլահը ինչ է յաջողում:

ԱՄԵՆՔԸ

(Գնալով) Էյ Վալլա, է Վալլա: Նա՛ Ալի:

(Գնացին: Բէկը մտնում է իւր տունը):

---

## ՏԵՍԻԼ Բ

### ՋԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ, ՆԱԶԼՈՒ ԽԱՆՈՒՄ ԵՒ ՅԵՏՈՅ ԳԵՕԶԱԼ ԽԱՆՈՒՄ:

(Ջավահիր խանումը գալիս է աջ կողմից պարտիզի խորքերից եւ ստուերախիտ ծառի տակ, ընի մօտ եղած քարի վերայ՝ նստում: Այդտեղից ձգուած են, մօտ երեք արշին բեմի լայնութեամբ փարդի խիտ թիքեր: Տանից դուրս է գալիս Նազլու խանումը եւ տեսնելով Ջավահիրին զգուշացած մօտենում է նրան):



ՆԱԶԼՈՒ Խ.

Այ էրմանու լակոտ, արի կուլի տուն է՛:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ի՞նչ ունեմ ես տանը:

ՆԱԶԼՈՒ Խ.

Այ բրքլուես դու, իշալլա՛հ... Էկար ընկար մեր մէջն ու սաղ տակն ու վրայ արիր ախր... Ոչ ու փուչ ըլնես դու, հա՛ը...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Բերողին ասա. ինձ ինչի ես ասում:

ՆԱԶԼՈՒ Խ.

Բերողի գլուխն էլ մեռնի (վախենալով նայում է դէպի տուն) քանն էլ հետը, հա՛ը, որ ռաստ չգայիր նրան:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Ուսերը վեր քաշելով) Դէ թող մեռնի. ես ինչ անեմ:

(Գալիս է տանից Գեօզալ խանումը):

ԳԵՕԶԱԼ Խ.

Ի՞նչ ես էդ շան հետ խօսում է՛:

ՆԱԶԼՈՒ Խ.

Բա ինչ անեմ. սա մեր սաղ տունը տակն ու վրայ արեց. մեր էրեսատեղը կարեց... Թող Ալլահը սրա հախիցը գայ հա՛ը... Սրա էրեսը թափի, բրքուի հա՛ը:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Դէ թող թափի: Նա՛ էլ եմ ուզում, որ չի ըլնում: Ձեր ձեռքից եախէս կպրծնի էլա:

ԳԵՕԶԱԼ Խ.

Քու եախէն չէյթանիցը չպրծնի, չէյթանիցը:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Դուք նրանցից ընչո՞վ էք պակաս որ:

ՆԱԶԼՈՒ Խ.

Ձէնդ, թէ չէ Ալլահը գիտենայ գլխիդ վրայ մի հատ մազ չի պրծնի: Արսըզ, բէհայա, բենամուս:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Լացակրկնած) Տէր Աստօծ, հոգիս առ, հոգիս առ... էս ինչ օր ա, որ ես եմ քաշում:

ԳԵՕԶԱԼ Խ.

Բա էս ինչ օր ա, որ մենք ենք քաշում քու ձեռքին, այ

բէհայա։ Մեր բաղչին զալթեցիր. մեզ քուչէն գցեցիր։ Թող Ալլահը էնէնց գցի քեզ քուչէն, որ գետնի բարաբար ընկի բօյդ. որ չնեըն էլ միտդ չուտեն, հ՞ը։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Լացով) Տօ ջանում, ինչ էք ուզում ինձանից է՛։

ԳԵՕԶԱԼ Խ.

Ըհմ, ըհմ, լացովդ ես ուզում մեզ վախացնի հա։

ՆԱՔԼՈՒ Խ.

Դէ գնա, կորի տուն է՛։ Բաղչը քեզ ա մնում ախր։ (Միջոց)։ Դու նրա քուռնն ու գինջութինը կարել ես ախր, այ, զանջըղ, մեր էլ էրեխատեղը։ Գնա, ջահանդամուի, հետը քաղցրացի... բալքեա նա էլ մեզ հետ քաղցրանայ է՛։

ԳԵՕԶԱԼ Խ.

Էս քանի ամիս ա, բաղչը քու ուզուրից չէյթանի ափաթ ա ընկել ու մեզ էլ սաղ օրը քօրլուղ ա տալիս։ Հալալ հացնեըս հարամեցիր։ Թող էդ հարամ հացն էլ գլխիցդ կարաի, հ՞ը։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Բարկութեամբ եւ լացով) Տօ ինչ էք ուզում ինձանից է՛։ Չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում... չեմ գնում, էլի...

(Խիստ լացով գնում է դէպի աջ)։

---

## ՏԵՍԻԼ Գ

### ՆԱԶԼՈՒ ԽԱՆՈՒՄ ԵՒ ԳԵՕԶԱԼ ԽԱՆՈՒՄ

ԳԵՕԶԱԼ Խ.

Ըհմ... (չանչելով Ջավահիր խանումի յետեւից)։ Գրողի ծոցը գնաս դու, ինչալլահ...

ՆԱԶԼՈՒ Խ.

(Նոյնպէս) Միտդ վրէդ ընէնց քըքրուի, որ ճիճուներն փայ էլ չմնայ, հ՞ը։

ԳԵՕԶԱԼ Խ.

Բաս ո՞նց անենք։

ՆԱԶԼՈՒ Խ.

Մենք ինչ կարանք անենք, քանի որ բաղչն ինքը սրա ձեռքին մհաթալ ա մնացել։



ԳԵՕԶԱԼ Խ.

Թամամ էրեխայ ա դառել էլի։

ՆԱԶԼՈՒ Խ.

Ո՞ւր ա բաղչի էն ալամարթութինը... Չեմ հասկանում ինչի՞ զօռի չի պցում ու ջանը հանում։

ԳԵՕԶԱԼ Խ.

Աչնաղն ուզում ա, որ էս բէհայեան իրան սիրի ու եղե... Էս բէնամուսն էլ զարազաչի նման հա կըցահարում ա։ Ո՞վ ա տեսել ախր, որ էս բաղմիլլէթ աղջկերանց խօչուն ու քէֆոլը գնան։ Տօ գցի սակց, չանասատակ արա է...

ՆԱԶԼՈՒ Խ.

Է՞. բաս մենք ընչանք երբ սպասենք։

ԳԵՕԶԱԼ Խ.

Էլ ինչ սպասենք։

ՆԱԶԼՈՒ Խ.

(Դադանացած) Թող մի սրանք գնան գեղերը, մենք էլ մերն անենք։

ԳԵՕԶԱԼ Խ.

Էլ խլաջ չկայ։

---

## ՏԵՍԻԼ Դ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ջավահիրն ո՞ւր է։

ՆԱԶԼՈՒ Խ.

Ես ինչ եմ իմանում ուր ա։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ջհանդամն իմանաս գեօռն իմանաս։ Նոր էստեղ չէ՞ր։

ԳԵՕԶԱԼ Խ.

Գնաց դէնը։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էլի միսը ծամծամեցիք հա։

ԳԵՕԶԱԼ Խ.

Նրա միսը չունը ծամի։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Չէնզ... թէ չէ էս ոհաթին խանչալը փորդ կկոխեմ։ Ինչ՞ գնաց, սաս տեսնեմ։

ՆԱԶԼՈՒ Խ.

Մենք ինչ արինք չարինք, մօտդ չեկաւ։ Ի՞նչ անենք էլ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Դուք էլ ի հարկ է աջ ու ձախ ծակծակեցիք։ Քանի՜ անգամ եմ ասել, որ ես զօռի չեմ գցելու։ Բէյինները չի մանում։

ԳԵՕԶԱԼ Խ.

Մենք ինչքան աղաչանք-պաղատանք արեցինք՝ չէլաւ։ Թքեց, ըւէնց, մեզ վրայ ու՝ հլա քեզ վրայ էլ ու գնաց գէնը։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ձատ լաւ արեց։ Աչքներդ էլ հանեց։ Դուք ինչ բան ունէք նրա հետ։ Ջհանդամուեցէք աչքիցս, թէ չէ...

ԳԵՕԶԱԼ Խ.

(Գնալով) Էյ Ալլահ, տեսնում ես։

(Երկուսով էլ գնում են տուն։ Մուրթուզալի Բէկը մի փոքր ման է գալիս պարտէզում լուռ եւ խիստ մտքերով զբաղւած եւ ապա մտամոլոր գնում է տուն)։

(Հեռուից լսւում է „Զարչի խուրդասի, չարչի խուրդասի“)։

---

# ՏԵՍԻԼ Ե

## ՆԱԶԼՈՒ ԽԱՆՈՒՄ ԵՒ ԳԵՕԶԱԼ ԽԱՆՈՒՄ

ԳԵՕԶԱԼ Խ.

Ջանում, էս ինչ ա մեր հալն է՜։ Դուս ենք գալիս, տուն ա ղրկում. տուն ենք գնում, դուս ա ղրկում։

ՆԱԶԼՈՒ Խ.

Ձէյթանը մտել ա սիրտն էլի։

ԳԵՕԶԱԼ Խ.

Մարգեամուշ, եա սուլէյմանի անե՜նք։

ՆԱԶԼՈՒ Խ.

Չէ, մեր գեղում չատ կար։ Սաղ թողինք ընդեղ։ Խի՞ միտդ չի՞։

ԳԵՕԶԱԼ Խ.

Ձչմել եմ. խելք ա մնացել գլխիս որ։



ՆԱԶԼՈՒ Խ.

Բաս ո՞ւմից առնենք։

(Լսւում է գիւղում. „Զարչի խուրդասի“)։

ԳԵՕԶԱԼ Խ.

Եա. ո՞ւմնից ուզենք, որ չայ։

ՆԱԶԼՈՒ Խ.

Էն ա փիսը, որ բանը բացէի, ոլրէալը կիմանան, որ մեր սրածն ա։

(„Զարչի խուրդա՛սի-չարչի խուրդասի“)։

ԳԵՕԶԱԼ Խ.

Թէկուզ իմանան։ Ո՞ր մուսուլման կնիկը մեզ բարաքեալլա չի ասի։

ՆԱԶԼՈՒ Խ.

Ասիլը՝ կասեն, ամա բազչի անկաջը որ ընկա՜ւ...

ԳԵՕԶԱԼ Խ.

(Մտածելուց յետոյ, վճռական) Ջհանդամը թէ կընկնի... Սրանից էլ փիս հօ չի ըլնի։

(Աւելի մօտ. „Զա՛րչի խուրդա՛ա՛ա՛սի“)։

ՆԱԶԼՈՒ Խ.

Եավաշ... էս չարչիխուրդասին չի ասնեմ։

(Փողոցում. „Զարչի խուրդա՛ա՛ա՛սի“...)։

ԳԵՕԶԱԼ Խ.

Հաւասա անենայ... (Իսկոյն) Մի կանչի տեսնենք։

ՆԱԶԼՈՒ Խ.

Արի կանչենք։ (Երկսով էլ գնում են դէպի դարպասը. իսկ Նազլու խանումն առաջ ընկնելով եւ դարպասը բանալով ու գլուխը դէպի փողոց հանելով, կամաց) Զարչի, այ չարչի... մի ըստեղ արի։

---

# ՏԵՍԻԼ Զ

## ՆՈՅՆՔ ԵՒ ՉԱՐՉԻ

ՉԱՐՉԻ

(Երեւալով դարպասի մէջ) Բույուր, խանում։

ՆԱԶԼՈՒ Խ.

Ի՞նչ ունես։

ԶԱՐԶԻ

Ինչ կհրամայես, կանենամ, չունքի ամեն բան կայ։

ԳԵՕԶԱԼ Խ.

Դու մուսուլման ես, թէ ջհուդ։

ԶԱՐԶԻ

Մուսուլման, խանում, մուսուլման։

ՆԱԶԼՈՒ Խ.

Սուտ ես ասում. դու ջհուդ ես։

ԶԱՐԶԻ

Վալլա մուսուլման եմ, մասսար հախկը։ Մաքիլցն եմ։ Նահյա՛թ ջհուդների էրեսին. թու՛ու՛հ։

ՆԱԶԼՈՒ Խ.

Արի մի տեսնենք։

(Բոլորը գալիս են նախաբեմ, դարպասն ամուր փակելով)։

ԳԵՕԶԱԼ Խ.

Տեսնենք ինչ ունես։

ԶԱՐԶԻ

(Մէջքի կապոցը վայր դնելով) Էս հլա ճոթ ու կապը։ (Բանալով արկղը) Այ ինչ ուզէք. ասեղներ, քորոցներ, կոճակներ, չանգալներ, անկաշի օղեր, ինչ ասէք։ Այ, էս էլ հայլիքը. տեսէք, խանումլար, ինչ հայլիք են... (Բռնելով նրանց երեսի դէմ) Փարսստանիցն եմ բերել տալ։ Էս էլ... թելեր... ինչ ռանգի ուզէք... Խորասանիցն ա. սախկըզ... սփլիչկայ... Տեսնում էք էլի... ա՛յ, ամեն բան կայ։ Ուզում էք ճոթերն էլ։

ՆԱԶԼՈՒ Խ.

Չէ, էդ պէտք չի։

(Լսւում է ազանի երգը)։

---

# ՏԵՍԻԼ Է

## ՆՈՅՆՔ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ

(Ջաւահիր խանումը գալիս է աջ կողմից, մի թեթեւ հայեացք է գցում սրանց վերայ եւ մտամոլոր նստում է նոյն ծառի տակ)։

ՆԱԶԼՈՒ Խ.

Օվչարիներ էլ ես ծախում։



ԶԱՐԶԻ

Բա՛ս, խանումներս, բաս։ Բաս էս վախտ ես օվչարի էլ չծախեմ։ Թողէք մի էդ բաթմասար հայերի քոքը ջնջենք է՜։

ԳԵՕԶԱԼ Խ.

Էլ ինչ ունես, տեսնենք։

ԶԱՐԶԻ

Ամեն բան, ամեն բան. ինչ մաքներովդ անց կենայ՝ ունեմ։ Ընհրամ... (ցոյց տալով արկղի մէջը մէկ մէկ) Բոյաքն, տեսէք... (Աչքը դցում է Ջաւահիր խանումին) Այ խանում, դու էլ էստեղ համեցիր... Լաւ հայլիներ ունեմ։

ՆԱԶԼՈՒ Խ.

(Կամաց չարչուն) Սուս կաց. նրա հետ բան չունես։ Թող ջհաննամի տակն էթայ։

ԶԱՐԶԻ

(Կամաց, իբր վախեցած) Բալի... Բաշխեցէք։

ՆԱԶԼՈՒ Խ.

(Կամաց) Մարգեամաւշ էլ ունես... էս սուլէյմանի։

ԶԱՐԶԻ

Մկների համար... ունեմ... Փահ, փահ, ընէնցը՛...

ԳԵՕԶԱԼ Խ.

(Նոյնպէս) Եալաշ խօսա, է՜յ։

ԶԱՐԶԻ

(Կրկին ձայնն իջեցնելով) Բաղչլա... Ա՛յ, բույսը... (Նայելով Ջաւահիր խանումին, բբբբելով արկղը եւ տալով մի թղթի մէջ)։ Ճաա չաա լաւն ա է՜... (Զարզիի եւ Ջաւահիր խանումի աչքերը հանդիպում են իրար։ Յանկարծ ծունկը գետնին խփելով եւ իրեն կորցնելով գոռում է) Գա՛յ, վա՛յ...

ՆԱԶԼՈՒ Խ.

(Զարմացած) Ի՞նչ, այ մուսուլման, ինչը...

ԳԵՕԶԱԼ Խ.

Ի՞նչ էլաւ քեզ. չէյթանը հօ քեզ չդիպաւ...

(Ջաւահիր խանումը նոյնպէս զարմացած նայում է չարչուն առանց ճանաչելու. բայց մի ինչ զգացմունք նրան շփոթեցնում է եւ երեսը շուռ տալով մի կողմ, աշխատում է կարելոյն չափ իրեն հանգիստ պահել)։

ՆԱԶԼՈՒ Խ.

Գժուեցի՞ր, այ, մուսուլման։

ՉԱՐՉԻ

Գժուեցի՛, այ խանումներ, ես ձեր (ծունր դնելով նրանց ոտների առաջ) ոտներին ղուրբան, ես ձեր ոտների տակի հողն ըլեմ...

(Ջավահիր խանումի համար չարչու ձայնը խիստ ծանօթ է թւում. հետզհետէ սաստկանում է նորա շփոթւելը, բայց իրեն անձահարում է):

ԳԵՕԶԱԼ Խ.

Ախր ի՞նչ պատահեց, ի՞նչ ես գտել:

ՉԱՐՉԻ

Ոսկի՛ն, ոսկի՛ն, ա՛յ... (ցոյց է տալիս արկղի անկիւնում մի տասանոց ոսկու վրայ) Էս, խանումներս, էս ձեր ուղուրովը գտայ... Էս քանի ամիս ա, ես քուն ու դադար չունեմ, խանումներ... կորցրելի՛, կորցրելի՛, ոնչ հաց ի կարում ուտել, ոնչ էլ մի սհաթ կարումի քնեմ... Գտա՛յ, գտա՛յ, շուքի՛ւր Ալլահին, շուքի՛ւր Ալլահին:

ՆԱԶԼՈՒ Խ.

(Ծիծաղով) Բաս մեզ մի փէշքաշ մնացիլ հա՛:

ՉԱՐՉԻ

Ինչ ուզում էք, խանումներ, ձեզ փէշքաշ, ձեզ հալալ, բույուր:

ԳԵՕԶԱԼ Խ.

Դէ էդ սախկըդից մի մի կտոր մեզ տուր:

ՆԱԶԼՈՒ Խ.

Հա. մարդեամաշին ինչ պէտք ա տանք:

ՉԱՐՉԻ

Ձեզ փէշքաշ խանում... մի չահի:

ՆԱԶԼՈՒ Խ.

(Տալով 5 կոպէկ) Առ: Բաս մեր սախկըդ՞ը:

ՉԱՐՉԻ

Համեցէք. ձեզ փէշքաշ, խանումներ: (Դողալով ուրախութիւնից) Ինչքան ուզում էք... (Տալով մի մի կտոր): Բույուր, հալալ, ձեր մօր կաթի պէս հալալ: (Մի կտոր էլ տանելով Ջավահիր խանումին: Նազլու եւ Գեօզալ խանումները զբաղւում են արկղի միջի մանրունքները տնտղելով): Էս էլ քեզ, (մինչ ծնկները գլուխ տալով) Խանում: (Ձայնը յանկարծ իջեցնելով եւ արագ): Լուսիկ



ջան ես եմ, չվախենաս... (Բարձր): Ձեր ամենքի ուղուրովն էր, խանում, որ ես իմ ոսկին գտայ. առ, առ վեկալ... Ձեր ոտի տակի հողն ըլնեմ... (Լուսիկը ճողունելով ծամոնը, երեսը շուռ է տալիս, կամենալով զսպել իր խիստ յուզմունքը: Չարչին դառնալով նորանից): Եա՛, էս խանումը խի՛ ա ըսէնց:

ՆԱԶԼՈՒ Խ.

Անեցի ու նրա հետ բան չունես:

ԳԵՕԶԱԼ Խ.

Գիժ ա նա, չես տեսնում:

ՉԱՐՉԻ

Գտայ, խանումներ, ես իմ ոսկին գտայ:

---

## ՏԵՍԻԼ Ը

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Մուրթուզալի Բէկի երեւալովը խանումները քաշւում են: Չարչին էլ է իբր երկյուղ արտայայտում):

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Էս ինչ խաբար է էստեղ:

ՆԱԶԼՈՒ Խ.

Հէչ, ասեղ ենք առնում:

ԳԵՕԶԱԼ Խ.

Չարչին էլ իրա տասանոց ոսկին գտաւ, շատ ուրախացաւ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Կանանց) Ջհանդամուեցէք, թէզ...

(Նրանք լուռ գնում են տուն. չարչին էլ հաւաքելով իր բանձրը պատրաստւում է գնալ):

---

## ՏԵՍԻԼ Թ

### ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ, ՉԱՐՉԻ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Բարկացած, չարչուն) Դու ինչ ես ամեն տուն խցկւում ու կնանքանց խաբում: Իթիլ ջհաննամա:

ՉԱՐՉԻ

Էս սհաթին, բագյ ջան, գլխիդ ղուրբան... Ես ինքս հօ չեկայ... կանչեցին...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մեծ ղալաթ արեցին... Դու էլ ղալաթ արեցիր, որ եկար: Իթիլ:

ՉԱՐՉԻ

Բախշի, բագյ: Էս ա գնում եմ: (Մեջքը գցելով ծօթերի կապոցը, բարձրացնում է եւ արկղը):

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Աչքն ընկնելով Ջավահիր խանումին. մօտենում է չարչին, կամաց): Այ, էն խանումին ինչքան կարաս ծախիր, թէկուզ էգ զարբար կտորն էլ, մի խօսքով, ինչ որ կարենաս, ինչքան կարենաս, չմա, չատ. իմացմը:

ՉԱՐՉԻ

(Մտքում ուրախացած): Բաշ ուստա բագյ... Ես քու նոքարն եմ... Ամա էն խանումը մի քիչ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ի՞նչ:

ՉԱՐՉԻ

Բաշխի ինձ, բագյ... մի քիչ... ընէնց... (Մատն իր գլխին տանելով):

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Սանն քեաս, մուլթուուր:

ՉԱՐՉԻ

Բալի բագյ... Ամա նրա հետ մի քիչ դժար ա ալիշ-վերիշ անելը:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Հունար ունես—բանացրու: Քանի կարաս շատ բան ծախի:

ՉԱՐՉԻ

(Իբր կասկածելով իւր յաջողութեան վրայ): Տեսնեմ, բագյ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ինչ հունար ունես, բանացրու: Էգուց կգաս հեսաբդ կըստանաս, ախէյին կաց:

ՉԱՐՉԻ

Մի քիչ մուլթն ա...



ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բան չկայ: Բանիդ կաց: (Ջավահիր խանումին) Ջավահիր, ինչ կուզես սրանից առ. թէկուզ հազար մանէթի: (Գնալով դէպի դարպասը եւ նայելով իւր տան լուսամուտներում կանգնած կանանց): Քաշուեցէք. ոչ որ չհամարձակւի դուրս գալ... (Գնում է դարպասից դուրս):

## ՏԵՍԻԼ Ժ

### ՋԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ ԵՒ ՉԱՐՉԻ

(Չարչին մօտենում է եւ պարսկական քսու ձեւերով սկսում է ցոյց տալ իւր ապրանքը—արկղը, կտորեղէնները, չթեղէնը, որոնց մէջ կայ նաեւ մի ոսկուն պարսկական ծաշակի զարբար կտոր թանգագին հագուստի համար եւ մէկ մէկ բանալով, այնպէս է կանգնեցնում Ջավահիր խանումին, որ նրա մէջքն ու իր, Չարչիի, երեսը դէպի տունը լինի: Ամբողջ խօսակցութիւնն այն ձեւն ունի, որ իբր երկուսով էլ սաստիկ զբաղված են առեւտուրով եւ իբր ամբողջ խօսակցութիւնը վերաբերում է ապրանքին եւ չարչիի համոզելու աշ- Հարկաւոր տեղերում սաստիկ իջեցնում են ձայները): խատութեան:

ՉԱՐՉԻ

Այ խանում, բագյի սիրտը ռահմ ա ընկել, առ է. էս հայլին առ: (Կամաց): Հենց որ իմացայ մեր գեղի գլխի էկածը, կազմակերպութիւնը թողի ու քու ետեւիցն ընկայ, Լուսիկ ջան... (Բարձր) Վալլա փարոնց որ ընէր քեզ ուզում էի տանել... սըստանիցն եմ բերել տուել:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Իբր նայելով հայելու մէջ. լացով) Միրոնց սաղ կոտորեցին էս անաստուածները...

ՉԱՐՉԻ

Իմացայ, սաղ իմացայ: (Բարձր) Ալլահը գիտի, որ ըսէնց հայլի ակի ինգլիզն էլ չի կարում շինել: (Կամաց): Ես սաղ աշխարքը ման եմ եկել քեզ համար... էլ սարեր, էլ ձորեր, էլ գեղեր... սմղ տակնուվրայ եմ արել... Նախչւանայ եանն էլ եմ գնացել ու էկել:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Բագյը, կասես բան էր իմացել: Ինձ գեղէց գեղ էին տանում ու հզար ծակուծուկերում պահում:

ՉԱՐՉԻ

(Բարձր) Այ, ուզում ես խանում, էս կտորը շատ լաւն ա. տայ, տես: (Բաց է անում եւ ցոյց է տալիս մի կտոր: Կամաց) Մի վախտ ասեցին թէ Մուլթուզալի Բէկը քեզ Սուլթանին ա զրկել... մի վախտ էլ թէ՝ քեզ հէնց ճամբին ա սպանել տուել, որ իրա ուզածը չես արել ու հէնց տեղն ու տեղն էլ գետնի տակովն արել... (Բարձր) Չափեմ, խանում:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Բարձր) Չափի:

ՉԱՐՉԻ

(Կամաց կամաց չափելով եւ նորից սկսելով): Վերջը քու խղուլթողը կորաւ... յուսս քեզնից կտրուեց... Ի՞նչ օրն ընկայ ես տէր Աստուած... Քու դուշմանն իմ օրին ըլնէր:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Կամաց) Բայց, որ մի քիչ արխէյինացաւ, նոր իրեն էկաւ ու ինձ էս՜տեղ բերեց, չարսաբի մէջ կոլոլած: Սկի մեր էս հարեւաններն էլ չին իմացել իմ գալը... Հմի էլ չեն իմանում:

ՉԱՐՉԻ

Էդ ա որ. ախր, ոչ մի գեղում չկարացի իմանամ թէ ուր ես է:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ըստեղ գլուստ ա, բախչէն արխէյին դուս եմ գալիս, ամա քսան աչք ա ինձնից պատում:

ՉԱՐՉԻ

Ախր էդ ա է... Քու կորչելը, մօրս սպանուելը, մեր գեղերի կոտորածն ու աւերը ինձ լափ գժուացրին... Սրտիցս կրակ էր դուս գալի, բնթերիցս էլ մուխ... Նախչուանի մհալներն էլ որ տեսայ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Հէնց էն սեւ օրը մեր գեղումն ասում էին Նախչուանայ համար: (Բարձր): Էն գիւլի չիթը տեսնեմ:

ՉԱՐՉԻ

(Իսկոյն եւ բարձր): Էս ահաթլին, խանում: (Դուրս չիթը բաց անելով եւ զանազան ձեւերով ցոյց տալով. կամաց) Ես էլ էկայ ու հաւաքեցի մեր տղերքանց ու խմբեր կազմեցի, որ էդ անօրէնների հախիցը գամ. քունն էլ, մօրս էլ. ամենքի խաչը հանեմ:



Ըսոր համար ինձ հարկաւոր էր, որ ես թուրքերի լեզուն ու ունքուրմնքը իմանամ, որ ես էլ էն ու գնօրայ իմ բանս տեսնեմ: (Ձեռքի վրայ չիթը գցելով, որի ծայրը հասնում է գետնին. բարձր): Սա մաքիչ բան ա, խանում. ըսէնց գիւլի չիթ հէչ չի ըլնի: (Կամաց): Մեր տղերքանցից էնպէսը չկար. էլի չարչին ես դառայ ու ընկայ թուրքերի գեղերը: Ամեն առաւօտ ըսէնց մաղերս եմ կպցնում, էս բանուամանը վեր ունում ու դուս գալիս: Հէնց մի տեղ իմանում էի թէ, ֆլան օրը թուրքերը պէտք ա վրայ տան ֆլան գեղին, ձեռաց գնում էի տղերքանցս հաւաքում ու գալիս թուրքերի վրայ ու կտորում, ու փոթում, հայ գեղն ազատում:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Էս տեղ ամեն գեղերից թուրքեր են եկել, որ...

ՉԱՐՉԻ

Գիտամ եմ, գիտամ... Ես իմ բանը տեսել եմ... Էս գեղը մեր սաղ մհալի գողերի ու աւազակների բունն ա... Ամեն բանի գլուխն էլ՝ էս թաթմասար Մուլթուզալի բէկն ա... Սա յա տալքում էս կտորածները: Ոնց որ ըլնի էս քշեր ես պախցրան վերջացնեմ... գեղերից էկած թուրքերին էլ գլուխ հետը:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ինչ անում ես արա, ինձ պրծացրու. Էստեղ միսս ուտում են: Բայց որ չըլնէր, հմի վաղուց էի գետնի տակին: Նա ամեն բան ինձ համար անում ա, որ ես նրան սիրեմ: Չի ուզում զոռի գցի:

ՉԱՐՉԻ

(Զարմացած) Բա հլա չի զոռել:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Չէ:

ՉԱՐՉԻ

(Ուրախութեան զգացմունքներին հասած) Ըսէնց բան չի ըլնի:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Քու գլուխը վկայ: Իմ առաջ բազջը մի ճուտ ա դառնում, ոնց որ ասլանի առաջ կատուն:

ՉԱՐՉԻ

Ջանում, ըսէնց բան չի ըլնի... Դրանից քոքն անիծուի... Դրանցում ոնց ինսաֆ կայ, ոնց արուն կայ, ոնց էլ նամուս: Ախը

մեր գեղերում՝ էլ կնանիք ու աղջկերք չթողեցին, սաղ անպատուեցին ու եաւ սրպանոտեցին... Դա, ախր նրանից փիրն ա, չէ՞:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ի՛նձ հաւատա, Սարիբէգ ջան:

ԶԱՐԶԻ

Փառք քեզ Աստօծ: Զլսուած, չտեսնուած բան:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Աման, քեզ ղուրբան, ինձ պրծացրու:

ԶԱՐԶԻ

Հէնց էս իրիկուն մեր տղերքը սաղ գեղը կպատեն... (Բարձր) Փա՛հ... տես է... ըսէնց գիւլի չիթ կլնի: Մի տես, խանում է:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Քանի հոգի էք:

ԶԱՐԶԻ

(Զափելով) Ճաա. եռսուն-քառասուն: Իրեք խմբերս էլ հաւաքուել են: Ամենքն էլ ինձանից կատաղած, ինձանից ղոչչաղ, լաւ կարիճներ, լաւ էլ սիլահ բանացնողներ: Ամենքին էլ սովորցրել եմ: Առաջ պտի մի էրկու դէզ կրակ տանք: Հէնց որ Թուրքերը հաւաքուեն կրակի մօտ թէ չէ՝ մեր տղերքը կրակ պտի բաց անեն նրանց վրայ, գիւլլայամիչ անեն ամենքին ու եաւ վրայ տանք գեղին: Սաղ գեղը պտի փութենք: (Հաւաքելով իր բաները): Մութը լափ ընկաւ: Ես գնում եմ:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Արագ) Էդ օվչարին ինձ տուր:

ԶԱՐԶԻ

Ընչի՞ համար: Հա. լաւ ես ասում: (Ծածուկ տալով) Էնքան ուրա, որ սաղ սալամաթ պրծնես:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Արագ ծածկելով օվչարին կրծքի տակ) Ինձնից արխէյին կաց:

ԶԱՐԶԻ

Է՜. ես գնացի... (Կապոցը մէջքը գցելով եւ արկղը կռան տակն առնելով) Գա՛հ, լափ մթնեց: Մեր տղերքի նշանը ես եմ տալու... Դեզերն ես պտի վառեմ ու համնեմ տղերքին: (Պարսկական ձեւերով գլուխ տալով ու ձեռքն աչքերին, գլխին դնելով) Աստու խաթէր համար քեզ պահի:



---

## ՏԵՍԻԼ ԺԱ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ, ՅԵՏՈՅ ԱՌԱՆՑ ԶԱՐԶԻԻ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Պատահելով զարպասի մօտ Զարզիին) Հը՞, բան կարեցար ծախես:

ԶԱՐԶԻ

Այ կտեսնես, բագ յ: Քու գլուխը սաղ ըլնի ինձ համար: Էգուց կգամ փողին:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ճաա լաւ. շատ ապրես: Աֆֆարիմ:

(Զարզին գնաց):

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Առանձին) Հմի տեսնենք... Եա ալէր Աստօծ... Դու ինձ զօրութիւն տուր:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Մօտենալով Ջավահիրին եւ տեսնելով նրա վերցրած բաները): Պա՛յ, էդ ինչքան բան ես առե՞լ:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Պէտք էր: Թէ ասղի չես, ետ կտանք:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մի բան որ դու ես հաւանել, էլ ինչ ետ տալ, ջէյրանս:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Քնքոյշ նայեացք գցելով վերան) Հմի տեսնում եմ, որ ինձ սիրում ես:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Չէ թէ սիրում եմ, մեռնում եմ, մեռնում... խելքս գնում է քեզ համար: (Մօտենալով գրկում է) կաքաւս, մարալս, թառլանս... Անջա՛ղ... (ուզում է համբուրել: Ջավահիր խանումը իբր վախեցած, չէ թողնում համբուրելու, նայում է չորս կողմը եւ դէպի տուն):

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Չէ, չէ... հոտ... կանանին... Ես սովոր չեմ... հոտ... տանը...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Է՞հ, թող մնայ, բան չկայ. Թաք քու խաթրը խօշ ըլնի:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Բա որ ըսէնց սիրում ես, խի ես թողնում, որ Նազլու ու Գեօզալ խանումները միսս ուտեն:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ո՞նց թէ... Բաս ինչի՞ մինչև օրս չէիր ասում: Ալլահը գիտենայ՝ մէկ մէկ, էսէնց, քու ոտների տակ կմորթեմ: (Գազազած կամենում է գնալ դէպի տուն): Դու մի հաւաշ... էս սհաթին...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Ամուր բռնելով): Չէ, բաց... թէ ինձ սիրում ես՝ նրանց բան մի ասա: Աստու խաթէր համար՝ թող նրանց:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Դէ ասա նրանք էին քեզ խորթլամիշ անողներն էլի... Ալլահը գիտենայ գլուխէքը մէկ մէկ կածեմ փորները:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Աման բաղյ. թէ որ մի ըսէնց բան անես. էլ ես քոնը չեմ:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բաս ես կթողնեմ, որ քեզ մի էսքան (ցոյց տալով ճկոյթի ծայրը) քիօրլուղ տա՞ն... բաս գլուխս մեռել է:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Չէ, չէ. խօսք տու որ ոչինչ չես անի:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Այ էրմանու աղջիկ, հերիք էլաւ ձեր էդ կակող սիրան է: Լաւ: Ամա ոնց որ լինի՝ ես պտի ջնտրին էլ բերեմ ու ոտներդ պաչիլ տամ, քու գլուխը վկայ ա:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Լաւ. մի ուրիշ վախտ, մի ուրիշ վախտ... թէ ինձ սիրում ես:



ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ըհ՛մ. ես քու սիրուն գժուել եմ, հասկանո՞ւմ ես... Ես գիտէի, որ դու ինձ մի օր պիտի սիրես... Ես էլ սպասում էի... Դու ինձ կալ ու կապ էիր արել... դու ինձ գիր էիր արել... և ես չէի կարողանում, չէի վստահանում դուրս գցել... (Կամենում է գրկել, բայց Զավահիրն իբր վախենալով, նայում է իր շուրջը և աշխատում է չմտնել նրա գիրկը, բայց նա գրկում է): Ես ինքս ինձ վրայ զարմանում էի, որ էսքան ժամանակ... ըսէնց կալ ու կապ էի էլել... (Յանկարծ) Հիմի, հանի. դու իմն ես, Զավահի՛ր:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Գլխով ու աչքերով, նաև քնքոյշ ժպիտով, ունքերի տակից նայելով նրան, կիսաձայն) Հա՛...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Անջա՛ղ... Սաղ աշխարքը հմի իմն է... Սաղ աշխարքը քեզ եմ ղուրբան անելու... (Կրծքին սեղմելով) Ես ինքս պիտի ղուրբան լինեմ քու էդ վարդ-վարդ թշերից, զուլաֆիլ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Խոյոյն ցնցուելով և գրկից դուրս թռչելով) Վարդ-վարդ թշե՛ր... զուլաֆ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Խիստ զարմացած) Հ՞ը, ջանս, ինչ էլաւ քեզ:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Ուշքի գալով) Հէչ... զուլաֆիլ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Հա, բաս: Ի՞նչ ա որ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Հէնց իմացայ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Ի՞նչ իմացար:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Հէնց իմացայ... ղարաղուշ ես ասում:

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ոգևորուած) Ո՞վ, ե՞ս... Ես էդպէս ղալաթ կանեմ (կրկին գրաւելով) Իմ ղանդ-շաքեարս... Ղարաղուշները նրանք են, այ... (ցոյց տալով դէպի տուն) նրանք են: Դու իմ ջաննաթի ղուշն ես, ջաննաթի:

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Նստենք մի քիչ էստեղ. էս թփերի մօտ, սրանց տակին։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Աւելի ոգեւորուած) Նստենք, նստենք, նմ՛նս ըլես, նստենք ջա՛նս ըլես։ (Կանչելով) Մամա՛դ։

---

## ՏԵՍԻԼ ԺԲ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՄԱԴ

ՄԱՄԱԴ

(Երեւալով, հեռուից) Բա՛լի։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Սամաւար, թէյ։ Խալիչա էլ բեր էստեղ, մութաքէք, բալիշներ, թէյ։

ՄԱՄԱԴ

(Ուրախ) Գեօզում ուստա։ (Բերում է ամեն ինչ)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Սամաւարն էլ գցիր, որ մի նմուտում հասնի։ Էս բաներն էլ տար Ջավահիր խանումի օթախը։

ՄԱՄԱԴ

Բաշ ուստա։ (Գցելով գորգը վարդէ խիտ թփերի մօտ, որը համեմատաբար մի փոքրիկ, բայց բարձր տափարակ տեղ է, ամեն ինչ կարգաւորելով) Բույուրն։ (Հաւաքում է չորսից թողած բաներն ու տանում)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ինքը փռուելով գորգի վերայ, բալիշների եւ մութաքաների վերայ թիկն է տալիս։ Մամադին)։ Թէյ։ (Մամադը վազում է տուն)։ Ջավահիր, արի էստեղ, արի ինձ մօտ... Նստի մօտս... կըպչի ինձ... կըպչի, լաւ կըպչի, այ, այդպէս։

---

## ՏԵՍԻԼ ԺԳ

### ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ ԽԱՆՈՒՄ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Տե՞սնում ես, ջավահիրս, ջովհարդարս (ցոյց տալով լուսինը) տեսնում ես՝ սա մեր Իսլամի նշանաբանն է... Տեսնում ես թէ ինչպէս ուրախ է նա էլ մեզ հետ...



ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Մտքերով գրաւուած) Հալբաթ որ... ոնց ուրախ չի ըլնի... Ինչ անուշ իրիկուն ա...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Իրիկունն էլ է անուշ, սաղ աշխարքն էլ է անուշ... Ինձ համար հիմի թազա կեանք է բացւում... Սրանից դէնը դու ինձ կճանաչես... (Գրաւելով) սրանից դէնը... (Գրգռուած փաթաթւում է)։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Չթողնելով) Չէ, չէ, բէգ... չայը կխմենք... ետև... քշերը, քշերը... տանը...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Թող էդպէս ըլնի... թող քու խաթրը խօշ ըլնի... Ոնց որ քէֆդ ուզում է...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ամա որ վախտը թէզ անց կենայ, բէգ... մի հեքեաթ տաս, լսենք։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Միանգամայն գրաւուած) Ջա՛ն լաւ... Ինչ եմ ասե՛լ... Ամմա դու ինձնից լաւերը կիմանաս. դո՛ւ տաս։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Թէ կուզես, ես կասեմ... (իբր ամաչելով) Ամա չեմ իմանում, կհաւանես, թէ չէ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Նրա ձեռքերը քաշելով եւ իր երեսին քսելով) Դու փիս հեքեաթ չես ասի, իմ ջաննաթի հուրի ջան... Ասա, ասա, քու էդ լեզուն ուտեմ։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Ձեռքերը յետ քաշելով) Լա՛ւ. ես կասեմ... (Միջոց)։ Ըլնում ա չի ըլնում մի թագաւոր ա ըլնում... իրա թախտի վրայ հաստատ... Սաղ աշխարքի թագաւորները նրա առաջ հէչ... Մէկ օր՝ նրա երկրում շատ փիս քամի ա վեր կենում. ամպերը հաւաքւում են, ամպի գոգռոցն ու կայծակը, անձրեւն ու կարկուտը, ըսէնց, իրար են խառնւում... Թագաւորը մօտըկանում ա ակուշկին ու թամաշ անում։ Թամաշ ա անում, թէ ոնց ա սաղ

աշխարքը փոթորկում... Ինքն էլ, համ, սուս, վախում ա. համ էլ, սուս գլին ա գալի ու թամաշ անում։

---

## ՏԵՍԻԼ ԺԴ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՄԱԴ

(Այս միջոցին Մամադը բերում է ճաշատախտը՝ գլխին դրած Թէյամանով. իսկ նրա յետեւից մի ուրիշ ծառայ էլ բերում է մատուցարանի վերայ դրած՝ մեղր, կարագ, գաթայ, շաքար եւ քաղցր խմորեղէններ, նաեւ բաժակներ իրենց տակերով եւ դնում են յարմար տեղ, աջ կուլիսի մօտ)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մի հաւաշ, Ջավահիր։ (Մամադին)։ Չայը պցած է. ստաքանները թամիզ են։

ՄԱՄԱԴ

Բալի բաղյ։ Ամմա չայը հէնց էս սհաթին պցեցին. պէտք ա դամն առնի։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Լաւ գնա։ Մի քիչ էլ կսպասենք. թող լաւ դամն առնի։ (Մամադը գնաց)։

---

## ՏԵՍԻԼ ԺԵ

### ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՑ ՄԱՄԱԴԻ ԵՒ ՄԻՒՍ ԾԱՌԱՅԻ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Յետո՞յ, յետո՞յ... Էդ լաւ հէքեաթ ա երեւում։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

...Թամաշ ա անում թաքաւորն ու՝ ֆիքր ա անում... բա ես ի՞նչ թաքաւոր եմ, ասում ա, որ մի ըսէնց բան էլ ես չեմ կարում անեմ... Ըսէնց շատ ա ֆիքր անում թէ քիչ, չեմ իմանում, ամմա մի վախտ էս թաքաւորը տեսաւ որ՝ քամին երկնքիցը մի սեւ ամպ պոկեց ու բերեց դուզ իրա մօտ... Էս ամպը հաւաշ—հաւաշ սիպտակեց ու եղեւ ոսկու ռանգ առաւ ու ըսէնց... (իր ձեռքերն իրար վրայ պտտելով) փաթաթուեց էկաւ,



ընկաւ թաքաւորի ոտների առաջ... Եղե բացուեց, բացուեց ու նրա միջից դուս էկաւ մի սիրուն, մի հուրի-մուրի աղջիկ...

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Ոգեւորուած) Հէնց դուզ քեզ նման վալլա։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Եա՜։ Ես ի՞նչ եմ նրա առաջ որ... Հա. սիպտակ ու երգէն շորերով, ձեռքերն ընչանք ըսանեղ բոյ, գօշի էլ՝ ընչանք ըստեղը... մազերն արեւի ու ոսկու նման ֆաֆուան ու երգէն-երկէն... Թաքաւորը սրան որ տեսաւ՝ մոլեց, շշմեց ու իրան կորցրեց... Մի վախտ յետ, որ աղջիկն ասում ա՝ թաքաւոր, դու շատ մենձ մենձ բաների վրայ ես ֆիքր անում, որ ըսէնց ա, արի իմ հետից։ Հա, վա՜յ, չաչն ածեմ։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Չէ, չէ հէքեաթդ վերջացրու։ Յետո՞յ։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Թաքաւորն էլ երգէն ֆիքր չարաւ, ձեռքերը մէկնեց, որ կալնի էդ հուրի-մուրի աղջկան... ամմա աղջիկը, ըսէնց, կասես, օդի մէջ ոտներով լող էր տալի ու գնում... թաքաւորն էլ նրա հետից... Նա գնաց, թաքաւորն էլ նրա հետից... Նա գնաց, թաքաւորն էլ նրա հետից...

(Այս միջոցին բեմը մի փոքր լուսաւորւում է, հեռաւոր կրակի բոցով եւ շատ հեռուից աղմուկ է լսւում)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Մի հաւաշ, թաւլանս։ (Կանչելով) Մամա՜դ։ (Նա երեւում է)։ Տես էս ինչ կրակի լոյս է։ (Մամադն իսկոյն գնում է դարպասից դուրս)։ Հա, դէ ասա... շատ լաւ, խիալդի հէքեաթ է երեւում։ Ջանս ծակծակւում է։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Հա։ Աղջիկը գնաց թաքաւորն էլ նրա յետեւից ու մի վախտ տեսաւ որ՝ սաղ երկինքը, արեգակն ու աստղերը, ըսէնց, նրա ոտների տակն են... (Ինքը մի տեսակ սոսկում է եւ բոլէ-տակէս դող է անցնում մարմնովը)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Այդ նկատելով)։ Հ՞ը ինչ էլաւ քեզ հէնց։ Հօ մրսում չես. կուզես գնանք տուն։ Ցուրտ է շատ։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Չէ չէ։ Հէքեաթիցն ա, բաղչ։ էս տեղ էլ լաւ ա։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

(Հանգստանալով) Հա։ Ես էլ եմ էդպէս։ Ցեաոյ, յեամ՛յ։

---

## ՏԵՍԻԼ ԺԶ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՄԱԴ

ՄԱՄԱԴ

(Գալով դարպասից) Հէչ։ Քեալբալայ Ալասկեարի գէղերն են էրվում։ Ինադի բան ա։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Բա էն ինչ դալմադալի ձէներ են գալիս։

ՄԱՄԱԴ

Հէչ։ Գեղականներն ամեն տանից հաւաքւում են կրակի մօտ։ Հէնց էս սհաթին հարիր հոգի կլնեն։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Լաւ, գնա։

(Մամադը գնաց)։

---

## ՏԵՍԻԼ ԺԷ

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Դէ հէքեաթդ ասա. դու ինձ լափ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Այստեղից պատմութիւնը շարունակում է մի տեսակ կցկտուր, ձայնի մէջ դողով եւ ցնցումներով)... Աղջիկը գնաց, Թաքաւորն էլ նրա ետեւից... Մի վախտ տեսաւ, որ մի բանձր բանձր սարի վրայ կանգնած ա, էն աղջիկն էլ, բուէնց, նրա առաջին... ոնց որ մի լիս, մի հրէշտակ... Թամաշ արեց Թաքաւորի վրայ ու... ժպտաց ու ձեռքով կանչեց իրա ետեւից ու ինքն առաջ ընկաւ... Թաքաւորն էլ չտեսաւ, որ ոտների տակին անվերջ անդունդ ա ու կրակ... վրա, պրծաւ էս լուսեղէնին բռնելու, թէ չէ... բիրդան...



(Այս միջոցին տասնեակաւոր հրացաններ միանուագ տրաք տրաքում են շատ հեռուից)։

ՄՈՒՐԹՈՒԶԱԼԻ ԲԷԿ

Է՞ս ինչ խաբար ա... (ասելով, իսկոյն շրջւում է, որ աւելի հեշտութեամբ ցատկի, բայց Ջավահիրը, որ աննկատելի Մուրթուզալի բէկից՝ ծոցից հանել էր օվշարին, մի ակնթարթում խրում է բէկի մէջքից, որը հագիւ ձայն հանելով՝ փռւում է երեսի վրայ)։ Վա՜՜՜խ...

---

## ՏԵՍԻԼ ԺԸ

(Կրկին հրացանների դռռոց։ Ծառաները դուրս են թափւում զինուած եւ ուղղւում են դէպի բէկը)։

ԾԱՌԱՆԵՐ

Բաղչ, ա բաղչ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Արագ գնալով նրանց հանդէպ) Բաղչը գնաց, բաղչը գնաց հաւարին... Հաւէք նրան... Մամադ, նրան կարող են սպանել...

(Ծառաներն իսկոյն դուրս են թռչում դարպասից։ Կրկին, բայց աւելի մօտ, հրացանների համազարկ։ Դուրսը բարձրանում է մի անաղին աղմուկ բեմի երեք կողմերիցն էլ։ Սաստիկ կռտրած է գիւղի ամեն կողմերում)։

ԴՐՍԻՑ ԹՈՒՐՔԵՐԻ ՁԱՅՆԵՐ

Փախէ՛ք...
Գաչ՛ըն...
Էրմանիները վրայ տալին...
Գաչըն, գաչ՛ըն...
Ով կարայ փախչի՛, ով կարայ թագնուի՛...
Վա՛յ, վա՛յ... Տներս քանդուեցի՛ն...
Վա՛յ... հարա՛յ... հաւա՛ր...

---

## ՏԵՍԻԼ ԺԹ

(Սաստիկ հրացանաձգութիւն։ Սկսում են այրուել տներ։ Բեմը հետզհետէ աւելի է լուսաւորւում հրդեհների լոյսով։ Երկու խանումները լեղապատառ դուրս գալով տանից աջ ու ձախ են փախչում շուարահար եւ յետոյ Գեօզալ խանումը իսկոյն ծածկւում է պար-

տիզի խորքերում, դէպի աջ. իսկ Նազլու-խանումը գալով նախարեն, կամենում է ծածկուել Թփերի մէջ եւ յանկարծ տեսնում է Բէկին երեսի վերայ փռուած։ Խիստ ճիչ է արձակում)։

ՆԱԶԼՈՒ Խ.

(Ճչալով) Հասէք, մուսուլմաններ, հասէ՛ք... Բադէյին սպանել են... Հասէ՛ք...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Նրա առաջ կանգնելով) Ձէնդ կտրի, թէ չէ էս ահամ'ին մէյիդդ վեր կգցեմ։

ՆԱԶԼՈՒ Խ.

Էրմանի զանջդ, դո՛ւ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Յարձակուելով վերան) Այ քեզ, այ, քեզ, այ քեզ զանջըդ... այ քեզ... (Ծակծակում է օվշարիով, որը անմիջապէս վայր է ընկնում)։

---

# ՏԵՍԻԼ Ի

## ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՄԱԴ

(Նազլու խանումին ծակծակելու ժամանակ ներս է վազում Մամադը դարպասից եւ այդ նկատելով, իսկոյն հրացանն ուղղում է Ջավահիր խանումի վերայ)։

ՄԱՄԱԴ

(Գոռալով) Էյ էրմանու աղջիկ, դու է՛լ...

(Ջավահիր խանումը իսկոյն փախչելով, աշխատում է այնպիսի շարժումներ անել, որ Մամադը չի կարողանում նշանի բռնել եւ թէեւ մի անգամ արձակում է հրացանը նրա վերայ, բայց անվնաս)։

---

# ՏԵՍԻԼ ԻԱ

## ՆՈՅՆՔ ԵՒ ՍԱՐԻԲԷԳ

ՍԱՐԱԲԷԿ

(Փողոցում գոռալով) Լուսիկ ջան, քեզ պահի, էկայ... (եւ դարպասի մէջ երեւալուն պէս, իսկոյն, նշանի բռնելով Մամադին, մի գնդակի հարուածով գետին է գլորում նրան)։ Լուսիկ, Լուսիկ...



ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Վայրկենապէս վազելով եւ ընկնելով նրա գիրկը)։ Ե՛ս եմ, Սարիբէկ ջան... քու ղուջաղումն եմ..

ՍԱՐԻԲԷԿ

Հօ եարալու չես։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Չէ, չէ, չէ...

(Հեռուից լսւում են հայ կտրիճների ձայները մի կողմից „կեց... ցե՜նք... իսկ միւս կողմից „սաղ, սաղ փոթեցէք, ոչ մէկին միք ենայի“... Միեւնոյն ժամանակ ամեն կողմերից լսւում են Թուրքերի աղէկտուր ձայներ, որոնք հետզհետէ բարձրանում են եւ երբեմն դադարում)։

ՍԱՐԻԲԷԿ

(Իսկոյն բաժանուելով Լուսիկից եւ արագ) Ո՞ւր ա բէկը. ես նրա հետ հաշիւս պէտք ա տեսնեմ։

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ես քու տեղ տեսայ... Այ, արի.. (Բերելով նախարեն եւ ցոյց տալով երկու դիակն էլ) Այ, տես։

ՍԱՐԻԲԷԿ

(Ապշած) Էս ո՞նց...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

Ես ուզեցի քեզ լայաղ նշանած ըլնեմ։

ՍԱՐԻԲԷԿ

(Աւելի ոգեւորուած) Ըհմ, քու հոգուն... (Շատ կարճ գրկելուց յետոյ, Թեւով սրբում է արագ իւր աչքերից արտասուքը)։ Չէ, սրա վախտը չի... Լուսիկ, իմ աննման Լուսիկ... սրանից եաւ դու տանը նստող կնիկ չես ըլնի... Հա. մի եավաշ .. (իսկոյն գնալով եւ սպանուած Մամադի ձեռքից ընկած հրացանը բերելով) Աւ էս մօւնը, սրա ձէնիցն իմացայ։ Սա էն Թփանքն ա, որ քեզ պէտք սինը, սրա ձէնիցն իմացայ։ Սա էն Թփանքն ա, որ քեզ պէտք ա սրպանէր... Պինդ պահի. ձեռքիցդ հէչ չգցես... Սա էլ պէտք

ա ազատի քեզ ամեն փորձանքից... Սրանից հետ մենք կրակ հետ պէտք ա գնանք Թուրքերի գեղերն սաղ ըսէնց անելու։ Մենք քեզ հետ հմի էլանք իրեք...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Չհասկանալով) Ոնց թէ իրեք...

ՍԱՐԻԲԵԿ

Այ, հմի կիմանաս... Քեզ մի աչքալիս, մի փէշքաշ անեմ...

ԴՐՍԻՑ ԿՏՐԻՃՆԵՐԻ ՁԱՅՆԵՐ

Սարիբէ՜կ, այ Սարիբէ՜կ... Սարիբէ՜կ...

ՍԱՐԻԲԵԿ

Այ հա՜մա՜յ... բաստ եմ, տղե՛րք... բաստ եմ... Էկէք...

---

## ՏԵՍԻԼ ԻԲ

### ՆՈՅՆՔ ԵՒ ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐ

(Դարպասից ողեւորւած մտնում են մի քանի հայ կտրիճներ։ Բոլորի կրծքներին, Սարիբէկի պէս, կապած են խաչաձեւ պատրոնտաշներ, ինչպէս եւ մի մի հատ մէջքներին՝ գոտիի տեղ)։

ՄԻԿԸ

Վա՜յ քու տունը շէն... Դու բաստ ես հա՛...

ՄԻՒՍԸ

Մենք մեռանք քեզ ման գալով... Ասինք չինի՞ թէ...

ԲՈԼՈՐԸ

Կեցցե՛նք...

ՍԱՐԻԲԵԿ

(Ցոյց տալով Լուսիկի վրայ) Տղե՛րք, ճանաչում էք սրան...



ՄԻ ՔԱՆԻՍԸ

(Խիստ ուրախացած եւ զարմացած) Եա, հա... քու տունը շէն... Լուսիկը չի՞...

ԿՈՍՏԱՆԴ

Ո՞նց թէ Լուսիկը... (Ընկերներին ճղելով առաջ է գալիս եւ տեսնելով Լուսիկին) Լուսի՜կ...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Վրայ պրծնելով) Կոստա՜նդ...

ԿՈՍՏԱՆԴ

(Խիստ համբոյրներով) Սա՞ղ ես, Լուսիկ ջան... սա՞ղ ես...

ՋԱՎԱՀԻՐ Խ.

(Նոյնպէս) Բօյիդ մատաղ, Կոստանդ ջան... քեզ չեն սըպանել... հանի դու ես... (Երկուսով էլ անսպասելի ուրախութիւնից լաց են լինում)։

ԱՄԵՆՔԸ

Աչքդ լիս, Կոստանդ, աչքդ լիս, Լուսիկ...

ՍԱՐԻԲԵԿ

Իմ աչքալուսն էս ա, Լուսիկ ջան... Սրանից էլ թանգ փէշքաշ չունեմ քեզ տալու։ (Տղերքանց) Հ՞ը. Մանո՛ւկ, տղե՛րք, ինչ հալի էք... ինչ արեցիք։

ՄԱՆՈՒԿ

Էլ բան չմնաց։

ՄԻՒՍՆԵՐԸ

Սաղ սրի քաշեցինք... կրակն էլ պահ տուինք... Մեր տղերքանցից շատերը հըլա իրանց բանին են։

ՍԱՐԻԲԵԿ

(Հոգով) Շատ լաւ են անում, ես նրանց ջանին ղուրբան... Մանո՛ւկ, տղե՛րք... (ցոյց տալով բէկի տունը) Բա էս...

ՄԱՆՈՒԿ

Վայ, վայ, զարթ է՜... Տղերք գնանք... (Վազում են դէպի բէկի տունը)։

ՍԱՐԻԲԷԿ

(Նրանց յետեւից) Տղերք, միրանցից հօ չէ՞ն մնացել։

ՄԻ ՔԱՆԻՍԸ

Չէ, չէ։

ՄԱՆՈՒԿ

(Դռան մէջ) Մենակ Պօղոսն ա մի քիչ խարալու։

ՍԱՐԻԲԷԿ

(Նոյնպէս) Բան չկայ։ Դէ, տղերք, ձեզ ղուրբան, տղերք... ըաէ՜նց... ձեր բանին կացէք...

(Տան խորքի կողմի լուսամուտների միջից երեւում է, որ ներսը հրդեհ է բռնկւում, իսկ Սարիբէկի մենախօսութեան ժամանակ ճեղքե-տէ սատկանում է եւ ապա մի լուսամուտի ապակիները ճայթյուններով կոտրատւում են եւ Թափւում, որից առատօրէն դուրս է գալիս կրակ եւ ծուխ։ Մինչեւ կարիճների տանից դուրս գալը հրդեհն սկսւում է երեւալ դռան եւ այս կողմի զոյգ լուսամուտներից էլ)։

ՍԱՐԻԲԷԿ

Ըաէ՜նց, տղերք, ձեզ մատաղ տղերք, ձեզ ղուրբան տղերք... ըաէ՜նց, ըաէ՜նց... էրէք, լաւ էրէք... կրակին տւէք սաղ, ամեն տեղ, ամեն բան... էլ բան մի թողէք... Ըաէ՜նց... թող էդ էլ խառնէ սաղ գեղի հետ... թող էդ ամենի մուխն ու ծուխը, կրակն ու բոցը բանձրանայ, բանձրանայ, երկնքին հասնի, լուսինի՛ն հասնի, աստղերի՛ն հասնի.... որ սա՛ղ, սա՛ղ աշխարքն էլ, սա՛ղ, երկինքն էլ հասկանան, որ էդ մուխն ու ծուխը մեր հազարաւոր հայերի, կնանքանց ու էրեխեքանց քթներից դուս էկած ծուխն ա, որ էս անաստած—անհաւատները հանեցին... (Հետզհետէ կարիճները տանից դուրս են գալիս։ Լսւում



են գիւղի զանազան կողմերից ճիչ, լաց ու կոծ, աղաղակներ եւ վայնասուն, իսկ երբեմնապէս հրացանների ձայներ)։ Ըաէ՜նց... դրանց էդ ճիչն ու գալգալը, աղաղակներն ու վայնասունը՝ մեր հայերի սրտի միջից, սրտի տակից, սրտի քոքից, հոգու խորքերից դուս էկած մղկտոցների, ախ ու վախերի մենակ արձագանքն ա... (Լսւում է „Յարա՜լա՛յ... բէգա՛թ"...) Ըաէ՜նց... ըաէ՜նց... էրվէցէ՛ք, սա՛ղ էրվէցէ՛ք՝ անէք, կոտորւեցէք՝ մարդիք, կնանիք ու էրեխեք... էրվէցէք անհաւատներ ու իմացէք թէ ինչ բան ա անմեղ մարդկանց սաղ սաղ խորովելը, տուն ու տեղից, մալ ու մուլքից զրկելն անելը... չէ՞ որ մեր հայերի արինի բուղը ամպի նման բռնել ա սա՛ղ երկինքը... (Տանից լսւում է հրդեհի խիստ բռնկումից առաջացած դժոխային ձայներ)։ Ըաէ՜նց... ըաէ՜նց, վառւէ՛ք, լա՛ւ վառւէք, ոյ կրակ... Ըաէնց ճթճթա, ըաէ՜նց դրդա, ճթճթալով մեռնեմ... քիւլ ու մոխիր չինէ... ըաէնց էլ պէտք ա անես սա՛ղ, ինչ քան կայ էն թուրքի գեղերն էլ, որ հայերի արինն են խմել, որ հայերի տանջանքներից հլամ չեն կշտացել... թող էդ ճթճթոցի ու գզգզոցի ձէնը գնայ, հասնի սա՛ղ աշխարքի չորս բոլորքը, որ ամէնքն էլ, ամեն տեղ էլ, ամեն ազգ ու միլլէթ էլ իմանան, թէ հայն էլ սիրտ ունի, հայն էլ թասիբ ունի, հայն էլ իր կռներում զօրութ ունի՝ իր ար-նախում թշնամու աչքը, թշնամու լեղը ու թօքը հանելու հըմար... Թող ամէնքն էլ իմանան, որ տղանին՝ իր զէնք վեր ընկած տեղը՝ չպէտք ա բռնեն, չանքի նա վեր կթռչի տեղից ու սաղ՝ չորս բոլորքը տակն ու վրայ կանի... Դէ՜, տղերք, ջա՜ն տղերք, գնա՜նք տղերք... Գնա՜նք մեզ հետ, դու էլ Լուսիկ, մեր հայերի խնալը հանենք... Հայերի ալի արտասուքները մեր պէնքերին են սպասում... Գնա՜նք...

(Բէկի տան մնացած բոլոր լուսամուտների ապակիներն էլ հրդեհի զօրաւոր բռնկումից խիստ ճարճատիւնով կոտրատւում եւ Թափւում են, որոնց միջից, ինչպէս եւ դռան, կրակն ու բոցը, նաեւ

ծուխի քուլաները՝ սեւ, խիտ ամպերի նման դուրս են գալիս եւ ծածկում ամբողջ բնակարանը):

ԱՄԵՆՔԸ

(Հրացանները բարձր շարժելով) Գնա՜նք, գնա՜նք... կեց... ցե՜ն...ե՜նք...

(Բոլորեքեան գնում են):

(Բեմը լցւում է ծուխով եւ կրակով):

ՎԱՐԱԳՈՅՐ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Би...
7/XI 1922
ЕРЕВАН, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԱՊՈԹԵՕԶ

Բեմը ներկայացնում է գարնանային հրաշագեղ և ծաղկափթիթ մի տեսարան:

Աջ և ձախ՝ գալար նորաբողբոջ կանաչով զարդարուած ծառեր:

Մէջ տեղում բարձրանում է առատ կանաչով և ծաղկունքներով մի փոքրիկ բլրակ, որի շուրջը հաւաքուած են զանազան հասակի եւ սեռի հայ գիւղական ժողովուրդը, իրենց՝ աչքի ընկնող և գոյնզգոյն՝ զգեստներով: Սրանց հայեացքներն ուղղուած են դէպի բլրակը՝ իրենց կտրիճների վերայ:

Բլրակի լանջին՝ բարձրում՝ կանգնած են տասից աւելի հայ կտրիճներ, (որոնց մէջ երեւում են քնքուշ սեռին պատկանող մի երկու երեք դէմքեր էլ), ոտից գլուխ զինուած. ձեռքներին էլ՝ փողերից բռնած մի մի հրացաններ, որոնց կոթերը դրուած են գետնի վերայ: Սրանք էլ իրենց հայեացքները դարձրած են դէպի բլուրն ի վեր, այնտեղ կանգնած Սարիբէկի և Լուսիկի վերայ, որոնք նոյնպէս զինուած են ոտից գլուխ և նոյն ձեւով բռնած ունեն մի մի հրացաններ:

Բլրակից վերև, օդի մէջ, սաւառնում է պահապան հրեշտակը լուսեղէն, ալխատակ երկարաքղանցք հագուստով և սև սաթի պէս փայլուն, երկայն մազերով: Սա՝ ձեռքերը պարզած դէպի վար և աչքերն ուղղած դէպի վեր՝ իբր հովանաւորում, պահպանում է հայ ժողովրդին և նրա համար աղօթք է վերառաքում առ Բարձրեալը:

Բլրակի յետեւից երեւում է հրաշատեսիլ Մասիսը իւր ձիւնափայլ գագաթով՝ առաւօտեան-գմբարար և ջինջ երկնքի տակ. Իսկ գագաթի ծայրին ցոլանում են արեգական ծագման առաջին ճառագայթները:

ՎԱՐԱԳՈՅՐ

ՎԵՐՋ

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ԵՒ ՌԵԺԻՍՕՐԻ ՀԱՄԱՐ

Առաջ քան այս պօթէօզի սկսելը՝ նախապէս երաժշտութիւնը նուագում է Մ. Թաղիաթեանցի «Տէր՝ կեցո դու զհայս» օրհներգի առաջին տան եղանակը ամբողջապէս՝ նկմալեանի երաժշտութեամբ (այսինքն բոլոր եօթ տողերինն էլ) և ապա կրկնում է նորից միևնոյն նուագը (այսինքն նոյն առաջին և երկրորդ տողերի եղանակը) և երբ հասնում է երրորդ տողին—«կեցո զհայս» սկսելուն՝ վարագոյրը բարձրանում է և պօթէօզը ներկայացնելուց յետոյ՝ իջնում է այն ժամանակ, երբ երաժշտութիւնը վերջացնելու վերայ է «կեցո զհայս, կեցո զհայս»: Օրհներգի այս հատուածի վերջացնելով և սորա հետ միաժամանակ վարագոյրի իջնելով, անմիջապէս դադարում է և երաժշտութիւնը, առանց շարունակելու չորրորդ և միւս տողերի եղանակը:

---

28 Նոյեմբերի 1905 թ. Երևան

# ԳԻՒՄԻՍ ՄԷՋ ԵՂԱԾ

# ԲԱՌԵՐԻ ԵՒ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## Ա

Ախր—չէ՞ որ, ո՛չ ապաքէն. вѣдь, же.
Ախր—վերջ.
Ամմա, ամա—բայց.
Այնալու—պլպօղի հրացան.
Ալբէալը—իսկոյն և եթ.
Աղրաթդ խէր—վերջդ բարի. բու տունը չէն.
Արխէյին—անհոգ.
Ազրայիլ—հոգէառ հրեշտակ.
Ալլահ—Աստուած.
Աղա—պարոն.
Աղալար—կալուածատէր.
Արսըզ—աներես.
Աստաֆրուլլա—քաւ լիցի. Տէր մի արասցէ.
Աղամ—աղաս, պարոնս, տէրս.
Աշպազ—խոհարար.
Արէգ—ճաշ.
Ալով—բոց.
Արաժան—հում կաթի երեսից քաշած սէր.
Ասլան—առիւծ.
Արար աշխարք—բոլոր աշխարհ.
Ահէլներ—չափահաս մարդիկ (տարիքով).
Այվան—սրահ. մի ծածք, որի մի պատի տեղ սիւներ.
Ախմախ—յիմար, ապուշ.
Արան, արանումը—դաշտավայր. դաշտավայրում.
Աթադան բաբադան—հայրերից պապերից.
Այան թայան—աւար կողոպուտ.
Աֆաթը կտրել—ճնշել, ուժասպառ անել, հոգի հանել, не давать проходу.
Անջաղ—հազիւ հազ.
Աման—անօթեղէն.
Ամման կամ աման—մի բացականչութիւն, որով արտայայտւում է աղաչանք, խնդիրք, օգնութիւն և երկիւղ.
Ալիշ վերիշ—առ և տուր.
Արսո—ամօթ. ամօթխածութիւն.
Ակուչկէն—լուսամուտ.
Ախունդ—ախունդ. թուրք հոգևորականի տիտղոս.
Աֆֆարիմ—բրաւօ. հրաշալի. կեցցես.

## Բ

Բույուր—համեցէք. հրամայեցէք.
Բաթմասսար—անհաւատ.
Բէխաբար—անտեղեակ.
Բաշուստա—գլխիս վրայ.
Բէկ, բագյ,—բէկ, արտօնուած դասակարգին պատկանող մի անձն. կալուածատէր.
Բերդանկա—հրացան բերդանի սիստէմով.
Բեզարել—յոգնել.
Բէգլյրաթ—էնէրգիա, պատկառանք, աշխատանք և ինքնասիրութիւն ունեցող մի անձն. (խիստ վիրաւորական խօսք).
Բալի—այո, ի հարկէ, ինչպէս. ինչ, համմէ՞.
Բաս բաս—այո, այո, ինչպէս չէ. ի հարկէ, ապա ապա՞.
Բէհայեա—անամօթ.
Բէնամուս—անպատկառ.
Բաստա—բաւական է.
Բայղաղ—դրօշակ.

Բոզբաշ—բոզբաշ. (ասիական կերակուր).
Բուլկի—ֆրանսիական սպիտակ հաց.
Բոյ ու բուսաթ—հասակ և կազմըւածք.
Բա—ապա՛.
Բալէս—որդեակս.
Բայղուշ—բու.
Բիրդան—միանգամից. յանկարծ.
Բօլ ա—բաւական է.
Բէթար—աւելի վատ.
Բութուլգէն—գլխու չիբը.
Բարութ—վառօդ.
Բիլլա—(երդումն).
Բալքի, բալքամ—գուցէ թէ.
Բուշարթ—միայն թէ.
Բոխախ—գերակզակ, ծնօտի տակի գեր (չաղ) տեղը.
Բաթ միլլէթ—վատ ազգի.
Բէյիննիրդ—ուղեղներդ.
Բարաքեալլա—ապրի գլուխդ. կեցցես.
Բաղշլա—ներիր, բաշխիր. կբախշես.
Բինա, բինէն—բոյն, սկիզբը. ձեռներեցութեան գլուխը.
Բույուրն—համեցէք.
Բուզ—գոլորշի.

## Գ

Գեամի—նաւ.
Գանդար—շաքարէ ջուր.
Գեանջա—Գանձակ, Ելիսաւետպօլ.
Գիւրջիստան—վրաստան.
Գեօզում ուստա—աչքիս վրայ.
Գուբերնատ—գուբերնատօր, նահանգապետ.
Գեներալ գուբերնատ—ընդհանուր նահանգապետ.
Գիւլլա, գիւլլէբանց—գնդակ, գնդակների.
Գվաթ, գվաթ—ոյժ, մարմնական կարողութիւն.
Գատովլիս—պատրաստել.
Գիւլը—վարդը.
Գիւլլալամիշ—գնդակահար.
Գլավա—գլուխ, քաղաքագլուխ.
Գիր—նամակ, թալիսման.
Գեղարդեալմազ—այնպիսի տեղ, որից վերադառնալը անկարելի է.
Գեօզն իմանաս—գերեզմանն իմանաս.
Գիւլի չիթ—կարմիր ծաղկաւոր չիթ.
Գեօրա—համապատասխան.
Գաշըն—փախէք.
Գրողի ծոցը—մահի ծոցը.
Գաշանկ—գողարիկ, գեղեցիկ.

## Դ

Դաստա—խումբ,խմբովին, փունջ.
Դրուստ—ուղիղ, ճիշտ.
Դալբաղայլին—քարուքանդ, տակն ու վրայ, յաք ու ցրիւ.
Դուքան—խանութ,лавка,магазинъ.
Դուքանդար—խանութատէր.
Դուզ, դզուել—ուղիղ, ուղղուել.
Դինիցս դօնմիշ էլած ընեմ—կրօնըս ուրացած ընեմ.
Դիլ—լեզու.
Դունչ—ունչ. рыло, морда.
Դովրան—ապարէզ.
Դարվիշ—դարվիշ. մահմեդական կրօնական շրջիկ հոգևորական.
Դինսըզ—անհաւատ, անկրօն.
Դօշերի, դօշ—կուրծք. լանջք.
Դհից—կողմից.
Դանա—հատ.
Դհա—էլի, այլեւ.
Դինջութիւն—հանգստութիւն.
Դէսը—այս կողմը.
Դէնը—այն կողմը.
Դուքան բազար—շուկա, բազար.
Դօնդուզ դարան—վարազ.
Դին այրի դարդաշ—հաւատով զատ եղբայր.
Դամն առնել—թէյի վրայ եաման



Ջուրն ածելուց յետոյ՝ սպասում են, որ գոյնն ու համը գայ.
Դադ բեդադ—վայ կանչել.
Դադարգին—տարագիր.
Դէմաղ—ասել.
Դուշման—թշնամի.
Դովշան—նապաստակ.

## Ե

Եարաղ ասպար—զէնք ու զրահ.
Եա՛—մի թէ՛ (զարմացական բացագանչութիւն).
Եա՛ Ալի—ո՛վ Ալի.
Եա Հազրաթ Աբբաս—ով Հազրաթ Աբբաս.
Եա Մուրթուզա Ալի—ով Մուրթուզա Ալի.
Եամնջի—աւարայ, անգործ, շրջմոլիկ.
Եար—սիրական, սիրուհի.
Եարա—վէրք.
Եախա—օձիք.
Եախից ձուար հուարել—դադարել վիճաբանութիւն անել.
Եանի թէ—իբր թէ.
Եա՛ն...—միթէ՛ է...
Եանը—կողմը.
Եաման—խիստ վատ.
Եարալու—վիրաւոր.
Եավաշ—կամաց. սպասիր.
Եախշի—լաւ.
Եփ—երբ.
Եափոնները—ճապօնացիք.
Եանղու—խիստ ծարաւ, կրակ.
Եալանչի փահլեան—լարախաղացի տակի խեղկատակը:

## Զ

Զապաս—պահեստ.
Զապիսկա—կարճ նամակ, տոմսակ.
Զառ—դիպա, ոսկէթել.
Զառբաբ—ոսկէթել գործուածք, կտոր.
Զատ—բան, իր.
Զուլում—դժբախտ պատահար.
Զխկում—վայրի խաղող. (վիրաւորից խօսք),
Զուզա—շների երկայն ու բարակ ոռնոց.
Զարզանդեցս—սարսափեցս.
Զարբ—թափ, ոյժ.
Զռռում են—յաղթում են, զօրում են.
Զահրումար—օձի թոյն, (վիրաւորական խօսք).
Զահմաթ—նեղութիւն.
Զահլա տանել—համբերութիւնից հանել, զզուեցնել, надоѣдать.
Զավօդ—գործարան.
Զանջաֆիլ փարվարիարի—զանջաֆիլի մուրաբա.

## Է

Էրմանիներ—հայեր.
Էնբաշաէն—արշալոյսին.
Էկզէկուզ—էկզէկուցիա.
Է վալլա՛—ով Աստուած, Աստուած տայ.
Էլա—գնէ.

## Ը

Ընչանք—մինչև.
Ընչի—ինչու.

## Թ

Թոփ—թնդանօթ.
Թամըզ—մաքուր.
Թազա—նոր.
Թալան—կողոպուտ.
Թասիբ—ինքնասիրութիւն ազգային կամ անյատական, ընկերոջ կողմ պահել, կողմապահութիւն.
Թոփ էլէք—հաւաքեցէք.
Թելեր—հեռագիրներ.
Թաւուր—տեսակ.
Թադարէք—պատրաստութիւն.
Թէզ—շուտ.
Թայդաշներ—հասակակիցներ.

Թւանք—հրացան.
Թաղէքանցից—Նարեկից.
Թամամեցրէք—լրացրէ՛ք.
Թալաք—թակարդ.
Թէլեգրաֆ—հեռագիր.
Թամամ—լրիւ. լիուլի.
Թաք—միայն.
Թախտ—գահ.
Թամաշ—նայել.
Թաւլան—բաղէ.
Թութաջաղ—ունկն, բռնելու տեղ.

Ժ

Ժարխտ—տապակել.
Ժարովնէն—տապակելու տեղը խոհանոցում (պլիտայի մէջ շինած).

Ի

Իսկեանջարի—իսկեանջարի, զովացնող խմիչք, որը պատրաստւում է քացախով, շաքարով և ջրով.
Իթիլ ջահաննամա—կորիր դժոխքը.
Իրեան—Երևան
Իստի—տաք.
Իմանըրդ—անհոգի.
Իշալլահ—բանն Աստուած.
Իրան—պարսկաստան.
Իգանիք—այգիներ.
Իզը—հետքը.
Իրիկունը—երեկոյեան.
Իգիթ—կտրիճ.
Իլաջ—ճար. հնար.
Ինգլիզ—Անգլիացի.
Իզն ու թոզը—հետքն ու փոշին.
Ինադ—վրէժ.
Ինսաֆ—խիղճ, խղճմտանք.
Ինջիլ ղուրան հախկը—Աւետարանն ու ղուրանը վկայ:

Լ

Լիմօնադ գազ—լիմոնադ գազէս.
Լուլաքեաբաբ—դմակի հետ ծեծած միս համեմունքներով և խորոված լայն շամփուրի վրայ.
Լափ—բոլորովին.
Լայեղ—արժանի.
Լաղաթ—բաւականութիւն, ճաշակ.

Խ

Խաբար—լուր. տեղեկութիւն.
Խան—խան, իշխան.
Խարաբ—փչացած, վատ.
Խէր, խէրով—բարի, բարով, բարեք, յաջողութիւն.
Խասա—ծաղկեայ կտոր կերպասէ.
Խաթա—փորձանք.
Խալխ—խուժան. հասարակութիւն. մարդիկ.
Խի՞—ինչո՞ւ.
Խուրդասի—մանրունք.
Խանչալ—դաշոյն, խէնջար.
Խալի—գորգ.
Խարջ—հարկ.
Խաթր—պատիւ.
Խօշ—դուր գալ, քէֆ.
Խալաթ—ընծայ, պարգև.
Խանում, խանումլար—տիրուհի, տիրուհիներ.
Խորթլամիշ—խրանել.
Խալխ խայտառակութիւն—ամօթալի խայտառակութիւն.
Խալիֆայութիւն—Իսլամութեան գլուխը. խալիֆա.

Կ

Կաղէթներ—լրագրներ. օրագրներ.
Կուխնէն—խոհանոցը.
Կալպակ—սպիտակ գլխարկ, որ դնում են խոհարարները իրենց գլխներին կերակուր եփելիս.
Կառ ու բէգեառ—ПОВИННОСТЬ. գիւղական անվարձ մշակութիւն դէպի տէրութիւնը և կալուածատէրի համար.

Հ

Հէչ—ոչինչ.
Հէյվան—անասուն.
Համամ—բաղանիք. բաղնիս.
Համեշա—միշտ. ամեն ժամանակ.



Հօ—ВѢДЬ, չէ՞որ.
Հլա, հալա—դեռ.
Հալբաթ—երևի, ի հարկէ.
Հազարաթ—հազարաւոր մարդիկ.
Հարայ հուրայ—աղմուկ գոռգոռոց.
Հանաք—կատակ.
Հէնց—պէս, КАКЪ-ТОЛЬКО.
Հախից գալ—հոգին հանել, յաղթանակել.
Հեղճ—խեղճ
Հեսիք—բաւական համարել.
Հազիր—պատրաստի, ի դէպ, КСТАТИ.
Հալիոր—ալեոր.
Հալա հալայ ա—անտէրութիւն է:
Հարաքեաթ—էնէրգիա, մարմնական կարողութիւն, ույժ, զորութիւն.
Հաւար—օգնութիւն, աղաղակ, ТРЕВОГА.
Հանդ, հանդւոր—արտ, արտերում գործ անեցող, արտ մշակող.
Հալ—դրութիւն.
Հեղդենք—խեղդենք.
Հայիֆ—ափսոս.
Հար—պիլիւլ, դեղագնդակ.
Հալալ—արժանի.
Հէսար—հաշիւ.
Հուրի-մուրի—հրեշտականման յաւէրժահարս.
Հունար—վարպետութիւն, հնար.
Համշարի—երկրացի պարսիկ:

Ղ

Ղալմաղալ—աղմուկ.
Ղուրբան—զոհ, մատաղ.
Ղմիշ—աղօթք անել.
Ղրկել—ուղարկել.
Ղօնչուն—զօրք, բանակ.
Ղայեա. ղայէք—ապառաժ, ապառաժի մեծ կտորներ.
Ղազի—ղազի, տեղական մահմեդական հոգևորականութեան գլխաւոր.
Ղո՞րթ—իրա՞ւ, ճիշտ.
Ղուրան—ղուրան, Մահամմէդի օրէնսգիրքը.
Ղօչչաղ—քաջ, ախոյան, МОЛОДЕЦЪ.
Ղուլլուղ—ծառայութիւն, սպասաւորութիւն.
Ղայֆա—սուրճ.
Ղարաֆիլ—մեխակ ծաղիկ, ГВОЗДИКА.
Ղալբութիւն—կեղծութիւն, անշիտակութիւն.
Ղուշ, ղշի—թռչուն, թռչնի.
Ղասդի—դիտմամբ, դիտութեամբ.
Ղազար—պատիժ.
Ղարալթու—ստուէր.
Ղանջըղ—քած, էգ, (շան մասին):
Ղարաղուշ—սև թռչուն, սև բազէ.
Ղալաթ—սխալ. (վիրաւորական բառ).
Ղանդ—շաքար.
Ղուջաղում—գրկում, գրկի մէջ.
Ղուաթ—ույժ, մարմնական կարողութիւն.

Ճ

Ճոթ—կտոր, չթեղէն, СИТЕЦЪ.
Ճամբու—ճանապարհ.

Մ

Մէշիդ—մզկիթ.
Մէջլիս—ժողով, հիւրասիրութիւն, ժողոված հիւրեր, կաճառ, կացորդ.
Մարալ—եղջերու.
Միլլէթ—ազգ, ցեղ.
Մուսուլման—մահմեդական.
Մուրաբա—ВАРЕНЬЕ.
Մալադէց—կեցցես, ղոչչաղ.
Մուռտառ—պիղծ, կեղտոտ.
Մասար հախկը—հաւատս վկայ.
Մասխարայութիւն—ծաղրածութիւն, կատակ.
Մահալ—գաւառ.
Մօլլա—մօլլա.

Մասալամ—գորօրինակ, ասենք թէ, ասել է թէ.
Մատահ—հազւագիւտ իր. անթի-քա.
Մուն—(ինչպէս օրինակ տուն ու մուն, ջուն ու մուն, բուն ու մուն), սա մի ոճ է, որ ընդունւած է հասարակ խօսակցութեան մէջ.
Մուհտաջ—ապաստան, ապաւէն.
Մուշտարի—առևտրի յաճախորդ.
Մուրազ—նպատակ, իղձ, տենչանք. ուխտ.
Մօհլաթ—ժամանակ, միջոց.
Մէյդան—հրապարակ.
Մուջասամ—կանանց գլխի մեծ թաշկինակ.
Մուղայթ—զգոյշ, պահապան լինել,
Մազբուտ—գրկանք.
Մալ—ընչաւոր կարողութիւն, տաւար և այլն.
Մուլք—կալուածք.
Մհաթալ. մաթալ—շւարած, մոլորած մնալ.
Մութաքա—մութաքա, գլանաձև բարձ.
Մասսար—հաւատ, կրօն.
Մետրանպաժ—գրաշարների վերայ հսկող.
Մէդրէսէ—հոգևոր ուսումնարան.
Մահրաբբա—բրաւօ, կեցցես.
Մուրախաս—ազատ անել, արձակել, ազատել.
Մուժիկ—ռամիկ.
Մէյիդ—դիակ.
Մարգեմուշ—մկնդեղ, МЫШЯКЪ.
Մութռուբ—բոշա, անտուն անտեղ ցեղ. ЦЫГАНЪ.
Մատաղ—զոհ.

Ն

Նամազ—աղօթք.
Նախօշ—տկար.
Նա գէմազ— ինչ ասել է.
Նախիր—հօտ ոչխարի և տաւարի.
Նաչալնիկ—գաւառապետ.
Նամէստնիկ—փոխարքայ.
Նանի, նան—մայրիկ, մայր.
Նալօղ—տուրք.
Նաֆաս—շունչ.
Նահլաթ—անէծք, նզովք.
Նամուս—պատկառանք.

Շ

Շաքեար—շաքար.
Շհար—քաղաք.
Շակերտ—աշակերտ.
Շարաֆ—տուգանք.
Շուքիւր—փառք.
Շաքի—Նուխի քաղաք.
Շիրվան—Շամախի քաղաք.
Շառ—չարութիւն, սուտ.
Շիրին—քաղցր.
Շէյիդ—նահատակ, մարտիրոս.
Շահի—5 կոպէկանոց դրամ.
Շէյթան—սատանայ.

Ո

Ուշաղլար—տղայք, տղերք.
Ուպրավա—քաղաքային վարչութիւն.
Ուզուր—շնորհ.
Ումրը—կեանք.
Ուչիլիշչի—ուսումնարանի.
Ունք ու բունք—ամեն ինչ. ամեն մանրամասնութիւն, ամեն գաղտնիք, ծակ ու ծուկ.

Չ

Չունքի—որովհետև.
Չայ—թէյ.
Չախսէյ—կրօնական սուգ, շախսէյ.
Չոլ—անապատ.
Չուգուն—չուգուն, կարծր և կոտրուող երկաթ.
Չախմախ—կայծաքար, հրահան քար.
Չանք, ընչանք—մինչև.
Չարէք—քառորդ.



Չիբուխ—ծխաքաշ, ծխամորճ.
Չարալաշմիշ—խիստ չարչարւել ապաւելու համար, թաւալգլոր, трепетать.
Չարչի խուրդաչի—մանրունք ծախող, որն ամեն ինչ իր վերայ ունի.
Չարսաբ—սաւան (այն, որով ասիացի կանայք ծածկւում են տանից դուրս գալիս).
Չանգալ—կարթ, կողճայ, կռնանց զարդ.
Չոլամիշ—ցաւով խեղդւել, ցաւ ուտել, գլխկւել, սատկել.

Պ

Պօլիցիա—ոստիկանատուն.
Պոյ պոյ—զարմացական բացական-չութիւն.
Պրիստաւ—գաւառապետի կրտսեր օգնական.
Պետրպօլ—Պետերբուրգ.
Պօվար—խոհարար.
Պրակուրօր—դատախազ.
Պօլիցմէյստր—ոստիկանապետ.
Պլիտա—կասկարայ. խոհանոցի վառարան՝ յատկապէս կերակուրներ եփելու համար.
Պրծայ—վերջացրի.
Պրօվակացիա—թշնամութիւն սերմանել. գրգռել.
Պաղավատ—մատուցանել.
Պրճոկել—պոկոտել. կտրատել.
Պրիկաշչիկ—գործակատար.
Պուճուր—փոքրիկ.
Պարախօդ—շոգենաւ.

Ջ

Ջումա—տօն օր. կիրակի.
Ջիգեար—լեարդ կամ թոք.
Ջուռ—տեսակ.
Ջահաննամ. ջահանդամ—դժոխք.
Ջէյրան—այծեամ. այծեմնիկ.
Ջանում—հոգիս.
Ջանդարմ—ժանդարմ.
Ջանընները—հոգիները.
Ջինս ցեղ.
Ջանաւար—գազան.
Ջաննաթ—արքայութիւն.
Ջամահաթ—ի մի գումարւածներ. ժողովուրդ.
Ջանգիւլում—ժողովրդական վիճակախաղի երգ. որ տեղի է ունենում Համբարձման օրը.
Ջահէլներ—15-25 տարեկան հասակ ունեցողներ.
Ջանի ջան—հոգէ հատոր.
Ջան—հոգի.
Ջանումսան—հոգիս ես
Ջավահիր—գոհար
Ջհանդամեցէք—կորէք դժոխքը.
Ջհուդ—հրեայ.
Ջուխտ, ջխտին—զոյգ. զոյգին.
Ջոփհարդար—դամասկեան երկաթ.
Ջէր—գրպան.

Ռ

Ռադ իլ—հեռացիր կորիր.
Ռէվօլ, ռէվօլվերներ—արագաձիգ ատրճանակներ.
Ռանգ ռուշգ—երեսի գոյնն ու դէմքը.
Ռաստ գալ—հանդիպել. պատահել.
Ռահմ—ողորմ. ողորմութիւն.
Ռազի—համաձայն.
Ռանգ—գոյն.

Ս

Սէյիդ—սէյիդ. մհամմէդի ժառանգ.
Սէյիստան—պարսկաստանի երկըրներից մէկը.
Սարեր—լեռներ.
Սուրայի—յօդւածի.
Սհաթ—ժամ. ժամացոյց.
Սաղ—ողջ. բոլոր.
Սարինդըր—զով է. սառն է.
Սօղրա—յետոյ.

Սարգարութիւն—փոխարքայութիւն
Սամթաշմիշ—ձեռ տանել. затрагивать, задѣвать.
Սալզամթ—գինուոր.
Սարերի փշերի ծերերն ով է որել—առակաձև հեգնութիւն, որ նշանակում է՝ ինչի վերայ ես այդպէս խոր մտածում.
Սիլահ—զէնք.
Սուրու—ոչխարի հօտ.
Սըթար—նիւթական ինչ, դրամ.
Սաղ սալամաթ—ողջ առողջ.
Սալամ ալէկում—երկրպագութիւն Աստծուն.
Սուլէյմանի—սուլէմա.
Սախկըզ—ծամօն. մաստակ. жевачка.
Սիպիչկա—լուցկի. спички.
Սասն քեառ—ձայնդ կտրիր.
Սըռ—գաղտնիք.
Սաջուղար—աչ խոր կաթսայ տապակելու համար, թաւայ, сковорода.
Սարքեան—բաժակ.
Սօյլամաղ—չխօսող.
Սազել—յարմարիլ, վերան լաւ գալ. գեղեցիկ ձև.

## Վ

Վալլա—Աստուած է վկայ.
Վայ աման—ցաւ կամ երկիւղ արտայայտող բացագանչութիւն.
Վաթան—հայրենի երկիր.
Վինաւատը—մեղաւոր
Վից գուբերնատ—փոխ նահանգապետ.
Վէժ անել—կախ գցել, ապուշ կըտրել.
Վուրըն—խփեցէք.
Վուլկան—հրաբուխ.
Վասսալամ—վերջացաւ գնաց.
Վախտ—ժամանակ.
Վէջը չի—փոյթը չէ, փոյթը.

## Տ

Տօնյուզ—ռաձիկ.
Տօլմա—տօլմա, տախական կերակուր.
Տկիցդ գինու հոտ ա փչում—այսինքն բերնիցդ գինու հոտ է փչում. հարբած ես.
Տոպրակդ—ուզում է ասել՝ փորդ.

## Ր

Րազբօյնիկ—աւազակ.
Րէյս, ռէյս—գլխի մեծ, գլխաւոր.

## Ց

Ցախ—վառելափայտ.

## Փ

Փիւ, փիահ—արհամարհական կամ զարմացական բացագանչութիւն. փիւ, փիահ.
Փիս—վատ.
Փոչտով—փոստով, по почтѣ.
Փատիլկա—ծրար, կապոց.
Փէշ—քղանցք.
Փանջ—դատարկ, ձեռք.
Փլաւ—փլաւ. տախական կերակուր, խղով և բրինձով պատրաստած.
Փիլաքեան—սանդուղք.
Փողմիչ—ջնջել.
Փայ—բաժին.
Փէշքաշ—ընծայ, պարգև.
Փիրն ա—սուրբն է, վարպետն է, հրեշտակն է.
Փէշակ—արհեստ.

## Ք

Քեաֆուրներ—հեթանոսներ, անաստուածներ.
Քիսա—դրամի փոքրիկ տոպրակ.
Քիտացու—կտոր, որից պիտի կարել այդ տոպրակը.
Քա դէ եսիմ է—ես ինչ գիտեմ է. անճարութեան բացագանչութիւն.
Քեալլագեօշ—քեալագեօշ, շորաթանով եփած կերակուր.



Քեասիբութիւն—չքաւորութիւն.
Քիւլ—մոխիր.
Քափ ու քրտինք—խիտ քրտինք.
Քուֆթա—կոլոլակ մսից. քուֆթա. (տախական կերակուր).
Քիլիսա—եկեղեցի.
Քմ—այս բառով դիմում է կինը իւր մարդուն կամ կինը կնոջ.
Քուչա—փողոց.
Քեօրլուղ—ճնշումն, նեղութիւն.
Քէֆ—ուրախութիւն.
Քի—իբր, (միջանկեալ մի բառ).

## Օ

Օյիններ—խաղեր, ֆօկուսներ.
Օտպուսկ—արձակուրդ.
Օրեա օրեա—աշխարհէ աշխարհ.
Օվչարի—դաշնակ, փոքրիկ դաշոյն.
Օյին հանել—խաղ խաղալ.
Օրթում—երդում.
Օղլուշաղ—ընտանիք, կին.
Օթախ—սենեակ.

## Ֆ

Ֆիքր—միտք, մտածմունք, կարծիք.
Ֆարսստան—պարսկաստանի մի երկիրը.
Ֆօրմ. փորմ—կաղապար.
Ֆասօն—ձև.
Ֆող—հող.
Ֆրանդ—տեղը բերել.
Ֆահլա—մշակ, բանուոր.
Ֆանարչի—լապտերավառ.
Ֆիդահի—հայդուկ, ֆիդահի, ազգային կամաւոր զինուոր.
Ֆանդ—հնարք.
Ֆլան—այս ինչ (մարդը կամ տեղը).
Ֆոֆուան—փայլուն.

# ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

| Երես. | Տող վերևից. | Տող ցածից. | ՍԽԱԼ | ՈՒՂԻՂ |
|---|---|---|---|---|
| 3 | 12 | — | զոյգ. | զույգ |
| 9 | — | 1 | խափ | խոփ |
| 11 | — | 15 | տանուհինգ | տասնուհինգ. |
| 13 | — | 13 | ադա. | աղա. |
| 14 | 8 | — | մեզաւորներին | մեղաւորներին |
| — | 14 | — | տանել, | տանել, |
| 16 | 16 | — | թաւոր | թաւուր |
| 36 | — | 1 | մէկում: | մէկը: |
| 48 | — | 1 | թաւոր | թաւուր |
| 54 | — | 9 | կարողայ մանի՝ | կարող ա մանի՝ |
| 91 | — | 10 | վաւրն... վաւրն... | վուրըն... վուրըն.. |
| 93 | 7 | — | ուժասթափ է: | ուժասպառ է: |
| 94 | — | 5 | վռւրն... | վռւրըն... |
| 95 | 2 | — | Վռւրն, | Վռւրըն, |
| 100 | — | 7 | բան է: | բան է: |
| 101 | — | 1 | իրնից | իրենց |
| 120 | — | 3 | այս | այս |
| 124 | — | 15 | փոքրկ | փոքրիկ |
| — | — | 2 | իշնումն է: | իջնումն է: |
| 132 | — | 7 | Նխարգային այխույժով | Նաարգային աշխույժով |
| 138 | — | 3 | կորիձներ | կորիճներ |
| 146 | 15 | — | քորլուղ ա տալիս: | քեօրլուղ ա տալիս: |
| 153 | 15 | — | երկիւղ | երկիւղ |
| — | — | 1 | խարատում: | խարատում: |
| 161 | 18 | — | գրկից | գրկից |
| 162 | 11 | — | թէզ: | թէգ: |
| 169 | 11 | — | աղէկատր | աղէկտուր |
| 170 | 8 | — | ՁԱՅՑԵՐ | ՁԱՅՆԵՐ |

Բացի վերևում յիշածները, որոնք կարող են գրւածքի միտքը փոխել և թիւրիմացութիւններ պատճառել, սպրդել են նաև շատ սխալներ. օր. քրիստոնեայ, մարդիք, նխարգային, բոյուր և այլն և այլն, որոնց համար ընթերցողի ներողամտութիւնն է հայցւում:

## ԳՐԻԳՈՐ ՃԵՂԻՆԵԱՆԻ
## ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐԸ

Ր. Կ.

ԽԷՉՕՅԻ ԹՈՒՋԸ
փարս-վօդևիլ մէկ արարուածով, գինն է . . . . — 50

ՄՕԴԱ
կոմեդիա մէկ արարուածով, գինն է . . . . . . — 50

ԿՌՈՒԱՊԱՏՃԱՌԸ ԵՍ ԷԻ
կօմեդիա վօդևիլ երկու արարուածով, գինն է . . . — 50

ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՉ կամ ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ
կատակերգութիւն մէկ արարուածով, գինն է . . . — 50

ՍԷՐ ԿԱՄ ՄԱՀ
պիէս մէկ արարուածով, գինն է . . . . . . . — 50

ՋՐԿԱՆՔԻ ՋՈՀ
դրամա չորս գործ. և վեց պատկերով, գինն է . . — 80

ՉԱՐՔ
կատակերգութիւն մէկ արարուածով
ՍԱՐՍԱՓԵԼԻ ԽՐՈՂՈՒԹԻՒՆ
(ընտանեան պատմութիւն)
} մէկ գրքում գինն է . . 1 —

ՎԱՅՐԵՆԻ
կատակերգութիւն մէկ արարուածով, գինն է . . . — 50

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ
դրամա հինգ արարուածով, գինն է . . . . . . 1 —

ԴԱՄՈԿԼԵԱՆ ՍՈՒՐ
դրամա երեք արարուածով, գինն է . . . . . . . — 75

ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ
էպիզօդներ հինգ արարուածով և ապօթէօզով 1905 թ.ւի հայ-թաթարական ընդհարումներից, գինն է . . 1 —

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՃՐԱԳՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔ
ՀԵՐԿՈՒԼԷՍ . . . . . . . . .
} մէկ գրքում, գինն է . . 2 —

---

Վերոյիշեալ պիէսները վաճառւում են Երևանում՝ հեղինակի մօտ և Տփխիսում՝ Կենտրոնական և Գուտենբերգ գրավաճառանոցներում։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ
Эривань. Эмину Теръ-Григорянцу.

ՀՀ Ազգային գրադարան
NL0372150

58272